



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

АРХЕОЛОГИЧЕСКИЕ РАСКОПКИ В АРМЕНИИ

№ 12

Г А Р Н И

IV

Э. В. ХАНЗАДЯН

РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК

1949—1966 гг.

(С РАННЕЙ БРОНЗЫ ПО
УРАРТСКИЙ ПЕРИОД ВКЛЮЧИТЕЛЬНО)

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1969

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Հնագիտության և զգագրության ինստիտուտ

Հնագիտության Պեղումները ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

№ 12

Գ Ա Ռ Ն Ի

IV

Է. Վ. ԽԱՆՁԱԴՅԱՆ

ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1949-1966 թթ.

(ՎԱՂ ԲՐՈՆՁԻՑ ՄԻՆՁԵՎ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ ՆԵՐԱՌՅԱԼ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
Ե Ր Ե Վ Ա Ն

1969

Գառնիի ամրոցի ստորին շերտերի և դամբարանների պե-
ղումների միջոցով հայտնարեցված հնադիսական հարուստ
նյութերի հիման վրա բնութագրվում է Գառնիի բնիկ ցեղերի
մթա III—I հազարամյակների նյութական արտադրության
մակարդակը, կենցաղն ու մշակույթը:

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ի Կ Ո Ղ Մ Ի Ց

Գառնիի ամրոցի սիստեմաակի պեղումները սկսվել են 1949 թ. և շարունակվում են մինչև այսօր: Պեղումների ընթացքում պարզվեց, որ Գառնիի ամրոցը բազմաշերտ է:

Հնագիտական նյութն ընգրկում է վաղ բրոնզի մշակույթից (մթա. III հազարամյակ) ներառյալ մինչև ուշ միջնադար:

Գառնիի սիստեմատիկ պեղումների արդյունքները հրատարակվել են Լրեք պրակով:

Առաջին պրակը ամփոփում է 1949—1950 թթ. պեղումների արդյունքները¹: Այս պրակում հրատարակված են Գառնիի բոլոր շերտերից հայտնաբերված նյութերը: Ներկայացվում և վերլուծության է ենթարկվում հայտնաբերված մշակույթն ամբողջությամբ՝ չբացատրելով նաև ճարտարապետական հուշարձանները:

Երկրորդ պրակը նվիրված է անտիկ շրջանի մշակույթին և ամփոփում է 1951—1955 թթ. պեղումների արդյունքները²:

Այդ պրակում լուսարանվում են ոչ միայն ամրոցի անաիկ շերտի նյութերը, բաղնիքը մոզակի հատագույ, այլև ներկայացվում են անաիկ շրջանի համբարանադաշտի պեղումների արդյունքները:

Գառնիի երրորդ պրակը նվիրված է միջին դարերի նյութերին և ամփոփում է 1949—1956 թթ. պեղումների արդյունքները³:

Այսանդ ներկայացված է միջնադարյան դյուղաքաղաքն իր պատմությունը, տնտեսությունը, արհեստներով, առևարով և նյութական մշակույթով:


Ներկա՝ չորրորդ պրակն ամփոփում է 1949—1966 թթ. ընթացքում հայաստանաբերված ստորին շերտերի (վաղ բրոնզի դարաշրջանից մինչև ուրարականը ներառյալ) հնագիտական պեղումներով հայտնաբերված նյութերը և նրանց ուսումնասիրության արդյունքները:

Գառնիի հնագիտական արշավախմբի աշխատանքներին, որոնք կատարվում են Բ. Ն. Առաքելյանի ղեկավարությամբ, սկսած 1949 թվականից, մասնակցել են Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի, հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական աշխատակիցները, պրակտիկաններ՝ Պետական համալսարանի պատմության ֆակուլտետից, ճարտարապետներ, նկարիչներ, լուսանկարիչներ, վերականգնողներ, որոնց մասին մանրամասն նշված են Գառնիի հրատարակված երեք պրակներում:

¹ Բ. Ն. Առաքելյան, Գարնի, I, Результаты раскопок 1949—1950, Ереван, 1952.

² Նույնի, Գարնի, II, Результаты раскопок 1951—1955 гг., Ереван, 1957.

³ Բ. Ն. Առաքելյան, Գ. Հ. Կարախանյան, Գառնի, III, 1949—1956 թթ. պեղումների արդյունքները, Երևան, 1962:



ԳԱՌՆԻԻ ՎԱՂ ԲՐՈՆՁԵԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԻՄ

Գառնիի գյուղի հարավ-արևմտյան մասում, Գեղամա լեռների ստորոտում, Կղատ գետի ափին զանվող բարձրագիր հունեկյունաձև դարավանդը՝ պաշտպանված դեզատեսիլ խոր ձորերով, դարեր շարունակ հարատեհ է իր բնակավայրը:

Ամրոցում կատարված պեղումների միջոցով պարզվում է, որ այն բնակչի է եղել սկսած մթա III հազարամյակից մինչև ուշ միջնադարը ներառյալ:

Անտիկ շրջանում կանգնեցված հզոր պարիսպը իր ներսում ամփոփում է մոտ երեք հեկտար աստիճան: Հենց այստեղ էլ դանվում է Գառնիի մթա III հազարամյակի վաղ բրոնզեդարյան բնակավայրը, որի հետքերը հայտնաբերվել են սելդումների հենց սկզբնական տարիներին, ամրոցի տարրեր մասերում՝ կենտրոնական մասում, հեթանոսական տաճարից ոչ հեռու ամրոցի պարսպի տակ՝ ասորերը հատվածներում (նկ. 1):

1949—1951 թթ. վաղ բրոնզեդարյան շերտի պեղումները կատարել են հնագետներ Զ. Մարտիրոսյանը և Ս. Սարգսյանը:

Պեղումների ընթացքում հայտնաբերվել են զարդարուն և անզարդ խեցեղեն՝ վաղ բրոնզեդարին ընդհանուր կիսազնգաձև կանթերով, օջախների հենակներ, օբսիդանյա և կալժեարի գործիքներ, բրոնզե մանդաղ, ոսկրե հերոններ, իլիկի գլուխներ, ազորիքներ և այլն¹:

Նրկուսից-երկը ասարվա պեղումների ընթացքում բնակարանների լավ պահպանված հեքեր չեն հայտնաբերվել, սակայն տեղ-տեղ երևան են եկել անմշակ քարերով կառուցված հիմքերի մնացորդներ²:

1953—1960 թթ. պեղվում էին Գառնիի ամրոցի դերազանցապես վերին, այն է՝ միջնադարյան և անտիկ շերտերը, ուստի ավելի վաղ դարաշրջանների նյութերի գյուտերը եղել են սահմանափակ:

Սկսած 1960 թվականից ստորին շերտերի պեղումները և ուսումնասիրությունը արշավախմբի պետ Բ. Ն. Առաքելյանը հանձնարարեց մեզ:

Պեղումների միջոցով պարզվեց, որ մթա III հազարամյակում Գառնիի ամրոցի ամրոզ աստիճանը զբաղեցրել է վաղ բրոնզեդարյան մի բնակատեղի՝ շրջափակված անմշակ ժայռաբեկորներով կառուցված կիկլոպյան պարսպով, որի հեքերը հայտնաբերվեցին ինչպես անտիկ շրջանի պարսպի տակ, այնպես էլ պարսպից ներս:


¹ Б. Н. Аракелян, Гарни, I, Результаты раскопок 1949—1950, стр. 22—26.

² նույն տեղում:

Զգալի տրդյունքներ տվեցին հասկայես Լրկրորդ տեղամասի (ամրոցի կենտրոնական մաս) պեղումները:

Չնայած Գառնիի ամրոցի ստորին շերտերը սաստիկ վնասված են՝ վերին շերտերում կառուցումներ կտտարկլու հնտեանքով, սակայն մեղ հաջողվեց սաանալ վաղ բրոնզեդարյան մշակույթի շերտագրական հետքերը կան մի պատկեր:

Երկրորդ տեղամասի 18 ժ և 18, 19 ի քառակուսիները պեղելիս, գետնի մակերեսից մոտ 1,3 մ խորության վրա սկսվեց վաղ բրոնզեդարյան շերտը: Այս շերտում 18 ի քառակուսու մեջ բացվեցին III հաղարամյակի կլոր կացարանի քարե հիմքերը, որոնք պահպանվել էին միայն ընակարանի հյուսիսարևմտյան հոսովածում (նկ. 2, 3):




Նկ. 3. Գառնիի կլոր կացարանը:



Կլոր կացարանի հիմքերը կառուցված են միջին մեծության անմշակ քարերով, որոնցից երկու շարքն է պահպանվել, կաղմելով 0,6 մ լայնությամբ և 0,5 մ բարձրությամբ հիմնապատը: Կացարանի քարե հիմքերը զրսից և ներսից կավածեփ են:

Հյուսիսային ծայրում, որանդ պատն ընդհատվում է, վերին քարերի վրա պահպանվել էին հում աղյուսի շարվածքներ: Պեղման ընթացքում հում աղյուսների ռազմաթիվ ընկորներ հայտնարերվեցին և՛ կացարանի ներսում, և՛ նրանից դուրս պատի տակ: Պահպանված ամբողջական հում աղյուսների շափերն են՝ 26×20×10 սմ:

Այսպիսով կացարանի քարե հիմքերի վրա շարված են եռեւ հում աղյուսե պատերը, որոնք ժամանակի ընթացքում քայքայվել, փլվել են: Կացարանի պահպանված հիմքով կարելի է վերականգնել նրա տրամագիծը, որը կազմում է 6, 7 մ:








1:1 7077151




Գ Լ Ե Կ Ը Թ Ժ Ի
 Կ Լ Ե Կ Ը Թ Ժ Ի
 Կ Լ Ե Կ Ը Թ Ժ Ի



4



Պատի հարավային և արևելյան հասվածք ավերված էր, հավանաբար մոտքն էլ տյո հասվածում է եղել: Կավով ծեփված հատակին, որը նույն-պես ուժեղ խտխտված էր և միայն տեղ-տեղ էր պահպանվել, հայանաբեր-վեցին վաղ բրոնզեդարյան մշակույթին բնորոշ իրեր՝ քարե սանդղոթներ, կոկիչներ, օբսիդաքարե դանակներ, իլիկի գլուխ (նկ. 4): Ոսկրե հերոններ (նկ. 5, № 2234/116), մանկական սալի անիվ (նկ. 6), հասարակ, անփալլ վարդագուլն մակերեսով խեցեղեն, ինչպես նաև սև փայլեցրած կիսաղնդաձև կանթերով և սևլիեֆ-ներճկված պարուրաձև զարդերով խեցեղեն, օջախի հենակներ և մանր ու խոշոր եղջերավոր կեն-դանիների ոսկորներ:



Նկ. 4. Իլիկի գլուխ:

Ջրալի թվով իրեր հայտնաբերվեցին նաև կացարանից դուրս՝ հյուսիսային և արևմտյան հասվածներում, որոնց մեջ բնորոշ են՝ օջախի պարու-րաձև հենակի իր միջին մասի մարդակերպ ելուստով (Աղ. XVI, № 2234/108), ձիու ոտքի ոսկրից պատրաստված աշխաանքային գործիքը (նկ. 7, № 2234/106), շեկ գուլնի հասարակ կավամանի մասը, ուռուցիկ փորին ձվաձև կանթ № 2234/1016), սև փայլեցված քրեդանի և այլ խեցիների բեկորները, զարդարված կլոր ձվաձև փոսիկներով (նկ. 8, № 2234/101) և այլն: Պատահական չէ, որ կացարանի ներսում և դրսում հայտնաբերվեցին նաև կենդանիների ոսկորներ և մեծ քանակությամբ հում աղյուսների բեկորներ:

Կլոր կացարանի հատակից ցած, դետնի մակերեսից մոտավորապես 1,8 մ խորության վրա, թե՛ դրսի և թե՛ ներսի կողմում առաժվում էր մի մոխրաշերտ, որի հաստությունը 0,3—0,4 մ էր: Մոխրաշերտն ավարտվում էր նույնպես կավե հասակով, որը հատկապես լավ էր պահպանվել կացարանից դուրս՝ նրա հյուսիս-արևմտյան անկյունում, 18 ժ քառակուսու մեջ: Այս մասում կլոր կացարանի պառը դրսից հատում էր եռաշար հում աղյուսով մի շարվածք, որը դարձյալ ավերվել էր: Անշուշա մենք այսպեղ ունենք վաղ բրոնզեդարյան մշակույթի երկրորդ շերտը, որն այս հասվածում լայն հորիզոն չի բնորոշվում: Չնայած այս մասում մենք հնարավորություն չունենք բնորոշակ պեղումներ ծավալելու, սակայն մոխրաշերտում հայտնաբերված իրերը մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Խեցեղեն ունի բավականին դեղնեղիկ ձևեր, հարուստ սևլիեֆ, ներճկված և դժային զարդանախշեր (նկ. 9, 10, 11, 12, 74):

Ջարդարուն խեցեղենի առանձին նմուշների ներսում պահպանվել են մետաղի մնացորդներ և մետաղի խարամ (նկ. 30—32, № 2234/136, 137): Խեցեղենի շատ կտորներ կրակի մեջ լինելու հետևանքով արվել, չորացել են, արաքին փայլը կորցրել: Ամենայն հավանականությամբ այս կավամանները ժամանակին օդադործվել են որպես կթխաններ, կամ մետաղադործի արհեստանոցում նման ինչ-որ նպասակի են ծառայել:

Նույն տեղում հայտնաբերվեցին քառանկյունաձև և ձվաձև շեշաքարեր անցքով (նկ. 6), մի խումբ, տարրեր մեծության հատած կոնի ձևի, թեթև, կրակից այրված վարդագուլն շեշաքարեր (նկ. 33, № 2234/124): Նրանց ինչ լինելը դժվար է որոշել, սակայն, հավանաբար, նրանք որոշ դեր են կատարել ձուլման պրոցեսում:


Այսպիսով, մի փոքր հատվածում մոխրի, խեցեղենի և ձուլման հետ կապված վերոհիշյալ իրերի կուտակումը չի կարելի պատահականություն համարել: Հավանարար այն երկրորդ շերտին պատկանող մետաղադորժական արհեստանոցի մի հատված է, որտեղ թափել են ձուլարանից հանված մոխիրը, ջարդված կթխանները, խեցեղենը և այլն: Մեր այս ենթադրությունն ապացուցվեց 1965 թ. պեղումների արդյունքներով, որի մասին կիսովի ստորև:



Նկ. 5. Անձաղի ոտնաթաթային ոսկր, հերուններ, ծակիչներ:

Շերտագրությունը պարզևու նպատակով 1961 թ. պեղվեց վերին կլոր կացարանի ներսի տարածությունը. մոխրաշերտի հասակից ցած և պարզվեց, որ 2,2 մ խորությունից սկսվում է մի նոր շերտ, մի նոր կլոր կացարանով, որի հիմքերը նույնպես անմշակ քարերով են շարված: Հեաաքրքրականն այն է, որ ստորին կացարանի շրջագիծը համընկնում է վերին կացարանի շրջագծին, այսինքն վերին կլոր կացարանը իր հիմքով ուղիղ նստած է ստորին կացարանի վրա և նրանց միմյանցից անջատում է 0,3—0,4 մ հաստությամբ մոխրաշերտը (նկ. 3):


Ստորին կլոր կացարանի տրամադիծը նույնպես 6,7 մ է: Նրա քարի հիմքերը, որոնք ներսից և դրսից կավածնի են, տեղ-տեղ (հյուսիս-արևմուտյան կողմում) պահպանվել են 1,2 մ ըրարծրությամբ, տեղ-տեղ էլ (հարավ-արևելյան կողմում) 0,5—0,6 մ ըրարծրությամբ: Պատի հիմքերի մի մասը շարված է մեծ քարերով, օրինակ, արևմտյան հատվածում 0,7 մ և 0,4 մ բարձրություն ունեցող երկու խոշոր քարերով, իսկ մի մասը մանր քարերի շորս շարքով: Կացարանի պատի հաստությունը 0,9 մ է: Մուտքը արևելյան կողմից է, ունի 1 մ լայնություն և շարված է նույնպես անմշակ, անհամաչափ քարերով: Պեղումների ժամանակ դուան կրնկակալ քար չհայտնտրելվեց:



Նկ. 6. Չաունիի վաղ բրոնզեդարյան շերտերից հայտնաբերված իրեր:

Գեանի մակերեսից մոտ 3,4 մ խորության վրա բացվեց սաորին կացարանի հատակը, որը կառուցված էր մալր գետնի վրա, հարթեցրած խճաքարերով և երեսը հարգախառն կավի հասա շերտով ծեփված:

Կացարանի ներսում՝ պատին կից, նրա ամրողչ շրջագծով բացվեց կավակերտ նսարան, կամ մահլիճ 0,5 մ բարձրությամբ և նույնքան էլ լայնությամբ: Մուտքից ձախ, կացարանի հարավային հատվածում, վերոհիշյալ կավե նսարանի վրա մոխրի հետ խառը մի շարք այլ իրերի հետ հայտնարերվեց կոթառով, սեպածե կացնի կաղապարի մեկ փեղկը՝ երկու կաորից, մեկը մյուսից մոտ 0,3 մ հեռավորության վրա (նկ. 27, № 2234/150):



Նկ. 2. Ձիու ստքի ոսկրից պատրաստված գործիք:

Այսպիսով, սաորին շերտում կացնի կաղապարի հայտնագործությունը, միջին շերտում հայտնարերված ձուլսան հետ կապված վերոհիշյալ իրերի հետ միասին, արգեն հասաաում էին Գանհում մթա III հաղարամյակում մետաղագործության առաջընթացը և ձուլարանների գոյության փասար:

Կաղապարի հեա, նստարանի վրա, մոխրաշերտում հայտնարերվեցին ոսկրե ասեղ, հերուն (№ 2234/157), կավից իլիկի գլուխ (№ 2234/156), սեփալեցրած կավամանի բեկորներ՝ շուրթից սկսվող զանաթով, ուռուցիկ փորին ներձկված փոսիկ (նկ. 28, № 2234/149), մի այլ կճուճի մաս՝ շուրթից սկսվող երկթեք կանթով, որի կենտրոնում կա ներձկված փոսիկ (№ 2234/152) և այլ իրեր:

Առանձին հեաաքըրություն էին ներկայացնում կացարանի կենարունական մասի և մուտքի հավածի պեղումները: Կենարունական մասում հայտնարերվեցին մակույկածե աղորիք՝ բարձրադիր քթով (երկու կաորից), մեծ քանակությամբ մանր եղջերավոր կենդանիների ոսկրներ, սեփալեցրած խեցեղենի բեկորներ՝ վզի հիմքում կիսազնդածե կանթ (նկ. 13), գարգարված կլոր ու ձվածե փոսիկներով (№ 2234/152), ձվածե և կլոր խուկ կանթեր-եղուսաներով (նկ. 50, № 2234/141), շուրթից սկսվող կտցածե հլուստով (նկ. 56 ձախից, № 2234/142, 162), հասաախեցի՝ սեփալեցրած մակերեսով և վարդագույն ասառով մեծ կավամանների բեկորներ (№ 2234/166) և այլն: Հայտնարերվեցին նաև կավից պատրաստված մանկական սայլի երկու անիվներ (աղ. XXIII 3, 4, № 2234/173):


Ուշագրավ են մանր եղջերավոր կենդանիների կողոսկրներից պատրաստված գործիքները՝ մեկ ծայրին կլոր անցքով, որոնք հավանարար օգտագործվել են մանածագործության մեջ որպես հինագլաններ (աղ. VII, միջին շարք, № 2234/174):

Կլոր կացարանի արևելյան հատվածում, մուտքից ոչ հեռու, կավե հատակի վրա հայտնարերվեց օրսիդաքարի անմշակ բեկորների մի մեծ կույտ, բաղկացած մոտ հարյուր ութսուն կտորից, որոնց մեջ ընդամենը երեքն էին մշակված, երկուսը քերիչ, մեկը գանակ (№ 2234/175): Անշուշա կա-

դարտնի այս հատվածում պատրաստելիս են եղել օբսիդաքարե գործիքներ, որի հետեանքով էլ առաջացել է օբսիդաքարի վերոհիշյալ կույտը:

Թե վերին, և թե ստորին կացարաններից ոչ մեկում սյան համար քարե խարխիս չհայտնաբերվեց:

Իսառնիի վաղ բրոնզեդարյան աշակույթը վերոհիշյալ շերտագրական սովորներն ավելի ևս հաստատվեցին 1962 թ. պեղումների դնթացքում:



Նկ. 8. Փոսիկով զարդարված կավաման:

Պեղումները կենտրոնացվեցին կլոր կացարանից դուրս, նրա արևելյան կողմում, վերին և ստորին կացարանների մուտքի առջև 16 ի և կ քառակուսիներում:

Վերին, միջնադարյան շերտը հեռացնելուց հետո, մոտ 1,3—1,4 մ խորության վրա, այսինքն վերին կլոր կացարանի շերտին հավասար բացվեց դարձյալ վաղ բրոնզեդարյան շերտ՝ հարուստ հասարակ և սև փայլեցրած խեցեղենով:


Այստեղ, 16 կ քառակուսու մեջ, վերին կացարանի մուտքի դիմաց, 1,73 մ խորության վրա, 0,2 մ հաստությամբ ունեցող կավե հատակին, ավագախառն ամուր հիմքի վրա բացվեց կրակարան-օջախի մի կոմպլեքս (նկ. 14): Այն իր կառուցվածքով փոքրիկ թոնրի է նմանվում, գլանաձև է՝ 0,15 մ տրամագծով:

Արևելյան կողմից նրան հատում էր մի կոարտված կավաման՝ կիսագնդաձև կանթով, որը կավային լիցքով ամրացված էր կրակարանին: Այն տպավորություն էր թողնում, որ կարծես այդ արված էր կրակարանի պատերը դրսի նոսրացնելու նպատակով:

Կրակարանի հարավային կողմում գրված էր վաղդագույն մի մեծ կրճուճ՝ գլանաձև վզով, ուռուցիկ փորով, որի ստորին մասը շկար: Վզի հիմքում ունեցել է երկու կիսագնդաձև կանթ, պահպանվել է մեկը (№ 2235/63): Կճուճը լիքն էր մոխրով, որի մեջ գտնվեց օջախի պայտաձև հենակի ներդրանաձև վերջավորությունը (№ 2235/65): Անշուշտ այդ հենակը դրվել է օջախի վրա և կոարվելուց հետո մոխրի հեա գցել են օջախի մոտ դրված կճուճի մոջ. որը հավանաբար օգտագործվել է սրրազան մոխիրը հավաքելու

համար կրակարան-օջախի ամբողջ կոմպլեքսը կճուճով հանդերձ կրակի երկարատև աղգեցությունից այրված շեկ գույն կր ստացել, ըայքայվել:

Օջախի շուրջը, հատկապես նրա հարավային կողմում հայտնաբերվեցին մոխրի մեծ կույտեր, որոնք անշուշտ կրակարան-օջախից էին հանվել: Մոխրախուտի մոտ հայտնաբերվեց սև փայլեցրած կավասան, միջին մեծությամբ, լայնաբերան, ուռուցիկ փորով և շուրթից սկսվող կանթով, որի տակ կա ձվաձև մեծ փոսիկ (նկ. 48, № 2235/66):



Նկ. 9. Սև փայլեցրած կավամանի մաս, ուղիք ներճկված պարույրով:

Օջախի կոմպլեքսի հյուսիսային կողմում հայտնաբերվեցին հունցած, սև գույնի կավից գնդեր, որոնք հավանաբար խեցեղեն պատրաստելու համար են բերվել կացարան:

Այս կավն գնդերից ընդամենը 3—4 մ դեպի հյուսիս 14 զ քառակուսում 1960 թվականի պեղումների ժամանակ բացվեց հունցած սև կավով լի մի հոր՝ 1,5 մ տրամագծով, որտեղից հավանաբար տարվել են վերոհիշյալ կավե գնդերը:


Վերին շերտի կավակերտ հատակը հեռացնելուց հետո հայտնաբերվեց մի նոր օջախի կոմպլեքս, վերին կոմպլեքսից ընդամենը 0,4 մ ցած և նրանից մոտ 1,2 մ դեպի արևելք: Օջախի այս նոր կոմպլեքսը բավականին հետաքրքիր է (նկ. 15): Այն բաղկացած է երկու առանձին-առանձին մասերից՝ տափակ, լայնադիր փոված շուրթերով և կոնաձև դեպի ցած լայնացող իրանով հենակից և նրա տակ դրված թոնրաափայ կլոր, լայն հասակով և գլանաձև ուղղահայաց պատերով կրակարտնից, որը հար և նսան է վերին շերտում հայտնաբերվածին, միայն այն տարբերությամբ, որ ստորին կրակարանի պատերը դեպի վեր բարձրանալով մի փոքր ներս են սեղմվում (նկ. 16):

Կրակարան-օջախի այս կոմպլեքսը նույնպես գրված էր ավազի և կավի շաղախով պատրաստված ամուր հիմքի վրա: Բոլոր կողմերից ամրացված էր նման շաղախով և կոտրված կավամաններով: Կրակարան-օջախի վրա դարձ-

յայ դղացվում է կրակի ուժով ներգործությունը, սակայն ինչպես վերին կոմպլեքսում, այնպես էլ այստեղ, ոչ օջախի, և ոչ էլ նրան շրջապատող կավամանների վրա մրից սեպցած և ոչ սի հետք չհայտնաբերվեց:

Օջախը լիքն էր մոխրով: Նրա արևմտյան կողմում հայտնաբերվեց պատածև հենակի սաս:

Քե վերին օջախի և թե նրա տակ հայտնաբերված կրակարան-օջախի մոտ պայտածև հենակների առկայությունը պատահականություն չէ: Այն անշուշտ վկայում է նման հենակների գործածությունը այս օջախների հետ:



Նկ. 10. Բաժակի մաս, նուրբ գծային զարդանախշերով:

Այսպիսով, տարբեր հորիզոնների վրա միմյանցից մոտավորապես 0,4—0,5 մ խորության մեջ, միևնույն 16 կ քառակուսում հայտնաբերվեցին կրակարան-օջախների միանման կոմպլեքսներ՝ կոտրված կճուճներով, ավազով և կամով ամրացված:

Չնայած վերին կոմպլեքսում բացակայում էր լայնադիր շուրթերով հենակը, սակայն նրա առկայությունը հավանաբար անհրաժեշտություն էր, բանի որ օջախի ներքին մասի, գլանաձև իրանով կրակարանի նեղ շուրթերի վրտ կավամասն կամ պլատածև հենակ դնել հնարավոր չէր:


Այսպիսով, նկարագրված կրակարան-օջախները հավանաբար կազմված են եղել երեք առանձին-առանձին մասերից, ստորին՝ գլանաձև իրանով, տափակ հասակով կրակարանից, միջին՝ լայնադիր, փոխած շուրթերով ու դեպի ցած ընդլայնվող իրանով հենակից և նրա վրա դրվող շարժական պատածև հենակներից, որոնք կարող էին ոչ միշտ օգտագործվել:

Կրակարան-օջախի նման կոմպլեքսներ 1960 թ. հայտնաբերվեցին նաև 14 գ քառակուսու մեջ, վերոհիշյալ կլոր կացարանից դեպի հյուսիս (Նկ. 16 ա): Այստեղ տարբեր հորիզոններում բացվեցին կրակարան-օջախներ, սակայն համարյա իրար վրա նստած: Ստորին թոնրատիպ կրակարանը, որի վրա պահպանվել էր լայնադիր շուրթերով հենակի ներքնամասը, դրսևում էր անմիջապես վերին կրակարանի աակ:

Այս կոմպլեքսը ևս ապացուցում է նրանց շրնարարպան տարբեր շերտերին վերաբերվելը:

Վերը նկարագրված օջախի երկրորդ կոմպլեքսից դեպի հյուսիս, հյուսիս-արևմուտք, ստորին կացարանի մուտքի դիմաց՝ նրա վերին հորիզոնում պեղումների ժամանակ հայտնաբերվեցին երկու, տարբեր ուղղություններով տարածվող կլոր կացարանների, անմշակ, միջին մեծությամբ քարերով շարված հիմքեր (Նկ. 2): Այս հիմքերը համարյա կից են միմյանց և շատ վատ

պահպանված: Պարզվեց, որ դեպի հարավ, հարավ-արևելք տարածվող կլոր կացարանի հիմքերը շրջափակում են կրակարան-օջախի երկրորդ կոմպլեքսը, այսպիսով այդ օջախը գտնվում էր կացարանի կենտրոնում: Կացարանի հիմքերի մի հատվածն էր պահպանվել, երկշար միջին մեծության քարերով շարված: Կլոր կացարանի ներսից պատի ասկ, կավտկերտ հատակի վրա, օջախի հյուսիսային կողմում հայտնարբերվեցին թիածև վերջավորութամբ ոսկրե գործիք (№ 2235/101a), հերուններ, օրսիդաքարե քերիչներ (№ 2235/



Նկ. 11. Գավաթի բեկոր, գծային զարդանախշերով:

Նկ. 12. Ցանցազարդով և անկյուններով զարդարված խեցի:

100), ևռոանի պատվանդան (աղ. XX, № 2235/105b), սև փայլեցրած եռմասանի, շեշտված անցումներով կավամանի բեկոր՝ թռչնաձև զարդանախշով (նկ. 46, № 2235/103): Նրա կողքին հայտնարբերվեց մի դեղեցիկ ռավաթի մաս, վզին գծային երկրաչափական զարդանախշերի դափ, իսկ իրանին ներձկված զարդանախշեր (№ 2235/102):

Կացարանին կից, դեպի հյուսիս ասարածվող դարձյալ կլոր կացարանի հիմքի քարերը ընդհատված էին միջնադարյան մեծ կճուճով: Այստեղ միջնադարյան կառուցվածքները թափանցել էին մթա III հաղարամյակի շերտերը և ավերել այն:

Կլոր կացարանի ներսը ընդգրկող տարածությունում վաղ բրոնզեդարյան խեցեղենի և այլ իրերի հետ հայտնարբերվեցին նաև միջնադարյան խեցեղենի բեկորներ:


Այսպիսով նկարագրված այս երկու կլոր կացարանների հիմքերը կավակերտ հատակով, նրա վրա հայտնարբերված իրերով, այդ թվում օջախ-կրակարանի երկրորդ կոմպլեքսով շերտագործն համապատասխանում են վերին. կացարանի ասլ գտնվող 0,4 մ հաստութուն ունեցող մոխրաշերտին և հավանարար նրա հեա միասին վերարբերվում են Գառնիի վաղ բրոնզեդարյան մշակույթի միջին շինարարական շերտին:

Ստորին կլոր կացարանի պեղումներն ամբողջացնելու նպատակով անհրաժեշտ էր ռացել նրա մուտքը և արևելյան պատը դրսի կողմից: Այդ իսկ պահանջով սկսեցինք պեղել վերին հորիզոնի կլոր կացարանների հիմքերի և ստորին կացարանի միջև առաջացած եռանկյունաձև ոչ մեծ տարածությունը, որանղ խորացանք մոտ 3,5 մ:

Ստորին կացարանի մուտքի առջև մոխրաշերտում հայտնարբերվեցին

այծի դանդ, ոսկրե շորս հերուններ (№ 2235/107), օրսիդաքառե Լրեք մեծ բերիչներ (№ 2235/111), շրջանաձև կոկիչ, պայտաձև հենակի մաս (աղ. XIV₂, № 2235/103), ուիլեֆ երկարավուն ելուստով հասաախեցի, սև փայլեցրած կավամանի բեկոր (№ 2235/110a), թասի մաս ներսից՝ քթանսան ելուստ կրկու կողսից անցքերով (նկ. 61 մերևինը, № 2235/110b):

Պեղվեց կլոր կացարանի դրսի կողմը նաև հյուսիսը, որտեղ հայտնարերվեցին նույնպես ըաղմաթիվ իրեր՝ հերուններ (№ 2235/121), կոճակ, ուլունք (№ 2235/128), սև փայլեցրած խեցեղեն՝ ղարդարված կլոր և ձվաձև փոսիկներով (№ 2235/129), սանդկոթեր, աղորեքներ, կոկիչներ և այլն: Այստեղ, կացարանի պատի տակ ըացվեց կավածեփ սի հոր 1,5 մ տրամագծով: Հորը լցուցն էր մոխրով, ածխի կաորներով: Հայանաբերվեցին այծի մի քտի դանդեր, եոմասանի սև փայլեցրած կճուճներ՝ կլոր և ձվաձև փոսիկներով ղարդարուն (աղ. X₂, № 2235/140, 142), պայտաձև հենակի



Նկ. 13. Սև փայլեցրած զավաթի մաս:

ներրանաձև վերջավորութուն (աղ. XIV₃), սայլակի անիւ, աղորիքի բեկոր և այլն: Հորում 1,2 մ խորանալուց հետո, այլևս հնարավոր չէր պեղումը շարունակել, որովհետև այն լցված էր խոշոր, անմշակ քարերով:

1963 թ. պեղումների ժամանակ հետաքրքրական նյութեր տվեցին նաև 16 լ քառակուսու պեղումները: Այստեղ 1,5 մ խորութունից հայանաբերված նյութերի սեղ ուշադրության են արժանի օրսիդաքառե մեծ շեղրը և քտանիստ դանակը (№ 2288/22), իսկ 2,1 խորութունից մոխրագույն կայծքարից մանգաղի ներդիրը և փոքրիկ, ոսկրե քառանկյունաձև, կախելու համար անցքով հմախլը (նկ. 23, № 2288/100), քրեղանր՝ կիսագնդաձև կանթով և փոսիկով ղարդարված (նկ. 63, № 2288/11):

Մի փոքր դեպի հյուսիս, սաորին շերտի կլոր կացարանի մոտ հայտնարերվեցին քարե անիվ երկու անցքով (աղ. XXIV), օրսիդաքառե միջուկներ (նուկլեոսներ, նկ. 18, № 2288/13), կենդանու կողոսկրներ անցքով (աղ. VIII, № 2288/12) և այլն:

Քառակուսու արևելյան կողմում՝ 2,3 մ խորության մեջ ըացվեց կավա-

ծևի մի հոր, որի սնչ լցված անմշակ քարերի հետ հայտնաբերվեցին սև խեղեղեն, նշաձև տափակ ծայրով և քառակող ցողունով բրոնզե դործիք (աղ. 16), ոսկրե սրածայր հերուն (№ 2288/38) և այլն:

Քառակուսու արևմտյան կողմում հայտնաբերված նյութերի իվուս ուշադրություն են արժանի կռճղաձև ցածրադիր հենակր, թրճած կավից պատրաստված (№ 2288/36) և պսղուկով օբսիդաքարե նետասլարը (նկ. 17, աչից II-ը, № 2288/99):

Հաջորդ, 1964 թվականին պեղվեց կլոր կացարանի հարավ-արևմտյան կողմը դրսից, որտեղ հայտնաբերվեցին քառանկյուն շինութունների հետքեր, սակայն չափազանց վատ պահպանված: Հայտնաբերված նյութերում հետաքրքիր են շեշաքարից գործիքը (1964 թ. № 37), կսրասի բեկորը ճատրակի (չախմատի) տախտակը հիշեցնող զարդանկարով (նկ. 72, 1964 թ.



Նկ. 14. Օջախ, վերին շերտի կացարանից:

№ 30) և շուրթից սկսվող կանթը՝ վերին մասում մեծ ձվաձև փոսիկ (1964 թ. № 74): Բավականին հետաքրքրական նյութեր տվեցին ամրոցի III տեղամասի պեղումները: Բաղնիքից հարավ-արևելք 1,4 մ խորությունից հայտնաբերվեց սև փայլեցրած, դարչնագույն աստառով խեցու բեկոր՝ փոխադրուխ շքասեղի ուլիսի պատկերով (նկ. 73, 1964 թ. № 28), նրա հետ հայտնաբերվեց փոսիկով զարդարված սև փայլեցրած խեցեղեն: Ուշադրավ են նաև թոշունի ոսկրից կախադարձը (նկ. 25, 1964 թ. № 29), քամիչի բեյորը, հասարակ, անփայլ (1964 թ. № 75): Նույն տեղամասում 2,8 մ խոր-

րութիւնից հայտնարեւելեց կոստանդարդ՝ Եղջերուի մատի ոսկրից (նկ. 25, 1964 թ. № 60), մասսիւ պարձանիկի ոճավորված գլուխը կավից (1964 թ. № 1):

Վաղ բրոնզե դարյան նյութեր հայտնարեւելել են նաև պալատական սրահում 2,8 մ խորութիւնից, որոնց մեջ ընտրոշ են սև փայլեցրած խեցեղենը՝ զարդարված փոսիկներով, խուլ-կանթ ելուստներով (1964 թ. № 39), խորանարդաձև կոկիչը (1964 թ. № 40) և այլն:

1965 թ. պեղումները կենտրոնացվեցին II տեղամասի իրար վրա նստած կլոր կացարանների դրսի՝ հատկապես հուսիս-արևմտյան և արևմտյան հատվածներում, որտեղ, ինչպես վերը նշվեց, 1961 թ. պեղումների ժամանակ միջին շերտերում հայտնարեւելել էին մոխրի, կթխանների ու ձուլման պրոցեսի հետ կապված իրերի կուտակումներ: Պարզվեց, որ այս մասում վերին կլոր կացարանին կից եղել է մի քառանկյուն շինություն, որից պահպանվել էր արևելքից-արևմուտք տարածվող 0,65 մ լայնությամբ և 2,5 մ երկարությամբ մի պատ՝ շարված անմշակ, միջին մեծության քարերով:

Արտակարգ մեծ հետաքրքրություն առաջացրին հատկապես միջին շերտի պեղումները: Ձուլման հետ կապված վերոհիշյալ իրերի կուլտից ընդամենը 2,5 մ դեպի արևմուտք, նույն հատակի վրա հայտնարեւելեց գլանաձև մի կսոռուցվածք, մոտ 0,5 մ տրամագծով: Այն պատրաստված էր կավե ժապավենների պարուրաձև հանգույցներից՝ դրսից և ներսից կավածեփ: Կրակի ուժեղ աղղեցությունից ջեկ գույն էր ստացել, քայքայվել: Պատերը պահպանվել էին ընդամենը 0,3 մ բարձրությամբ: Արևելյան կողմից այն ուներ օդամուղ խողովակ, որը պատրաստված էր ջեկ գույնի հասարակ կավից: Դրանաձև այս կոռուցվածքի ներսը լի էր մոխրով, սոժի և խարամի մնացորդներով:

Այսպիսով Գառնիի վաղ բրոնզե դարյան միջին շերտում հայտնարեւելած դանաձև կոռուցվածքը ձուլարան, հնոց է՝ իտրամով-փքսափողով հանդերձ: Նման տիպի ձուլարան-հնոցներ, սակայն, ծավալով մի քիչ մեծ հայտնի են նաև Հարապպայի մթա III հաղարամյակի մշակույթին: Ինչպես Գ. Չայլդն է մեջբերում, Հարապպայի մետաղագործների ձուլման վառարանները «թաղարաիպ» են եղել, որոնք ունեցել են 1 մ տրամագիծ և 1,1 մ խորություն: Ծնթագրվում է, որ նրանց մեջ օդը մղվել է վերից-վար թեք փողանցքներով, ինչ-որ ուժեղ փուքսերի օգնությամբ¹:

Գառնիում, ձուլարանի մոտ, հայտնարեւելեց կավաման՝ մետաղի նստվածքներով (1965 թ. № 15): Անշուշտ 1961 թ. հայտնարեւելած ձուլման հետ կապված իրերը, կթխանները մետաղի նստվածքով և խարամը նույնպես կապվում են այս հնոցի հետ:

Գառնիի վաղ բրոնզե դարյան միջին շերտի հնոցի հատակից ցած, ստորին կոռուցողական շերտում, մոտ 2,5—3 մ խորութիւնից հայտնարեւելեցին քառակող տեգի ծայր մետաղից (աղ. 13, № 27), կեռիկ (աղ. 17, № 25), խխունջի պատյանով զարդարված օղ (աղ. 14, № 26), ինչպես նաև մանգաղի կալծքարն ներդիր, որի վրա պահպանվել է սլոհանգի հետ ամրացնելու նյութը (աղ. 12, № 48):

¹ Г. Чайлд, Древнейший Восток в свете новых раскопок, М., 1956. стр. 269.

² նույն տեղում:

Կլոր կացարանի հիմքեր, կից քառանկյունի շինություններով հատնա-
րերվեցին ամրոցի երկրորդ տեղամասի նաև այլ քառակուսիներում:

1965 թ. ուշագրտվ էին Գառնիի ամրոցի մյուս հատվածների պեղում-
ները:




Նկ. 15. Կրակարան-օջախ, միջին շերտից:

Ամրոցի հյուսիսային, հյուսիս-արևելյան կողմի տնտիկ շրջանի պարսպից ներս, նրա VII աշտարակի մոտ բացվեց մթա III հաղարամակում վառուցված շրջապարիսպի մի հատվածը, որը ասարածվում է արևելքից-արևմուտք: Այն համարյա ղուգահեռ է անտիկ շրջանի պարսպին, նրանից մոտ 6,2 մ դեպի ներս և դեպի արևելք տարածվելով III աշտարակի մոտ, մտնում է կտրծես անտիկ շրջանի պարսպի տակ:

Շրջապարիսպը հայտնաբերվեց մակերեսից 2,3 մ խորության մեջ: Պահպանված մասն ունի 3 մ բարձրություն: Պատը պեղվել է մոտ 13 մ երկարությամբ: Այս հատվածում շրջապարսպի հիմքի խոշոր ժայռաբեկորների վրա շարված են մեծ քանակությամբ քարե սալեր: Շատ հավանական է, որ շրջապարիսպը կառուցված է եղել հում աղյուսի պատով, ներսը լցված սալ քարերով: Շրջապարսպի նման կառուցողական արվեստը ընդրոշ է նաև Գեոյ-Քեփեհին: Վերջինիս «X» շերտի ընակատեղին նույնպես ունեցել է հում

աղյուսով կառուցված շրջապարիսպ, որի ներսը լցված են եղել ասֆալտ, մեծ քանակությամբ սալ քարեր:

Գառնիի շրջապարսպի տակ, դրսի կողմից բացվեցին անտիկ շրջանի րտրարկղտին թաղանթներ, իսկ հիմքերի մոտ հայտնաբերվեցին մթա III հազարամյակի սև փայլեցրած խեցեղենի բեկորներ: Պարսպի միայն մի փոքր հատվածն է պահպանված դրսի կողմից, իսկ նրա կառուցողական սյուռ մասնաբաժանները դեռևս պարզել չենք կարող:



Նկ. 16. Միջին շերտից հայտնաբերված օջախի գծանկարը


Վաղ րրոնդեդարյան հետաքրքրական նյութեր հայտնաբերվել են ամ-
տոցի նաև երրորդ անդամասում՝ պալատական սրահի տակ, բաղնիքի մոտ,
պարսպի մոտի խրամասներում և այլն:

Երրորդ տեղամասում 3,5 մ խորությունից հայտնաբերվեցին խեցեղենի
լավադուլն օրինակներ. խոյադուլի՝ շոսսեռի ուղիքի պատկերով, սև փայ-
լեցրած և սև աստառով խեցի (1965 թ. № 9, ինչպես վերը տեսանք, նման մի

¹ T. Burton-Brown, Excavations in Azarbaijan, London, 1948, 1951, pt 35.

խեցի էլ հայտնաբերվեց 1964 թ. նկ. 73), գծային երկրաշափսկան դոտիով զարդարված խեցի, որի միջին մասում գծված է ճյուղավորված ծառ (նկ. 45, 1965 թ., № 90):

Այսպիսով, Գառնիի վաղ բրոնզեդարյան շերտերը, չնայած պեղման յայն հրապարակ չեն ընդգրկում և սաստիկ ավերված են, սակայն հարուստ են նյութերով և մեծ հետաքրքրություն են ներկայացնում վերահիշյալ դարաշրջանի մշակութի ուսումնասիրության անսակետից:



Նկ. 16ա. Օշախի կոմպլեքս, Գառնիի վաղ բրոնզեդարյան շերտերից:

Պեղումների միջոցով պարզվեց, որ Գառնիի մթա III հազարամյակի ընդհատեղին շրջապատված է եղել պարսպով: Բնակատեղիում հայտնաբերվեցին շինարարական երեք շերտ՝ կլոր կացարաններով և նրանց կից քառանկյուն շենքերի հետքերով:

Բոլոր շերտերին էլ բնորոշ են միանման նյութեր և նրանց մեջ ժամանակադրական որևէ աարբերություն տեսնելը դժվար է:

Երեք շերտում էլ հայտնաբերվեց փոսիկով զարդարված խեցեղեն:

Ի՞նչ ունի հնդկական և դժային երկրաչափական դարդանախորով խեցեղենը դերազանցում է միջին շերտում, այսինքն ավելի բնորոշ է նրան, սակայն սման ռեկորներ հանդիպում են նաև վերին և ստորին շերտերում:

Այսպիսով, Գառնիում սենք ունենք վաղ բրոնզեդարյան մշակույթի հավանաբար ոչ թե տևական, ժամանակագրական, այլ շինարարական՝ իրադարձապես հաջորդած շերտեր:

Գառնիի մթա III հազարամյակի մշակույթն իր բազմաթիվ զուգահեռներն ունի Հայկական լեռնաշխարհում: Միայն Սովետական Հայաստանի տեղի տարածում հայտնի են արդեն հարյուրի չափ վաղ բրոնզեդարյան հուշարձաններ, իսկ Արևմտյան Հայաստանում այժմ նրանց թրվը հասնում է երեք հարյուրի:

Հայկական լեռնաշխարհում վաղ բրոնզեդարյան հուշարձանների թվով և բազմազանությամբ աչքի են ընկնում Արարատյան դաշտավայրը, Կոտայքի և Հրազդանի շրջանները, Սևանա լճի ավազանը, Տաշիր-Ձորագետը, Շիրակը, Ալաշկերտի հովիտը, Վանանդը, Չալդրանը, Կարինը, Բայրուքը, Վանա լճի շրջակայքը, Մանազկերտի, Մշո դաշտերը, Խաղբերդը և Մալաթիան¹:

Գառնիի վաղ բրոնզեդարյան բնակաբնակիչները ընդհանուր լեռնային, նախալեռնային է, այսինքն կառուցվել է լեռնաճարթակում, մի այնպիսի անդամ, որը շրջապատի նկատմամբ ունեցել է դերիշխող դիրք, իսկ երկրադրժույթյան և անասնապահության դարձացման համար՝ նպաստավոր պայմաններ:

Սման տիպի բնակատեղիներ հայտնի են նաև Կիրովականի մերձակայքում, Ազատե դետի հովտում, էլարում, Սովինարի ամրոցում և այլն: Սակայն Հայկական լեռնաշխարհի դաշտավայրերին բնորոշ են արհեստական բլուրներ, որոնց շարքը կարելի է դասել Արարատյան, Կարնո և Իդրիբի դաշտերի հուշարձանները, իսկ իրանական Ադրբեջանում՝ Գեոյ-թևիեն², Ցանիկ-թևիեն³: Արհեստական բլուրներ հայտնի են նաև Վրաստանում⁴, Հյուսիսային Կովկասում⁵ և այլուր:

Պեղումների ուիջոցով ապացուցված է, որ կիկլոպյան պաշտպանական շրջապարիսպներ են ունեցել նաև Շենդավիթը, Շրեշ-բլուրը⁶, Մուխաննաթ-թափայի ստորին շերտը⁷, Ազթամիրը, Կարսի շրջանի վաղ բրոնզեդարյան հուշարձանները⁸ և այլն:

¹ Հուշարձանների մանրամասն թվարկումն ու նկարագիրը տե՛ս Ե. Վ. Խաղբերդյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մթա III հազարամյակում, Երևան, 1967, էջ 7—32:

² T. Burton-Brown, *op. cit.*, էջ 24—52:

³ C. Burney, Excavations at Jantk-Tepé (North-West Iran), „Iraq“, v. XXIII, № 2, 1961, p. 138—141.

⁴ Б. Куфтин, Археологическая маршрутная экспедиция 1945 г. в Юго-Осетию «Имеретию», ИАН Груз. ССР, Тб., 1949, стр. 54—55.

⁵ Р. Мунчаев, Древнейшая культура Северо-Восточного Кавказа, МИА, № 100, 1961, стр. 32.

⁶ Ե. Բայրուքյան, Հայաստանի դոմազարդ դժարագոյն արտրեմը, ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», գիրք II, Երևան, 1937, էջ 210:

⁷ Նույն տեղում, էջ 276:

⁸ W. Lamb, The culture of North-East Anatolia and its Neighbours. AS. vol. IV, 1954, p. 26.

նույն պատկերը մենք տեսնում ենք նաև Վրաստանում՝ Թրիալիթիում¹, իրանական Աղրբեջանում՝ Յանիկ-Թեփեում² և, ինչպես տեսանք, Գեոյ-Թեփեի «K2» շերտում³:

Կլոր կացարաններ հարակից քառանկյունի շինություններով բնորոշ են Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան ընդհանուր բնակատեղիներին և այդ տվանդույթի գոյությունը մեզ մոտ հավասարում է սկսած մթա V—IV հաղարամյակներից:

Նման ճարարարապետական կառուցվածքներ հայտնաբերվել են իրանական Ագրբեջանում՝ Գեոյ-Թեփեի «K» շերտում⁴, Յանիկ-Թեփեում⁵:

Հայկական լեռնաշխարհի ճարտարապետական ձևերը խեցեղենի հետ միասին մթա III հաղարամյակում թափանցել են Կիրբեթ-կերակ: Բեթ-Նդալում 1944—1946 թթ. պեղումների ժամանակ հայտնաբերվել են կլոր կացարաններ, որոնք ունեն նույն կառուցողական մանրամասները և նույն տրամագիծը, ինչ որ Շենգավիթի և Յանիկ-Թեփեի կլոր կացարանները⁶:

Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան բնակատեղիներին բնորոշ են նաև տնտեսական-կենցաղային տարրեր նպատակների համար օգտագործվող բազմաթիվ հորերը: Բացի Գառնիից, նման հորեր բնորոշ են նաև Շենգավիթին, էլարին, Քոսի-ճոթերին և այլն:

Այսպիսով, Գառնիի և ընդհանրապես Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան ամրոց բնակատեղիների ամրոցչական պլանը մեզ գեոևս հայտնի չէ, սակայն նրանցում հայտնաբերվել են բնակարանային կոմպլեքսներ՝ ռադիացած կլոր կացարաններից, նրանց կից քառանկյունի մեծ ու փոքր օժանգակ կառուցվածքներից ու անասնական նշանակություն ունեցող այլ կոմպլեքսներից, որոնք պատկանել են, ըստ երևույթին, առանձին մեծ գերգաստանի, կամ ընտանեկան համայնքների:

Գառնիում շնայած հացահատիկ գեոևս չի հայտնաբերվել, սակայն բաղամատեսակ աշխատանքային գործիքները՝ մետաղից, ոսկրից և քարից, վկայում են երկրագործության առաջընթացը:

Հայտնաբերված ոսկրարանական նյութի ուսումնասիրությունից պարզվում է, որ Գառնիում խոշոր եղջերավոր կենդանիների կողքին (*Bos taurus*, գոմեշի—*Bos bubalus*) մեծ անղ են գրավել մանր եղջերավոր կենդանիները (ոչխարը—*Ovis ophion* + *aries*, այժը՝ *Capra aegagrus* + *domestica*):

Բացի այդ, հայտնաբերվել են նաև խոզի (*Sus domesticus*), ձիու (*Equus caballus*), էշի կամ ջորու (*Equus asinus* կամ *Hemionus*) և շան ոսկորներ⁷: Այսպիսով, Գառնիում խոշոր եղջերավոր կենդանիների կողքին մանր-եղջերավոր կենդանիների գլխաքանակի աճը վկայում է հեռագնաց անասնապահության դարգացած լինելը, որի լավագույն ապացույցներից են նաև ձիու, էշի կամ ջորու և շան ոսկորների հայտնագործությունը:

¹ Б. Куфтин, Археологические раскопки в Триалети, Тб., 1940, стр. 108.

² С. Burney, նշվ. աշխ., էջ 141—142.

³ Т. Burton-Brown, նշվ. աշխ., էջ 35.

⁴ Նույն տեղում, էջ 34.

⁵ С. Burney, նշվ. աշխ., էջ 144.

⁶ Ruth Amiran, Janik-tepe, Shengavit and the Khirbet-Kerak Ware. AS, vol. XV 1965, p. 167.

⁷ Ոսկրարանական նյութերի նախնական ուսումնասիրությունները գատարել է Ս. Կ. Գալը և հրատարակված է Б. Аракелян, Гарни. I. стр. 26.

Գտննիում որսորդության դուրսիցն են վկայում հղբերուի Cervus
caerphus), վայրի ալօն ու ուխարի, նապաստակի (Lepus europaeus), լեռ-
նային կաթավի (Alectoris graeca) ոսկորների հատնագործությունը:

Գտննիի մթա III հաղարամյակի շերաների պեղումները գեոևս փոքրա-
ծավալ են, նրանց սիսանսաուիկ պեղումներով անշուշա ի հատ կգան ար-
վեքսովոր նոր նյութեր, որոնք կօգնեն լուսարանելու Հայկական լեռնաշխար-
հի վաղ բրոնզեդարյան սշակուլթի հետ կապված մի շարք կարևոր հարցեր:

**ՎԱՂ ԲՐՈՆՉԵԳԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԻ ՊԵՂՈՒՄՆԵՐՈՎ
ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԻՐԵՐ**

Գառնիի վաղ բրոնզեգարյան բնակատեղիի պեղումներն արժեքավոր և հետաքրքիր նյութեր են տվել տեղարնակ ցեղերի մթա III հաղարամյակի տնտեսության, զբաղմունքների, սոցիալական կարգի և հոգեոր մշակույթի մի շարք հարցերի լուսաբանման համար:

Հայտնարեբրված նյութերում առաջնակարգ աեղ են զբաղում աշխատանքային գործիքները:

Աշխատանքային գործիքները հանգես են գալիս մարդկային հասարակության ծագման հետ մեկտեղ և նրանց զարգացմանը համընթաց փոխվում են արտադրության միջոցները, հասարակության կյանքն ու անտեսությունը:

Վաղ բրոնզեգարյան գործիքները նախորդ գարաշրջանի գործիքներից տարբերվում են իրենց բաղամաղանությունը, ավելի կատարյալ ձևերով և մետաղի արգեն բավականաչափ լայն կիրառումով: Նրանք զարգացման մի նոր, ավելի բարձր աստիճան են նշանավորում:

Ուսումնասիրությունից պարզվում է. որ Գառնիում հայտնարեբրված աշխատանքային գործիքները օգաագործվել են անտեսության ասարեր բնագավառներում՝ երկրագործության, որսորգության, ձկնորսության, մանածագործության, խեցեգործության, փայտամշակման, կաշեգործության մեջ և այլն:

Հայտնարեբրված աշխատանքային գործիքները մեծ մասամբ պատրաստված են քարից, եղջյուրից, ոսկրից, կավից, մեաաղից և այլն: Փայտից և տյլ անկայուն նյութերից պատրաստված գործիքները գարերի ընթացքում ոչնչացել և մեղ չեն հասել:

Ա. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ՔԱՐԻՑ

Վտգ բրոնզի զարաշրջանում քարե գործիքները գեոևս երկար ժամանակ լայն կիրառություն են ունեցել տնտեսության ասարեր բնագավառներում. կենցաղում: Սակայն նախորդ փուլերի համեմաա վաղ բրոնզի գարաշրջանում քարե գործիքների որոշ տեսակներ՝ ծակող, կտրող, իրենց տեղը զիջում են մետաղին:

Հնագիտական նյութերի միջոցով պարզվում է, որ վաղ բրոնզեգարյան տեղարնիկ վարպետները ծանոթ են եղել սարատեսակ քարերի մշակման:

և դանակներին, որպես հուաք օգտագործելով Հայկազան բարձրավանդակը արտակարգ արուստ լեռնալիս, մասնավանդ հրաբխալիս ծագում ունեցող ասպարնները:

Գտնիում հայտնարերված նյութերի մեջ հատկապես մեծ տեղ են զբաղում երկրագործության հետ կապված աշխատանքային գործիքները:


Պեղումների միջոցով ապացուցվում է, որ Հայկական բարձրավանդակում և ընդհանրապես Անդրկովկասում, Հյուսիսային Կովկասում, Արեւելյան Իվրոսայում և այլուր, վաղ բրոնզի դարաշրջանում հացահատիկի վայրի տեսակների կողքին մշակել և օգտագործել են արդեն կուլտուրական հացահատիկների տեսակները:

Շենդավթում, էլարում, Արևիկում (Արմավիրի Մոխրարուր), Նախընթացի Քուլթ-Յափայի II շերտում և այլուր, ընկարաններում, կարանների մեջ, հորերում հայտնարերվել են կլարահատիկ ցորենի, վեցաշար կլարահատիկ դարու, հաճարի հատիկներ և այլն:

Մանգաղի ներդիրներ, սղոցիկներ, դանակներ, շեղբեր

Գտնիում հայտնարերվել են բերքահավաքի գործիքներ՝ մանգաղի ներդիրներ:

Կայծքարի վեց ներդիր է հայտնարերվել, որոնք ունեն դողավոր բանուկեր և մասամբ քսուանկունաձև մի փոքր ուռուցիկ մեջք: Բանուկ եզրն ունի ատամնաշար, որը երկու կողմից մշակված է ուսուղով (նկ. 17): Լավ մշակված ատամնաշարով ներդիրներից մեկի վրա պահպանվել են կուլտի մնացորդները, որով ներդիրը ամրացվել է պահանդին (աղ. I, 1965 թ., № 48):



Նկ. 17. Սրբիղաքարի ներդիր և նետասլաքներ:

Մանգաղի ներդիրները հանդիպում են համարյա բոլոր վաղ երկրագործական ընկատեղիներում: Անծ քանակությամբ ներդիրներ են հայտնարերվել Շենդավթում, Քոսի ճոթերում, էլարում, Դվինում:

Մանգաղի նման հավաքչական ներդիրներ հայտնի են ելել երկրագործ-


ծախումը զբաղվող շատ ժողովուրդների և օգտագործվել են սկսած նեոլիթից մինչև ուշ բրոնզի դարաշրջանը:

Գառնիում, րացի կայծքարի ներդիրներից, հայտնաբերվել է նաև մանգաղ բրոնզից, որի մասին կիսովի մետաղի բաժնում:

Գառնիի վաղ բրոնզեդարյան ընկատեղին բավականին հարուստ է օրսիդաքարի տարրեր ձևերի դանակներ-պլաստիկներով, քերիչներով, շեղբերով, քերծերով և այլն (աղ. II):

Հայտնաբերվել են նաև օրսիդաքարի միջուկներ (նկ. 18, № 2288/13):

Ուշագրավ է հատկապես սև, ոչ թափանցիկ օրսիդաքարի քերիչ-դանակը՝ երկարավուն ծոված և ձգված իրանով, երկու եզրերը երկկողմանի ուսուշով մշակված (աղ. I, 1965 թ., № 36):



Նկ. 18. Օրսիդաքարի միջուկներ և դանակ:

Կայծքարի և օրսիդաքարի դործիքները կարող էին տարբեր նպատակների ծառայել՝ կտրելու, քերելու, սողցելու, կենդանիների մաշկը քերթելու և այլն: Նման դործիքներ ընդհանուր են վաղ բրոնզեդարյան բոլոր ընկատեղիներին:

Աղտրիֆները հացահատիկը մանրելու, աղալու ամենանախնական գործիքներն են, որոնք պեղումների ժամանակ հայտնաբերվում են ամենուրեք և բաղմաթիվ օրինակներով:


Գառնիի ստորին շերտերի պեղումների ժամանակ հայտնաբերվել են վաղ բրոնզեդարյան ասորեր ձևերի և մեծության աղտրիքներ: Այդ աղտրիքները բաղկացած են ստորին, հիմնական և վերին արտիչ քարերից:

Ստորին հիմնական քարերը ըստ ձևի կարելի է բաժանել հետևյալ տիպերի. 1. դնդաձև, բարձր գլխամասով և դոգավոր աշխատող մակերեսով աղտրիքներ (նկ. 19, վերևին), 2. ոչ շատ բարձր գլխամասով աղտրիքներ (նկ. 19, ներքևին), 3. երկարավուն ձվաձև մակերեսով և ուռուցիկ ներքնամասով աղտրիքներ, 4. քառանկյունաձև դոգավոր կամ տափակ մակերեսով աղտրիքներ:

Աղտրիքների մյուս մեծ խումբը կաղմում են վերին արտիչ քարերը: Նրանց համար որպես նյութ ծառայել են խոշոր որձաքարերը:

Ըստ ձևի այս աղտրիքները երկու տիպի են. երկարավուն, կլորացող վերջավորութուններով և մակույվաձև:

Գտնուած հատնարեցողութեան արդիւրեաներից երկուսն ամբողջական են և հինգր թերի (№ 1963/88):



Նկ. 19. Աղորիքներ:

Մակուկաձև աղորիքները իրենց երկտրութեամբ դերադասուած են ներքին հիմնական քարի լայնքին, նրանց դեպի վեր ընկած ծայրերը հարմարեցված են երկու ձեռքով բռնելու և ստորին մեծ քարի վրա հետ ու առաջ շարժելու համար, որի հետևանքով աղորիքի աշխատող մակերեսը մաշվում և զոգավորվում է. իսկ ծայրերը ընդհանուր են մնում: Մակուկաձև աղորիքների երկու խումբ ունենք. 1. Վեր ընկած սրածայր վերջավորութիւններով, որոնք ստացվել են հավանաբար երկու աղորիքների, այսինքն ստորին և վերին քարերի երկարուտե շփման հետևանքով, 2. Կիսաշրջանաձև կամ տափակ ընկած հրապարակ կազմող վերջավորութիւններով, որոնք ոչ թե աշխատեցնելու հետևանքով են ստացվել, այլ մարդու ձեռքով են պատրաստվել, աշխատանքին հարմարեցվել: Այդ իսկ պատճառով հավանաբար առաջին տեսակի մակուկաձև աղորիքները նախորդել են վերջիններիս (աղ. III):

Աղորիքների տարածման սահմանները շատ մեծ են և նրանք բազմաթիվ զուգահեռներ ունեն վաղ երկրագործական համաժամանակյա հուշարձաններում:



Սաճիկ և սաճիկաձև, օղտաղործվել են դեռևս նեոլիթից՝ երկրագործական մթերքների մշակման, մանրացման համար, սակայն լայն տարածում են ստացել վաղ բրոնզի դարաշրջանում: Սանդերի և սանդիկների միջոցով հնարավոր էր դարին և հաճարը կեղևահան անել:

Սրբեմն նրանցում՝ մանրել և տրորել են նաև ներկեր: Այս գործիքներով կարելի էր ստանալ ալյուր՝ ոչ մեծ կարիքները բավարարելու համար:

Սանդղոթներ հայտնաբերվել են մեծ քանակությամբ: Բոլորը գերազանցապես բնական գետաքարից են (նկ. 20, աղ. IV):



Նկ. 20. Սանդղոթ գլանաձև



Նկ. 21. Մուրճ, ծանրոցաքար-կախիկներ:

Սանգերը և սանդղոթները շատ հրկար ժամանակ են ալյուրի և հասի ևն մինչև մեր օրերը:

Գառնիի վաղ բրոնզեդարյան մշակույթին բնորոշ են քարե նաև այլ գործիքներ:

Կոկիչներ, գերազանցապես օգտագործվել են խեցեղենի մակերեսը կոկիչուն, հարթեցնելուն (աղ. VI): Կոկիչները բնորոշ են վաղ բրոնզեդարյան բոլոր բնակատեղիներին:

Մուրճեր, ըստ ձևի հրկու տիպի են. հրկարավուն քառանկյունաձև և տակաոձև եռմասանի (նկ. 21):

Մանրոցաքարեր, սուզաքարեր, Գառնիում գեոկս սակավաթիվ օրինակներով են հայտնի:


Մանրոցաքար-սուզաքարերից մեկը մասսիվ է, քառանկյունաձև (նկ. 22):

Նրկու փոքրիկ սուզաքար-ծանրոցաքարերը միօրին մասում ունեն կոնաձև ընդլայնակի փորվածքներ (նկ. 21, ներքևում): Նրանք գուցե կախվել են ձկնորսական ցանցին, որպես սուզաքարեր կամ օգտագործվել որպես ծանրոցաքար՝ ջուլհակագործական դադահի թելերի համար: Նման գործիք-

անր բնորոշ են Շենդավթին, Արսիկին, Նախրջեանի Քյուլ-Յափալին, Հյուսիս-արևելյան Կովկասի բնակատեղիներին և այլն:

Նետասլաֆներ, բացի վերոհիշյալ դործիքներից, Գառնիի վաղ բրոնզե-վարյան շերտերից հայտնաբերվել են նաև որսորդական ղենքեր՝ նեասալաք-ուեր, օբսիդաքարից և կայծքարից:

Հատնաբերված եռանկյունաձև նետասլաքները երկու տիպի են՝ պոչուկով և փորված հիմքով (նկ. 17): Պոչուկով նետասլաքները բնորոշ են Գառնիի վաղ բրոնզեդարյան ստորին և միջին շերտերին, պատրաստված են կայծքարից և օբսիդաքարից: Նման երեք նետասլաքներ են հայտնաբերվել (ԸՆ՝ 1365/215, Մ՝ 1966/1, Մ՝ 2288/99):



Նկ. 22. Կոկիլներ և ծանրոցաքար:

Փորված հիմքով, եռանկյունաձև ընդամենը մեկ նեասալաք է հայտնաբերվել: Այն պատրաստված է կաթնադուլն օբսիդաքարից (Մ՝ 1964/42): Լիշաձև փսրվածքը նեղ է և խորր, թևի մեկը՝ կոտրված:

Փորված հիմքով նետասլաքները ավելի լայն տարածում են ստանում միջին և հատկապես ուշ բրոնզի դարաշրջանում և շնչին փոփոխություններով դարեր շարունակ պահպանվել են մետաղե նետասլաքների կողքին և երբեմն թվով դերադանցել նրանց:

Վերը նկարագրված կայծքարե և օբսիդաքարե նեասալաքները լայն տարածում ունեն համարյա բոլոր վաղ բրոնզեդարյան բնակատեղիներում:

Բ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ՈՍԿՐԻՅ, ԿԱՎԻՅ ԵՎ ԵՂՋՅՈՒՐԻՅ

Գառնիի մթա III հաղարամյակի շերտերում հայտնաբերվել են բազմաթիվ և բաղմատեսակ ոսկրե դործիքներ, որոնք օգտագործվել են մանա-

ծագործության, գորգագործության, կաշեգործության, խեցեգործության մեջ
և կենցաղային տարբեր նպատակների են ծառայել:

Հերուններ, կոկիչներ

Գառնիի ոսկրե գործիքների մեջ գերտղանց մեծտամանութուն են կառ-
մում հերունները և կոկիչները, որոնք հայտնի են գեոևս քարե դարից:

Պատրաստված են մանր եղջերավոր կենդանիների ոտքի ոսկրներից՝
ոտնաթաթային և արմնկային ոսկրից (նկ. 5, ձախից 1-ը), որոնց անմշակ
էպիֆիզները ծառայել են որպես բռնակ, իսկ վերին ծայրերը մի փոքր սրև
են՝ աշխատանքին հարմարեցնելու նպատակով:

Աշխատանքի հեռանքով փայլուն են գործիքների ոչ միայն ծայրերը,
այլև աշխատող տմբողջ մակերեսը:

Գառնիի վաղ բրոնզեդարյան շերտերում հայտնաբերվել են տարբեր շա-
փերի և մեծութան մոտ քառասունհինգ հերուններ-կոկիչներ, որոնցից ամե-
նամեծի երկարությունը 14 սմ է, իսկ ամենափոքրինը՝ 7 սմ (նկ. 5, աղ VII,
VIII):

Հերուն-կոկիչների բաղմաղտնությունն ու մեծ թիվը վկայում է նախ
նրանց շառ գործածական լինելու, ապա և աշխատանքի տարբեր բնագա-
վառների ն ծառայելու մասին:

Անշուշտ նրանք օգտագործվել են ոչ միայն ծակելու, այլև կոկելու, կա-
վանոթները գարգանախշելու համար, կաշեգործության մեջ և այլն: Նրանք
հայտնի են բոլոր վաղ բրոնզեդարյան բնակատեղիներում:

Ասեղներ, շյուղեր, իլիկի գլուխներ

Գառնիում հայտնաբերված ոսկրե իրերի մեջ հատկապես մեծ աեղ են
բռնում մանածագործության հետ կապված գործիքները, ասեղները, շյուղերը.
իլիկի գլուխները, կկոցի (մաքոքի) դեր կատարող ոսկրե գործիքները և այլն:

Գառնիում հայտնաբերվել են մի շարք ասեղներ (նկ. 23, աղ. VII),
որոնց առկայությունը ապացուցում է, որ մթա III հաղարամյակի տեգաբնիկ-
ները կարել են ռավականաչափ նուրբ թելով:


Նուրբ գործվածքների առկայությունը Հայնպան լեռնաշխարհում ապա-
ցուցվում է սկսած մթա V—IV հաղարամյակներից, էջմիածնի Քեղուտ բնա-
կատեղիի, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղում, Սաեփանակերտի № 103,
119, 125 դամբանարկուրների աեքստիլային խեցեղենի գործվածքներով:

Գառնիում հայտնաբերվել են նաև ոսկրե շյուղեո երկաթ. նեղ և կլորա-
ցող իրանով, ստորին մասը մի փոքր ավելի հասա և կլոր (նկ. 23, աջից II-ը
(№ 1966/66, 1965 թ., № 55), ամբողջ մակերեսը աշխատված և փայլուն.
Նման շյուղերի լավագույն օրինակներ հայտնաբերվել են Շենգավթում
(№ 1330/200, 206, 346), էլարում (№ 127/22) և այլուր: Հավանաբար այս
շյուղերով գործվածքներ են գործել, թել հյուսել, ինչպես նաև կաշվից փո-
կեր, կապեր գործել և այլն:


Թելը մանեկ են իլիկներով: Գտնելում սր շարք իլիկի գլուխներ են հայտնարերվել (նկ. 4, 24):

Մանածագործության են ծառայել նաև կենդանիների կողոսկրները, ուտնց վերին, լայն ծայրում անցք է բացված (աղ. VII, VIII): Սրանց վրա կարող էին թել վաթաթել, ասինքն՝ հինադանի դեր կարող էին կատարել, սակայն բացառված չեն նրանց նաև ալ ֆունկցիաները:

Նման հինգ կողոսկրներ են հայտնարերվել Գտնելում (№ 2234/174, № 2288/12): Այս ստույգներն են հայտնարերվել: նաև ոսկրն երկարավուն տափակ դործիք (№ 2234/174), որը բոլոր կողմերից մշակված է (աղ. VII միջին շարք, աջից 1-ը): Այն հավանաբար նույնպես կապված է մանածագործության հետ, թերևս թելերը և դործվածքը հարթեցնելու համար: Նման դործիքներ հայտնարերվել են նաև Շենգավիում (№ 1330/207, 208): Ղաղախի Բարա-դեվրիշ ընկառնողում հայտնարերվել են և կենդանու կողոսկրների անցքով, և տափակ երկարավուն դործիք¹:



Նկ. 23. Ասեղներ, շուղ և համար:



Նկ. 24. Իլիկի գլուխներ և մանածագործական ալ դործիքներ:

¹ Г. С. Исмаилов, Из истории древнейшей культуры Западного Азербайджана, Автореферат, Тб., 1963, табл. VI.

Հավանարար մանածագործության հետ են կապված Գառնիի ստորին շերտերում հավանարբրված կավից պատրաստված երկու գործիք: Մեկը թելի կուճ է հիշեցնում, րավականին բնորոշ ձև ունի՝ երկու կողմից ներձկված իրան և մի փոքր ներձկված շրջանաձև մակերեսներ, եղբերը ունենի շեղված, կենտրոնում խողովակաձև անցք (նկ. 24, մեջտեղինը, № 2144/11): Պատրաստված է ռաց դեղնավուն կավից, թրծված է: Հավանարար նրա վրա թել է փաթաթվել:


Մյուս գործիքը իբ արտաքին տեսքով հիշեցնում է ոչխարի ճանր, սակայն ստորին մասը դաաարկ է և մի փոքր դեպի գուրս ճկված, ուռուցիկ (նկ. 24, ստորին շարք, ձախից, աղ. XXIII, № 2176/95): Կենտրոնում ունի կլոր անցք: Այս գործիքը շորս կողմից ներձկված է:

Բացի վերոհիշյալներից, Գառնիում հայտնաբերվել են գործածական այլ նշանակություն ունեցող գործիքներ ևս:

Ոսկրե գործիքներից մեկը տափակ է, մեկ ծայրը ձվաձև, վերջավորությունում փոքր անցք (հավանաբար կախելու համար), մյուս ծայրը ավելի լայն է և ջարդված (աղ. I, 1965 թ., № 21): Այն հավանաբար բրուտի գործիք է՝ զարդանախշեր սաանալու համար:

Մեկ այլ գործիք հերոնի ախյի է, երկարավուն իրանով, մեկ ծայրը սուր, մյուսը լայն և թիանման տափակեցված (№ 2235/101): Այն ևս զարդ էր օգտագործվել որպես բրուտի զարդանախշման գործիք և կարել էր կոսմետիկային ծառայել (ականջամաքի):

Բացի վերոհիշյալ աշխատանքային գործիքներից Գառնիում հայտնա-



Նկ. 25. Ոսկրե սրածայր գործիք և կախազարդեր:

բերվել են նաև ոսկրե զարդեր, օրինակ, կարմիր ներկված թուղունի ոտքի ոսկր, վերին մասում անցք՝ կախելու համար (նկ. 25, ձախից II-ը, 1964 թ., № 29): Հավանարար այն կախի են վզից: Նման կախազարդ-հմախիներ հայտնաբերվել են նաև Մեծամորում:

Գառնիում գտնված մյուս տիպի կախազարդերը պատրաստված են եղջերուի մասի ոսկրից (նկ. 25): Անշուշտ նրանք օգտագործվել են որպես զարդարանք-հմախիներ՝ վզից կախելու կամ հագուստի վրա ամրացնելու համար:

Սղջերուի մասի ոսկրից նման կախազարդեր մեծ քանակությամբ կիսապրված վիճակում հայտնաբերվել են Քոսի-ճոթերում¹, Շյարում (№ 127/144), Գեոյ-թեփեում² և այլուր:


Գառնիում հայտնաբերված իրերից են նաև քարից և կավից պատրաստված կախազարդերը (նկ. 23), ուլունքներն ու կոճակները (№ 2235/128d):

Վաղ բրոնզեդարյան մշակույթին բնորոշ են նաև եղջյուրից պատրաստ-

¹ է. Վ. Խաճգալյան, Հնոսախուղական պեղումներ Կիրովսկանի մերձակայքում, «Տեղեկագիր», № 10, 1962, էջ 83, աղ. 3, նկ. 1: Նույնի, Энеолитические поселения близ Кировска, С. А., № 1, М., 1963, стр. 103, 131, рис. 1:

² T. Burton-Brown, Excavations in Azarhaljan, նկ. 1300-1302:

ված դործիքները: Հատնարերված եղջյուրներից սեկր աղեղնաձև է. հիմքի ստ ալնայես է կարված, որ հարմար է ձեռքոա բռնելու, աշխատեցնելու, գույն և փայլան կոթտոին կապելու համար (նկ. 26, № 1966/15): Եղջյուրի վրա .դահպանվել են աշխատանքի հետքերը, եղբերը մաշված են և փայլուն: Այն կարող էր օգտագործվել որպես փորելու, բրիչի տիպի գործիք, գուցե և այլ Դունկցիաներ յատարեր:



Նկ. 26. Գործիք եղջյուրից:

Գտնիում գտնված փոքր եղջյուրները սրված, աշխատեցված ժայր ունեն փայլեցրած մակերես (№ 1964/71):

Ուշագրության է արժանի նաև ձիու ոտքի ոսկրը, որը մշակված է սղոցված և առաջացած հարթ հրապարակում երկու անցք բացված (նկ. 7, №2234/106): Այն գուցե և կոթաոի դեր է կաաարել կամ այլ նշանակութուն ունեցել:

Գ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ, ԶԱՐԴԵՐ ՄԵՏԱՂԻՑ

Գտնիում մեաաղե իրեր շնայած գեոես քիչ քանակությամբ են հայա- նարերվել (բնդամենը հինգ օրինակ), սակայն վաղ բրոնզեդարյան շերտերում պեղված մի շարք այլ նյութեր վկայում են մետաղագործության, մեաաղա- ձուլության գոյության փաստը Գտնիում՝ մթա III հաղարամյակում:

Մեաաղե իրեր հայտնարերվել են Գտնիի վաղ բրոնզեդարյան ստորին և միջին շերտերում:

Ստորին շերտում 1965 թ. պեղումների ժամանակ հայտնարերվեցին երեք իր՝ քառակող տեղի ծայր, կեոիկ և օղ՝ վրան ագուցված խխունջի պատ- յան (աղ. I)¹: Այս իրերը գտնվեցին սամրոցի կենտրոնտիսն մասում՝ ստորին շերտի վերը նկարագրված կլոր կացարանից գուրս, նրա արեմտյան կողմում, 19 և 20 ք քառակուսիններում՝ 2,8—3 մ խորության մեջ:

Քառակող տեղի ծայրը (աղ. I3) ամրոզական է. 10,8 սմ երկարությամբ,

¹ Այդ իրերի անայիղները կատարել է պրոֆ. Ի. Ռ. Սե.խմխանովը:

միջին մասը ավելի հասա և լայն, սակայն երկու կողմի վրա: նեղանալով բարականում, սրվում է: Նրա մի ծայրը բութ է, մյուսը սուր (№ 27):

Քանակական-սպեկտրալ անալիզից պարզվում է, որ նրանում պղնձի հետ խառնված է 5% մկնգեղ, 14,7% կապար, 0,05% անագ, 0,004% բիսմութ, 0,11% արծաթ, 0,02% նիկել և 0,7% երկաթ:

Նման քառակող տեգի ծայրեր հայտնաբերվել են նաև Շենդավթում (№ 1330/89), Նախիջեանի Քյուլ-թափայի II շերտում¹:

Հայկական լեռնաշխարհում քառակող տեգի ծայրեր հայտնի են դեռևս մթա V—IV հազարամյակները մշակույթում: Նրանցից մեկը հայտնաբերվել է էջմիածնի շրջանի Թեղուտ բնակատեղիում՝ Ռ. Թորոսյանի կողմից և թվագրվում է մթա V հազարամյակի վերջով և IV հազարամյակի սկզբով². Հսա քանակական-սպեկտրալ անալիզի, նրանում պղնձի հետ միացված է 3,6% մկնգեղ, 0,18% արծաթ, 0,25% բիսմութ և 0,1% նիկել³:

Մեկ այլ քառակող տեգի ծայր հայտնաբերվել է Նախիջեանի Քյուլ-թափայի I շերտում, 15,05 մ խորությունից և թվագրվում է IV—III հազարամյակով: Նրանում պարունակվում է 1,15% մկնգեղ, 1,6% նիկել, 0,2% ծարիր և այլն⁴:

Վերոհիշյալ տվյալներն ապացուցում են, որ Հայկական լեռնաշխարհում մկնգեղային բրոնզի ստացման եղանակին տեղաբնիկները ծանոթ են եղել դեռևս մթա V հազարամյակի վերջին և IV հազարամյակի սկզբին:

Այսպիսով մկնգեղային բրոնզ ստանալու ավանգույթը շարունակվել և ավելի լայն տարածում է գտել մթա III հազարամյակում:

Վրաստանում ևս հայտնաբերվել են քառակող տեգի ծայրեր մթա III հազարամյակի մշակույթում՝ Ամիրանիս Գորայում⁵:

Կեռիկ (աղ. 17), ծամված է, իրանը միջին մասում կլորացող: Մեկ ծայրը կեռ է, իսկ մյուս կողմում իրանը աստիճանաբար նեղանում և ավարտվում է շատ սուր ծայրով (№ 25): Անշուշա այս ծայրն ագուցվել է փայտե կոթառի մեջ և հավանաբար օգտագործվել տնտեսության մեջ որպես կեռիկ: Այն ամբողջական է, ծամված վիճակում ունի 9,5 սմ երկարություն: Հսա քանակական-սպեկտրալ անալիզի ավյալների, պղնձի հետ նրանում խառնված է 1,2% մկնգեղ, 0,02% անագ, 0,02% կապար, 0,15% ծարիր, 0,022% արծաթ, 0,2% նիկել և 0,7% երկաթ:

Օղ, վրան ագուցված խխունջի պատյան (աղ. 14), ունի կլորացող իրան, որը միջին մասում հաստ է (6—7 սմ տրամագծով) և դեպի ծայրերը դալով աստիճանաբար բարակում է, նեղանում և մի փոքր ափակում (№ 24): Օղի վրա հագցված է խխունջի պատյան: Այն գեռևս միակ օրինակն է վաղ բրոնզեգարյան մշակույթում:

Հստ քանակական-սպեկտրալ անալիզի ավյալների, օղը պատրաստ-

¹ О. А. Абибуллаев, К вопросу древней металлургии Азербайджана, МИА, № 125, МЛ, 1965, стр. 67, рис. 1, 2, 4, стр. 68.

² И. Селимханов, Р. Торосян, К определению «энеолита» на территории Закавказья по данным анализа металлических предметов. *Պատմա-բանասիրական հանդես, 1966, № 1, էջ 306, տե՛ս աղյուսակը, 307 էջում:*

³ Նույն տեղում:


⁴ Նույն տեղում:

⁵ Т. Н. Чубинишвили, Амиранис Гора, Тб., 1963, стр. 73, рис. 14₂.

ված է կապարից, շնչին քանակությամբ բխսնուտի 0,01%, արծաթի 0,05% և երկաթի 0,002% խառնուրդով:

Կապարից պատրաստված իրերը պատահականություն չեն վաղ բրոնզի մշակություն: Մաքուր կապարից է պատրաստված Նախըջեանի Քյուլ-թափայլի II շերտում հայտնաբերված խողովակաձև կոթառանսան իրը¹: Կապարից իրեր հայտնաբերվել են նաև Ամիոանիս Գորայում²:

Քացի վերոհիշյալ իրերից, ինչպես վերը նշվեց, սառրին կացարանի ներսում, կավե նստարան-մահճի վրա, 1961 թ. պեղումների ժամանակ



Նկ. 27. Կացնի կաղապար, սառրին շերտից:

Հայտնաբերվեց կացնի կաղապար (նկ. 27): Նրա կողքին գտնվեցին ոսկրե հերոններ և ասեղ, կավե իլիպր գլուխ, մանկական սալի անիվ, ներձկված փոսիկներով զարգարված սև փայլեղրած խեցեղեն՝ շուրթից սկսվող և նրա վտ բուսնկյունաձև հարթուկ կաղմող երկթեք կանթով (նկ. 28):

Հայտնաբերվել է երկփեղկանի կաղապարի սեկ փեղկը (№ 2234/150)³: Պատրաստված է հրակայուն կավից, մակերեսը հորիզոնական կտրվածքում երևե կողմից տափակ է, լավ հղկած, կոկած, որպեսզի երկրորդ փեղկը լավ նստի վրան, իսկ շորրորդ կողմն ուժեղ թեքվում է գծալի ներս և հարմարեցված է հալած մետաղը կաղապարի մեջ լցնելու և գաղերը միջից գուրս գալու համար: Կաղապարի կոթառի և բերանի կողմերում արված են մեկական կլոր, փսքր անցք, որոնք ծառայել են երկու փեղկերը սեպիկներով իրար միացնելուն: Այս կաղապարով ձուլվել է կոթառով սեպաձև կացին, որի զիպս օրինակի երկարությունը 11 սմ է (նկ. 29):

Կոթառով սեպաձև կացնի կաղապարներ հայտնաբերվել են նաև Շենյավթում⁴ և Նախիջևանի Քյուլ-թափայլի II շերտում:

Շենյավթի կաղապարի մի շարք հասկանիչներ, օրինակ, երկու փեղկերն իրար միացնելու համար արվող անցքերի բացակայությունը, կոթառի համար անցքի պրիմիտիվ փորվածքը, ապա հալած մետաղը կաղապարի

¹ Օ. Ա. Абибуллаев, նշվ. աշխ., էջ 67, նկ. 1, էջ 68:


² Կ. Ն. Чубнишвили, նշվ. աշխ., էջ 99:

³ Է. Խաճադյան, Մետաղագործության առաջին փաստերը Հայկական լեռնաշխարհում՝ հնագույն բրոնզի դարաշրջանում, «Պատմա-բանասիրական հանդես» № 3, 1963, էջ 300, նկ. 21: Նույնի, О металлургии древне-бронзовой эпохи в Армении, СА № 2, М., 1964, стр. 94 նկ. 21:

⁴ Ունի բազմաթիվ հրատարակություններ:

⁵ Օ. Ա. Абибуллаев, նշվ. աշխ., էջ 68, նկ. 23:

մեջ լցնելու հարմարանքի բացակայությունը ենթադրել են տալիս, որ Շենդավթի կաղապարն ավելի արխաիկ ձև ունի, իսկ Գառնիինը, նրա համեմատ, ավելի կատարելագործված է. հետևարար Գառնիի կաղապարը ժամանակագրորեն հաջորդել է Շենդավթի կաղապարին և նրանից մի փոքր ավելի երիտասարդ է:



Նկ. 28. Սև փայլեցրած դավաթ, զարդարված փոսիկով:

Նախիջևանի Գյուլ-թափայի կոթառով սեպածե կացնի երկփեղկանի կաղապարը որոշ հատկանիշներով նման է Գառնիի կաղապարին, հայտնարեբվել է II շերտի սառրին խավերում՝ Գառնիի ախյի մեկկանթանի սև փայլեցրած դավաթների հետ, և ժամանակակից է նրան¹:

Հայկական լեռնաշխարհում բացի կաղապարներից հայտնարեբվել են նաև կոթառով սեպածե կացիններ՝ լենինականում² և Մալաքլուփ «կավի քաղաքում»³: Այս կացինները մի շարք ղուդահեռներ ունեն Վրաստանում և Հին Արևելքի մշակույթում: Զուդահեռներից պարզվում է, որ կոթառով սեպածե կացինները և կացնի կաղապարները Հայաստանում և Վրաստանում ուղեկցվել են համանման նյութերով, ժամանակակից են միմյանց և մասնադեանների մեծամասնության կողմից թվագրվում են մթա III հաղարամյակի II կեսով:

Ելնելով վերոհիշյալ փաստերից, Գառնիի կացնի կաղապարը նույնպես կարելի է թվագրել մթա III հաղարամյակի II կեսով, ավելի կոնկրետ մթա XXIV—XXIII դդ:

Հեռահարար Գառնիի վաղ բրոնզեդարյան սառրին շերտը կլոր կացարանով, հայտնարեբված նյութերով, ինչպես նաև վերը նկարագրված մետաղե իրերով հանդերձ կարելի է թվագրել մթա XXIV—XXIII դարերով:


Մետաղե իրեր և մետաղաձուլության հեռ կապված հետաքրքրական նյութեր, ինչպես վերը հիշատակվեց, հայտնարեբվել են նաև միջին շերտում:

¹ Օ. Ա. Абыбуллаев, Некоторые итоги изучения холма Кюль-тепе в Азербайджане: СА, № 3, М., 1963, стр. 163—165, рис. 7.

² А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, стр. 92, 93, рис. 2.

³ Б. А. Куфтин, Урартский «колумбарий» у подошвы Арарата и Куро-Аракский энеолит. Вестник Гос. Музея Грузии, т. XIII В, Тб., 1943, стр. 74, табл. XIX.

Կլոր կացարանի դրսի կողմից, նրա արևմտյան մասում 1951 և 1965 թթ. պեղումների ժամանակ, 1,85—2մ խորութունից հայտնարեցվեց գլանաձև ձուլարանի խարամով հանդերձ, իսկ նրանից ոչ հեռու կուտակել էին այդ ձուլարանից հանված մոխիրը, խարամը, կթխանների թեկորներ և ձուլման բնթայրի հետ կտպված այլ իրեր:




Նկ. 29. Գանդի կացնի կաղապարով թափված գիպս նմուշ:



Նկ. 30. Կավամանի մաս, մեաադի նստվածքով:

Կթխանների մի մասը սովորական լայնարերան կավամաններ են ուռուցիկ փորով, դեպի ցած նեղացող ներքնամասով և ներձկված փոքր հատակով: Բոլորը ներսից ունեն մետաղի նստվածքներ: Կավը կրակի ուժեղ ազդեցությունից այրվել, շորացել է, փայլը և գույնը կորցրել: Նման կթխանների մոտ ինը ասորեր թեկորներ են հայտնարեցվել: Բոլորն էլ արտաքինից զարդանախշված են (նկ. 30, № 2234/136, 137-ի թուր թեկորները): Նրանցից մեկն ունի Շենգավթի խեցեղենին ընդունակ երկրաչափական զարդանախշեր (նկ. 31): Որոշ կթխանների իրանի սևուցիկ մասը զարդարված

է ունի ֆ-ներճկված, պարուրաձև վերջավորություններ ունեցող երկրաչափական բարձր կոմպոզիցիայով (նկ. 32, № 2234/137-ի բեկորները): Այս հալոցներն իրենց ղարղանախշումով, մասամբ նաև ձևով, տարբերվում են ստորին շերտում հայտնաբերված կաղապարի հետ գտնված խեցեղենից. դրանով իսկ շեշտելով նրանց՝ միևնույն մշակույթի ղարգացման տարրեր փուլերին վերաբերվելը:



Նկ. 31. Համասան մաս, մետաղի նստվածքով:

Մեկ այլ տիպի կթխաններն ունեն բարձր ժապավենաձև շուրթ, ուսուցիկ իրան, որի ստորին մասը կոնաձև շեշտակի նեղանում է և ավարավում փոքրիկ հատակով (1965 թ. № 15): Ունեն բաց-գարշնագույն, անղարդ, մրից սևացած մակերես: Կրակի աղղեցումից և մրի հետքեր պահպանվել են կթխանի ներսի մասում, հասակին: Հայտնաբերվել են նման կթխանների մի շարք այլ բեկորներ (նկ. 33, ստորին շարք):


Կթխանների ներսում պահպանված մետաղների նստվածքների քանակաչափային-սպեկտրալ անալիզից պարզվում է, որ այն մեծ քանակությամբ պղնձի հետ ունի 1,5% մկնգեղ, 0,5% ծարիր, 0,02% անագ, 0,01% կապար և երկաթի խառնուրդ:

Մոխրի այգ կուլում, կթխանների հետ հայտնաբերվեցին տարածաբանական ֆաբրիկներ՝ կարմիր տուֆից քառանկյունաձև իր, վերին մակերեսին խոր, երկարավուն փորվածք: Այն հավանաբար ծառայել է որպես նախապատրաստուկի ձուլման կաղապար (աղ. IX ներքևում ձախից և նկ. 6, վերևում աջից, № 2234/158): Թերի է:


Վարդագույն տուֆից թասանման խորություններով ըրերը հասակին, դրսի կողմից ունեն մրից սևացած հետքեր (նկ. 33 վերևում և աղ. IX մեջտեղում, № 2234/105): Հայտնաբերվեց նաև երկկողմանի ձագտրաձև փոսիկներով գործիք քարից (աղ. IX ներքևի շարք մեջտեղում, № 2234/165) և այլն: Հատկանշական են մի խումբ ասրերի մեծության, հատած կոնի ձևի, գլանաձև, կրակից այրված թեթև շեշտարերը (նկ. 33, մեջտեղի շարք, աղ. IX վերին շարք, № 2234/124): Հավանաբար այս բոլորը որոշ գեր են կառարել: ձուլման ընթացքում:

Այսպիսով, Գառնիի վաղ բրոնզեդարյան միջին շերտում ձուլարանի և

Օրուման գործի հետ կապված վերոհիշյալ իրերի հայտնագործությունը խոշոր ներդրում է Հավակյան լեռնաշխարհի մթա III հազարամյակի տեղաբնիկների կարևորագույն զրահմունքներից մեկի՝ մեաղագործության ուսումնասիրության ասպարեղում:



Նկ. 32. Կալամանի մաս, մետաղի նստվածքով:




Նկ. 33. Զուլարանի մոտ հայտնարեղված իրեր:

Միջին շերտում հայտնարեղվել են նաև երկու մեաղե իրեր՝ մանգուղ և նշածն ծալրով գործիք:

Մանգուղը Գառնիի մթա III հազարամյակի մշակույթը կարևոր հայտնագործություններից մեկն է (Նկ. 34, № 1964/35): Ունի աղեղնածն իրան որը թերի է) և կարճ սող՝ փայտե (գուցե և ոսկրե) կոթառ ամրացնելու հա-

.Տար՝ Այն հայտնաբերվել է 1950 թ., ամրոցի II անդամատում, 2,15 մ խորության մեջ: Այս նույն շերտում մանգաղի կողքին հայտնաբերվեցին մակույկաձև աղորիք, սև փայլեցրած խեցեղեն՝ զարգարված ներձկված փոսիկներով և օջախի պայտաձև հենակի բեկոր: Այսպիսով, մանգաղը հայտնաբերվել էր վերոհիշյալ ձուլման հետ կապված իրերի նյութից ընգամենը 4—5 մ գծույի հարավ-արևմուտք: Շատ հավանական է, որ այն ձուլվել է ան-



Նկ. 34. Մանգաղ, մկնդեգային բրոնզից:

ղում: Մանգաղը ձուլելուց հետո ենթարկել են սառը կոման, որի հետքերն ակնհայտ են: Ըստ քանակական-սպեկտրալ անալիզի տվյալների, մանգաղի մեջ 90% պղնձի հետ միացված է 5% մկնգեղ, 0,02% ծարիր, 0,01% նիկել և 0,02% երկաթ¹:

Արարաայան գաշտավայրում մկնգեգային բրոնզից պատրաստված մանգաղ հայտնաբերվել է Նախիջևանի Քյուլ-Քափայի II շերտում, 10,75 մ խորության մեջ²: Այստեղ ևս մանգաղը ուղեկցվել է սև փայլեցրած խեցեղենով, որն իր ձևերով հիշեցնում է Գառնիի մանգաղի հետ հայտնաբերված խեցեղենը:

Քյուլ-Քափայի մանգաղի քանակական-սպեկտրալ անալիզի տվյալներով 74,93% պղնձի հետ միացված է 4,06% մկնգեղ³: Մեկ ամրոցական մանգաղ հայտնաբերվել է Վրաստանում՝ Ամիրանիս-գորայի գամրարաններից մեկում⁴: Մանգաղների քանակական-սպեկտրալ անալիզները ևս սպացուցում են մկնգեգային բրոնզի լայն կիրառությունը մթա III հաղարամյակում:

Այսպիսով, պահանգավոր քարե ներգիրների կողքին մետաղե մանգաղի ներգրումը մթա III հազարամյակում մի նոր առաջընթաց էր տնտեսության հիմնական ճյուղի՝ երկրագործության ասպարեզում:

¹ Б. Н. Аракелян, նշվ. աշխ., էջ 25, նկ. 12:

² Անալիզները կատարվել են Լենինգրադի հնագիտության ինստիտուտի լաբորատորիայում՝ Գ. Նաումովի և Վ. Սիդորովի կողմից:

³ X. Кушнарева, Т. Н. Чубинишвили, Историческое значение Южного Кавказа III тысячелетия до н. э. СА, № 3, 1963, стр. 15, рис. 25. О. А. Абибуллаев, К вопросу о древней металлургии Азербайджана, стр. 67, рис. 110:

⁴ О. А. Абибуллаев, նշվ. աշխ., էջ 69, աղ. 11:

⁵ Т. Н. Чубинишвили, նշվ. աշխ., էջ 73, նկ. 14:

նշանակալից գործիք, (աղ. 14) քառակող է, երկու նիստերը յան, նրկուսը՝ նեղ: Գնալի ծալրը գնալով իրանը սի փոքր հաստանում է, դառնում նշանակալից և ավարտվում սուր ծալրով (N° 2258:35): Գործիքի երկարութունը 6 սմ է: Այն հայտնաբերվեց 1963 թ. Գառնիի սարոցի II տեղամասում, 16 յրառակուսու արևելյան կողմում, 2,35 մ խորության մեջ բացված կավածեփ: Հորում, ոսկրե հերունի հետ սիասին: Նրա գործածական նշանակութունը պարզելի դժվար է, սակայն, հավանաբար, օգտագործվել է որպես բրուտի գործիք խեցեղենը դարգանախշելու համար:

Այսպիսով, Գառնիի վաղ բրոնզեդարյան մշակութի սիջին շերտի անդամները նույնպես հետաքրքրական նյութեր տվեցին վերոհիշյալ ժամանակաշրջանի մետաղամշակման, մետաղաձուլության վերաբերյալ:

Այս շերտը թվագրող նյութերից սեկը մանդաղն է: Ինչպես վերը տեսանք, Գառնիի և Նախիջևանի Քյուլ-թափայի մանդաղները ժամանակագրորեն միևնույն շերտում են հայտնաբերվել, ուղեկցվել են համանման խեցեղենով և ռսա քանակական-սպեկտրալ անալիզի տվյալների, պատրաստվել են մկնդեզային բրոնզից, ժամանակակից են միմյանց, այսինքն թվագրվում են մթա III հաղարամյակի II կեսով:

Նմեկով ռադիոածխածնային անալիզի տվյալներից, Քյուլ-թափայի II շերտի բոլոր նյութերը, այդ թվում մանդաղը, կոթառով սեպածե կացնի կաղապարը և այլն, որոշ գիտնականներ թվագրում են մթա III հաղարամյակի I կեսով¹: Սակայն ռադիոածխածնային մեթոդով Անդրկովկասի հնագիտական իրերի տարիքը որոշելու դեռևս նախնական փորձեր են կատարվել և կ'շտվեն ասպարտյում հնագիտական նոր հայտնագործություններով և դիտական նոր մեթոդներով, ուստի առաջնորդվելով մինչ այդ մեթոդներն ընդունված ժամանակագրությամը, վերոհիշյալ նյութերը մենք ես թվագրում ենք մթա III հաղարամյակի II կեսով:

Անդրադառնալով Գառնիի մանդաղին, անհրաժեշտ է նշել, որ շերտագրորեն այն հաջորդել է կացնի կաղապարին, հեակարար նրանից մի փոքր երիասարդ է:

Մանդաղի հեա հայտնաբերվել է նաև փայլեցրած խեցեղեն՝ ներծկված փոսիկներով դարգարված, սակայն նման խեցեղեն հայտնաբերվում է Գառնիի վաղ բրոնզեդարյան բոլոր շերտերում և այն հատանշական չէ կոնկրետ որևէ շերտի համար: Պեղված նյութերով դեռևս հնարավոր չէ որոշել, թե նա ո՞ր շերտում է գերակշռում:

Չնայած միջին շերտի խեցեղենի մի մասն էլ կապվում է խեցեղենի զարգացման երկրորդ փուլի նենգավթի խմրի հետ, որին բնորոշ է ամրոզվելի դարգանախշումը գծային երկրաչափական մեկից ավելի ժայպվեններով, որով երբեմն զարգանախշվում են նաև կավամանների ուսերը, և այդ փուլն էլ թվագրվում է մթա III հաղարամյակի II քառորդով, որի վերին սահմանը մթա XXIV դարն է: Սակայն վերոհիշյալ հատկանիշներով խեցեղենը շարունակում է իր գոյությունը նաև մթա III հաղարամյակի II կեսում, շնայած այլևս բնորոշ չէ այդ նոր փուլի համար: Բացի այդ, Գառնիի վերոհիշյալ երեք շերտում էլ խեցեղենի մեջ որոշտկի սահմանադատում մացնել դեռևս հնարավոր չէ:

¹ К. X. Кушнарева, Т. Н. Чибушвили, *նշվ. աշխ.*, էջ 16.

Քանի որ Գառնիում վաղ բրոնզեդարյան երեք շերտերի հաստությունը ընդամենը 2 մ է և հայտնարեքված նյութերում ժամանակագրակա մեծ ասարեբրություններ չկան, ուստի տյո շերտերը հավանաբար շինարարական են և նրանցից յուրաքանչյուրի միջև հարյուրամյակի, դուցե և հիսունամյակի տարբերություն լինի:

Այսպիսով, Գառնիի վաղ բրոնզեդարյան երեք շերտերն էլ կարելի է թվագրել մթա III հազարամյակի II կեսով, կոնկրետ՝ XXIV—XXI դարերով:

Վերոհիշյալ հայտնագործությունների շնորհիվ պարզվում է, որ Գառնիում րավականին զարգացած է եղել մետաղամշակությունն ու մետաղաձուլությունը: Տեղարնիկները իրևր պատրաստել են ոչ թե մաքուր պղնձից, այլ ստացել են նոր ախպի ձուլվածքներ՝ պղնձի և մկնդեղի, պղնձի և կապարի միացությունից, նաև մաքուր կապարից:

Ինչպես վերը ասանք, մկնդեղալին բրոնզի ստացման եղանակին Հայկական լեռնաշխարհում ծանոթ են եղել դեռևս մթա V հազարամյակի վերջերին և IV հազարամյակի սկզբներին, սակայն այն լայն տարածում և կիրառություն է դսնում մթա III հազարամյակում:

Վերոհիշյալ ձուլվածքների կողքին դարավերջում երևան է դալիս անադե և կապարի միացությունից ստացված բրոնզը, որն իր լայն կիրառությունն է ստանում սկսած մթա II հազարամյակի I կեսից, միջին բրոնզի դարաշրջանում:

Այսպիսով, մետաղագործությունը մթա III հազարամյակում Գառնիում ևս թևակոխում է զարգացման մի նոր փուլ, որին բնորոշ են ձուլարաններ, մետաղե իրերի բաղմաղսնություն և նոր ախպի ձուլվածքների ստացման բարդ պրոցես, որի շնորհիվ զարգացման սովյալ փուլում մետաղագործությունը կարելի է դիտել որպես մի առանձին արտագրաճյուղ:

Մետաղագործության այս նոր վերելքով է բնորոշվում ընդհանրապես Հս.կական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան մշակույթը, որին հատկանշական են կաղապարներ, բազմաթիվ մետաղե իրեր՝ տարատեսակ կացիններ, տեղեր, նիղակներ, դաշույններ, դանակներ, կարթեր, դարդեր, զնդասեղներ, կախաղարդեր և այլն: Մեաաղի վաղ փուլերում Հայկական լեռնաշխարհի մշակույթի առաջընթացի մեջ առաջնակարգ դեր են խաղացել մեաաղի արտագրությունն ու առևտուրը:

Հայկական լեռնաշխարհի մթա III հազարամյակի մետաղե իրերը բաղմաթիվ զուգահեռները Հին Արևելքում անշուշա վկայում են փոխանակային կապերի և մշակութային սերտ համագործակցության մասին: Այդ կապերն իհարկե պատահականություն չեն և ունեցել են իրենց ամուր հիմքերը: Հարավի հարևան ամենհարուստ երկրներում՝ Միջագետքում, Ինչպես նաև Եգիպտոսում, մետաղը համարյա բացակայում էր և, ինչպես Ա. Հյուրերը, Կ. Շեֆֆերը և Մ. Դյունանն են վկայում, մետաղի վաղ փուլերում Հայկական լեռնաշխարհը հանդիսացել է այդ երկրների մեաաղի հումքի գլխավոր մատակարարողը¹: Չպետք է մոռանալ, որ վերոհիշյալ երկրները գուրկ էին ոչ միայն մետաղից, այլև վտեղանյութից, փայտից²:

¹ А. А. Иессен, Кавказ и Древний Восток в IV и III тысячелетиях до нашей эры. КСИА, вып. 1963, М., стр. 6.

² Л. Вуали, Материалы трех глав 2-ой части I тома «История научного и культурного развития человечества», ВИМК, 1957, № 1, стр. 101.

ժ. Մորդանը մետաղագործության հատնագործությունը կապում է Անգրիոսի վրա շրջանների հետ՝ և գտնում, որ այստեղից են մետաղագործական դիտելիքները հասել Միջագետք¹: Անգեղաան (էրզանի-Մադեն) հանքավարի ստամանասիրությունը (որտեղ հայտնաբերվել են հանքանյութի բաղմամբիվ հին մշակումների հետքեր և խարամի թավալումներ) ապացուցել է, որ մթա Մ Մ հազ. սկզբին այն հանդիսացել է պղնձի միակ սղբուղբ ինթական պետության համար²:

Հայկական լեոնաշխարհը մետաղագործական բաղա է հանգիսացել նաև Հյուսիսի համար: Հյուսիսային Կովկասի մթա Մ Մ հազ. Մ կ. և Մ Մ հազ. սկ. թվաղրվող մի շարք մետաղական իրերի քիմիական անալիզները հավաստում են, որ նրանց համար հումքի աղբյուր են ծառայել դարձյալ Հայկական լեոնաշխարհի հանքավայրերը, ինչպիսիք են՝ Ղափանը, Շամլուղը և այլն³: Հստ ն. ն. Չերնիխի, Քուո-արաքսյան մշակույթի վարպետների գործունեությունը էլ ավելի նշանակալից է արտահայտվել Արևելյան Եվրոպայի մետաղագործության վրա, սկսած մթա Մ Մ հազ. սկզբից⁴:

Որոշ օտարերկրյա դիանականներ վկայում են, որ Հայկական լեոնաշխարհում պղնձի մշակման արհեստն ու արվեստը ղարդացման բարձր մակարդակի վրա է դնվել սկսած մթա Մ Մ հազարամյակից⁵: Սակայն 1963 թ. ամերիկացի հնագետ Բրեյդվուդի պեղումները Չայնու-Թեփեղիում (Տիդրիսի վերին հոսանքների մոտ), որտեղ Չաթալ-հուլուկի (Կոնիայի դաշտավայրում) նման, նեոլիթի նախակերամիկական շերտերում հայտնաբերվել են պղնձե ծակիչներ և պղնձահանքի-մալախիտի կտորներ, հավաստում են, որ Հայկական լեոնաշխարհում մետաղի և մետաղագործության առաջին հայտնագործությունը տեղի է ունեցել շատ ավելի վաղ, երբ մարդը դեռևս ծանոթ չէր ինցեգործությանը: Այսպիսով, տարածակ մետաղների բաղմամբիվ բովերով, անատոներով (հետևարար՝ վառելանյութով) հարուստ մի այնպիսի երկիր, որպիսին Հայկական լեոնաշխարհն էր, պետք է, որ հանդիսանար մետաղի մշակման և ձուլման բնօրաններից մեկը և այդ իսկ պատճառով իր հերթին շատ կարևոր դեր խաղար հին քաղաքակրթության ղարդացման գործում:

¹ Jacque de Morgan, La préhistoire orientale, Paris, 1927, vol. III, p. 261.

² Նույն տեղում, էջ 259.

³ E. H. Черных, История древнейшей металлургии Восточной Европы, М., 1966, стр. 46—47.

⁴ Նույն տեղում, էջ 46—50.

⁵ Նույնի, Спектральный анализ и изучение древнейшей металлургии Восточной Европы, Археология и естественные науки, М., 1965 стр. 103.

⁶ Josef Klima, Gesellschaft und Kultur des alten Mesopotamien, Verlag der Tschechoslowakischen Akademie der Wissenschaften und Artia Praga, 1964, p. 145. 146.


⁷ E. H. Черных, Центры доэнеолитической медной металлургии, Наука и жизнь, № 7, 1968, стр. 33.

ՄԹԱ III ՀԱՉԱՐԱՄՅԱԿԻ ԽԵՑԵՂԵՆԸ

Գառնիի մթա III հաղարամյակի նյութերի կոմպլեքսում առանձին տեղ է գրավում խեցեղենը, որն իր բաղմաթիվ զուգահեռների հետ ունի նաև անդային, լոկալ առանձնահատկություններ:

Պեղումների ընթացքում հայտնաբերվել են երկու տիպի խեցեղեն՝ փայլեցրած մակերեսով, դարդարուն, բարձրարվեստ խեցեղեն և հասարակ, անփայլ և անդարդ խոհանոցային խեցեղեն:

Հայտնաբերված խեցեղենն ըստ ձևի կարելի է բաժանել հեռույալ խրմբերի. կարասներ, թաղտրներ, կճուճներ-դավաթներ, բաժակներ, թասեր,



Նկ. 35. Կարասի բեկոր, գծային և ռելիեֆ-ներճկված զարդանախշով:


բրեղաններ, մինիատյուր կավամաններ, կափարիչներ, օջախներ-կրակարաններ, օջախի հենակներ, պատվանդաններ, ճրագներ:

I. Ամբողջական կառասներ Գառնիում դեռևս չեն հայտնաբերվել: Մենք նրանց ձևի վերաբերյալ պատկերացում ենք կաղմում հայտնաբերված բեկորներով:

Կարասների մեկ տրպն ունի ըրարձրագիր և ուղղահույաց վիզ, իրանը ուռուցիկ չէ, այլ վղի համեմատ մի փոքր ռելիեֆ-շեշտված:

Նման սև փայլեցրած մակերեսով և դեղնավարդադույն ասառով կարասներից մեկը (երեք բեկորից № 2235/69) վղի հիմքում կանթից աչ սուր


յործիքի օգնությամբ կատարված ուղղադիտ երկրաչափական զարդանախշերի ժայռավեն ունի, որը կաղսված է թեթ դծիկներով հատված, իրար մեջ հագնող հակադարձ դասավորությամբ եռանկյունաձև ժայռավենների շարանից (նկ. 35): Վրի հիմքում անցումը դեպի իրանի միջին սասը շեղված է հորիզոնական ներձիված գոտիով: Կարասի իրանը զարդարված է ոչ խորը, սահուն լայն ակոսով կատարված պարուրաձև վերջավորություն ունեցող ժայռավեններով: Այս կարասի բեկորները հայտնաբերվել են Գառնիի վաղ բրոնզեդարյան միջին շերտում, II տեղամասի 18 ժ քառակուսում (2 մ խորությունից):



Նկ. 36. Կարասի բեկոր ձվաձև խուլ կանթով:

Ուղղահայաց, ոչ ուռուցիկ իրանով մեկ այլ կարասի բեկոր (№ 1967/11) չեղին փայլեցրած մակերեսով և բաց վարդադուլն աստառով, ունի ձվաձև, մեծ, խուլ կանթ, որի վրա երկու կողմից անցքի փոխարեն արված են ձվաձև ներձիկումներ (նկ. 36): Հայտնաբերվել է միջին շերտում (2 մ խորությունից, 5 կ քառակուսում):

Նկարագրված կարասները, ինչպես աեսանք, բնորոշ են Գառնիի վաղ բրոնզեդարյան վերին և միջին շերտերին և նրանց զուգահեռները մեղ դեռևս հայտնի չեն:




Նկ. 37. Կարասի վրի մաս, ուլիկ-ներձիված զարդանախշերով:

Սրկրորդ ախյի նարասներն ունեն գլանաձև, մի փոքր ներձիված վրի և շեղված, սուռուցիկ փսրս Բոլորի շարժերը դեպի դուրս են ձևված և եղեր-

փած հորիզոնական անկյունային ժապավենով: Այս կարասների բեկորների մեծ մասը ունեն սև փայլեցրած մակերես, շնամած հանդիպում են նաև օրինակները վարգագույն մակերեսով (№ 1964/22): Պահպանվել է կտրասներից մեկի վզի մասը՝ զարդարված թուլ ներձկումով կատարված պարուրած վերջավորութուն ունեցող զարդանախշերի հորինվածքով (№ 2234/134) Հայտնաբերվել է ստորին շերտում (նկ. 37):

Նման կարասներից մեկի վզին բացված է կլոր անցք, կոտրված եզրին պահպանվել է հավանաբար ամրացնելու համար քսված նյութը (№ 2235/74b) կոտրված կարասը վերականգնելու համար, բացի ամրացնող նյութից, բացել են նաև անցք՝ կոտրված մասերը կարելու, կպցնելու համար: Վերահիշ-



Նկ. 38. Քաղարի բեկոր. կիսազնգածե կանթով:

յալ երկրորդ տիպի կարասները ընդհանուր են Գառնիի վազ ըրոնզեդարյան ըրոշր շերտերին: Այս կարասներն ունեն բազմաթիվ զուգահեռներ: Նման ամբողջական զարդարուն և անզարդ կարասներ, կարասների բեկորներ (№ 1330/158, № 1618/280, № 1442/123, 124, № 1330/2) և բազմադալար պարույրներով վերջավորվող թռչնազարդ կարաս հայտնաբերվել են Շենգավթում¹: Կարասների բեկորներ հայտնի են Քոսի ձոթերից (№ 2127/4, 9, 10),


¹ Ս. Ն. Սարգսյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 179, ադ. LIII, նկ. 40:

Քաղաքապետների (№ 1475/40, 41), Կանոնադատի (№ 1478/2, 3, 4), էլարի բնակատեղիի (№ 161/37, 38, № 127/105—107) և այլն:

էլարի կարասի բեկորներից սեկր վզի վրա նույնպես ունի կլոր անցք, վերականգնելու, կապելու համար (№ 127/110), նման անցքեր հանդիպում են ընդհանրապես կարասների, մեծ սափորների վրա և դա բնական է: Նախ կարասներ, մեծ սափորներ պատրաստելը ավելի դժվար էր, քան սանր կալամաններ, բացի այդ, կարասներում, մեծ սափորներում կարելի էր պահել հացահատիկ, այլուր, չոր սննդամթերք, որոնց չէր խանդարի կարասի նման վերանորոգումը:

II. Քաղաքները իրենց ձևով հիշեցնում են երկրորդ տիպի կարասները. միայն ծովալույլ փոքր են և ցածրադիր: Ունեն դլանաձև, մի փոքր ներճրկված վիզ, ուտուցիկ փոր, դեպի ցած նեղացող ներքնամուս, որն ավարտվում է փոքր հատակով: Շուրթերը դեպի վեր են ճկված և եզերված անկյունային նեղ ժապավենով: Վզի հիմքում ունեն կիսաղնդաձև կանթեր:

Ըստ կատարման որակի, այս թաղարները երկու տիպի են. հասարակ վարդադույն խեցիով, վաա հունցած, ավազի խոշոր հատիկներով: անփայլ թաղարներ և սև փայլեցրած, լավ մշակված մակերեսով թաղարներ: Այս առանձնահատկություններն անշուշտ պայմանավորված են նրանց օդտադործման նպատակով:



Նկ. 39. Կաղասանր բեկոր, ունի և քաղաքապետի:

Հասարակ, վարդադույն թաղարներից մեկը (№ 2235/63) հայանաբերվել է 1962 թ. վերին շերտի կրակարանի կոմպլեքսի հետ: Այս թաղարը հավանաբար օդտադործվել է ճաշ եփելու, հեղուկ աաքացնելու համար: Թերևս նրա մեջ պահել են կրակարանից հանված որոշան մոխիրը:

Հայանաբերված մյուս թաղարների բեկորները ունեն սև փայլեցրած, կոկած մակերես, վարդադույն աստառ: Որոշ բեկորներ վզի հիմքում ունեն ձվաձև (№ 1965/8a), կիսաղնդաձև կանթ (նկ. 38, № 1864/11a), կամ վզի միջին մասում՝ ձվաձև փոսիկ (№ 2234/152): Նկարագրված թաղարները բնորոշ են Գառնիի բոլոր շերտերին:

Նման թաղարների մասեր սև փայլեցրած մակերեսով, դարձարված փոսիկներով և ակոսիկներով հայտնաբերվել են նաև էլարում (№ 127/166, 472, № 2245/30, 32), Ակունքում (№ 2258/632): Մալաքլուում¹, Արճեշում² և այլուր:

III. Կեռն-գավաթները տարբեր չափերի են՝ մեծ, միջին և փոքր: Ձևով կրկնում են վերը նկարագրված թաղարները: Գերազանցապես եռմա-

¹ Б. А. Куфтин, Урартский «колумбарий»... стр. 74, рис. 34.

² С. А. Burney, Eastern Anatolia in the Chalcolithic and Early Bronze Age, As. v. VIII, 1958, p. 185, fig. 88—91.

սանի են, լայն, ներձկված գլանաձև վզով, ուռուցիկ փորով, երկկոնիկ, դեպի ցած նեղացող ներքնամասով և փոքրիկ հատակով: Շուրթը նուրբ, դուրս անկված և եղբրված նեղ ժապավենով:

Շնորհիվ կառուցվածքային որոշ տարրերու թյունների և զարդանախշման սկզբունքների, դրանք բաժանվում են հեռավոր խմբերի. 1. շեշտված անցումներով կճուճ-զավաթներ, որոնց վզի հիմքում անցումը դեպի ուռուցիկ փորը շեշտված է խորաքանդակ հորիզոնական դոախով, իսկ ուռու-



Նկ. 40. Կավաման, պարուրաձև վերջավորութունների ունեցող զարդերով:

ցիկ փորը երկկոնիկ նեղացող ներքնամասի հետ միանում է հորիզոնական սուր եզրով:

Ըստ զարդանախշման, այս կճուճ-զավաթները ևս բաժանվում են ենթախմբերի.

ա) կճուճ-զավաթներ, որոնց ուռուցիկ փորը ունի ռելիեֆ զարդանախշեր ունի միայն մեկ երեսից:

Սև փայլեցրած, մուգ դարչնագույն ասառով, հասախեցի կճուճներից մեկի ուռուցիկ փորի մասն է պահպանվել՝ վրան ռելիեֆ, եռանկյունաձև իրանով երկգլխանի թռչունի զարդանկար (Նկ. 74, № 2234/123):

Գառնիում հայտնարերված սև փայլեցրած մակերեսով և մոխրագույն աստառով մեկ այլ կճուճի ռեկորի վրա պահպանվել են ռելիեֆ, իրար մեջ հաղնող քառանկյունաձև շրջանակների մասերը (Նկ. 39, № 2234/109a):

Նման ռելիեֆ զարդանախշեր ունի Քոսի-ճոթերի խեցեղենը¹, Արժնկարաղի՝ 6,5 մ և 8 մ խորությունից հայտնարերված խեցեղենը²:

Վերոհիշյալ ռելիեֆ, տարրեր զարդանախշերով երկու կճուճների ռեկորներն էլ հայտնարերվել են Գառնիի վաղ բրոնզեդարյան միջին շերտում:

Մեծ արվեստով են կատարված Գառնիում հայտնարերված սև փայլեց-

¹ Գտնվում է Կիրովականի աստառագիտական թանգարանում:

² H. Koşay, K. Turfan, Erzurum-Karaz Kazisi raporu. TTK, Belleten, XXIII, 1959. № 21, տե՛ս շերտագրական աղյուսակ, էջ 404, 391, նկ a 170:


րած, մոխրապուշին և դարչնագույն երկու տարբեր կճուճների ուղիք գար-
դանախշերը, որոնցով հավանաբար սլատկերված են խուլագուլու շքասեղներ
(նկ. 73, 1964 թ., № 28 և 1965 թ. № 90):

բ) կճուճ-դավաթներ, որոնց ուռուցիկ փորին արված են ուղիք-ներ-
ճրկված, լայն և նեղ ափսուով կատարված զարդանախշեր:

Միջին շերտում հայանաբերված սե փայլեցրած կճուճներից մեկի ուռու-



Նկ. 41. Կճուճ, ուղիք ներ-
ճրկված զարդերով:



Նկ. 42. Գավաթ, քառանկյունաձև
զարդերով:


ցիկ փորը զարդարված է սշ խորը ուղիք-ներճրկված, պարուրած վերջավո-
րություն ունեցող բարդ կոմպոզիցիայով (նկ. 40, № 2234/138):

Այս խմբի կճուճների մեծամասնությունը հորիզոնական խորաքանդակ
դոսի ունեն ոչ միայն վղի հիմքում, այլ նաև վղի միջին մասում: Նման
կճուճներից մեկի ուռուցիկ փորի վրա անկյուն կաղմող պարուրած վերջա-
վորվող դիզոպ ժայտվեճներով առաջացած կոմպոզիցիոն կենարոնը զար-
դարված է բաղմաղալար պարուլյրով (նկ. 41, 1965 թ. № 9): Կճուճը հայտ-
նաբերվել է միջին շերտում, իսկ վերին շերտում դանված մեկ այլ գավաթի
մասի վրա պահպանվել են դիզոպ ժայտվեճներով առաջացած քառանկյու-
նաձև դաշակ, որոնք ավարտվում են պարուրած վերջավորություններով
(նկ. 42, 1965 թ., № 22): Նման զարդանախշերով դավաթների բաղմաթիվ
բեկորներ հայանաբերվել են վերին և միջին շերտում (№ 2234/144a, 133b,
№ 1964/49a, 41), որոնցից մի մասը հալոց-կթխանների դեր են կատարել
(№ 2234/137a, b, c, d, № 2234/144):


Կճուճ-դավաթների այս խումբը չնայած ունի զարդանախշերի կտ-
աարման իր տեղալին յուրահատկությունները, արված է ավելի խիստ ոճով,
մի քիչ շոր, ունի ուղիկ անկյուններ, սակայն զարդամոտիվներով ավելի շուտ
հարում է խեցեղենի Կիրովականի խմբին: Նման կոմպոզիցիաներով է
զարդարված Քոռի-ճոթերի և Մաշաոցի բլուրի դավաթների ուռուցիկ փորը:
Սակայն ույստեղ անցումները սահուն են, ճկուն, ավելի կլորացող անկյուն-
ներով: Այսպիսով, չնայած զարդամոտիվների ընդհանուր բնույթին, յուրս-
քանչյուրն ունի կատարման իր տեղական հատկանիշը:

դ) Միջին և վերին շերտերում հայանաբերված դավաթների մեկ այլ
խմբին բնորոշ է վղի հիմքի զարդանախշում՝ դժալին երկրաչափական մո-
տիվների ժայտվեճով, իսկ ուռուցիկ իրանը՝ ոչ խորը, կատարված ուղիք-

ներճկված պարուրածև վերջավորվող կոմպոզիցիայով (նկ. 43, 44, № 2234/125b, 109b): Գավաթների այս խումբը իր զուգահեռներն ունի նույնպես Կիրովականի խեցեղենում՝ Մաշտոցի բլուրի, Քոսի-ճոթերի, Արդվիի: Նրանք նման են ոչ միայն զարդանախշերի բնույթով, այլև կասարման եզանակով, դեղին փայլեցրած մակերեսով և այլն:




Նկ. 43. Գավաթի մաս, գծային և
ռելիեֆ ներճկված զարդանախշերով:



Նկ. 44. Գավաթի մաս, վղի հիմքում
գծային երկրաչափական զարդանախշեր:

Նկատի ունենալով ուսումնասիրվող ժամանակաշրջանում փոխանակա-
յին սերտ կապերի առկայությունը, կարելի է ենթադրել, որ այս գավաթներն
ունեն կիրովականյան ծագում:

դ) Կճուճ-գավաթներ, որոնց վիզը զարդարված է ուղղադիտ երկրա-
չափական զարդանախշերի ժապավեններով, իսկ ուտուցիկ իրանը ռելիեֆ-
ներճկված զարդանախշերով: Նման մի շարք բեկորներ են հայտնաբերվել
(1967 թ. № 29a, b), որոնցից մեկի վզին կան ուղղադիտ երկրաչափական
նուրբ գծանախշերի նեղ և լայն ժապավեններ (նկ. 31, № 2234/136): Այդ
ժապավեններից մեկից մյուսի անցումը շեշտված է հորիզոնական խորա-
քանդակ դոսիով: Իրանի ուսերը զարդարված են ռելիեֆ-ներճկված բազմա-
գալար պարույրով, որի վրա աչ կողմից, վերևից ճառագայթաձև ակոսներ են
տարածվում: Այս կճուճը հայտնաբերվել է միջին շերտում և կթխանի դեր է
կատարել, ներսում այն ունի մետաղի
մնացորդներ:



Նկ. 45. Կավամանի մաս, ծառի գծային
պատկերով:


Կճուճ-գավաթների այս խում-
բը թե՛ կատարման եզանակով, թե՛
զարդանախշման սկզբունքներով, և թե՛
զարդամոտիվների բնույթով իր զու-
գահեռներն ունի Շենդավթի խեցեղե-
նում, որակը այն հայանի է բազմա-
թիվ օրինակներով (№ 1330/103, 106,
107, 296, № 1442/130, № 1618/103,
232):

Գառնիում հայտնաբերված մեկ այլ կճուճի վղի մոտ շուրթի ասկ անկ-
յուններ կազմող երկրաչափական զարդանախշերի ժապավենից ցած պատ-
կերված է ծառ՝ ճյուղերով հանդերձ (նկ. 45, 1965 թ., № 90): Այն միակ
օրինակն է վաղ բրոնզեդարյան խեցեղենում, բնորոշ է միայն Գառնիին և

իր դուրահեղուները դեռես չունի: Զարգանախշերը գծային են և կատարված ութն սեղմելու, փորելու, այլ փայլաներկը նեոացնելու եղանակով:


Ե) Կավաթներ, որոնց ուռուցիկ փորը զարգարված է նեղ գծային զարգանախշերով: Նրանց սիրված ստտիվներն են եռանկյունաձև իրանով թոչուններ (նկ. 46, № 2235/103), շ-ի նման զարգանախշեր (նկ. 47, № 2235/38c)

« ալին:



Նկ. 46. Խեցեղենի բեկորներ, թոչունի և այլ գծային պատկերներով:

դ) Գառնիի վաղ բրոնզեդարյան մշակույթն արաակարգ հարուստ է ներճկված փոսիկներով զարդարված կճուճ-գավաթներով: Նրանց մի մասը շնայած նույնպես եռամասանի են, սակայն ունեն կառուցվածքային նրբին տարրերություններ՝ նախորդների համեմատ սվելի նրրախեցի են, պատրաստված լավ մշակված և լավ թրծած կավից, շուրթերը նուրբ են և սվելի շեղումներ են դուրս ձգվում, քան նախորդներինը: Չնայած ձեռքով են պատրաստված, սակայն կատարման աեսակետից կաարելության են հասցված:



Նկ. 47. Կավաթանր բեկոր գծային զարգանախշերով:

Ունեն շուրթից սկսվող և արաաքինից երկթեք կանթ, զարգարված են գերազանցուպես ձվաձև մեծ փոսիկներով:


Նման մի կճուճ հայանարերվել է վերին շերտի օջախի կոմպլեքսի հեա (նկ. 48, № 2235/66): Կանթի տակ արված է ձվաձև մեծ փոսիկ: Իրանի ուռուցիկ մասում, կանթի հակառակ կողմում, ճիշտ նման դուրս ձվաձև փոսիկներ են արված: Մեկ այլ կճուճի (№ 2235/136) վրի հիմքում պահպանվել է կանթի հետքը, որի տակ գարձյալ ձվաձև մեծ փոսիկ (աղ. X):

Նման կճուճիկ-գավաթների մի շարք բեկորներ են հայտնարերվել (№2235/43a, 70b, 129, 140a, b, 142, № 2234/113, 153a), որոնց մեջ հատկանշական է ձվաձև փոսիկով և թեք ակոսիկ—«բեղիկով» զարգարվածը (նկ. 49, № 2234/137):


Չնայած փոսիկներով և «բեղիկներով» զարգարված նման կճուճներ հայտնարերվել են նաև էլարում (№ 2246/42)¹, Քաղսիում (№ 1900/30), Շենգավիթում (№ 1330/239), Ֆրանկանոցում (№ 589/), սակայն յուրաքանչյուրն իր մանրամասներով տարրերակվում է և ունի իր աեղտևան հատկանիշը:

¹ Б. А. Куфтин, Урартский «колумбарий»... стр. 102—103, рис. 56.

Գառնիի կճուճ-զավաթների վերոհիշյալ խումբն էլ ունի իր ոգույն. տեղական կայուն հապանիչները, որոնք արտահայտվում են կանթի ձևով. փոսիկների ստացման եզանակով, կճուճների մասերի համաչափության, ձեռնաբանակով և այլն:



Նկ. 48. Կճուճ. սև փայլեցրած, փոսիկազարդ:




Նկ. 49. Սև փայլեցրած գավաթ փոսիկով և շրջիկով՝ զարդարված:

Գառնիում հայտնաբերվել են և այլ եռմասանի զավաթներ՝ շեշտված անցումներով, որոնց վզի հիմքը զարդարված է ուռուցիկ ելուստով (նկ. 50,

№ 2235/141), կամ դավաթներ վզի հիմքում կիսազնգաձև կանթ (նկ. 13. № 1965/5, № 1967/10, №1964/14Վ, № 2235/129): նման դավաթները բնորոշ են նաև այլ հուշարձանների:

2. Սահուն անցումներով կճուճ-դավաթներ:


Նախորդ խմբի հասնաս նրանք կառուցվածքային որոշ փոփոխություններ են կրում: Նախ վիզը այնքան ուժեղ ներճկված չէ և հասարյա ուղ-գահայաց է կանգնած իրանի վրա, փորը կլոր է և սվարավում է փոքրիկ հատակով: Զարգարված են դերազանցապես փոքրիկ և կլոր փոսիկներով: Չնայած այս խումբն իր հաականիշներով հարում է էյարի դավաթներին, սակայն նրա մի մասը թերևս լրիվ էլարյան չէ. ունի նրբին ասրբութուններ, այգ իսկ պատճառով բտժանվում է Լնթախմբրի՝ Գտոնիի և էյարի փուլերի:



Գտոնիին բնորոշ դավաթների կանթերը նույնպես սկսվում են շուրթից, սակայն էլարյանի նման շուրթի հեա եռանկյունաձև հարթակ չեն կաղմում, ժապավենաձև են, միջին մասում սեղմվում են, իսկ ծայրամասերում լայնանում: Նրանց բնորոշ է կանթի տակ կլոր փոսիկ: Գտոնիի դավաթները արաակարգ ուռուցիկ են և շնայած գեպի ստորին մասը անցումը սահուն է կատարվում, սակայն կոնաձև նեղացող մասը կարճ է և ուժեղ թեքված:

Նման կճուճ-դավաթների բաղմաթիվ օրինակներ են հայտնարերվել Կտոնիում: Սե փուլեցրած մակերեսով դավաթներից մեկը, վերը նկարապրված շուրթից սկսվող կանթով և նրա հակառակ կողմում ուռուցիկ փորին կլոր փոսիկով (նկ. 28, № 2234/149), հայտնարերվել է Գտոնիի ստորին շերտում, կոթառով սեայաձև կացնի կաղապարի հետ: Աստառը նույնպես սե է, իսկ շուրթը ներսից հարթեցրած, գորշագույն է և թեթև փուլեցրած:

Կանթի տակ կլոր փոսիկներով սե փուլեցրած խեցեղենի բաղմաթիվ բեկորներ են հայտնարերվել, ոմանց շուրթը ներսից մուգ-շագանակագույն




Նկ. 51. Գավաթ, շուրթից սկսվող կանթով:

և աստառը մոխրագույն (№ 1965/6a, b), դեղին (նկ. 48, № 2176/54, № 2234/153b), մուգ-շագանակագույն (№ 1965/8b), սև (№ 2176/89, № 2235/75): Շոա են նաև դավաթների մասերը շուրթից սկսվող ժապավենաձև կանթե-

րով (1964/14e, 15a, 33, 50, № 1967/169, № 2176/27, № 2234/142f, 153. № 2235/138):


Մեծ վարպետությանը է կատարված մեկ այլ գավաթ (№ 2176/29)՝ դեղնա-նարնջագույն փայլեցրած մակերեսով, լավ թրծած ոսկրանոման խեցիով և գեղին աստառով: Հայանարերվել է նաև սև փայլեցրած մակերեսով և սև տասառով մեկ ամրողչական փոքր գավաթ, շուրթից սկսվող ժապավենաձև կանթով (նկ. 51, № 1967/8): Կանթի տակ կլոր փոսիկով մի գավաթ հայտնի է նաև էլարից (№ 2245/26):



Նկ. 52. Գավաթի մաս, կանթի վերևում փոսիկ:

Այս ենթախումբը լրիվ երկնում է էլարին ընդող գավաթները: Նրբախեցի է, շուրթը օգերված նուրբ և նեղ ժապավենով, վիզը ուղղահայաց շատ թույլ ներձկումով, փոքր կլոր է, սակայն նախորդի նման ոչ շատ ուռուղիկ, այն գեպի ցած աստիճանարար, սահուն անցումով սվարսվում է նույնպես փոքրիկ ներձկված հասակով: Կանթը սնվում է շուրթից, նրա հետ կաղմեղով հոանկյունաձև հարթակ, որի կենտրոնում երբեմն լինում է ներձկված փոսիկ: Կանթն արտաքինից երկթեք է և հիմքում ունի գարձյալ ներձրկված փոսիկ:

Նկարագրված գավաթների մի շարք օրինակներ են հայտնարերվել (նկ. 52, 53, № 2234/104, 153b, 152c, № 1964/7, 18 № 2235/9, 48c 138, 1965 թ. № 18):



Նկ. 53. Գավաթի մաս. նախնի տակ փոսիկ:

Այս գավաթներն, ինչպես վերը նշվեց, իրենց ղուգահեռներն ունեն էլարի գամրարանային խեցեղենում (№ 2245/26, 34): Աղթամիրում (Ոսկեվազ) նույնպես հայտնարերվել է գավաթի մաս, որի շուրթից սկսվող երկթեք կանթի հոանկյունաձև հարթակը ղարգարված է կլոր փոսիկով (№ 2247/9): էլարի ախյի գավաթներ հայանարերվել են նաև Մուխտենաթ-թափայում (№1439/19), Արևիկում (Արմավիրի Մոխրարլուր, 1963 թ., № 9a, b), Մալաքուում¹, Նախիջևանի Քյուլ-թափայում², Աղստևի հովաի Բարու-Դեմիրի-


¹ Б. А. Куфтин, Ураратский «колумбарий»... стр. 76, рис. 34.
² О. А. Абибуллаев, Археологические раскопки в Кюль-тепе, Баку, 1959, табл. 29

չում, Արճեշում¹, Վանա լճի հարավային մասում՝ Հալքում (Իրեմիր)², Իևու-թեփեի «K» շերտում³, Նրանց զուգահեռները կարելի է անսնել Թոնդրում (Թրիալեթի)⁴ Բարմաքսիդի խճուղու և Տաշ-Քաշ գյուղի դասարաններից հայտնարեքված նյութերում⁵, Օղնիի դասարանային նյութերում⁶, Ջզուգրիս-ղվերգայում⁷ (Վրաստանի վերոհիշյալ գավաթները դարդարված են ելուտաներ-խուլ-կանթերով): Այս գավաթները հասել են մինչև Կիրրեթ-Կերակ⁸:

IV. Բաժակներ, որոնք ըստ ձևի բաժանվում են մի շարք խմբերի.

1. Կլորավուն գլանաձև բաժակ, միջին մասում նեղացող, գեպի վեր և վեր լայնացող իրանով (նկ. 54, № 22 35/77): Պահպանվել է մի մասը (բարձրությունը 0,15, հասակի արամագիծը՝ 0,06 մ), շուրթն արաաքինից նեղ ժապավենով եղերված: Հատակի մասը բավականին հասա է, մի փոքր ներճկված սավարավում է կլորացող դուրս շեշտված նստուկով: Հայտնարեքվել է միջին շերտում, իր զուգահեռներն ունի Շենդավթում № 1618/13, 1442/82, 127:

2. Կլորացող իրանով բաժակ, մի փոքր ուղիղ, լայնադիր ժապավենաձև շուրթով, որը դեպի ներս է ճկված (նկ. 55 № 2234/146): Ունի ուժեղ, դեպի ցած նեղացող ներքնամաս, որը կլորացող իրանի հետ անցման անգում հորիզոնական սուր եզր է առաջացնում: Շուրթից ուսերի անցումը շեշտված է հորիզոնական ներճկված դոտիով: Իրանի կենտրոնում ունի կիսադնդաձև կանթ, որը մի փոքր գեպի դուրս է ձգված և արաաքինից երկթեք է: Նրա երկու կողմում վերին և ներքին մասում արված են երեքական ներճկված հատիկներ: Իրանի միջին մասում ունի լայնակոս, բայց ոչ խորը դարդահախշեր: Բաժակն արաաքինից մոխրագույն է և ուժեղ փայլեցրած, իսկ աս-



Նկ. 54. Բաժակի մաս, շեշտված նստուկով:

¹ Г. Исмаилов, Автореферат, աղ. 1.

² C. Burney, *op. cit.*, էջ 183, նկ. 77, 78, 81, 83, 86.

³ Նույն տեղում, էջ 181, նկ. 36, 37:

⁴ T. Burton-Brown, *op. cit.*, աղ. III, նկ. 958, 30, 39, աղ. VI, նկ. 449. W. Lamb, The culture of North East Anatolia and Its Neighbours, AS, V-IV, 1954, t. II fig. 1.

⁵ Б. А. Куфтин, Археологические раскопки в Трналетн, стр. 116—117 рис. 126.


⁶ Վրաստանի պետական թանգարան. № 267:

⁷ Б. А. Куфтин, К проблеме энеолита внутренней Картали и Юго-Осетии, Вестник Гос. музея Грузии, вып. XIVB, Тб., 1947, стр. 74, рис. 72.

⁸ S. Hood. Excavations at Tabara el-Akrad, AS, v. I, 1951, աղ. XII fig. 1.

տառը կաթնադուլն, անփայլ (պահպանված մասի բարձրությունը 10 սմ, բերանի տրամագիծը 10,5 սմ, իրանի ամենալայն մասի տրամագիծը՝ 13,5 սմ, շուրթի ժապավենի լայնությունը 1,5 սմ): Նման բաժակի մաս հայտնաբերվել է Շենդավթում (№ 1618/96):

Գառնիի բաժակը հայտնաբերվել է երկրորդ շերտում: Նրա ներքին մասը կարծ է և թերի, սալայն ոչ թե նեղանալով է ավարտվում, այլ դարձյալ լայնանում է դեպի դուրս և հավանաբար նախորդ բաժակի նման ավարտվում է շեշտված, լայնադիր նստուկով: Նման հատակները բավականին արխաիկ են և ընդունչ մթա V—IV հազ., էնեոլիթյան բնակատեղիների խեցեղենին: Հայտնաբերվել են Նախիջևանի Քյուլ-թափայի I շերտում¹, Ադստևի հովտի Թոյրե-թեփե բնակատեղիում², Հայկական լեռնաշխարհի հյուսիսում՝ Շահումյան (Շուլավերի) դյուղի շրջակայքի մի շարք բնակատեղիներում՝ Ազնիվ բլուրում (Շուլավերիս-գորա)³, քանդված բլուրում (Գանդրեուկիս-գորա)⁴, Սանջի-թեփեում (Իմիրիս-գորա)⁵, Բոլնիսյի շրջանում՝ Արուխուրի բնակատեղիում⁶ և այլն:



Նկ. 55. Բաժակի մաս, Գառնիի ֆ-նեոլիթյան դարձանախշերով:

Կրունկաձև նստուկով Գառնիի տիպի բաժակի մաս հայտնաբերվել է Թիոնեթիի շրջանի (Սիմոնյանի ձոր) Սիոնի գյուղի հրվանդանաձև բնակատեղիում (ՎՊԹ. № 1—62—554)⁷: Ընդհանրապես այս բնակատեղիի նյութերը մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Վարդագույն և շեկ խեցեղենն ունի դրևու հատկություն, որն ապացուցում է նրանց բաց կրակի տակ թրծված լինելը: Այն ունի էնեոլիթից վաղ-բրոնզի անցման հատկանիշներ՝ բարձր խողովակաձև սնոց, որի շուրթերը դուրս են ճկված և կլորանում են, (ՎՊԹ. № 1—62—552, 1—62—552, 554, 555, 556), սակայն վաղ բրոնզի խեցեղենի նման՝ անկյունային, ձևավորված ժապավեն շունեն: Արդեն երևան է գալիս փայլեցրած մակերեսով խեցեղենը, որի թիվը դեռես շատ է: Ունեն ժապավենաձև կանթ, որն իր ձևով արդեն մոտ է կիսաղնդաձև կանթերին (ՎՊԹ. № 1—62—549): Հանդիպում են նաև ոչ մեծ թվով խորաքանդակ լայնակուր

¹ Օ. Ա. Абибуллаев, նշվ. աշխ., աղ. 19, 20—21, 23—24:

² Д. Н. Рустамов, Разведочные раскопки в Тоңре-тепе, Материальная культура Азербайджана, т. VI, Б., 1965, էջ 29, աղ. 1, նկ. 1,4.

³ Օ. Джапаридзе, А. Джавахишвили, Результаты Квемо-Картлинской археологической экспедиции 1965—1966 гг. (Мацнэ). Вестник отд. общ. наук АН ГССР. 1967. № 3, стр. 298.


⁴ Նույն տեղում, աղ. XIV:

⁵ Պեղումները Օ. Զափարիսիևի և Ա. Զավախիշվիլու, նյութերը հրատարակված չեն:


⁶ Պեղումները Տ. Զուրիկիշվիլու, նյութերը հրատարակված չեն:

⁷ Պեղումները Ոսմին Ոսմիշվիլու, 1963 թ., նյութերը հրատարակված չեն:

ժապավեններով (ՎՊԹ. № 1—62—537, 538) և ուելիեֆ ներմկված դարդա-
 նախշերով խեցեղենի բեկորներ (ՎՊԹ. № 1—62—536), էնեոլիթից վաղ
 լրոնդի անցած անույնանման հատկանիշներ ունի նաև Ծոփի և Աբելիա
 (Սաղախուից 7 կմ դեպի Արևմուտք) գյուղերի¹, ինչպես և Թեթրիժարուի
 (Թրիլիսիից 70 կմ հարավ) բնակաանդինների էնեոլիթյան խեցեղենը²:



Նկ. 56. Բաժակի մաս, կտցածև կախված շուրթով:



Նկ. 57. Բաժակի մաս, կտցածև կախված շուրթով:

Ամենայն հավանականությամբ խեցեղենի վերահիշյալ իմբերը սյր ան-
 ցողիկ օղակ են կապում էնեոլիթի և վաղ բրոնզի միջև:


¹ Պեղումները Տ. Չուրինիշվիլու, նյութերը հրատարակված չեն:

² Պեղումները Գ. Գորնշիշվիլու, 1956—58 թթ., նյութերը հրատարակված չեն: Խորիճ
 շնորհակալություն եմ հայտնում վերը հիշատակած վրացի հնագետներին, իրենց հրատարա-
 կած նյութերի հետ ծանոթացնելու համար:

Վերը ներկայացված կրնկաձև նստուկով խեցեղեն ընորոչ է նաև Գեոյ-
թեփեի «M» շերտին¹: Սակավ հանդիպում է նաև «K» շերտում²:

3. Բուրակ իրանով բաժակներ դուրս ճկված և կլորացող շուրթերով:
Րրանի միջին մասում ունեն կիսաղնդաձև կանթ: Բաժակների շուրթերը
եռանկյունաձև ելուստով, կամ, ալսպես ասած, կացաձև ցած են կախվում:

Նման երկու սե փայլեցրած բաժակների մասեր են հայտնարեբրվել: Մե-
կի վզի վրա երկու կողմից պահպանվել են ինչ-որ քառանկյունաձև խորա-
քանդակ շրջանակների մասեր (նկ. 56, № 2234/142C), իսկ մյուսի վզի հիմ-



Նկ. 56. Կացաձև կախված շուրթերով կավամանների ընկերներ:

քում և ուսերին արված են խորաքանդակ հորիզոնական դոսիներ (նկ. 57,
№ 2235/70ա): Այս բաժակների ստորին մասերը շեն պահպանվել: Երկուսն
էլ հայտնարեբրվել են երկրորդ շերտում:

Շուրթից կախված կաուց ունեն Գառնիի նաև այլ ախպի կավամանները
(նկ. 58, № 1964/50b, 2234/162b, 2235/26b):

Նման ելուստով կավամանի ընկոր հայտնարեբրվել է նաև Սենդուվթում
(№ 1618/152): Շուրթից կախված եռանկյունաձև ելուստները բավաճանին
լայն տարածում ունեն: Հայտնարեբրվել են Մշո դաշտում, Խարրերդում, Մա-
լաթիայում, անդամ Ադիամանում և Մարաշում³:

Նրանց վաղ օրինակները հանդիպում են Սիրիսաանի (Մալաթիայից
անմիջապես հյուսիս) ուղ խալկոլիթյան (էնեոլիթյան) շերաներում⁴: Նույն
ժամանակով է թվադրվում հավանարար նաև Քեփեչիկի (Խարրերդի մոտ)
կոցաձև ելուստներով կավաման⁵: Ծանալս «Ասլան-թեփեի (Մալաթիա)
չհրատարակված նյութերը ապացուցում են, որ շուրթից կախված նման
ելուստով խեցեղենը դոյություն է ունեցել ամբողջ վաղ բրոնզեդարի ընթաց-
քում»⁶:

4. Ուլղահայաց վղով, մի փոքր դուրս ճկված շուրթով և աննշան կլո-
րացող իրանով բաժակներ, վղի հիմքում հորիզոնական խորաքանդակ դոսի,
վղի դարդարված ուղղադիծ երկրաչափական դարդերով, իսկ իրանը ուղիեֆ-
ներձկված դարդանախշերով:

¹ T. Burton-Brown, նշվ. աշխ., նկ. 4, № 11, 12, 31, 33,

² Նույն տեղում, էջ 46, № 385 և աղ. VI, № 385,

³ C Burney, նշվ. աշխ., էջ 107, 104, 107, նկ. 100:


⁴ Նույն տեղում, էջ 163, նկ. 21, էջ 164, 194:

⁵ Նույն տեղում, էջ 163, նկ. 22, էջ 194:

⁶ Նույն տեղում, էջ 194:

Նման մի շարք բաժակների սասեր են հայանարերվել: Սե փայլեցրած սակերեսով և սոխրագույն աստառով բաժակի բեկորի ասրողը վիզը ղարդարված է երկշար սեծ, գծածածկ սեանորատիպ ղարգերով, որոնց սիւն ղետեգված են փորրիկ բառանկյունաձև և եռանկյունաձև գծածածկ սլատկերներ (նկ. 59, № 2234/143):

Կան բաժակների սասեր, որոնց կամ վլի հիսքը (№ 2234/133d) կամ վրի մի մասն (№ 2234/133e) է գարդարված գծային երկրաչափական ղարդանախշերի լայն ժայպովնով, որը երկու կողմից շրջափակվում է խորաբանգակ հորիզոնական գոտիներով (նկ. 10): Որոշ բաժակներ վրի հիմքում ունեն երկրաչափական ղարդանախշերի լայն ժայպվեն, իսկ իրսնի ուռուցիկ մասում՝ ուղիղ ներկված ղարդանախշեր (№ 2234/125h), № 1964/41b, 50, № 2235/48a): Այս բաժակներն իրենց ղուգահեռներն ունեն Շենգավթում (№ 1618j3):




Նկ. 59. Բաժակի մաս, վրին երկրաչափական ղարդանախշեր:

5. Գլանաձև իրանով, տափակ հատակով սե փայլեցրած բաժակի մաս (№ 1964/16), որն իր ղուգահեռներն ունի գարձյալ Շենգավթում (№ 1330j55):

V. Քասերն ղստ ձևի նույնպես բաժանվում են իմբերի:

1. Լայնարերան գեպի ցած կոնաձև նեղացող և փոքր հաակով ավարտվող սե և մոխրագույն փայլեցրած մակերեսով, խորր թասեր՝ կիսագնղաձև կանթով:

Նման թասերից մեկի ղուրթը եղերված է ուղղահայաց կանգնած ոչ ղալայն ժասյավննով (նկ. 60, № 2234/130), վերականգնված է, մյուսինը ավարավում է ուղղակի կլորանալով (№ 2234/113c), երրորդի ղուրթը հորիզոնական կտրվածքում աափակ է, արտաքինից գծային գոտիով ղեղաված (№ 2235/64b):



Նկ. 60. Թաս, կիսագնղաձև կանթով:

Այս իմբի թասերն իրենց ղուգահեռներն ունեն Շենգավթում (№ 1330/99), Զրառատր

գամբարանտրլորում (№ 1939/33), վրասաանում՝ Կվացխևիկերի B ղերտում՝ Դաղստանում՝ վերին Գունիրյան ղնակաաեղիում², Յանիկ-Թևիկի 4B ղերտում՝ և այլուր:

¹ А. Джавахишвили, Л. Глonti, 2-й. а2-й., а7. IV, նկ. 153.

² В. М. Котович, Верхнегуньбское поселение, Махачкала, 1965, стр. 151, рис. 53, 8, 11, 13.

³ С. Burney, Excavations at Janik-Tere, North-West Iran, t. LXX, fig. 12.

Նման թասերի ամենավաղ օրինակներից մեկը հայտնաբերվել է Կենտրոնական Անատոլիայում՝ Քան-Հասան ընկած տեղի ուշ խալկոլիթյան շերտում: Թասի վրա պահպանվել է կիսադնդաձև կանթը: Նույն շերտի մի շարք հաստախեցի կավամանների վրա այդ կանթերը մեծ են և դեպի դուրս ձրված: Ըստ Դ. Ֆրենչի, այդ կիսադնդաձև կանթերը նման են Նախիջևանի կանթերին¹: Քան-Հասան ՉԱ շերտում (ուշ խալկոլիթ) կիսադնդաձև կանթեր կան նաև կարճ դանաձև վզով և ուռուցիկ իրանով կճուճի վրա²:

Հարավային Անատոլիայում հայտնաբերված հարգախառր, թույլ թրծումով որոշ կանթեր նման են կիսադնդաձևին, սակայն ըստ Զ. Մելարտի, նրանք որոշ շեն Կոնիայի դաշտավայրի համար, հայանի են եղակի օրինակներով և առաջին անգամ հանդիպում են Մերսին XVI-ում³, որը Յ. Գարսաանզը վերագրում է միջին խալկոլիթին⁴:

Վերոհիշյալ գուգահեռներն անշուշտ հավաստում են դեռևս խալկոլիթյան ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհի և հարևան երկրների միջև փոխանակային կապերի առկայությունը:

2. Կիսադնդաձև խորը, ոչ մեծ թաս, շուրթը դեպի ներս կլորացող, հատակը տափակ (աղ. XI): Ունի սև փայլեցրած մակերես և գորշագույն փայլեցրած աստառ (№ 2234/161): Զուգահեռները կարելի է տեսնել Մշո դաշտում, Խարրերգում, Մալաթիայում, Վրաստանում՝ Զգուգրիս-գվերգայում⁵:

3. Կլորացող իրանով, երկկանթանի, ժապավենաձև դեպի դուրս ճկված շուրթերով փոքր թասեր (աղ. XIa, № 2234/162c): Արտաքինը սև փայլեցրած, աստառը գորշագույն, անփայլ:

4. Բաժակաձև փոքր թասեր (№ 2234/129), իրանը դեպի վեր մի փոքր լայնացող (աղ. XIa): Շուրթը եզերված է նեղ ժապավենով և դրսից դուռկապ է: Ունի մեծ կանթ, որը շրթի հետ եռանկյունաձև հարթակ է կաղմում և արաաքինից երկթեք է: Հատակը կլոր է և մի փոքր ներճկված:

Նման դավաթ-թասեր հայտնաբերվել են Արճեշում⁶:

5. Խորը, սև փայլեցրած թասեր փոքրիկ հատակով և լայն ընդունով:

Նման թասերի մի շարք բեկորներ են հայտնաբերվել, որոնց ընդհանրապես շուրթից դեպի ներս կախված կտցաձև ելուստ կամ քիթ, որի երկու կողմից իրանի վրա բացված են կլոր անցքեր և կարծես մարդու գեմք են հիշեցնում (նկ. 61):

Որոշ թասերի շուրթերը կտրվածքներում լայն ժապավեն են կաղմում և կլորանալով գոտի առաջացնում, իսկ ներսից հիմքում շեշտվում են ներճրկված դժային գոտիով (աղ. XXII, № 1967/16), մյուս թասերի շուրթերը

¹ D. H. French, Excavations at Can-Hasan, 1962, AS, XIII, p. 38, fig. 56.

² Նույն տեղում, նկ. 5, 12, 13:

³ Նույն տեղում, էջ 30:

⁴ D. H. French, Excavations at Can-Hassan, AS, XIV, p. 133, fig. 8.

⁵ J. Mellaart, Early cultures of the South Anatolian Plateau II, AS, XIII, 1963, p. 199, 202, fig. 2, 4, 6, p. 204, fig. 3, 5.

⁶ J. Garstang, Prehistoric Mersin, Oxford, 1953, p. 147, fig. 91, 4, 5.

⁷ C. Burney, Eastern Anatolia..., p. 197, fig. 162, p. 201.

⁸ Б. А. Куптин, Изв. арх., № 74, № 4, 73, 4.

⁹ C. Burney, Изв. арх., № 185, № 4, 100, 101, 189, № 102.

ոչ թե կյուրանում են, այլ վերևից դեպի ներս ձկվում և սուր եզր են առաջացնում (№ 1967/19, 13a), Կան թասեր, որոնց շուրթը նեղ ժապավենով մի փոքր դեպի ներս և ցած է թեքված(նկ. 61, № 2235/110b): Որոշ թասեր շուրթից սկսվող փոքր ելուստ ունեն, որը ոչ թե ներս է ձկվում, այլ դժպր դուրս (№ 1967/13b): Թասերից սեկի ելուստը շուրթից չի սկսվում, այլ իրանի վերին մասում երկթեր ելուստ է առաջացնում, որի երկու կողմերում արված են փոքր անցքեր 1965 թ. № 16): Այս թասերն ունեն մուգ շագանակադուրն, սև և դեղին փայլեցրած առասու: նկարագրված թասերը շատ յուրօրինակ են, բնորոշ դեռևս միայն Գառնիին, իրենց կտցածե ելուստներով հիշեցնում են ընկույզի տասպակի ձևի ներքինումներով թասերը, սակայն նրանցից տարբեր են:

Հայտնաբերվել են Գառնիի վաղ բրոնզեդարյան մշակույթի ստորին և միջին շերտերում:


Դեպի ներս թեքված շուրթերով թասեր հայտնաբերվել են Կենարոնական Անաատիայում՝ Քան-Հասունի ու խալկոլիթյան շերտում¹, Գեսկաս (հնում՝ Կալիկադոնոս) գետի հովտի նախապատմական մի շարք բնակաանդիներում՝

Մալ-թեփեում, Մութում², Ջինգան-թեփեում³, Կոզուլ-բոզազում⁴: Մերսինում նման շուրթերով թասեր հայտնաբերվել են Տարսուս II-ում (որը թվագրվում է վաղ բրոնզ I-ով, մթա 2500 թվականից հետո)⁵:

Կոնիայի դաշտավայրում նման թասեր կան վաղ բրոնզ I և II-ում, սակայն, բայց Ջ. Մելարաի, հազվադեպ են, բնորոշ չեն այդ դաշտավայրի համար, հայտնաբերվել են նաև Բեյլիոուլթանը վաղ բրոնզի ժամանակաշրջանի պայտաում⁶:

Այդ թասերից կան նաև Քյուլ-թեփե Ib շերտում (մթա 1850 թ.)⁷:

VI. Քրեդաճներ, խորր, ուռուցիկ ուսերով և փոքր հատակով, մեծ մա-



Նկ. 61. Թասեր, մարչու դեք հիշեցնող ելուստներով:

¹ D. H. French. Excavations at Can-Hasan, AS XIV, 1964, p. 136, fig. 9, 6--9, 11.
² D. H. French, Prehistoric sites in the Gök-Su Valley, AS, XV, 1965, p. 189, fig. 7, 20--24.

³ Նույն տեղում, նկ. 4, 3--5, 3, 916:

⁴ Նույն տեղում, էջ 186:

⁵ Նույն տեղում, էջ 186:


⁶ J. Mellaart, արդ. աշխ. էջ 214, 217, նկ. 9, 12--21:

⁷ Նույնի. Second millennium pottery from the Konja plain and neighbourhood. Belleten Türk Tarih kurumu, XXII, 1958, № 87, p. 336, t. IX, fig. 166--172, p. 321.

սամր սե փայլեցրած մակերեսով, դորշադուն, սև ե դեղին աստառով: Բոլորին բնորոշ է ուսերի զարդարումը կլոր կամ ձվաձև փոսիկներով, կիսադնդաձև կանթերով, եռանկյունաձև հարթակ կազմող ելուստներով, խուլ փանթերով և այլն:

Քրեղանները միմյանցից զանազանվում են շուրթերի ձևերով.

ա) Կան քրեղաններ դեպի դուրս անկյուն կազմող նուրբ շուրթերով, որը



Նկ. 62. Քրեղաններ զարդարված փոսիկներով:


եղերված է անկյունային նեղ ժապավենով (նկ. 62, № 2234/52, 152d, f, 153c, № 2235/38d, № 1964/50cd):

Այս քրեղաններն իրենց զուգահեռներն ունեն էլարում (№ 2245/2, 28, № 2246/34, 54, 57, 59, 78, № 1813/32), Զրառատում (№ 1939/37), Բարադեվրիշում¹: Թրիալեթի XXV դամրանարլուրում նման քրեղաններից մեկը զարդարված է ելուստների շարանով, իսկ մյուսը կետազարդ դոտուց ցած

¹ Г. С. Исмаилов, Автореферат, табл. I, II.

ուսերին ունի եռաշար թեք ակոսների խմբերով առաջացած անկյուններ. որոնց կենտրոնը զարգարում է կիսազնդածե ելուստը (ՎՊԹ. № 4, 66—136. № 4—66—137)¹:

բ) քրեզաններ, որոնց բարձրագիր, մասսիվ շուրթերը իշխում են նրբորախեցի իրանի վրա: Նման մի շարք քրեզանների մասեր են հայանաբերվել (№ 1964/14, № 2235/73, № 2234/98c), որոնց մեջ հատկանշական է ղեղին փալեցրած մակերեսով և վարգագույն փալեցրած սուսառով քրեզանը,




Նկ. 63. Քրեզան, զարդարված փոսիկով:

իրանի կենտրոնում եռանկյունաձև ելուստ՝ ուղղահայաց իշնող երկու անցքով (աղ. XXI, № 2176/29):

Նման շուրթերով քրեզաններ բնորոշ են ղեռես Գառնիին:

գ) Կարճ և մի փոքր ներճկված վզով, նուրբ, անկյունային ժալգավենով եղբրված շուրթերով քրեզաններ (աղ. XIII, նկ. 63, № 1964/33, № 2234/101a, № 2288/11): Այս քրեզանները իրենց ղուզահեռներն ունեն էլարում № 2246¹ 63: Քրեզանների մասեր՝ ուռուցիկ փորին ձվաձև խուլ կանթ, հայտնաբերվել են նաև Աղթամարում (№ 2247/8b):


VII. Մինիատյուր կավամանները հիմնականում կրկնում են վերը նկարագրված խեցե-



Նկ. 64. Քրեզանիկ, փոսիկներով և ելուստով զարդարված:

¹ Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, стр. 403.

ղենի ձևերը Հայտնարերվել են քրեղանիկներ (նկ. 64, № 2176/14) և թասիկներ (նկ. 65, № 2176/79)՝ զարդարված ներձկված փոսիկներով և խուլ ձվաձև կանթերով, կճուճիկներ ուղղաճայաց վզով, կլորացող իրանով և փոքրիկ ներձկված հատակով, ուսերը զարդարված կլոր փոսիկներով (№ 1965/103), գավաթիկներ՝ վոռի հիմքում կիսադնդաձև կանթ (նկ.



Նկ. 65. Թասիկի մաս, փոսիկով և խուլ-կանթ
կլորացող:

66), կամ շուրթից սեսվոլ տարրեր տիպի կանթերով (№ 2234/112, № 1967/10): Մի մասի վիզը զարդարված է դժային երկրաչափական զարդանախշերի ժայռավենով, իսկ ուռուցիկ իրանը ուռուցիկ-ներձկված զարդերով (№ 2235/102), մյուս մասի ուռուցիկ փորը զարդարված է ձվաձև փոսիկներով, կիսադնդաձև խուլ կանթով (№ 2235/43a, b), կան նաև անդարդ գավաթիկներ

(1965 թ., № 17): Հայտնարերվել են ևրիու արտակարգ փոքրիկ լայնաբերան և դեպի ցած ձաղարած նեղացող իրանով կավամաններ (նկ. 67), հասարակ, անփայլ, պատրաստված դեղնա-վարդագույն կտվից (1865/7a, № 2235/128a):

Նկարագրված մինիատյուր կավամանները կարող էին օգտագործվել որպես խաղալիք, աղաման, կոսմետիկայի համար, կամ որպես ներկայանտիկ և այլն: Մինիատյուր կավամանները բնորոշ են վաղ բրոնզեդարյան մյուս բնակատեղիներին ևս:

VIII. Կափարիչներ, սկավառակաձև, ուռուցիկ, լայնադիր ժայռավենաձև շուրթերով: Որոշ կափարիչների կենտրոնական մասը տափակ է, հարթ (նկ. 66, № 2234/110, № 2235/118a, b, № 1964/47), իսկ որոշ կափարիչների ամսեյաձև զոգավորվող (№ 2235/118c, № 1967/15, 22, № 2176/62), Բուլորը կենտրոնում ունեն կիսադնդաձև կանթ և նրա կողքին անցք՝ զորորչու համար: Կափարիչների ուռուցիկ շուրթերը երբեմն զարդարված են կլոր փոսիկներով:

Նման կափարիչների մի շարք բեկորներ են հայտնարերվել սև կամ վարդագույն փայլեցրած մակերեսով, մրից սևացած զորչուգույն (№ 1964/47) կամ ալ կսրմիր փայլեցրած աստառով (№ 1967/22):


Այս կափարիչներն իրենց բազմաթիվ զուգահեռներն ունեն Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան մշակույթում:

Գառնիում հայտնարերված ապակե կենտրոնական մասով մի խումբ կափարիչներն ունեն դմբեթաձև եռոտանի կանթեր, որոնց զաղաթը զարդարված է ներձկված փոսիկով (№ 1967/16, 15):

Կափարիչների նման տիպի կանթերը մեղ հայտնի են միայն Շենգավթից (№ 1618/252, 258, № 1330/270), որոնց ոտքերն ավելի շեղված են և դեպի վեր ձգված:

IX. Օջախ-կրակարաններ. I. Օջախ-կրակարանը ունի կարճ և լայն դրանաձև իրան՝ ուղղաճայաց պատկերով (մոտ 15 սմ բարձրությամբ) և լայն, տափակ հատակով (31 սմ տրամագծով, նկ. 14):

11. Օջախ-կրակարանի բազկացած 1 երկու առանձին մասերից, դլանածն իրանով և տափակ հատակով կրակարանից և նրա վրա դրված շեփորածն լայն տափակ շուրթերով, կոնաձև դեպի ցած լայնացող իրանով հենակից (նկ. 15, 16): Կրակարանի պատերը դլանածն են, սակայն նախորդի




Նկ. 66. Կալաթիկ և կափարիչ:

նման ուղղահայաց չնս, այլ դեպի հատակն իջնելով լայնանում են: Այսպիսով բերանը և հասակը նույն արամագիծը շունեն, բերանը մի փոքր ավելի 1 նեղ, քան հատակը: Այս կրակարանը նախորդի համեմատ ավելի լայն է

և ավելի ցածրադիր (բարձրությունը 9,5 սմ, բերանի տրամագիծը 37 սմ, հատակի արամագիծը 38,5 սմ, խեցու հաստությունը 2 սմ):

Հենակի շուրթերը լայն են և տափակ, փոփած (լայնությունը 8,8—9,2 սմ), իրանը կարճ է և կոնաձև դեպի ցած լայնանում է, բայց ոչ շատ (հենակի բարձրությունը 12,5—13 սմ, բերանի արամագիծը 24,6 սմ, ստորին մասի արամագիծը 26 սմ, ընդհանուր արամագիծը շուրթի մի եզրից մյուսը 43,5 սմ): Ինչպես I գլխում հիշատակվեց, նրա վրա երբեմն դրվել է նաև պայտած հենակ:

Հենակի և կրակարանի բարձրությունը միասին վերցրած 19,5 սմ է:



Նկ. 67. Մինիատյուր կավամաններ:

Այս օջախ-կրակարանները պատրաստված են վարդագույն և շեկ գույնի, խոշոր ավազահատիկներով շաղախված հասարակ կավից: Արտաքինից կռկած, հարթեցրած են և անփայլ, կրակի ազդեցության հետևանքով քայքայված: Նրանք դրված էին ավազի և կավի

ամուր շաղախով կառուցված հիմքի վրա և ըլուր կսզմերից ամրացված ամուր շաղախով և կոարված կավամանների ընկերներով:

Նման տիպի օջախ-կրակարանների կոմպլեքս մեզ հայտնի է միայն Գառնիից: Շենդավթում հայտնաբերված կլոր շարժական օջախները Գառնիում դեռևս բացակայում են:

Կրակարանի վրա դրված լայնաշուրթ, կոնաձև, դեպի ցած լայնացող հենակներին մասամբ կարելի է նմանեցնել Արևիկում և Նախիջհանի Քյուլթեփեհում հայտնաբերված մանդալները, որոնք ունեն լայն և ափսակ հորիզոնական շուրթ, սակայն իրանը դեպի ցած ոչ թե լայնանում է, այլ մի փոքր նեղանլով, ավարտվում է կլորացող հասակով:

X. Հենակներ, պատվանդաններ: 1. Հայտնաբերվել են օջախի շարժական պայտած հենակների բազմաթիվ ընկերներ:

Այս հենակները կարծես խիստ ոճավորված մարդկային ֆիգուրներ լինեն նսած վիճակում, ոտքերը առաջ պարզած, բացած: Մեզ այդ համոզմանն են բերում հենակների հատկապես ներրանաձև վերջավորությունները և կենարոնական վերասլաց մասերը, որոնք մեծ մասամբ մարդակերպ են, իսկ երբեմն էլ խիստ ոճավորվելով, դառնում են ըրդաձև կամ կոնաձև: Որպես կանոն ըլուրը ներսից կենարոնում և ներրանաձև վերջավորությունների կողքին ունեն կոնաձև փոքր ելուսաներ, իսկ արտաքինից կենարոնական մասում՝ և հստակ դաձև կանթ (ազ. XVII):

Հայտնաբերված հենակները ունեն կառուցվածքային ընույթի նրբերանդներ: Որոշ հենակներ կոնաձև ելուսաներ ունեն ներրանաձև վերջավորությունների աակ, հավանարար օջախին կամ դեանին ամուր կանգնեցնելու նպատակով (ազ. XIV, № 2235/44, 108), մի քանիսը ներսից, ստորին մասում ունեն աղեղնաձև ընկեֆ դոաի (ազ. XV, № 2176/40):

¹ О. А. Абибуллаев, Первые итоги раскопок Кюль-тепе, Труды музея по истории Азербайджана, т. II, Б., 1957, стр. 89—90, табл. VI, рис. 2, նույնի, Археологические раскопки в Кюль-тепе, табл. XXXI, рис. 1, 2.

Հենակների կենարոնական ելուստների մի մասը մարդակերպ է, պար-
զունակ (աղ. XVI, № 2234/108, № 2176/40a), մի մասը բրգաձև (աղ. XV.,
№ 2176/40b), մյուս մասը հատած կոնի ձևի (աղ. XVa, 2176/52, № 1964/24,
32) և այլն: Հայտնաբերվել են նաև բազասթիվ ներբանաձև վերջավորու-
թյուններ:

Բոլոր հենակները պատրաստված են ավաղախառը, ոչ բարձրորակ կա-
վից, վառ հունցած, շուա բարձրավող, արաաքինը հարթեցրած, դեղնավուն
կամ վարդագույն անդորով պատած, որոշ հենակների վրա պատվանվել են
մրից սևացած հետքեր:

Պատած հենակները իրենց տարատեսակներով հայտնաբերվել են բո-
լոր վաղ բրոնզեդարյան ընկատեղիներում: Հյուսիսում նրանք հասել են
Լուդովիչի ընկատեղիս¹, իսկ հարավում Հայկական լեռնաշխարհի մշա-
կույթի հետ տարածվելով, հասել են Հյուսիսային Սիրիա և Պաղեստին²:
Մերսինում, Յոմուկ-թևփեի XVI—XII շերտերում հայտնաբերված եղջերա-
վոր հենակները զարձյալ իրենց դուղահեռներն ունեն Հայկական լեռնաշ-
խարհում: Տափակ հատակով, քառանիսա բարձր իրանով, կամ ձվաձև, եր-
կարսովուն մասսիվ իրանով եղջերավոր հենակներ, վերին մակերեսի կենտ-
րոնում մտսսիվ, ձվաձև կանթ, հայտնաբերվել են էջմիածնի մոլորաբլուրնե-
րում (Շրեշ-բլուր, Քյուլ-թևփե, աղ. XVIII, XIX, № 766/155—158, № 779/15),
Ղլվաթնոցում (ՉԳԹ № 145), Արևիկում, Ջրահովտում և Թիզնիսում (№ 634):

2. Գտնիում հայտնաբերվել են կոնտձև ելուստներ քառանկյունաձև
պատվանդանի վրա: Նրանք նույնպես կարող էին առանձին հենակի դեր կա-
տարել: Նման հենակներից մեկը հատած կոնի ձև ունի (աղ. XVIIa, № 1964/
363), նրա պատվանդանը հավանարար հավասարակողմ քառանկյունի է
ևղել, որի կողմերից մեկի երկարությունը 12 սմ է:

Նման հենակներ հայտնաբերվել են Շրեշ-բլուրում, Քյուլ-թևփայում
(աղ. XVIIa, № 766/155a, ա):

3. Գտնիին բնորոշ է նաև բրդաձև կամ աշտարակաձև հենակ, սաորին
մասում կիսադնդաձև կանթի հետքով (աղ. XXIa, № 1967/20): Նմանները
հայտնաբերվել են նաև Շրեշ-բլուրում (№ 779/15), Շենդավթում (№ 1330/
233):

4. Հենակների մյուս տարատեսակը դա կոճղաձևն է՝ մակերեսները շր-
ջանաձև ապակի, իսկ մեջքը ներճկված (№ 2288/36), պատրաստված է դոր-
չաղույն կովից, արաաքինից դեղնավուն անդորով պատած (բարձրությունը
5 սմ է, իսկ մակերեսների արամագիծը 8 սմ):

5. Պատվանդան-հենակները թաղարստիպ դեպի վեր, լայնադիր փոված
շուրթերով, կոնաձև դեպի ցած լայնացող իրանով, շուրթի և իրանի սիաց-
ման մտսում ձվաձև կամ երկթեք խուլ կանթով (նկ. 68, աղ. XX, № 2235/26c,
96, № 1967/12): Նման պատվանդաններ, սակայն ավելի շեշտված անցում-
ներով էլտրի դումրարաններում հայտնաբերվել են կճուճների սուկ դրված³:
Այս պատվանդանները կառուցվածքային որոշ աարբերություններով բնորոշ

¹ P. M. Мунчаев, Древнейшая культура Северо-Восточного Кавказа, стр. 126.


² S. Hood, նշվ. աշխ., էջ 139:

³ J. Garstang, նշվ. աշխ., էջ 135, 143, նկ. 90, էջ 166, 167, նկ. 106.

⁴ է. Խունգաղյան, աշխ., էջ 67, 68, նկ. 19:

են Հայկական լեոնաշխարհի բաղմաթիվ հուշարձաններին: Հայտնարեքվե են Շրեշ-ըլուրում, Քյուլ-թափայում, Բջնիում, Խորումբուլաղում, Շենդավթում¹, Սեանի ավաղանում², Կիրովականի Քոսի-ճոթերում, Աղստևի հովտի Բարա-դեվրիշում³: Հյուսիսում նրա վերջնակետը դեռևս Քրիալեթի Կանաթափա (№ XLVI) դամբանարևուրն է⁴:

6. Գառնիում հայտնարեքվել է ընդամենը մեկ եռոտանի պատվանդան



Նկ. 68. Թաղարառիկ հենակներ:

կաաարել՝ հավանարար ծիսական արարողությունների ժամանակ և օգտագործվել են սրբաղան կրակի համար: Գառնիում նման երկու կանթեղներ են հայտնարեքվել (ադ. XXI, № 1964/296, № 2176/12): Այս կոնթեղները տարածման լայն շառավիղ ունեն:

Բացի վերոհիշյալ հիմնական խմբերից, Գառնիում հայտնարեքվել են նաև մեծ կճուճների ուռուցիկ փորի մասեր, կենարոնում կիսադնդաձև կանթ (№ 2235/136, № 2234/101b): Անշուշտ նրանք բարձր, խողովակաձև վղով և

(ադ. XXX, № 2235/105b), որի երեք ոտքերն էլ թերի են: Իր ձևով մասամբ տարբերվում է մյուս բնակատեղիների բարձրարվեստ եռոտանի հենակներից: Նախ ոտքերը միացնող կամարը փոքր է և կլորացող, ոտքերը անկյունավոր են և հասա: Կոպիտ է և անղարգ: Հասարակ եռոտանի պատվանդանի մեկ օրինակ հայտնի է Շենդավթից, մեկ այլ օրինակ էլ Աղթամիից (№ 2247/5): Եռոտանի պատվանդաններ դեռևս բնորոշ են միայն Հայկական լեոնաշխարհի մշակույթին:

XI. Կանթեղներ-ձիքաճրագներ: Գառնիում հայտնարեքվել են թելի կոճի ափսի կավակերտ ըրեր: Նրանց ստորին կլորացույ մակերեսը տափսկ է, իսկ վերինը՝ թասանման զոդավորվող, մրից սեացած: Բ. Ա. Կուֆտինի բնորոշմամբ նրանք հենակի դեր են կատարել, սակայն իրականում նրանց զոդավորվող մասերում ձեթ կամ ճարպ են ալրել, այսինքն կանթեղի դեր և:


¹ Նույն տեղում, ադ. XVIII, վերին շաբ:

² Օ. А. Мнацаканян, Раскопки на осушенной территории Озера Севан, СА., XXIII, 1955, стр. 187, рис. 5:1.

³ Г. С. Исмаилов, Автореферат, стр. 11.

⁴ Տե՛ս վրասաանի պետական թանգարան, № 4—66—59:

տանձաձև իրանով կավամանների մասեր են (նկ. 69), որոնցից հայտնաբերվել են նախիջևանի Քլույ-Քափալի 11 շերտում, իսկ 1966 թ. նման ամբողջական կ՛ուճներ հայտնաբերվել են Ջրահովիտ ըլուրում (Արտաշատի շրջան)։ Նրանց մինիատյուր տեսակները հայտնի են Հառիճում¹։ Կարմրաշագանակադուլն սակերեսով նրման եռկանթանի կճուճներ ընդունը են նաև Սաղախլուի մոտ՝ Կենյ-Քեփե (Կերեղ-ղետի ձախուփի տերրասի) բնակատեղիի վաղ բրոնզեդարյան շերտին²։ Հայտնաբերվել է նաև Օղնիի բնակատեղիում³։



Նկ. 69. Տանձաձև իրանով կավաման։

Գտնիում հայտնաբերված ծակստիկն ամանների մասերը հավանաբար քամիչի բեկորներ են (№ 2288/29)։ Կան կավամանների մասեր, որոնց շուրթից սկսվող կանթը ոչ թե սովորաբար հիմքում է ավարտվում, այլ վրի միջին ստսում (ադ. XXI, 2234/82, 142h), նման կանթերով կավամաններ հայտնաբերվել են։

Շենգավթում (№ 1330/60), Իղդիրի հովտում (որոնց Չ. Բարնեյը համոզված կերպով վերագրում է վաղ բրոնզի 111 փուլին)⁴, Արծնի (Կարագ) վաղ բրոնզեդարյան վերին շերտերում⁵։

Գտնիի խեցեղենին հատկանշական են նաև կանթերի տարբեր տեսակներ, սրտք բառ ձևի բաժանվում են հետևյալ խմբերի. 1. Կիսագնդաձև մեծ և փոքր կանթեր՝ խողովակաձև անցքով։ 2. Փայսավենաձև, վերին՝ եռանկյունաձև հարթակով երկթեր կտնթեր։ 3. Գմբեթաձև եռոտանի կանթեր։ 4. Խուլ կտնթեր, կում ունկեր մեծ և փոքր, տարբեր տեսակների. կիսաշրջանաձև՝ անցքի փոխարեն կլսր ներձիված փոռիկներով, ձվաձև՝ նույնպես փոռիկներով կում երկարավուն աղոսներով, եռանկյունաձև՝ կենտրոնում ուղղահայաց անցք, բաղամանիստ երկարավուն խուլ կանթեր և այլն։ Խուլ կանթերը գերադանցադես իրանի ուռուցիկ մասում են տեղավորված։

Գմբեթաձև եռոտանի կանթերով կանթերը թվով քիչ են և ընդունը են միայն կափարիչներին։

Փայսավենաձև և եռանկյունաձև հարթակով երկթեք կանթերը սկսվում են շուրթից և ավարտվում վրի հիմքում կամ ուռուցիկ ուսերին, միջին մասում նեղ են, իսկ հիմքում լայնանում են, կիսալուսնաձև փուլում։

¹ Պեղումները Բ. Խաչատրյանի։

² Պեղումները Տ. Չուրիկիշվիլու, սյուլները գտնվում են Վրաստանի Արվեստի ինստիտուտում։

³ Բ. А. Куфтин, Археологические раскопки, 1947 г. в Цалкипском районе, Тб., стр. 37, табл. XXXIX.

⁴ С. Burney, Իզվ. աշխ., էջ 187, 191, նկ. 151, 152.

⁵ Н. Kosay-K. Turfa Խզվ. աշխ., էջ 398, վերին շարք։

Կիսաշրջանաձև և ձվաձև կանթերը տեղավորված են վրի հիմքում, վրի միջին մասում, իրանի ուռուցիկ մասում և այլն: Կան շուրթից կտխված, կտցաձև կանթեր:

Գառնիում հայտնարերվել են նաև կտվե շրջանակներ (նկ. 6, միջին շարք) և մանկական սայլի անիվներ (աղ. XXIII և XXIV):

Գառնիի վաղ բրոնզեդարյան խեցեղենը ըստ որակի և մշակման առանձնահատկությունների, բաժանվում է երկու խմբի.

I. Հաստրակ խոհանոցային

II. Գեղարվեստորեն կատարված բարձրարվեստ խեցեղեն:

I. Ինչպես վերը աեսանք, հասարակ խոհանոցային խեցեղենը պատրաստված է սվաղախառը, վատ մշակված, վատ հունցված և վաա թրծված կավից, շուտ քայքայվող փխրուն, մեծ մասամբ շեկավուն, մասամբ վարդագույն, անգամ երբեմն դեղին անդորով պատած: Այս խմբի մեջ դերաղանցորեն մտնում են օջախներն իրենց ամբողջ կոմպլեքսով, օջախի ընդհանուր տիպի հենակները, եռոտանի պատվանդանը, վարդագույն սափորը, բանկայաձև կավամանները, տանձաձև իրանով կավամաններ, քամիչներ և այլն:

II. Գեղարվեստական խեցեղենը բաղմաձև է: Այն կատարված է լավ հունցած, մշակված, արտակարգ լավ թրծված, բարձրորակ կավից: Արտաքինը կոկած, հարթեցրած, մեծ մասամբ սև, նաև վարդագույն, դեղնագույն, դեղնա-նարնջագույն, մասամբ մոխրագույն և դարչնագույն անդորով պատած: Աստառը երբեմն փայլեցրած, իսկ մեծ մասամբ անփայլ, նույնպես բաղմաղան գույներով՝ վարդագույն, սև, մոխրագույն, դարչնագույն, ջադանակագորշագույն, կաթնագույն և այլն:

Մեծ կարասները, սափորները հաստախեցի են, իսկ միջին և փոքր կավամանները՝ դերաղանցապես նրբախեցի:

Ըստ դարդանախշման առանձնահատկությունների, գեղարվեստական խեցեղենը բաժանվում է երկու հիմնական խմբերի.

I. Խեցեղեն՝ զարդարված փոսիկներով, ներձկված ակոսներով և խուլ ունկ-եկուսաներով:

II. Ռեյիեֆ, ռելիեֆ-ներձկված և դժային զարդանախշերով խեցեղեն: Առաջին մեծ խումբը զարդարված է երկու տիպի փոսիկներով.

1. Ձվաձև փոսիկներով

2. Փոքր կլոր փոսիկներով

1. Ձվաձև փոսիկները հանդիպում են կանթի աակ և նրա հակառակ կողմում՝ իրանի ուռուցիկ մասում, որանդ կամ մեկ հատ են, կամ մեկ մեծը միջին մասում, իսկ աչից և ձախից մեկական փոքրերը:


Կան նաև փոքր ձվաձև փոսիկներ կամ ձվաձև փոսիկներ՝ երկու կողմից շրջապատված մեկական թեք, նեղ, երկարավուն ակոսիկներով:

2. Կլոր փոսիկներ հանդիպում են կանթի վերին եռանկյունաձև հարթակում, կանթի տակ, ուռուցիկ փորի կենտրոնում:

Հաճախ փոսիկները ղուղորդված են ասրեր տեսակի խուլ կանթերով, կամ էլ զարդանկարը ներկայացնում է փոսիկների և ներձկված ակոսների հաջորդականություն: Զարդանախշման այս ձևերը յուրահատուկ են Գառնիին և էլարին:

Նման զարդանախշեր ունեն Գառնիի և մեծ, և՛ փոքր կավամանները:

Փոսիկ՝ Երկու կողմից շրջապատված ուղղահայաց թեք ակոսներով հանդիպում է նախիջնասի Քյուլ-Քափալի II շերտում: Նման եռաշար թեք ակոսների և փոսիկի համադրություն է ներկայացնում նաև Ասլան-Քեփեում (Ալպաթիա) հայտնաբերված խեցու վղի բեկորի դարձանակարը:



Նկ. 70. Խեցու բեկոր, զարդարված ուլիեֆ-նեռճկված դարձանակարով:

Կույ-Քեփեում փոսիկների և ակոսների համադրությամբ խեցեղենը տողին տնդամ երևան է գալիս «X» շերտում²:

Վերոհիշյալ զարդանախշերով խեցեղենը տարածման արտակարգ լայն շատավիդ ունի:

Նրկրորդ լոմրի խեցեղենը զարդարված է ուլիեֆ, ուլիեֆ-նեռճկված և Կոսյին զարդանախշերով: Այն իր հերթին բաժանվում է ենթախմբերի.

1. Կավամանների ուռուցիկ փորր միայն մեկ երեսից զարդանախշված է լայնակոս, ոչ խորր ուլիեֆ-նեռճկված, պարուրածն վերջավորություններ ունեցող բարդ կամուսպիդիայով:

Նրբեմն այս կամուսպիդիան կրկնվում է նաև կարասների վղերի վրա (№ 2234/134):

2. Կավամանի վղի հիմքում ուղղադիծ երկրաչափական զարդանախշերի նեղ ժապավեն, իսկ ուռուցիկ փորին նեղ և ոչ խորր ուլիեֆ-նեռճկված, պարուրածն վերջավորություններով զարդանախշեր: Այս խումբը Գտնիում ընդունենր երկուսից-երեք օրինակով է արահայտվել (№ 2235/69, № 2234/25b, 109b), հարում է Կիրովսկանի Բոսի-ճոթերի և Սաշաոցի բլուրի խեցեղենին:

3. Կավամանների վիզը զարդարված է ուղղադիծ երկրաչափական նորր Կժանտխշերի նեղ և լայն ժապավեններով, իսկ ուռուցիկ փորի վրա ուահ-ուանվել են ուլիեֆ-նեռճկված Կարսանախշեր: Այս խումբը լրիվ հարում է Շևսպովթի խեցեղենին:

4. Ուլիեֆ-նեռճկված զարդանախշերը կաղմված են պարույրներով ավարտվող բարդ կամուսպիդիաներից:

¹ Kilit Kökten, 1945 Jilinda Türk tarih Kurumu adına yapılan tarih öncesini arastirmaları, Belleten Turk Tarih Kurumu, 1947, № 43, աղ. XCIII, նկ. 5:

² T. Burton-Brown. Նշվ. աշխ., էջ 42:

Շատ հավանական է, որ ուելիեֆ-ներձկված զարդանախշերը կատարված լինեն գլանաձև կնիքի օգնությամբ: Այդ բանը լավ զգացվում է Գառնիի խեցեղենի բեկորներից մեկի վրա. որը զարդարված է հավաղ շեղանկյունների և սլարույրների համադրությամբ (նկ. 70, № 2234/109b) և հատկապես Կիրովականի Մաշաոցի բլուրի և Քոսի-ճոթերի խեցեղենի վրա: Որ նման եղանակով կատարված զարդանախշերը դանձաձև կամ այլ կնիքի արտատիպն են: իշեցնում, նշում է նաև Լ. Լեգրենը¹:

Գլանաձև կնիքի օգնությամբ է կատարված Գեոյ-թեփեի «X» շերտում չայանարեղված կափարիչի զարդանախշը²: Մթա III հազարամյակի մշակույթում երկու կնիքներ են հայտնաբերվել Գուգարերտկա-Ցիխագորիայում³. Երկու միանման կավե կնիքներ էլ հայտնաբերվել են Յանիկ-թեփեում⁴:

Ալսպիսով, վերոհիշյալ փաստերի օգնությամբ կարելի է հավաստել նրանց դոյուքյունը և մեզ մոտ:

5. Կավամանների մի մասի և՛ վիզը, և՛ ուռուցիկ փորը զարդարված են դժային զարդանախշերով:

6. Գժային զարդանախշերը գերազանցապես երկրաչափական են, միայն մեկ օրինակ՝ թռչնադարձ (№ 2235/103a):

7. Երկրաչափական զարդանախշերի մոտիվներն են՝ դժածածկ մեանդրները և մեանդրների մասերը, զիզզադ ժապավեններով կազմված անկյուններ և եռանկյուններ՝ նույնպես թեք դծիկներով ծածկված, դժածածկ զիզզադ ժապավեններ, ցանցածածկ դաշտեր՝ մեկընդմեջ կամ զծածտծկ կամ կետածածկ:

Երբեմն ձգված, երկարավուն մեանդրափայ զարդերով կտզմված մի ամբողջ կոմպոզիցիա պարփակվում է զիզզադ դժերով կազմած տնկյունով:

Ինչպես Վ. Լեմբն է նշում, մեանդրները Անատոլիայում հայտնի չեն, իսկ սլարույրները շատ հազվադեպ են⁵: Եվ իրոք, ուելիեֆ ռազմադատար սլարույրով խեցու մեկ բեկոր հայտնաբերվել է Ալաշայի խակոլիթյան շերտում⁶. Ռելիեֆ-ներձկված սլարույրով մեկ խեցի հայտնաբերվել է Բեյլիսուլթանում և վերագրվում է վաղ բրոնզի II փուլին (մթա 2500—2200 թթ.), մեկ օրինակ էլ հայտնի է Քյուլ-թեփե Իb շերտից (մթա 1850 թ.)⁷:

8. Կետերի հեռ համադրված նրբադիծ երկրաչափական զարդանախշեր:

Նման զարդանախշով խեցեղենի բեկորներից մեկի վրա (№ 2234/133i) պակեղված է ճատրակի (շախմատի) տախտակը հիշեցնող զարդանկար, որի հարթակների մի մասը դժածածկ է, մի մասը կետածածկ (նկ. 71): Հետևաբար է, որ այսպեղ պակեղված լինեն վարած և ցանած դաշտեր: Ընդորում վարած դաշտերը դժածածկով են պատկերված, իսկ ցանած, սերմածր՝ կեփակներով: Գժածածկ նման դաշտեր պակեղված են Գառնիի նաև մեկ այլ

¹ L. L. Legrain, *Archaic Seal-impressions*, New-York, 1939. p. 5.

² T. Burton-Brown, նշվ. աշխ., էջ 39, աղ. V, նկ. 34.

³ Պեղումները Ս. Նադիմաչլիու, նյութերը Դրասարանված չեն:

⁴ C. A. Burney, *Excavations at Janik-Tepé, North-West Iran*, p. 148, t. LXXIV, 54.

⁵ W. Lamb, նշվ. աշխ., էջ 28:


⁶ C. Burney, *Eastern Anatolia...*, p. 167.

⁷ S. Lloyd and J. Mellaart, *Beycesultan Excavations*, 1957, AS, VIII, 1958, p. 118, fig. 2,6 p. 112—113.


⁸ J. Mellaart, նշվ. աշխ., աղ. IX, նկ. 170:

րեկորի վրա (նկ. 72), հանդիպում է Նենդավթի խեցեղենի վրա (№ 1330/37, 102, 106): Այդ դարդանկարի կապը դաշտի և սերսերի հետ ավելի հավանական է դառնում, երբ մենք այն հասնմատում ենք Տոխպուլի խեցեղենի և կանացի արձանիկների վրա սլաոկերված դարդանկարների հետ, որոնց ուսումնադիրողը լայն դուրահեղեղների օղնութլամր համողեցուցիչ է դարձնում դաշտերի և սերմի նման խորհրդանշումը:

Կետերի հետ համադրված նրրագիծ երկրափափան դարդանախշերը բնորոշ են Գաոնիին և ավելի ցայտուն են արաահայտված Կիրովականի բնակատեղիներում: Քոսի-նոթերի մոխրագույն, բաց դեղնավուն և սև փայլեցրած մի խումր խեցեղենի երկրաչափական արաատեսակ դարդանախշերում րոգոթլամր կեաածածկ են (1959 թ., № 1, 2, 9): Նման բեկորներ հայանարեբվել են նաև թաղավորանիսաում (1959 թ. № 6), Մաշաոցի բլուրում կետածածկ են դավաթների վզի ռնթի երկրաչափական դարդանախշերի գոտիները: Նենդավթում նման դարդանախշերով խեցեղենը նույնպես սակավ է, կավամաններից մեկի վրոջը դարդարված է եոանկյունիների մեջ ամփոփված եաաշոր եոանկյունիներով, որոնք կեաածածկ են (№ 1442/57):



Նկ. 71. Խեցու բեկոր, նարր գծույին և կեաային դարդանախշերով:




Նկ. 72. Խեցու բեկոր, ճատրակը հիշեցնող դարդանկարով:

Նրրագիծ կետադուրդ երկրաչափական դարդամոտիվներն իրենց ցայտուն տրաահայտութլունն են գոեել արասաանի մի շարք դամրանարլուրների (Քրիալեթի XI, XLVII, Քեթրիծղարոյի 1957 թ. սեղած և Բեղենիի) բարձրարվեսա խեցեղենում: Քրիալեթի XI դամրանարլուրի նրրախեցի գընպածև և երկկանիկ իրանով, օղակածև նուրը կանթերով (որոնք կիսադնդածևի նրրացած սեեսակն են) կավամանները դարդարված են նրրագիծ, պծածածկ ժապովեններով շեղանկյունիներով, եոանկյան մեջ ամփոփված բաղմահարկ պծածածկ եոանկյունիներով, որոնք ուղեկցվում են կեաաշարերով (ՎՊՔ № 4—66—50, 51, 52, 56, 57, 59)²: Նույն դամրանարլուրում հայտնարեբվել է փոված շուրթերով և կոնածև իրանով թաղարատիպ հենակը (ՎՊՔ № 4—66—59), որը միակն է աաայծմ վրասսաանի աերիաորիայում և, ինչպես վերը աեսանք, բաղմաթիվ դուղահեղեղ ունի Հայկական լեոնաշխորհի մթա III հաղարամյակի մշակութլում:

¹ Б. А. Рыбаков, Космогония и мифогония земледельцев неолита, СА, № 1, 1965, стр. 29, 31.

² Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, табл. LXXVI.

Նկարագրված խեցեղենին հար և նման է XLVI (Կանաչ-թափա) դամրանարևուրինը, որն իր ռազմադալար ուելիեֆ պարույրով, կճուռի ձևով, կափարիչով է՛լ ավելի է կապվում վաղ բրոնզեդարյան խեցեղենի հետ և ղարդարված է նուրբ դժային մոտիվներով, ղոտևորված կետածածկ ժապավեններով՝ Գամրարանների այս խմբին են հարում նաև Քեթրիժղարոյի 1957 թ.



Նկ. 73. Խեցու բեկոր ուելիեֆ, խոյաղուխ շքասեղի պատկերով:

պեղած դամբանարևուրի խեցեղենը² և Բեղենիի դամբանարևուրինը³:

9. Ռելիեֆ ղարդանախշեր, որոնց սիրված մոտիվներն են՝ խոյաղուխ շքասեղների պատկերները և թռչունը:

Գտնիում ուելիեֆ խոյաղուխ շքասեղների պատկերով երկու ասրեր կավամանների բեկորներ են հայանարբովել (նկ. 73, 1964 թ., պեղումներ, № 28 և 1965 թ., № 90): Չնայած Հայաստանում այդ շքասեղների մետաղե օրինակները դեռևս հայտնի լին, սակայն նրանց պաակերումը խեցեղենի վրա հավաստում է այդ շքասեղների առկայությունն ու գործածությունը

Գտնիում և ընդհանրապես Հայկական լեռնաշխարհում:

Խոյաղուխ, կամ, ինչպես ընդունված է ասել՝ երկպարույր գլխիկով շքասեղները և կախիկները լայն ասրածում են ունեցել Առաջավոր Ասիայում (Հիսար IIB⁴, Դամդան, Անաու II, Տրոյա⁵), Վրաստանի վաղ բրոնզեդարյան հուշարձաններում⁶: Բրոնզի հաջորդ փուլերում նրանք թափանցել են Հյուսիսային Կովկաս⁷, որտեղից էլ ավելի հյուսիս⁸: Սակայն այդ շքասեղները միմյանցից ասրերբվում են կառուցվածքային որոշ մանրամասներով:

Գտնիի խեցեղենի վրա պաակերված խոյաղուխ շքասեղի անմիջական

¹ Բ. А. Куфтин, Археологические раскопки 1947 г. в Цалкинском районс, стр. 23, 25, табл. XXIV.

² О. Джапаридзе, Археологические раскопки в Тrialeti в 1957—1958 годах, Тб., 1960, *զբաց լեզվով*, ադ. II:

³ Պեղումները Գ. Յ. Գորեշիշվիլու, նյութերը հրատարակված չեն:

⁴ E. Schmidt, Excavation at Teré Hissar, Damghan, Philadelphia. 1939, p. 119, l. XXIX.

⁵ E' Herzfeld, Iran in the Ancient East, London-New-York, 1941, p. 154, fig. 273.

⁶ О. Джапаридзе, К истории грузинских племен на ранней стадии медно-бронзовой культуры, стр. 138, рис. 29_а, стр. 207, рис. 44, табл. XIII. Т. Чубинишвили, Амраинис Гора, стр. 73, табл. 14_б.

⁷ «История Дагестана», т. I, М., 1967, гл. III, медно-бронзовый век, стр. 67, рис. 20. В. М. Марковин, Новый памятник эпохи бронзы в Горной Чечне, Древности чечено-ингушети, М., 1963, стр. 86 рис. 21₂, стр. 80, рис. 23_б.

⁸ П. Д. Степанов, Следы южной культуры эпохи бронзы в бассейне реки Мокши, КСИМК № 59, 1955, стр. 73, рис. 26.

յուզահեղինները մետաղից կարելի է տեսնել Կվացխելեբիում՝ և Ուրբնիսի քա-
ղաքի XX տեղամասի վաղ բրոնզեդարյան N 44 դամբարանի նուրբերում¹։

Այս շրասեղները Հին Արեւելքի վերոհիշյալների նման վերին սասում չեն
ստացվում և երկու կողմից պարուրներ կաղմում, այլ նրանց խոյի գը-
խին բնորոշ ձև է արվում, մի տեսակ եռանկյունաձև հարթակ են կաղմում
երկու կողմից ուսրվող մասսիվ եղջուրներով։ Այսպիսով, Գառնիի խեցեղենի
վրա պաակերված, Կվացխելեբիում և Ուրբնիսիի քաղաքատեղիում հայտնա-
բերված մեծապես շրասեղները իսկական խուազուրի են և ունեն գուտ տեղա-
կան արմաններ։



Նկ. 74. Խեցու ռեկոր՝ Երկրխանի Թռչունի ունիսի պատկերով։

Վրաստանում հայտնաբերվել է նման շրասեղների և կախաղարդերի մեկ
այլ տարրերակ ես, որի դեպքում ցողունի դիտիկը ավելի մասսիվ է և շրջա-
նտձև, իսկ պարուրները բավականին փոքր²։

Իացի Գառնիից, խեցեղենի վրա մետաղե իրերի վերապատկերման մեկ
այլ օրինակի մենք հանդիպում ենք Կվացխելեբիում։ Այստեղ C1-3 շերտերում
հայտնաբերված խեցու ռեկորի վրա քանդակված է մետաղե դաշույն³։

Այսպիսով խեցեղենի դարդանախշերի շարքում մետաղե իրերի ձևերի
մուտքը հավասարում է վաղ բրոնզեդարում մետաղե տարատեսակ առարկա-
ների արտադրության ամուր հիմքերը, մյուս կողմից վեր է հանում նրանց
պաշտամունքային ատրիբուտները։

¹ А. Джавахишвили, Л. Глonti, Урбиниси, табл. XXXVI.

² Л. А. Чилашвили, Городище Урбиниси, Тб., 1964, рис. 4.

³ Б. А. Куфтин, Археологическая маршная экспедиция 1945 года в Юго-Осе-
тию и Имеретию, табл. LXXII. О. Джапаридзе, նշվ. աշխ., հ. 207, նկ. 448, Կվեմո-
Պարթևիական միտոլոգիայի վրա Օ. Ջափարիձեի և Ա. Ջավախիշվիլու ղեկավարու-
թյամբ Երևանի շրջանի (Շուրավերի) վաղ բրոնզեդարյան բնակատեղիի դամբարաննե-
րում հայտնաբերվել են նման շրասեղներ։

⁴ А. Джавахишвили, Л. Глonti, նշվ. աշխ., աղ. IV, № 411:

Նոյազուլիս շքասեղներն անշուշտ ունեցել են պաշտամունքային իմաստ-
 նրանց երևան գալը հավանարար առնչվել է մանր եղջերավոր կենդանիների
 գլխաքանակի աճի հետ և շեշտել հատկապես խոյի, ոչխարի դերը նյութական
 քարիքների ստեղծման ասպարեղում:

Վաղ բրոնզեդարում խոյի պաշտամունքի լավագույն ասպեկտներ են
 նաև Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված խոյազուլիս մոնումենտալ
 արձանները և օջախի հենակները:

Նոյազուլիս արձանների մասեր հայտնի են Շենդավթում¹: Վերջերս նման
 արձաններ պեղվել են Հաղբազի վաղ բրոնզեդարյան սրբատեղիում², դրսևել
 է Ամասիայում³: Նոյազուլիս օջախի հենակների լավագույն օրինակներից մե-
 կը հայտնաբերվել է Շենդավթում⁴:

Այսպիսով, վաղ բրոնզեդարում եղան պաշտամունքի կողքին անասնա-
 պահուստի նոր ձևի, մանր եղջերավոր կենդանիների գլխաքանակի աճի
 պայմաններում, Հայկական լեռնաշխարհում մեծ նշանակություն է սա-
 նում նաև խոյի պաշտամունքը:

Գառնիում հայտնաբերված դեղարվեստական խեցեղենի ունիքն զար-
 դանախշերի շարքում առանձին հետաքրքրություն են ներկայացնում եռան-
 կյունաձև իրանով ոճավորված թռչունները:


Նման թռչուններով դարդարված խեցեղենի երկու օրինակ է հայտնաբեր-
 վել Գառնիում:

Սև փայլեցրած մակերեսով կավասաններից մեկի ուռուցիկ ուսերին
 պատկերված է ունիքն երկգլխանի, կռանկյունաձև իրանով թռչուն (նկ. 74):
 Նրա երկու կողմից իրանի բարձրությամբ հավասարվող վիզը բավականին
 հաստ է: Գլուխներն ավարավում են սրվող կաուցով (№ 2234/123): Իրանից
 ցած պահպանվել են ուսերի հետքերը:

Գառնիում հայտնաբերված մեկ այլ նրբախեցի, սև փայլեցրած կավա-
 մանի ընկերի ուռուցիկ փորին պահպանվել է նման եռանկյունաձև իրանով
 թռչունի պատկերը, սակայն այն մեկգլխանի է, կատարված ոչ ունիքն, այլ
 խորաքանդակ, դժային եղանակով (նկ. 46, № 2235/103): Ուսի ծավալներից
 և վիզի դիրքից զգացվում է, որ նախորդի նման այն ստատիկ վիճակում չէ,
 այլ շարժման մեջ է:

Եռանկյունաձև իրանով թռչունների դարդանկարը Հայկական լեռնաշ-
 խարհի վաղ բրոնզեդարյան խեցեղենի սովորական մոտիվներից մեկն է:
 Նրանք պատկերված են տարբեր ձևերի կավասանների վրա. երևան են դալիս
 տարբեր դարդամոտիվների միջավայ-
 րում և արտահայտված են կատարման
 տարբեր եղանակներով:

Եռանկյունաձև իրանով թռչունի
 մեկը հանդիպում ենք Արևիկի Լերկու
 տարբեր ձևի և տարբեր եղանակով կա-
 տարված դարդամոտիվների շարքում:



Նկ. 75. Կատ-դոսայի՞ն դարդանախշերով
 խեցու ընկեր Արևիկից:


¹ Է. Խաչատրյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը... աղ. XVI, վերինը:

² Պեղումները Թ. Խաչատրյանի (1967 թ.):

³ Հայտնաբերվել է հողային աշխատանքների ժամանակ:

⁴ Է. Խաչատրյան, նյս. աղ. XVI, ներքինը:

Այն սլաակերված է ներակված վզով, դուրս շեշաված նուրբ շուրթերով, ուռուցիկ իրանով և երկկոնիկ, շեշտված ներքնամասով թասի վրա (№ 2248՝20), որի թև՝ վզին և թև՝ իրանին նուրբ դժային կետածածկ երկրաչափական Ֆիգուրներ են սլաակերված և դրանց շարքում երկրաչափորեն արասալաված երկարավոր և երկարակտուց եռանկյունաձև իրանով թռչունը: (նկ. 75):



նկ. 76. Արծաթափայլ, խաչնազարդ գավաթ Արեւիկից:

Արեւիկի նրրախեցի, կատարման տեսակետից անթերի, բարձրարվեստ, արծաթափայլ գավաթի ուռուցիկ ուսերին ներծկված զսւյզ փոսիկների շարքում այդ թռչունը պատկերված է փայլաներկը հեռացնելու նպատակով (նկ. 76), որը պարզանախշմաս մի նոր ձև է. և դեռևս յուրահատուկ միայն Արեւիկին (№ 2289/9b) և Գառնիին:

Մեծ ոճավորմամբ և զեղեցկությամբ է պատկերված Կիրովականի զեղնադարչնադուլն փայլեցրած մակերեսով կտրասի վզի բեկորի վրայի թռչունը (նկ. 77, № 1455դ), կտտարված ուլիսֆ-ներճկման նշանտկով:


Գժային նշանակով կատարված եռանկյունաձև իրանով և պարուրաձև ուվարավող սղոշով թռչուն պատկերված է Ղարա-թափայլի օջախի հենակի վրա (№ 1461): նման թռչուն հանդիպում է նաև Գեղամա լեռների ժայռապակերների շարքում¹:

Շոանկյունաձև իրանով թռչուններն իրենց արտահայտությունն են գտել

¹ Գեղամա լեռների ժայռապակերները ուսումնասիրվում են Հ. Մարտիրոսյանի կողմից և դեռևս հրատարակված չեն:

նաև Շենգավթի գունաղարգ թտսի՝ և կարասների դարգանախշերում (նկ. 78, 104)²:

Կոննուտի մեծ սափորներից մեկի վրա եռանկյունաձև իրանով ունիտեֆ թռչունը գարձյալ ըզմազալար պարույրներով կազմված կոմպոզիցիայի կենտրոնն է զրագեցնում: Թռչունի վզին կա երկժանի, որը հավտնաբար նրա երկակի բնույթն է շեշտում, նրա կապր երկրի և երկնքի հետ, գուցե և արաճայտում զույգ արևի սիմվոլը (նկ. 79):



Նկ. 77. Թռչնաղարղ խեցու բեկոր նրբովականից:

Յոռանկյունաձև իրանով թռչունների պատկերները Հայկական լեռնաշխարհի հյուսիսում հանգիպում են Օղնիում³ և Կիկեթում (որտեղ ունիտեֆ նման թռչուն պատկերված է մեծ սափորի վզի երկու կողմում)⁴:

Օղնիում պաշտամունքային նշանակություն ունեցող թասերից մեկի վրա մի շարք այլ մոտիվների հետ, գծային եղանակով պատկերված է Գառնիի տիպի երկգլխանի կամ կրկնակի թռչուն: Բ. Կուֆտինը նրանցում աեսնում է հերոգլիֆիկ նշանագրեր⁵:

Գառնիի ունիտեֆ երկգլխանի թռչունը, ինչպես կտեսնենք, գիշերվա և ցերեկվա հաջորդականություն, կամ էլ զույգ արև է խորհրդանշում:

Վերոհիշյալ եռանկյունաձև իրանով թռչունները իրենց այլ մանրամասներով հանգերձ, ինչպես հինգերորդ գլխում կտեսնենք, մի կողմից խորհրդագանշել են արևի աստվածությունը, մյուս կողմից արաճայաել գիշերվա և ցերեկվա հաջորդականությունը, և որ ամենակարևորն է՝ կապվել են ջրի ու պաղարբրության աստվածության, վիշապի պաշտամունքի հետ:

Ավարտելով խեցեղենի ուսումնասիրությունը, ավելորդ չէ հիշատակել, որ Գառնիի նրբախեցի գեղակազմ կավամանների մեծ մասին, հատկապես ներձկված փոսիկներով խմբին ընդող է արծաթափայլ մակերես: Նման խեցեղեն մեծ քանակությամբ հայանաբերվել է նաև Արևիկում, որը նույնպես աչքի է ընկնում իր կաաարելությամբ և ըաբձր ճաշակով:


¹ Մ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 187, աղ. LXV:

² Նույն աեղում, նկ. 40, էջ 179, աղ. LIII:

³ Б. А. Куфтин, «Уг. աշխ.», էջ 33, նկ. 15:

⁴ Նույնի, Урартский колумбарий..., стр. 88:

⁵ Նույնի, Археологическая маршрутная экспедиция, 1945, стр. 33:



Արծաթափայլ մակերես ունեն նաև Կաոնուտի հաստախեցի կարասները (№ 1478/3, 8), Ֆանիկ-Քեփեի II շերտի նրբախեցի կավամանները¹:

Սի յուրահատուկ հմայք ունի Քրիլիսից 70 կմ հարավ գտնված Բեյկենիկ փայտաշեն դամբարանի խեցեղենը բաղմահարուստ մետաղե իրերով, ոսկե բորոցով հանդերձ²: Դամբարանաբլուրի նրբախեցի, ղեղակաղմ, արծաթափայլ խեցեղենը կարծես մեապե ամանների իմիտացիան լինի: Այստեղ հայտնաբերվել են երկկոնիկ ներքնասասուվ ռաժակներ՝ պարզարված ղուղահեռ խորաքանդակ ժուլայվենների, նրբադիծ երկրաչափական զարդանախշերի և կետազարդ ժապավենների համադրությամբ, որոնք իրենց ղուղահեռներն ունեն Քրիալեթիի XI և XII-VI դամբարանաբլուրների խեցեղենում: Այս հիասքանչ ժողովածուն հարսաացնում են թելնիկաձև կավամանները, եռոտանի թասը՝ վերին մասում նրբադիծ երկրաչափական պարզաուսխշերի գոտիով, ղնդաձև իրանով, խողովակաձև վզով կճուճները՝ ուսերը պարզարված ուլիեֆ կիսադնդերի շարանով, կամ ներճկված հորիզոնական գոտիների խմբերով և վերջապես երկկոնիկ ներքնամասով փարշերը՝ ուժեղ գուրս ճկված շուրթերով, իրանի կենտրոնում ներճկված փոսիկներով: Բոլորն ունեն կանթեր, որոնք կարծես պահպանել են կիսաղնդաձև կանթի հատկանիշները, սակայն նոր որակ ունեն, նրբաղեղ են, օղակաձև:

Բեյկենիի միենույն կավամանի վրա կարելի է ասենել տարաբանակ զարդանախշերի՝ ակոսների, նրբադիծ երկրաչափական պարզամոտիվների, ուլիեֆ ելուսանների կեաաշար ժապավենների համադրություն:

Այսպիսով, Բեյկենիի դամբարանաբլուրը մթա III հազարամյակի բաղմահարուստ խեցեղենի կարծես թե ամփոփումը լինի, որանղ իրենց ղեղարվեստական լուծումն են գտել կավամանների ձևերը, կանթերը և բաղմահարուստ զարդանախշերը:

Ինչպես վերը ասանք, Գաոնիի խեցեղենը բաղմաթիվ ղուղահեռներ ունի Հույկոկան լեոնաշխարհի վաղ բրոնզեդարյան մշակույթում, սվելի սերտորեն կապվում է Շենդավթի, էլարի, Կիրավականի և այլ հուշարձանների խեցեղենի ուղ փուլերի հետ և համարյա չի աոնչվում Շրեշ-բլուրի, Քյուլ-թափայի խեցեղենի հետ:

Չնայած իր մի շարք ղուղահեռներին, ինչպես վերը ասանք Գաոնիի խեցեղենն ունի նաև ուրույն, լոկալ հատկանիշներ և իր որոշակի աեղն է



Նկ. 79. Կավամանի մաս, ուլիեֆ զարդանախշերով՝ Կաոնուտից:

¹ С. Burney, The Excavations at Janik-teré, Azerbaïdjan, Iraq, v. XXIV, 1962, p. 246.

² Г. Ф. Гобеджишвили, Беденская гробница, Друзья памятников культуры, Сборник XII, Третьяковские, № 13—22.

բռնում Հայկական լեոնաշխարհի վաղ բրոնզեդարյան շրջանակ. բաղձահարուստ խեցեղենի շարքում: Ազգակից ցեղերի տրոհման, տարրաբնակեցման պայմաններում լուրջ տարբերակների առկայությունը, որպիսին նկատվում է Հայկական լեոնաշխարհում, բնական է:

Որոշ դուգաշեններ հավաստում են նաև փոխանակային կապերի և մակութային փոխադրեցությունների գոյությունը Կենտրոնական Անատոլիայի և Կիլիկիայի հետ:

Գտնիում հայտնաբերված խեցեղենը մեզ շերազրական տարբերություններ անսնել դեռես հնարավոր չէ, սակայն ելնելով նրա հետ հայտնաբերված թվագրող նյութերից, խեցեղենի ամբողջ կոմպլեքսը ևս կարելի է թվագրել մթա XXIV—XXI դարերով:



ՄԻՋԻՆ ԲՐՈՆԶԻ ՄՇԱԿՈՒՅԻԸ ԳԱՌՆՈՒՄ

Գտնելու միջին բրոնզի դարաշրջանի մշակույթի հայտնի է և բնակատեղիի և դամբարանային նյութերով: Այն գերազանցապես ներկայացված է խեցեղենով:

Բնակատեղիում միջին բրոնզի մշակույթի շինարարական անաղորդներ չեն պահպանվել, ամբողջի՝ դարերի ընթացքում անընդմեջ վերաբնակեցման հետևանքով:

Սկսած 1950 թվականից միջին բրոնզի դարաշրջանի խեցեղեն է հայտնաբերվել ամբողջի բոլոր շորս տեղամասերի մի շարք քառակուսիներում, տնտիկ շրջանի պարսպի հիմքերի և աշտարակների մոտ՝ ներսից և դրսից:

Սխեմով այն փաստից, որ միջին բրոնզի դարաշրջանի խեցեղեն հայտնաբերվում է նաև անտիկ շրջանի պարսպապատից դուրս, կարելի է եզրակացնել, որ միջին բրոնզի դարաշրջանի բնակատեղին անտիկ ամբողջից ավելի լայն շրջադիմ է ընդգրկել:

Ամբողջում միջին բրոնզեդարյան նյութերը ձեռք են բերվել ոչ հստակորեն գտնվող շերտերից: Նրկրորդ տեղամասի մի շարք քառակուսիներում 19 ա (1965 թ. № 16, գտնվում է Գտնիի թանգարանում) 16 ք, (№ 1964/40), 20 ք. (№ 1964/44), 14 ա (№ 1964/45), 17 ա, 17 ծա, 20 ծ (1965 թ., № 10) միջին բրոնզեդարյան խեցեղենը հայտնաբերվել է վաղ բրոնզեդարյան մշակույթից վեր, 1,3—1,5 մ խորությունից, անտիկ շրջանի, երբեմն էլ միջնադարյան նյութերի հետ մեկտեղ:

Որսչ անկեր, օրինակ, առաջին տեղամասի 15 ա քառակուսում (1966 թ., № 14, 17, 21, 36, 37) այն հայտնաբերվել է ուշ բրոնզեդարյան խեցեղենի և անտիկ շրջանի գունապարզ խեցեղենի հետ խառը:

Միջին բրոնզի դարաշրջանի խեցեղեն հայտնաբերվել է նաև պարսպապատի հիմքերի և II, III, VI աշտարակների մոտ, 4,5 մ խորությունից:

Ամբողջից դուրս, Գտնի գյուղի տարբեր մասերում, միջին բրոնզեդարյան դամբարանային նյութերը հայտնաբերվել են պատահաբար՝ հողային աշխատանքների ժամանակ: Նրանց մի մասը բացվել է գյուղի հյուսիս-արևելյան ծայրամասում, կոյսոցի գոմերը մոտ, մյուսը՝ գյուղի արեմտյան մասում՝ Արտաշա աանոց խճուղու եզրերին: Այսպիսով, Գտնիի միջին բրոնզեդարյան բնակատեղիի դամբարանադաշար բավականին լայնածավալ է եղել. սկսվել է ներկա գյուղի հյուսիս-արևելյան ծայրամասից և ընդգրկել արեմտյան թաղամասերը:

Գյուղի հյուսիս-արեւելյան մասում դամբարանտիւն նյութեր են հայտնարեւելել իրարից ոչ հեռու երեք ասարեր կեանքում: Կոլխոզի շորանոցները մոտ, 1949 թ. հողային տշխատանքների ժամանակ հայտնարեւելել է ռնդած իրանով խորը դորշագույն թաս (№ 1963/85): Դամբարանի կառուցվածքի ե այլ նյութերի վերարեւելել ոչինչ հայտնի չէ:

Կոլխոզի դոմերի մոտ, 1951 թ., հայտնարեւելել են մոնոխրոմ թոչնաղարդ հիդրիա (տախա. VI, 1965/224) ե շագանակագույն կճուճ՝ կետագիծ ղարդանախշերով (նկ. 94, № 1965/225): Այդ դամբարանի կառուցվածքի ե նրանում հայտնարեւելած այլ նյութերի վերարեւելել ոչինչ հայտնի չէ:

Դարձյալ կոլխոզի դոմերի շրջակայքում 1959 թ. կոլխոզնիկ Ա. Ստեփանյանը ասան հիմքերը փորելիս, բացել էր մի դամբարան ե հանել նյութերի մի մասը:

Միջին բրոնզի ղարտշրջանի դամբարանների երկրորդ խումրը, ինչպես վերը նշվեց, տեղավորված է եղել գյուղի արեւմտյան մասում, Արտաշատ ասանող խճուղու շրջակայքում:

Այդ խճուղու եղրին, 1956 թ. հողային աշխատանքների ժամանակ գունագարդ խորը թաս է հայտնարեւելել, դարդարված դծածածկ թեք ջեղանկյունների շղթայով (աախա. II, ներքեում, № 2098/4):

1958 թ. նույն խճուղու եղրին, նահապետ Սողոմոնյանի ասան դիմաց՝ շրմուղի դիծր փորելիս, 0,8 մ խորության մեջ գտնվել է մի հիմնահողային դամբարան, որտեղ հայտնարեւելել են տասներեք կավտամոններ: Այս դամբարանի վերարեւելել այլ ավյալներ մեղ հայտնի չեն:

Նույն դամբարանագաջում, աովից մոտ 200 մ դեպի արեւմուտք, հայտնարեւելել է հեաքրբրական, դորշագույն կրկնակճուճ, վերին թտասանան մասով ե ուուցիկ իրանով (№ 2100/11):

Դամբարանագաջի սահմանները հավանարար հասել են մինչեւ բնակատեղիի շրջակայքը, որտեղ ամրոցի մոտ 1949 թ., բակերից մեկում հայտնարեւելել է երկկոնիկ իրանով շագանակագույն կավաման, ուսերը ղարդարված ատամնագար դրոջմիչով կաարված եոանկյունիներով (աղ. XXXII, № 1963/86):

Չնայած դամբարանային նյութերում ամրողջտկան կոմպլեքսները քիչ են, սակայն որոջ դուգահեոնների ե աիպարանական համեմատությունների, մասամր վաղ բրոնզեդարյան խեցեղենի հեա ունեցած կապերի միջոցով կարելի է որոշել հայտնարեւելած նյութերի աեղը միջին բրոնզի մշակույթում:

Բնակատեղիում միջին բրոնզի մշակույթը հայտնի է միայն խեցեղենի բեկորներով, ուսաի այն այստեղ կներկայացվի դամբարանայիս խեցեղենի հեա համատեղ:


Դամբարանային նյութերում բնղամենր երկու ամրողջական կոմպլեքս. ունենք, մեկը դոմերի մոտ հայտնարեւելած խմրում, մյուսը Արտաշատ ասանող խճուղու եղրին:

Գոմերի մոտ, Ա. Ստեփանյանի բակում հայտնարեւելած դամբարանի ուուամնասիրությունից պարզվեց, որ այն հիմնահողային էր: Նրա վերջավորությունում հայտնարեւելեցին հանդուցյալի ոաքի ոսկրները, շագանակագույն դծիկածածկ ժապավենաղարդ կճուճ ե խորը թասեր:

Ոաքի ոսկրների դիրքից պարզվեց, որ հանդուցյալը դամբարտն է դրվել աջ կողքի վրա, դեմքով դեպի արեւելք ե ոաքերը կծկած: Դամբարանից



Տախտակ I. Քասեր ելաւից:



հայտնարեցվել են ինը կավաման, թտսանման փոքրիկ, զինեզույն շեշաքառ (№ 2144/57) և օրսիգտքարե շեգր (ազ. XXV, № 2144/58):

Հայտնարեցված խեցեզները ըստ ձևի, զույնի և զարդանախշման ըստ ժանվում է հետեյալ խմբերի.

1. Կճուճներ խոզովակաձև բարձր վզով, ուռուցիկ և սահուն իջնոզ ուսերով, տոփակ հասակով (ազ. XXV): Նման կրկու կճուճներ են հայտնարեցվել դամբարանում: Երկուսն էլ համարյա նույն չափերն ունեն (№ 2144/49, 50): Արաաքինը լավ կոկած, հարթեցրած և սև ներկով պատած: Վզի հիմքում ունեն հորիզոնական խորաքանդակ գոտիներ (№ 2144/ 49, 50): Երկուսի շուրթերն էլ գուրս են ճկված և ներսից եզերված նույնպես հորիզոնական գոտիով: Խոզովակաձև վիզը մի փոքր ներձկվում է և ապա սահուն միանում ուսերին: Այդ անցումը շեշտվում է միայն հորիզոնական գոտիներով:

2. Կճուճ, կարճ վզով, գնդաձև իրանով, շուրթը կլորացող և գեպի գուրս ճկված և ներսից շրջագծված հորիզոնական խորաքանդակ գոտիով (№ 2144/ 51): Կճուճն ունի մուգ շագանակագույն փայլեցրած մակերես: Վզի հիմքում լույզ հորիզոնական գծային գոտիներով ստացված ժապավենի վրա կետաշար հորիզոնական զույգ շրջագծեր են արված (ազ. XXV): Կճուճի ուսերը զտրված են զիզզազ ժապավենով, որի ներսը ծածկված է զուգահեռ կետագծիկների շարքերով: Այս ժապավենը հետաքրքիր է արված: Նրա սասնմեկ սուր անկյունները զարգարում են կճուճի ամենուռուցիկ մասը, իսկ վերին ծայրերը կարծես ծալված և հազցված լինեն վզի հիմքով անցնող ժապավենի տակ:

3. Թասեր խորր, կիսազնդաձև, շագանակագույն մակերեսով: Նման երեք թասեր են հայտնարեցվել (№ 2144/52—54), որոնք շուրթից ներս մի փոքր նեղանում են և ավարտվում կլորացող եզրով (ազ. XXV): Արաաքինից եզերված են զույգ հորիզոնական խորաքանդակ գոտիներով: Բոլորի շուրթերը մի փոքր թերի են: Ծիշտ նման շագանակագույն թաս հայտնարեցվել է նույնպես գոմերի մոտ, հողային աշխատանքների ժամանակ (№ 1963/85):

4. Թաս խորր, գունազարդ, նկարագրված թասերի աիպի (ազ. XXV): միայն նախորդների համեմատ շուրթը մի փոքր ավելի է ներձկվում և արտաքինից եզերվում խորաքանդակ գոտիով (№ 2144/59): Չափերով մի քիչ փոքր է նախորդներից: Պատրաստված է վարզագույն կավից, արաաքինը պատած մուգ կարմիր անգորով, իսկ շուրթից ցած ուսերը զարգարված են եզել սև փայլաներկով արված, իրար մեջ զասավորված կիսաշրջանների շարանով, որի միայն հեաքերն են պահպանվել:

5. Պնակ ձվաձև, գորշագույն մակերեսով: Շուրթերն ուժեղ գեպի ներս են թեքվում և արտաքինից զույգ հորիզոնական խորաքանդակ գոտիներով եզերվում (ազ. XXV, № 2144/56):

6. Գավաթ երկկոնաձև իրանով, մուգ շագանակագույն փայլեցրած մակերեսով: Շուրթը մի փոքր գուրս ձկված: Իրանի երկկոնիկ մասը սուր եզրով շեշտված (ազ. XXV, № 2144/55):

Վերոհիշյալ դամբարանից հայտնարեցված նյութերը մի շարք զուգահեռներ ունեն Հայկական լեռնաշխարհի և Անգրկովկասի միջին բրոնզեդարյան մշակույթում: Մեծ են նմանությունները Կիրովականի 1948 թ. հայտնարեցված դամբարանաբլուրի խեցեզների հետ:

Գառնիի առաջին խմբի կճուճներից Կրրովականի գամրանարություն հայտնարեբրվել են հինգ հաա (№ 1861/13—17, աղ. XXVI₂): Նրանք նույնպես ունեն սև անգորով պատած մակերես, վղի հիմքում հորիզոնական խորաքանգակ գոտիներ, միայն Կրրովականի կճուճները մի փոքր մեծ են և ավելի գեղակազմ:

Գառնիի շագանակագույն կիսազնգաձև թասերը գարձյալ իրենց ղուգահեռներն ունեն Կրրովականի գամրանարություն (№ 1861/21): Նրանք չափերով էլ են համապատասխանում (աղ. XXVI₄): Կրրովականում նույնպես հայտնարեբրվել է գունագարգ թաս, գարգարված իրսը մեջ հագնող կիսաշրջանների գոտիով (№ 1861/28):

Գառնիի վերոհիշյալ գամրարանը թե՛ իր կառուցվածքով և թե՛ նյութերով կապվում է 1960 թ. էլարում պեղված № 2 գամրարանի նյութերի հեա: էլարի գամրարանը նույնպես հիմնահողային է, հասարակ, շաբալին թաղում, որում մեծ մասամբ խեցեղեն է հայտնարեբրվել: Տարբերությունն այն է, որ էլարի գամրարանում մարգկային ոսկորներ չկային:

էլարում նույնպես հայտնարեբրվել են խողովակաձև վղով սև և գորշագույն կճուճներ (№ 2245/5—9), վղի հիմքում խորաքանգակ գոտի, արտաքինը ոչ լավ մշակված: էլարի կիսազնգաձև թասերն էլ կպիտ են, գորշագույն, վարգագույն, արաաքինից առանց անգորի (№ 2245/11—19):

Արաակարգ նման են Գառնիի և էլարի ձվաձև պնակները: Երկուսն էլ գորշագույն են և չափերով նույնը (№ 2245/21): Մի փոքր ղանաղանվում են երկկոնաձև իրանով գորշագույն գավաթները: Գառնիինն ավելի շեշտված անցումներ ունի, իսկ էլարինն ավելի վերասլաց է և երկկոնաձև մասը թույլ շեշտված:

Սակայն նմանությունները էլարի հեա միայն վերոհիշյալ գամրարանի նյութերով չի սահմանափակվում:

էլարի նույն գամրարանագաշաում պաաահարար հայտնարեբրված նյութերում կան մի շարք ղուգահեռներ Գառնիի նյութերի հեա:

Գառնիի երկկոնաձև գորշագույն գավաթին նման են էլսրում հայտնարեբրվածները: Նրանցից երկուսը (№ 1805/4,8) ղաց գարչնագույն են, երկկոնաձև անցումը շեշտված է ոելիեֆ սուր եղրով (նկ. 80, ձախից), իսկ երկրորդը (№ 1805/12) մուգ շագանակագույն, ունի շուրթից սկսվող և երկկոնիկ եղրին ավարավող կանթ (նկ. 80, աջից): Չափերով էլ նրանք համարյա համապատասխանում են:


Կիսազնգաձև թասերը էլարում նույնպես շուրթի տակ եղերվում են խորաքանգակ գոտիով (№ 1805/9—11):

էլարի նյութերում ևս մենք աեսնում ենք Գառնիի գունաղարգ թասի ղուգահեռները: Նման մի թաս հայտնարեբրվել է 1952 թ.: Շուրթից ցած արաակարգ լավ պահպանվել է իրար մեջ փոքրից մեծ գասավորված կիսաշրջանների ծաղկեշղթան, որոնցով առաջացած անկյունները ղարգարված են սև օղակներով (աախա. I, վերևինը, № 1910):

Վերջին աաղիներս հայտնարեբրվել է նման մի թաս ևս, միայն այն տարբերությամր, որ շուրթից ցած նախ գույզ հորիզոնական գոտիներ են գնում, ապա նրանցից կախվում է վեցաշար կիսաշրջանների շղթան (№ 2261/3):


Գառնիի վերոհիշյալ խեցեղենի գուգահեռները կարելի է տեսնել նաև

Fig. 28. *Tabernaemontana speciosa* (H. B. K.) *var. speciosa* (Schum.)



էջ 1/իածնից հարսով, Խաթունարի տանող ճանապարհից աջ՝ 1962 թ. բացված դամբարանների նյութերում¹:

Հտտկայես նման են գունազարդ մեծ և փոքր կիսաղնդաձև թասերը՝ գտրդարված կիսաշրջանների շղթայով²: Գառնիի ձվաձև պնակի կրկնօրինակը կարելի է համարել էջմիածնի դամբարանում հայտնաբերվածը (էգթ. № 1/30):




Նկ. 80. Կավե գավաթների էլարեղ:

№ 1/30): էջմիածնում ևս հայտնաբերվել է գավաթ, երկկոնիկ մասը շառքած, որից անմիջապես հետո սկսվում է հատակը (էգթ. № 1/29): Նույն դամբարանում հայտնաբերվել են նաև գունազարդ հիգրիաներ, որոնք նման են Գառնիում հայտնաբերվածներին:

Բացի նշվածներից, Գառնիի վերոհիշյալ դամբարանի խեցեղենն ունի և այլ ղուգահեռներ: Օրինակ, լայն տարածում ունեն բնդհանրապես գունազարդ խորր թասերը, զարդարված իրար մեջ գասսավորված կիսաշրջանների շղթայով: Նման թասեր հայտնաբերվել են նաև Թաղաքենդում³, Աղջաղայում (№ 1626), էջմիածնում (№ 556/79), որոնցից մեկի (№ 1785/11) կիսաշրջանների շղթայի ստորին շարքը կարծես սուր անկյուններ է առաջացնում: Նմանապես սուր անկյուն կաղմող ժապավենով է եղբրված Խղնաուզում հայտնաբերված նույնատիպ թասի կիսաշրջանների շղթան (№ 1476/43):

Բաղմաշար կիսաշրջանների շղթայով զարդարված երեք թասեր հայտնաբերվել են Զուլաքարի (Մաբտունու շրջան) հիմնահողային դամբարանում



Նկ. 81. Վաղ բրոնզեդարյան գավաթ գրքովահանից:

¹ А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, стр. 67—70.


² Նույն տեղում, աղ. II, 67:

³ К. Х. Кушнарева, Тазакендский могильник в Армении, СА, № 1, 1960, стр. 141, рис. 57.

(№ 2053/5—7): Ճիշտ նման ղարղտնախշերով մի թասի ըհկոր հայտնարեր-
վել է Նախաջիրում (Նախիջևան):

Քաղմաշար կիսաշրջանների շղթան իր սկիզբն է առել գեոկս մթա III
հաղարամյակում, որի լավագույն օրինակը կարելի է աեսնել Կիրովականում
հայտնարերված գեղնագույն, փայլեցրած մակերեսով, երկկոնաձև ներքնա-
մասով գավաթի վրա (№ 1775): Այստեղ կիսաշրջանների շղթան կատարված
է ուլիեֆ-ներձկման եղանակով (նկ. 81):

Ընգհանրապես րաղմաշար կիսաշրջանների շղթան միջին բրոնզի մշա-
կույթի ամենասիրված գարգամոտիվն
է: Նրանով է ղարգարված Կիրովակա-
նի գամրանաբլուրի արծաթե թասը
(№ 1860/20), Քոսի-ճոթերից ոչ հեռու
Կամակատար կոչվող սրբավայրի ստո-
րոտում պաասհականորեն հայտնա-
բերված րաժակը (նկ. 82, կգթ. № 316),
որի բոնակը ձևով հիշեցնում է չյտրի
վերոհիշյալ երկկոնաձև գավաթը (№
1805/12): Այն սիրված ղարգամոտիվ
է Ուղբրիկ-թեփեի սև փայլեցրած խե-
ցեղենի համար, կատարված կետա-
շար գրոշմիչի միջոցով:



Նկ. 82. Գունազարգ գավաթ Կիրովա-
կանի Կամակատար սրբավայրի մո-
տից:

Գառնիի վերոհիշյալ գամրարանի խեցեղենը իր ղուգահեռներն ունի նաև
Վրաստանում, հասկապես Քրիպլեթի XV հիմնահողային գամրանաբլուրի
նյութերում: Այստեղ կարելի է տեսնել բազմաշար կիսաշրջանների շղթա-
յով ղարգարված գունաղարգ թասը³, ապա արծաթե երկկոնաձև գավաթը,
որն ունի օղակաձև նստուկ և ավելի նրբագեղ է⁴:

Վերը բերված ղուգահեռներից պարզվում է, որ Գառնիի վերոհիշյալ ղամ-
բարանի նյութերն առնչվում են միջին բրոնզի ղարգացման այն փուլի հետ,
որն ընգգրկում է Կիրովականի գամրանաբլուրը և նրան ժամանակակից
հուշարձանների խումբը:

Միջին բրոնզի խեցեղենի կոմպլեքսով Գառնիի երկրորդ հիմնահողային
ղամբարանը, ինչպես վերը նշվեց, բացվել է Արտաշատ տանող խճուղու
եզրին, ջրմուղի գիծը փորելիս: Դամբարանում հայտնարերված տասներեք
կավամաններից երեքը գունաղարգ են, մյուսները՝ հասարակ (№ 2100/1—
13): Հինգ հասարակ, խորր թասերն ունեն գեղնագորշագույն անփայլ մա-
կերես, կլորացող պսակ, ուռուցիկ ուսեր, մեծ մասամբ կրապատ են և թերի
(№ 2100/5—9): Չևով և որակով տարրերվում են մյուս գամբարանի թա-
սերից:

Կոպիտ ջուրթերով և ծուռ իրանով կճուճը (№ 2100/4) ունի ոչ րարձր
վիղ, արաաքինը նույնպես րաց գույնի է, սակայն տեղ-տեղ մրից սևացած:

¹ С. А. Абибуллаев, Археологические раскопки в Кюль-тепе, табл. XXXVII₆.


² К. Х. Кушнарева, Новые данные о поселении Узерлик-тепе около Агдама, МИА, № 125, 1965, М.—Л., стр. 23—25.

³ Б. А. Куфтин, Археологические раскопки в Триаleti, табл. XXI.

⁴ Նույն տեղում, աղ. СII, վերևինը:



Տախտակ II. Կճուճ և լաս Գառնիի դամբարաններից:



Պատասխանված է վատ հունցած և վատ թրծած կավից, խեցին շուտ փշրվում է:

Գամբարանում հայտնաբերված երեք դունազարդ կճուճներն էլ ցածրադիր են, դնդաձև իրանով, կարճ վղով և դուրս ճկված, լավ արտահայտված ստակով (№ 2100/1—3): Բոլորի մակերեսը պաասած է ալ կարմիր անդորով, շուրթերը և վիզը դարձարված են սե ներկով արված զուգահեռ կարճ ժապավենների խմբերով (տախտ. II վերինը և տտխտ. III):

Կճուճներից մեկը (№ 2100/3) չափերով ղիջում է մնացած երկուսին և, ի տարբերություն մյուս դունազարդ կավամանների, սե փայլաներկով դարձանախշը ծածկում է կճուճի ամբողջ մակերեսը (տախտ. II վերինը): Շուրթը ներսից դարձարված է երեք և վեց ժապավենիկներից բաղկացած վեց խմբերով, որոնք միմյանց հաջորդում են մեկընդմեջ, իսկ վղին ունի ուղղահայաց իջնող երեքական ժապավենից բաղկացած շորս խմբեր: Վղի հիմքը և ուսերը դարձարում են երեք հորիզոնական ալիքաձև դոաիններ: Նրանցից դած կախված են թեք ալիքների խմբերով ծածկված շորս կիսադնդեր, որոնք ընդգրկում են կավամանի ամբողջ մակերեսը՝ ներքևում շրջափակվելով ժապավենաձև դոաիով:

Նման դարձանախշեր առաջին անգամ են հանդիպում դունազարդ խեցեդենում և իրենց զուգահեռները դեռևս չունեն:

Մյուս երկու կճուճները և՛ չափերով, և՛ դարձանախշերով համարյա նույնն են: Նրանց վղի հիմքում և ուսերին նկարված են շորս հորիզոնական ժապավեններ, որոնցից ցած տարածվում է սանրատամ շեղանկյունների շղթան (տախտ. III), մեկի վրա երկշարք (№ 2100/1), մյուսի վրա մեկ շարք (№ 2100/2):

Երկշար շեղանկյունիների շղթայով կճուճն ունի այն յուրահատկությունը, որ շուրթն ավելի լայնադիր է և ներսի կողմից աստիճանավոր:

Կճուճներից մեկի վրա (№ 2100/2) զարդանախշը կատարված է շատ անփույթ, վղի քտուդիժ դարձանախշի խումբը երբեմն շարունակվում և հատում է ուսերի ջրջադժերը, որոնք նույնպես ընդհատումներով են կատարված:

Սանրատամ շեղանկյունիների շղթայով դարձարված մի խորը թաս էլ հայտնաբերվել է նույն խճուղու եզրին 1958 թ.: Այն մեծ է (№ 2098/4), խեցին վարդագույն, արտաքինը պատած է րուց նարնջագույն անդորով (տախտ. II, ներքևինը):

Գնդաձև իրանով կճուճների բաղմաթիվ բեկորներ են հայտնաբերվել Գառնիի ընկատեղիում, որոնց իրանը նույնպես զարձարված է հորիզոնական ուղղադիժ կամ ալիքաձև ժապավեններից կախված մեկ շարք կամ երկշարք, երբեմն եռաշար սանրատամ շեղանկյունիների ծաղկեշղթայով (աղ. XXVII, № 1965/10 երկու կտոր, № 2099/58 ութ կտոր, 1966 թ. № 17):

Նման կճուճների մի շարք վզերի մասերը դրսից և շուրթի ներսից դարձարված են սանրատամ շեղանկյունիների հասվածներով նկարված ուղղահայաց շարքերով, որոնք նմանվում են իրար շարունակություն կաղմող ուղիղ և շքված, կարճ պոչուկով, հայկական փոքրատառ «ա»-ին (աղ. XXVII, 1966 թ. № 37): Կան բեկորներ՝ զարձարված միայն պոչավոր առանձին «ա»-ով: Որոշ վզի մասեր դրսից ունեն մեկական պոչավոր «ա»-եր, իսկ վղի ներսում նրա ամբողջական կոմպոզիցիան (1966 թ. № 37): Մեկ այլ կճուճի

վզի վրա պահպանվել է նկարադրված զարդանկարի՝ իրար մեջ հաղնող շարանը (1966 թ., № 16):

Բացի ղնդաձև իրանով կճուճների բեկորներից, ամրոցում հայտնաբերվել են նաև ոչ մեծ կարասների բեկորներ, զարդարված վերը նկարադրված շեղանկյունիների շղթայով (№ 2099/58):

Գառնիի թե՛ վերոհիշյալ դամբարանում, և թե՛ ամրոցում հայտնաբերված սանրատամ շեղանկյունիներով զարդարված խեցեղենի խումբն ունի բազմաթիվ զուգահեռներ, Հատկապես մեծ են նմանությունները Լճաշենի № 6 դամբարանուրի խեցեղենի հետ: Այստեղ մենք տեսնում ենք նույն ղնդաձև իրանով կճուճները, և ոչ մեծ կարասները նկարադրված զարդապատկերով¹:

Լճաշենի № 6 դամբարանուրում ևս, ինչպես Գառնիում, գունազարդ կճուճների հետ հայտնաբերվել է նաև հասարակ, վատ թրծումով, անփայլ և անզարդ խեցեղեն:

Շեղանկյունիների ծաղկեղջիթայով զարդանախշը բավականին լայն տարածում ունի: Նման զարդանախշով խեցեղենի բազմաթիվ օրինակներ հայտնի են Մուխաննաթ-Քափայի բնակատեղիից (№ 1216/9, 29, № 1439/299, 300, 316, 392, 399): Այն արտակարգ բնորոշ է Արարատյան դաշտավայրի հուշարձանների համար: Հայտնաբերվել է Ջրահովիտ ըլուրում (Արտաշատի շրջանի), էջմիածնի շրջանի մի շարք հուշարձաններում՝ Գրամփայի և Աղջաղավայրի միջև հայտնաբերված դամբարանային նյութերում (էդթ № 9/376), Մեծամորի բնակատեղիում և դամբարանադաշտում:

Վերը նկարադրված զարդանախշի ամրոցը կոմպոզիցիան կրկնվում է էջմիածնից բերված կճուճներից մեկի վրա (№ 556/4): Ծիշտ նման զարդանախշեր է կրում նաև Թաղաքենդում հայտնաբերված Թաղարը²:

Սանրատամ շեղանկյունիների շղթան ուղղահայաց գտնավորությամբ (որով զարդարված են Գառնիի վերը նկարադրված կճուճների վզերի մասերը) պատկերված է Ախլաթյանում հայտնաբերված գունազարդ թասի վրա (№ 1114, Սիսիանի շրջան), որտեղ այն զուգորդվում է նույնպես ուղղահայաց դասավորված ալիքների խմբերի հետ:

Երբեմն սանրատամ շեղանկյունիների ծաղկեղջիթան հանդես է գալիս իրար զուգորդող բազմաշար ալիքների, հորիզոնական ժապավենների միջավայրում: Նման կոմպոզիցիայով կավամաններ հայտնաբերվել են Կարճաղբուրում (№ 1559, նախկին Գողակ-բուլաղ, Բասարգեչտրի շրջան), Զուլաբարի դամբարանում (№ 2053/1), Կարմիրում (№ 2221/1, Նոր Բայազետի շրջան), Ախլաթյան գլուղում՝ Ջաղաց ըլուրի մոտի բնակատեղիում³:

Նման զարդանախշերով խեցեղեն բնորոշ է նաև Ուղերլիկ-Քեփեի միջին և վերին շերտերին, որտեղ այն զուգորդվում է և հասարակ, կոպիտ, անզարդ, անփայլ խեցեղենի, և սև փայլեցրած ատամնավոր, «քայլող» դրոշմիչով կտտարված զարդանախշերով խեցեղենի հետ⁴:

¹ է. Վ. Խանգաղյան, Լճաշենի № 6 կուրգանը, Հայկական ՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, № 2, 1960, էջ 65—77. Նույնի, Лчашенский курган, № 6, КСИА, № 91 М., 1962, стр. 66—71.

² К. Х. Кушнарева, Тазакендский могильник в Армении, стр. 140, рис. 212.

³ Պեղումները Մ. Հասարթյանի:

⁴ К. С. Кушнарева, Новые данные о поселении Уэсрлик-тепе около Агдама, стр. 86—99.

Վերջին տարիներս Ուղերլիկ-թեփեին ժամանակակից մի շարք բնակատեղիներ են հայտնաբերվել Միլի-Ղարարաղի տափաստանում՝ Գեոլ-թեփեն, Ոսսուլ-թեփեն, Նարդիդ-թեփեն, Բաբալարի-թեփեն և այլն, որոնց դունադարդ խեցեղենը իրոք նմանվում է Գաունիի վերոհիշյալ խեցեղենին¹։

Ըստ Ն. Ա. Մարտիրոսյանի, Ուղերլիկի և Լճաշենի նյութերը միասին ժամանակագրորեն տեղագրվում են Թաղաքենդի խմբի (մթա XX—XVIII դդ.) վերջի և Կիրովականի տիպի դամբանաբլուրների (մթա XVI—XV դդ.) խմբերի միջև², այսինքն նրանք թվագրվում են մթա XVIII դ. վերջով և մթա XVI դ. սկզբով։

Ուղերլիկ-թեփեի միջին և վերին շերտերը ռադիոածխածնային մեթոդով թվագրվում են 3300 ± 260 տ., այսինքն մթա 1340 ± 260 թ.³։ Սակայն Ա. Ա. Իսսենն այդ տվյալները համարելով դեռևս նախնական, միջին շերտը թվագրում է մթա XVII—XV դարերով, իսկ վերին շերտը՝ մթա XV—XIV դարերով⁴։

Սանրատամ շեղանկյունիների ծաղկեպսակով դարդարված խեցեղենի թվագրությունը ճշտող նոր ավյալներ մեղ դեռևս հայտնի չեն։ Ինչպես վերը տեսանք, այդ շեղանկյունիների ծաղկեպսակով դարդարված խեցեղենը որոշ դեպքում ուղեկցվում է Թաղաքենդի տիպի խեցեղենի հետ (օրինակ, Պ. Չարկովսկու պեղած № I դամբանաբլուրում, Մուխաննաթ-թափայում), որոշ դեպքում սև փայլեցրած խեցեղենի հետ, որը դարդարված է ատամնավոր քայլող դրոշմիչով կատարված տարատեսակ մոտիվներով (Ուղերլիկ-թեփե)։ Լճապես նրանց ուղեկցում են հասարակ, վատորակ, շիկադույն և դորշապույն կոպիտ և անփայլ կավամաններ։

Կան դեպքեր, երբ սանրատամ շեղանկյունիների ծաղկեպսակով դարդարված խեցեղենին ուղեկցում է սև փայլեցրած կամ գորշագույն խեցեղեն՝ դարդարված փորագիր հորիզոնական կամ կամարածե ժապավենների մեջ ամփոփված զիզղազ դոտիներով։ Օրինակ, էլարի № 25 դամբանաբլուրում (№ 2246/93, 94), Գրամփա-Աղջաղալայի դամբարանում (էդթ № ԳԳ9/347, 376)։

Ուղերլիկ-թեփեում վերոհիշյալ փորագիր դարդանախշերով խեցեղենը ընդորոշ է ստորին շերտին, որը թվագրվում է մթա II հազարամյակի առաջին երկու դարերով⁵, և, ինչպես էլարի № 25 դամբարանում, ուղեկցվում է եղևնաշար դոտիով, իսկ շեղանկյունազարդ դունադարդը՝ միջին և վերին շերտերին, որը թվագրվում է, ինչպես վերը տեսանք, մթա 1340 ± 260 թ.⁶։ էլարի և Գրամփա-Աղջաղալայի դամբարանային նյութերն ապացուցում են, որ վերոհիշյալ փորագիր և դունադարդ խեցեղենը ժամանակակից են միմյանց։

Նորատեսի դամբարանում եռանկյունիների մեջ ամփոփված այդ զիզգադները շագանակագույն խողովակածե վզով կճուճի վրա համադրված են

¹ А. А. Иессен, Из исторического прошлого Мильско-Карабахскон степи, МИА, № 125, М.—Л., 1965, стр. 19, табл. II

² А. А. Мартирсян, *սյգ. աշխ.*, էջ 56:

³ К. Кушнарєва, *սյգ. աշխ.*, էջ 99:

⁴ А. А. Иессен, *սյգ. աշխ.*, էջ 18:

⁵ К. Кушнарєва, *սյգ. աշխ.*, նկ. 18-, նկ. 20, նկ. 26, էջ 98:

⁶ Նույն տեղում, նկ. 26, նկ. 27, էջ 99:

Կիրովականին բնորոշ, վզի հիմքի ատամնաշար դրոշմիչով կատարված դծիկներով ծածկված ժապավենի հետ¹: Ժապավենի կտամ եռանկյան մեջ ամփոփված զիզզադ դոաիններով զարդանախշը իր զարդացումն ու ծաղկումն է ապրում հատկապես ուշ բրոնզի դարաշրջանում (Լճաշեն, էլար, Մեծամոր): Ուզերլիկի սև փայլեցրած դրոշմազարդ ընդելուզված խեցեղենն իր անմիջական ժառանգորդներն ունի Լճաշենի XIV—XIII դդ. դամրանարևուրների կարմիր և սպիտակ ընդելուզումով, դրոշմազարդ սև փայլեցրած խեցեղենում:

Ավելորդ չէ հիշել նաև, որ մինչև այժմ Կիրովականում և նրանից հյուսիս Աղսանի հովտում, նաև Թրիսլեթիում շեղանկյունիների ծաղկեշրթայով դունազարդ խեցեղեն դեռևս հայտնի չէ: Սակայն սանրաամ շեղանկյունիների զարդամոտիվն են հիշեցնում Սիալի II-ում, Ամբիում հայանաբերված խեցեղենի զարդանախշերը²: Նման զարդանախշերով խեցեղեն հայանաբերվել է նաև Հարապպայի հուշարձաններում³, Կենարոնական Հնդկաստանում (Դեկանում) մթա II հազ. II կեսով թվադրվող Մալվայի բարձրավանդակի հուշարձաններում⁴: Ազվանստանում այդ զարդամոտիվը հայանի է Մունդիզակ VI-ում, որը թվադրվում է մթա II հազ. վերջով⁵:

Բացի նկարադրված կոմպլեքսներից և նրանց հետ առնչվող նյութերից, Գառնիում հայտնաբերվել է խեցեղենի մի մեծ խումբ ևս, որն, ըստ զարդանախշման եղանակի, բաժանվում է հևակյալ խմբերի.

I. Գունազարդ խեցեղեն, վարդադույն հիմնադույնի վրա սև զարդանախշերով:

II. Փորսուզի և դրոշմազարդ խեցեղեն:

Գունազարդ խեցեղենը միայն մոնոխրոմ է. աչքի է ընկնում սահուն, դեզեցիկ ձևերով: Պատրաստված է վարդադույն, լավ մշակված կավից, արտոնարդ լավ է թրծած և ունի կարծր խեցի: Նրա հարթեցրած ողորկ մակերեսը ծածկված է ալ կարմիր կտամ վարդադույն անդորով և իրանի վերին կեսը զարդարված է սև փայլաներկով կաաարված երկրաչափական, կենդանակերպ, թռչնաձև պատկերներով:

Ըստ զարդամոտիվների, դունազարդ խեցեղենը կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. Պարուրազարդ թասերի և մեծ կավամանների բեկորներ, որոնք թե՛ ձևով և թե՛ զարդանկարով կապվում են դունազարդ խեցեղենի այսպես կոչված Թազաքենդի փուլի հետ: Նման խեցեղենի մի շարք բեկորներ են հայտնաբերվել Գառնիի ընկատեզիում:

Թասերից մեկի բեկորի վրա՝ (№ 2099/58a) հորիզոնական խորաբանդակ դոտուց ցած նկարված ալիքաձև ժապավենից կախղած են պարուրաձև զարդանախշեր (աղ. XXVIII): Այսանդ պարույրները ոչ թե մեկընդմեջ են կախված ալիքի գաղաթից, այլ նրա երկու փուլը մեջ տալով, սկսվում են երրորդից: Սակայն պարույրները մեծ են նկարված և ոչ միայն կախված են ալիքաձև դոտուց, այլև պարույրի շրջադիծր հատում է ալիքի

¹ Կամոսի զավտագիտական թանգարան:

² А. Я. Шетенко, Древнейшие земледельческие культуры Декана, Л., 1968, стр. 121, рис. 35_{3,6,7}.

³ Նույն աեղում, նկ. 61:

⁴ Նույն տեղում, նկ. 5₁₀, 6₃, նկ. 33₃₇, էջ 90—92:

⁵ В. М. Массон, Средняя Азия и Древний Восток, стр. 268, рис. 45, стр. 296.

փուլերից մեկին: Սաացվում է այսպես, պարուլը սկսվում է մեկ փուլից, շրջադժով հատում երկրորդ փուլին, երրորդն ազատ է մնում, հաջորդ փուլից սկսվում է մեկ այլ պարուլը:

Պարուրազարդ թասեր և թասերի ռազմաթիվ բեկորներ են հայտնաբերվել Հայկական լեռնաշխարհի հնավայրերում: Գառնիի նկարագրված թասին արտակարգ նման է Ապարանում հայտնաբերվածը (N 2056/5)¹, Քաղաքենդում՝ Պ. Վ. Չարկովսկու կողմից պեզված N 2 դամրանարուրի թասերից մեկը, որը շուրթից ցած մեկի փոխարեն մի քանի ալիքաձև դոտիներ ունի և նրանցից կախված պարուլները: Ճիշտ նման պարուրազարդ թասերի բեկորներ հայտնաբերվել են նաև Մուխաննաթ-Քափայի բնակատեղիում (N 1439/2, 395, 398, 577, N 1216/11):

Գառնիում հայտնաբերված մեկ այլ թասի բեկորի վրա պահպանվել են եռաշար հորիզոնական ալիքներ (Գառնիի թանգարան, N 9): Այն Քաղաքենդի և Մուխաննաթ-Քափայի նման դարձյալ կախված պարուլներ է ունեցել: Գառնիի երրորդ թասի բեկորը (N 2235/36) շուրթից ցած ցանցազարդ է (ազ. XXVIIIa): Նման տիպի թասեր հայտնաբերվել են Քաղաքենդում՝ Վ. Պ. Չարկովսկու պեզած N 2 և N 3 դամրանարուրներում²:

Հայտնաբերվել են նաև մի շարք այլ կավամանների բեկորներ, որոնց վրա պահպանվել են միայն պարուլների մասերը (ազ. XXVIIIa, N 1965/9, N 2099/58, N 2235/36) և այլն:

Բացի պարուրազարդ թասերից, Գառնիում կան բեկորներ, որոնց վրա պահպանված զարդանախշերը նույնպես կապվում են Քաղաքենդի և նրան հարող խեցեղենի հետ: Օրինակ՝ բեկորներից մեկի վրա պահպանվել է շրջանակի մեջ առնված ցանց և նրանից ցած ալիքաձև դոտի (ազ. XXVIIIa, N 2099/57): Նման շրջանակի մեջ առնված ցանցերի և դադաթներով միացող եռանկյունիների հաջորդականութամբ են զարդարված Քաղաքենդի մի շարք թասեր-քրեզանների³ և ոչ ըրածր վզով կճուճների ուսերը⁴: Այդ կավամաններից հայտնաբերվել են նաև Քալինում, Քեզուտում⁵, լճաշենի դամրանարուրներից մեկում⁶:

Գառնիի մեկ այլ բեկորի վրա պահպանվել է խեցեղենի՝ Քաղաքենդի խմբին ընդողջ բազմաշար քառանկյունի շրջանակների մասը և նրանց միջով անցնող ալիքաձև ժապավենը (ազ. XXVIIIa, N 1964/4)⁷, որը սովորական է նաև Մուխաննաթ-Քափայի դունազարդ խեցեղենի համար (N 1216/10, N 1439/542), հայտնաբերվել է նույնպես Մեծամորում:

Քաղաքենդի հետ կապվող բեկորներից են նաև հորիզոնական դոտուղ կախված պարուրազարդ մեծ կավամանի ուռուցիկ մասը (ազ. XXVIIIa,

¹ Т. С. Хачатрян, С. Е. Есяян, Археологические находки в с. Апаран, СА, № 4, 1958, стр. 196, рис. 12.

² К. Х. Кушнарева, Тазакендский могильник в Армении, стр. 140, рис. 23.

³ Նույն տեղում, էջ 140, նկ. 23:

⁴ Նույն տեղում, էջ 140, նկ. 21, 2, 4, էջ 141, նկ. 32, 9:

⁵ Նույն տեղում, նկ. 25, 10, 11, նկ. 312, 13:


⁶ Ձեռք են բերված Ռ. Քորոսյանի միջոցով:

⁷ Զ. Զ. Մնացականյան, լճաշենի մշակութի զարգացման հիմնական էապները, Պատմաբանասիրական հանդես, 1965, 2(29), ազ. 111, նկ. 10:

⁸ К. Х. Кушнарева, Նույն տեղում, նկ. 35, 6, 10:

№ 2144/12), որը հիշեցնում է է. Ռեսլերի պեզած № 27 դամրանաբուրի կավամանր¹:

Կճուճներից մեկը (ուռուցիկ մասի ընկերն է պահպանվել) ունեցել է բավականին հարուստ զարդանախշերի կոմպոզիցիա, որից պահպանվել է ուղղահայաց ժապավենների խումբ, աջից հասված հորիզոնական նույնպես ղուգահեռ ժապավեններով: Նրանցից ձախ նկարված են դադաթներով իրար միացած եռանկյունիներ, որոնցից մեկը կիսովում է ժապավենով, իսկ մյուսը



0 1

Նկ. 83. Գունազարդ խեցու ընկեր՝ Գառնի ամրոցից:


զարդարված է պարույրով (նկ. 83): Մեկ այլ պարույր էլ տեղավորված է այդ եռանկյունիներից ցած առաստուցած անկյունում (№ 2099/58): Այստեղ փաստորեն նույն Քաղաքենդի զարդամոտիվն է, նույն պարույրներն ու կրկնակի ասկրերը», միայն մի փոքր այլ դասավորությամբ:

Գառնիի գունազարդ խեցեղենը վերոհիշյալ խումբն իր ղուգահեռներն ունի նաև Նոր Բայազետի (այժմ Կամո) թափոնի րակում հոգային աշխատանքների ժամանակ 1956 թ. հայա-

նարելված դամրարանների նյութերում:

Գամրարաններից մեկում (№1) հայանարելվել են ընկույզի տապակի նման երկկողմանի նեոճկումներով նավակաձև երեք թասեր, իսկ մյուս դամրարանում (№ 2)² հինգ գունազարդ կավամաններ² և քարից թասանման խորությունով կափարիչ:

Այս երկու դամրարանների կավամաններն ըրենց զարդամոտիվներով



Նկ. 84. Գունազարդ թափ՝ Նոր Բայազետից:

կապվում են Գառնիի և Քաղաքենդի խեցեղենի հետ, սակայն ունեն որոշ լուրահասակություններ, որի պատճառով հարկ ենք համարում մանրամասն նկարադրել հայտնարելված խեցեղենը:

Երկու դամրարաններն էլ եղել են հիմնահողային:


№ 2 դամրարանում հայտնարելվել են երկու կճուճներ և երեք խոր թասեր:

¹ Նույն աեղում, նկ. 35:
² Վերջինիս երկու կավամանները հրատարակված են Ն. Մարտիրոսյանի կողմից, տե՛ս А. А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 49, նկ. 19:

Վարդագույն անդորով պատած կճուճներն ունեն ոչ շատ բարձր խողովակաձև վիղ և ուռուցիկ իրան: Զարգանախոշերը ուսերի վրա աարածվում են երեք ժապավեններով, որոնք միմյանցից բաժանվում են սև, հորիզոնական զտտիններով: Վերին ժապավենը գարդարված է գաղաթներով միացող եռանկյունիներով, նրանք իրար հաջորդում են որոշ ընդմիջումներով: Երկրորդ կամ մեջտեղի ժապավենը ղարգարված է իրար հաջորդող սրածայր եռանկյունիներով, որից հինգի գագաթները վեր են, մնացածները՝ ցած: Այդ եռանկյունիների եզրերը կատարված են սև ներկով, իսկ ներսը լցված է սպիտակ ներկով: Վերոհիշյալ գարդաժապավենից ցած, սև ալիքաձև զոտույթ մեկընդմեջ կախված են սև և սպիտակ պարույրներ, որոնք միմյանց հաջորդում են խմբերով:

Երկրորդ կճուճը նույն կառուցվածքն ունի, միայն վերը նկարագրվածից մի քիչ փոքր է: Զարգանախոշերը նախորդից տարբերվում են նրանով, որ կենտրոնի ժապավենում սեպեր-եռանկյունիները ոչ միայն սպիտակ են, այլև սև:

Խորը թասերից մեկը համարյա կիսագնդաձև է², թույլ ներձկված, փոքրիկ հատակով, շուրթից ցած խորաբանդակ դոտի, նրանից ցած մեկընդմեջ իրար հաջորդող, գագաթները վեր, սև և սպիտակ եռանկյունիների շարան է նկարված: Սպիտակ եռանկյունիները դարձյալ սև շրջադիժ ունեն: Այդ



Նկ. 85. Նոր Բալագետի գունազարդ թասի մյուս երեսը:

եռանկյունիներից ցած անցնում են երկու շարք ալիքաձև զոտիներ, վերևինը՝ սև, ներքևինը՝ սպիտակ, որից կախված են սև և սպիտակ պարույրներ:

Մյուս թասն ունի երկկոնիկ իրան և նույնպես փոքր ու թեթևակի ներձրկված հատակ: Կարմիր անդորի վրա ունի միայն սև ղարդանախոշեր: Խորաբանդակ դոտիով եղբրված շուրթից ցած ղարդանախոշերի վերին ժապավենում իրար են հաջորդում գագաթներով միացող եռանկյունիներ, ցանցադաշտեր և միայն մեկ անգամ երեքական խաչվող դժեր, որոնցով առաջացած անկյունները սև ներկով են լցված: Նրանցից ցած դարձյալ ալիքաձև զոտի է, որից կախված են սև պարույրներ:

Վերոհիշյալ դամբարանի խեցեղենը թե՛ ձևերով և թե՛ գարգամոտիվներով կապվում է Գառնիի և Քաղաքենդի խեցեղենի հետ: Տարբերությունը միայն նրանումն է, որ Նոր Բալագետի դամբարանում մոնոխորում խեցեղենի հետ միասին հանդես է գալիս նաև պոլիխորում:

¹ А. А. Мартиросян, «ԶԳ. աշխ.», էջ 49, նկ. 105:

² Նույն տեղում, նկ. 19a:

Նոր Բայազետի մյուս գամբարանում (№ 1), ինչպես վերը նշվեց, հաստ-նարերվել են նավակաձև, ընկույզի տապակի տիպի ներձկուններով երեք թաս, որոնք պատրաստված են ալ կարմիր գույնի կավից: Երկուսը մոնոխրոմ են, մեկը՝ պոլիխրոմ:

Մոնոխրոմ թասերից մեկի մի երեսը ղարգարված է ուղիղ և ալիքաձև հորիզոնական գոտիներով (նկ. 84): Այս ամբողջ ղարգագոտին երկու կողմից եզրափակվում է մեկական պարուլրով: Թասի մյուս երեսին նույն ժապավեններով անցնում են եռահարկ, ղաղաթները վեր եռանկյունների շարքեր (նկ. 85): Ամբողջ ղարգագաշար ղարձյալ երկու կողքերից եզրափակվում է մեկական պարուլրով:

Երկրորդ թասը (նույնպես մոնոխրոմ) երկու երեսից էլ ղարգարված է եռաշար ալիքաձև գոտիներով և նրանցից կախված պարուլրներով:

Երրորդ թասի հիմնագույնը ղեղին է. հատակը՝ կարմիր (տախտ. IV): Մեկ երեսին՝ երեք հորիզոնական սե գոտիներով առաջացած ժապավենների վրա պակերված է գագաթները վեր սե և կարմիր եռանկյունների երկու շարք: Երեսմյակարմիր եռանկյուններն ունեն սև շրջագիծ: Նրանցից ցած սև ղիգագագ գոտուց կախված են սե և կարմիր պարուլրներ: Թասի մյուս երեսը ղարգարված է սև և կարմիր ուղիղ և ղիգագագ հորիզոնական գոտիներով:

Այսպիսով, կարմիր հիմնագույնի վրա սև ղարգանախշերով կամ կարմիրի վրա սև և սպիտակ ղարգանախշերով խեցեղենի հեա երևան են գալիս նաև սև և կարմիր ղարգանախշերը՝ ըսց գեղնագույն հիմնագույնի վրա:

Խեցեղենի Նոր Բայազետի խմբին է հարում վերջերս Հադիճում, ղամրարաններից մեկում հայտնաբերված պարուրաղարղ կճուճը¹: Նրա ղարգաղաշառում Թաղաքենգի պարուլրների և այլ ղարգամոտիվների հետ, հանղես է գալիս եռանկյուններ-սեպիկների նույն գոտին, որպիսին մենք աեսանք Նոր Բայազետի խեցեղենի վրա:

Դե-Բայի կոլեկցիայում կա Թաղաքենգի տիպի մի կավաման սլարուրների և կրկնակի սակրի ղարգանկարով, որը հայանարերվել է Արմավիրում²:

Կիրովականում նման տիպի խեցեղեն գեռևս հայտնի չէ, իսկ ՚րաստանում՝ Ռուսթավի քաղաքում, Թաղաքենգի տիպի ընգամենր մեկ կավաման է հայտնարերվել՝ ցանցագաշտերով և գագաթներով միացող եռանկյունների ղարգանկարով³: Սակայն վերոհիշյալ սեպիկների գոտուն մենք հանգիպում ենք Թրիալեթի V և XVII գամրանարուրների խեցեղենի վղի հիմքի ղարգանախշերի շարքում⁴: Այս գամրանարուրների խեցեղենին ընգհանրապես ընորոշ են ըսց հիմնագույնի վրա (ըսց վարգագույնի, ըսց գեղնավունի) սև կամ շագանակագույն ղարգանախշեր, որը, ինչպես տեսանք, ընորոշ էր նաև ենք Թրիալեթի V և XVII գամրանարուրների խեցեղենի վղի հիմքի ղարգամոտիվներում իրենց գունային արտացոլումն են գտել մթա III հաղարամ-

¹ Պեղումները Թ. Խաչատրյանի, 1967:

² К. Х. Кушнарева, *նշվ. աղբ.*, էջ 147:

³ Г. А. Ломтатидзе, Важнейшие результаты археологических раскопок в Рустави. Материалы по археологии Грузии и Кавказа, I, Тб., 1955, стр. 200, 208, табл. XV, рис. 1. Л. А. Чилашвили, Город Рустави, Тб., 1958, табл. II, рис. 5.

⁴ Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, стр. 391, табл. LXXVIII, стр. 389, табл. LXXVII.



Տախտակ III. Կնունենր Գառնիի դամբարանից:

յակի վերջի XI, XXIV դամրանարուրների և Սարիթ-Աղչտյի զարգամոտիվ-ները (եռանկյան մեջ ամփոփված սեպաշարը)՝

Ավելորդ է հիշատակել, որ XVII դամրանարուրի դունազարգի պարուրաշարը, ինչպես և ոսկե զավաթի պարուրների շրջադոտին հիշեցնում են հարձյալ Քազաքենդը²։ Այսպիսով, Քրիալեթի V և XVII դամրանարուրները եթե ժամանակակից չեն Քազաքենդի խմրին, ապա հաջորդել են նրան։ Ընդհանրապես շերտադրական տվյալների բացակայության պայմաններում զժվար է ճշտել թվագրության հարցերը։

Քազաքենդի խմրի մեջ մանող դունազարգ խեցեղենը բազմաթիվ օղակներով դեռևս կապվում է վազ բրոնզի մշակույթի հետ։ Կապող հատկանիշները հետևյալներն են.

1. Կավամանների ձևը,
2. Զարդանախշման որոշ սկզբունքներ,
3. Զարգամոտիվներ,
4. Գունազարդման սկզբունքը։

Ինչպես վերը ասանք, Քազաքենդի խմրի կավամանների մի մասի հատակը փոքրիկ է և թույլ ներծկված, որոշ կավամաններ դեռևս պահպանել են երկկոնիկ ձևը։ Դալ բրոնզի ընկույզի ապակի ախպի թասերը (հայտնարերված Շենդավթում՝ № 1330/73 և Քաղավորանիստում՝ 1959 թ. պեղումներ, № 56), շարունակում են իրենց դոյությունը։ Ընդհանրապես ընկույզի տապակի տիպի ներծկումներով նավակաձև թասերը Հայկական լեռնաշխարհում բավական երկար կյանք են ունեցել, իրենց դոյությունը պահպանել են մինչև մթա II հազարամյակի վերջերը և բազմաթիվ օրինակներով ու տարբերակներով հայտնարերվել են Լճաշենի դամրանարուրներում։ Այս թասերի յուրահատուկ ձևը և, ինչպես վերը ասանք, շքեղ զարդանախշումը ենթադրել է ասիս նրանց լաշամունքային արարողություններին ծառայելը, որոնց մասին կխոսվի վերջին դիտում։

Քազաքենդի մի շարք թասերի շուրթից ցած նեղ ժապավենի մեջ երկրաչափական աարբեր զարդանախշերի ամփոփման սկզբունքը (նկ. 68)³ ընորոշ է վազ բրոնզեդարյան մշակույթին։ Նման նեղ ժապավեններով են զարդարված Գառնիի, Կիրովականի՝ Քոսի-Ճոթերի, Մաշաոցի բլուրի, Քաղավորանիստի, Կառնուտի, Շենդավթի կավամանների վզի հիմքը⁴։ Միջին բրոնզի հաջորդ փուլերում զարդանախշման վերոհիշյալ սկզբունքը վերանում է։

Այդ երկրաչափական զարգամոտիվների մեծ մասը նույնպես կապվում է վազ բրոնզի փայլեցրած խեցեղենի հետ։ Այդպիսին են ցանցադաշտերը, աարբեր ուղղություն ունեցող դժիկներով. հատվող անկյունները, դադաթներով միացող եռանկյունիները, շեղանկյունիները։ Այդպիսի օրինակներից մեկն էլ հայանարևել է էլարում. (№ 1813/13)։ Նույն զարգամոտիվները կարելի է տեսնել Կիրովականի, Շենդավթի, Արադածի խեցեղենի վրա։

Քազաքենդի խմրի խեցեղենում որոշ կավամանների վրա կրկնվում է


¹ Նույն անդում, էջ 389, աղ. LXXVIII, էջ 393, աղ. LXXVII:

² Նույն տեղում, էջ 389, աղ. LXXVII և էջ 421, աղ. XCIII:


³ Մոսկվայի պետական պատմական թանգարան, ինվ. 43941—24/1:

⁴ Է. Վ. Խաճզադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը..., էջ 74, նկ. 22, 23, էջ 75, աղ. XXI—XXIII:


տարբեր դասավորությամբ իրար մեջ հաղնոզ անկյունների զարդամոտիվը (նկ. 86, 2)¹, որը բնորոշ է Շենդավթի վերջին փուլին, միայն կատարված




1



2



3



4

Նկ. 86. Գունազարդ թասեր Թագարենդից:

նարերվել են երկու կտոր գունազարդ խեցի՝ բաց ֆոնի վրա սև զարդանկարով²: նման խեցեղեն հայտնարերվել է նաև «K3»-ում³:

սեղմելու եղանակով (№ 1618/222, № 1442/55—56, 6Տ և այլն): Նոր Բայազետի թասերի բուզմաշար և բազմահարկ եռանկյունաշարն (տախտ. IV) արտակարգ սիրված զարդամոտիվ է մթա III հազարամյակի նուրբ դժային զարդանախշերով սև փայլեցրած խեցեղենի համար (Շենդավթի, նկ. 87^{10,23,24}, № 1330/134, № 1618/155, Քոսի-Տոթեր և այլն): Նրանցով է զարդարված նաև Շենդավթի դամբարաններից մեկում հայանաբերված ոսկե մեդալիոնը⁴: Այսպիսով մթա III հազարամյակի վերոհիշյալ նուրբ դժային զարդամոտիվն իր գունային արտացոլումն է դտել Նոր Բայազետի պոլիխրոմ խեցեղենում:






Թագարենդի խմբի զարդանախշերում նորութունն այն է, որ մթա III հազարամյակի վաղ փուլերին բնորոշ առանձին կոմպոզիցիաների փոխարեն այսանոց մենք անհնում ենք շարունակական ալիքներ և նրանցից կախված պարույրներ, երբեմն էլ համակենտրոն շրջանների շղթաներն ու դոտիները (նկ. 86)⁵:

Գունազարդման եղանակը նույնպես օտար չէ վաղ բրոնզի խեցեղենին:


Բաց ֆոնի վրա կարմիր զարդանախշերով, կամ կարմիր ֆոնի վրա սև զարդանախշերով խեցեղեն հայտնաբերվել է Շենդավթի երրորդ և չորրորդ շերտերում (այսինքն վաղ բրոնզի միջին և ուշ փուլերում) սև փայլեցրած երկրաչափական նուրբ դժային և խոշոր դժանախիշով խեցեղենի հետ⁶:

Գեոյ-թեփեի «K2» շերտում հայտնարերվել են երկու կտոր գունազարդ խեցի՝ բաց ֆոնի վրա սև զարդանկարով:

¹ К. X. Кушнарева, *նույն տեղում*, էջ 140, նկ. 27;
² Ս. Սարգսյան, *Նախնադարյան հասարակութունը Հայաստանում*, նկ. 45;
³ Մոսկվայի պետական պատմական թանգարան, *ինվ.* 43941—24—1;
⁴ Ս. Սարգսյան, *նշվ. աշխ.*, էջ 187, աղ. LXI, էջ 189, աղ. LXIX, էջ 219;
⁵ T. Burtou-Brown, *նշվ. աշխ.*, էջ 35, 43;
⁶ նույն տեղում:



ՅՊ. 87. Ենթադրվում է, որ փայտեցրած խեցեղենի երկրորդական զարդանախշերից:



Գունազարդ խեցեղենը բնորոշ է մալաթրայի և Խարբերդի վաղ բրոնզի III փուլին¹: Վարդադուն կամ րաց դեզնավուն դունի անդորով խեցեղեն սև դարդանկարով, հայանարբովել է Ասյան-թեփեում, Ֆուրունկուլում և Կարա-Նուլուկում, որանց սակավ հանդիպում են նաև երկդուն զարդանախշերով խեցեղեն: Գունազարդի սիրված ձեռքից է կավամանի շուրթի զարդանախշումը թեք դծիկներով և այլն²:

Վրաստանում, Բեշտաշենի ամրոցի սթս. III հազարամյակի խեցեղենի III կոմպլեքսում, նուրբ դծային զարդանախշով խեցեղենի հեա, շերտադրական նույն ոլայմաններում հայտնաբերվել է դունազարդ խեցեղեն³:

Ալոպիսում, ինչպես վերը տեսանք, շնայած Թազաբենդի տիպի խեցեղենը ձեռք է բերում նոր հատկանիշներ, սակայն դեռևս բազմաթիվ օղակներով կապված է մթա III հազարամյակի հեա:

Գունազարդ խեցեղենի Թազաբենդի խումբը որոշ զուգահեռներ ունի Հին Արեւելքի մշակույթում: Հստ Բ. Կուֆաինի, դադաթներով միացող եռանկյունների դարդամոտիվը հարում է էլամի և Միջագետքի էնեոլիթյան նմուշներին, իսկ երիզաժապավենների զարդանկարը՝ Ալիշարի բլուրի III շերտին⁴: Ն. Մարտիրոսյանը Թազաբենդի և Կարմիր վանքի վաղ խումբը համեմատում է Թեփե-Հավրայի XIII—XIV շերտերի խեցեղենի, Սուզի և Փոքր-Ասիական հուշարձանների խեցեղենի հետ⁵:

Կենտրոնական Անատոլիայում հայտնաբերված դունազարդ խեցեղենն իրոք ադրսվում է Թազաբենդի խմբի խեցեղենի հեա: Օրինակ, Հյուզո Գրոտի նյութերում երիզաժապավենից կախված պարույրները լայն դոտիներով կազմված անկյուններում երեան են դալիս զույգ-զույգ⁶, իսկ երբեմն էլ Թազաբենդի խմբի խեցեղենի նման շաքանով իրար են հաջորդում՝ կոխված ալիքազարդ դաշտր եզերող ժապավենից⁷: Որոշ բեկորների վրա երիզաժապավենից կախված պարույրների զարդանկարը հորիզոնական մի շարք դաշտեր է առաջացնում⁸: Կան բեկորներ, որոնք զարդարված են սեպաշարով կամ եռանկյունաշարով⁹, որը, ինչպես տեսանք, սիրված զարդամոտիվ է Թազաբենդի խմբի համար (Հաոիճ, Նոր Բայազետ): Որոշ կավամանների վրա սև փայլաներով սեպաշարերը կարմիր անդորի վրա ուղղահայաց շարքեր են կազմում¹⁰, կամ էլ հորիզոնական բազմահարկ եռանկյունաշար, որոնք բնորոշ են Ալիշար III-ի մթա 2200—2000 դդ. թվադրվող խեցեղենին¹¹: Ինչպես վերը տեսանք, նրանց նախատիպերին մենք հանդիպում ենք Շենդավթի

¹ C. Burney, Eastern Anatolia... p. 205.

² Նույն տեղում:

³ Б. Куфтин, Археологические раскопки в Триалети, стр. 112, 116—117.

⁴ Նույն տեղում, էջ 7:

⁵ А. А. Мартиросян, *Ինչ. աշխ.* 49 33:

⁶ Henri de Genauillac, *Ceramique Cappadoecienne*, v. II, Paris, 1926, p. 7, 9, fig. 21, 22, 23.

⁷ Նույն տեղում, աղ. 2, № 9611:

⁸ Նույն տեղում, աղ. 2, № 9809:

⁹ Նույն տեղում, էջ 10, նկ. 27, 29:

¹⁰ Նույն տեղում, էջ 38, նկ. 73 և նույն գրքի II հատոր, աղ. 5 bis, № 122:

¹¹ Nimet Özgüç, *Marble Idols and statuettes from the excavations at Kültepe, Belieten Türk tarih Kurumu*, XXI. № 81, 1957, Ankara, p. 77, fig. 24.

սև փայլեցրած խեցեղենի (նկ. 87ա, ա), ոսկե մեղալիոնի, կամ էլ Թրիալեթի XI և Թեթրի Մղարուի գտման արևելքների սև փայլեցրած, նուրբ գծային եղանակով զարգարված խեցեղենի վրա¹, որոնք վերաբերում են վաղ բրոնզի III փուլին:

Չնայած վերոհիշյալ զուգահեռներին, խեցեղենի Թաղաքենգի խումբը փոքրասիականից սարբերվում է կավամանների ձևով, զարդանկարի հիմնական կոմպոզիցիայով: Նույն բանը կարելի է ասել նաև հարավմիջագետքյան զուգահեռները նշելիս:

Այսպիսով, խեցեղենի Թաղաքենգի խումբը, որը միջին բրոնզի զարաշրջանի ամենավաղ փուլն է ներկայացնում, ծագումնաբանորեն սերտորեն կապված է Հայկական լեռնաշխարհի մթա III հաղարամյակի խեցեղենի հետ, առաջացել և ձևավորվել է անդական հիմքի վրա, ազգել, փոխազգվել է հարևան երկրներից և, ինչպես Բ. Ա. Կուֆտինն է ընդդրում՝ դարգանալով հարավմիջագետքյան և արեմայան հոսանքների սերա զործակցության սայմաններում, այն կազմում է Առաջավոր Ասիայի գունազարգ խեցեղենի մի ինքնուրույն ֆացիա²:

Խեցեղենի Թաղաքենգի խումբը Հ. Մարաիրոսյանի կողմից թվագրվում է մթա II հաղարամյակի սկզբի երկու զարբերով, մթա XX—XXVIII զարբերով³: Ա. Իեսսենը այն թվագրում է մթա XIX—XVIII զարբերով⁴: Ինչպես վերը տեսանք, խեցեղենի Թաղաքենգի խումբը միջին բրոնզի ամենավաղ փուլն է ներկայացնում և ընդամենի ճշտվելով առնչվում է վաղ բրոնզի մշակույթի հետ:

2. Գառնիի գունազարգ խեցեղենի երկրորդ խումբը կազմում են հիգրիայի տիպի, անկանթ, մի փոքր ձգված իրանով, թեք ուսերով, սահուն, գեղեցիկ գուրս ձգված պսակով ավարտվող ոչ ջատ բարձր, լայն վզով մեծ կավամանները:

Դամրարաններից հայտնաբերվել է նման մեկ ամբողջական հիգրիա, իսկ բնակաանդիից՝ մի շարք բեկորներ:

Դամրարանից հայտնաբերված հիգրիան (ասիա. VI, № 1965/224, նրա հեա հայտնաբերվել է նաև շազանակագույն կճուճ, կետագիծ նկարով, № 1965/225), զարգարված է երկդաշտ կոմպոզիցիայով, այսինքն՝ իրանի վրա զարգանախշերի իրար հաջորդող երկու գաշտ ունի: Մեկը ասարծվում է վղից ցած՝ ուսերի մասում և եղբրվում ալիքաձև գոտիներով, մյուսը կազմում է նրա շարունակությունը՝ ընգրկելով հիգրիայի ուղուցիկ մասը: Վգի հիմքի և ուսերի ալիքաձև շրջագծերով առաջացած վերին գաշար զարգարված է ուղղահայաց իջնող գույզ ալիքների և վեց ժապավեններից բաղկացած խմբերով, որոնք իրար հաջորդում են մեկընդմեջ: Յուրաքանչյուր խումբ ներկայացված է հինգ անգամ: Վերին գաշար եղբրող գույզ ալիքաձև հորիզոնական շրջագծերից ցած, զիգզագ գոտիով առաջացած եռանկյունաձև

¹ Б. Куфтин, *նշվ. աշխ.*, էջ 407. աղ. LXXVI: О. Джапаридзе, Археологические раскопки в Триалети, 1957—1958 годах, табл. II.

² Б. Куфтин, *նշվ. աշխ.*, էջ 7.


³ А. А. Мартиросян, *նշվ. աշխ.*, էջ 54.

⁴ *Նույն տեղում*, էջ 56.

⁵ А. А. Иессен, *նշվ. աշխ.*, էջ 18.



Տախտակ IV. նախակառն րաս նոր Բալագետից:



հրապարակները ծածկված են ալիքաձև ժապավեններով, հինգում՝ հորիզոնական դասավորությամբ, իսկ մեկում՝ թեք: Օռանկյունիներից ցած նկարված գիղզադ երիզաժապավենի միջով անցնում է ալիքաձև գոտի: Ինչպես եռանկյունիների, այնպես էլ երիզաժապավենների դադաթներից կախված են օղեր:

Սրիզաժապավեններով լառաչացած անկյուններում նկարված են շրային թռչուններ, որոնք ընդերքի են նմանվում, թվով վեցն են, իրանը դարձրված է եռաշար ալիքներով:

Սրիզաշտ կոմպոզիցիայով և ընդամենը թռչուններով է դարձրված Ձուռնարագում հայտնաբերված հիդրիան¹, իսկ Դրդիի (Շամշադինի շրջան) հիդրիայի վրա թռչուններ են նկարված I և II դաշտերում²:

Մեծ հեռաքերություն են ներկայացնում Գառնիի բնակատեղիում հայտնաբերված, նույնպես երկդաշտ հիդրիայի մասերը (1968 թ. № 17): Նրա վրի հիմքի ժապավենից ցած (փոքր մասն է պահպանվել) նկարված են երկարապոչ, համարյա դնդաձև հետնամասով, շորս կարճ ոտքերով, անսովոր ձևի, առջևի մասով ասորոքինակ մեծ և փոքր, ավելի շուտ վայրի ցուլ կամ ընդուն հիշեցնող կենդանիների թեք դադանների խմբեր (աղ. XXIX): Ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ 1957 թ. նույն տեղամասի 16ա քառակուսու մոտ (որանց հայտնաբերվել են վերոհիշյալ հիդրիայի բեկորները), 15ա քառակուսում գտնված խեցու մի բեկորը այդ հիդրիայի մասերից է, միանում է նրա ձախ վերին անկյանը և լրացնում նկարադրված պատկերը: Բեկորը հրատարակված է և թերի լինելով, այդ տարօրինակ կենդանին մանր եղջերավոր կենդանու է նմանեցվել: Այսպիսով, վերականգնված բեկորներով ստացվում են նույնանման մեծ և փոքր կենդանիներ—դադաններ, որոնք շարժվում են միևնույն ուղղությամբ: Հինդերորդ կենդանին տեղավորված է բեկորի աջ մասում, թերի է, սակայն ղգացվում է. որ այլ տիպի է, պոչը կեռված է ղեպի ցած, հեռանամասը կլորացող չէ, ունի ձգված մեջք, դժվար է որոշել նրա ինչ լինելը:

Թվում է, թե նույն հիդրիայի մասն է կաղմում դարձյալ 1957 թ. նույն քառակուսում հայտնաբերված մեկ այլ բեկոր ևս, որը նույնպես հրատարակված է (№ 2099/58)³: Նրա վրա նկարված են երկարավիզ, երկարականջ և երկարապոչ կենդանիներ՝ հանդստանալիս (աղ. XXIX): Նրանք նստած են բնական վիճակում՝ մեջք-մեջքի աված, ոտքերը ծալած, դուխները ետ են զարձրել, բերանները՝ բացել: Խեցու վրա կենդանիներից մեկի նկարը պահպանվել է ամբողջությամբ, երկրորդից՝ մեջքն ու պոչը, իսկ երրորդից՝ երկար վիզն ու գլուխը:

Այսպիսով, եթե միացնենք այս բեկորները, ապա նկարադրված հիդրիայի վրա կտեսնենք վայրի կենդանիներով, դադաններով հարուստ մի դաշտ: Ինչպես անասնաբանները, նրանք հանդստի վիճակումն են և չեն հետապնդվում: Հավանաբար մենք այստեղ ունենք որսի պաշտամունքին, մադիային

¹ Я. Н. Гуммель, Крашенная керамика в долине Ганджа-чая. Изв. Азерб. фил. АН СССР, Баку, 1939, стр. 37 и сл., рис. 1—3.

² Պեղումները Ս. Սալյանի:


³ Է. Վ. Խանգաղյան, Լճաշենի № 6 կուրգանը, էջ 71, նկ. 8:

⁴ Նույն տեղում, նկ. 7:

նվիրված մի տեսարան: Այդ կենդանիներն իրենց ձևով բավական արխաիկ են և հավանաբար պատկերում են միջին բրոնզի դարաշրջանի կենդանակա՛ն աշխարհը: Ուսումնասիրվող ժամանակաշրջանի դունազարդ խեցեղենի վրա հանդիպող այս պատկերները եզակի են:

Նկարագրված կենդանազարդ դաշտը ներքևից եզերված է հորիզոնական ժապավենով: Նրանից ներքև սկսվում է հիդրիայի երկրորդ զարդադաշտը, որից պահպանվել է միայն եռանկյունաձև հրապարակը՝ ծածկված թեք յոթ ալիքաձև ժապավեններով: Ներքևի անկյունում պահպանվել է նաև երիզա-ժապավենի մասը:

Այս հիդրիայի մասերի հետ, նույն քառակուսում հայտնաբերվել է նման



Նկ. 88. Թուրքադարդ բեկորներ Գառնիի ամրոցից:

մի խեցու բեկոր, որի վրա դժված կամարաձև ժապավենով և նրան կից ալիքաձև դոտիով առաջացած դաշտում նկարված են երկու երկարավիղ թռչուններ, որոնք կարծես նսասած են հորիզոնական գոտու, հավանաբար՝ ճյուղի վրա (ներքևում, աջ անկյունում նրա մի մասն է պահպանվել, ազ. XXIX): Այդ կողմում թռչունի վրի մոտ պահպանվել է ինչ-որ կենդանու պոչի մաս: Այս բեկորը իր խեցիով, թրծումով, աստառով և արտաքին ունդորի դույնով միանդամայն նման է վերը նկարագրված հիդրիային և հավանաբար տեղավորված է եղել նրա երկրորդ զարդադաշտի երիզաժապավենով կազմված անլուսնեկրում:

Մի առանձին նրբությամբ է կատարված Գառնիի բեկորներից մեկի զարդանկարը (1966 թ. № 18): Այն կավամանի ուսերի մասն է. որի վրա պահպանվել է վզի հիմքով անցնող հորիզոնական ալիքաձև դոտին և նրանից սկիզբ առնող, դեպի ներքև տարածվող եռանկյունաձև ալիքածածկ հրապարակի մասը: Ինչպես երևում է գծազրից, աւստեղ ալիքածածկ եռանկյունիները հաջորդաբար շին տարածվել, այլ ընդհատումներով: Այդ բուց դաշտերի մեկը (որը պահպանվել է ավյալ բեկորի վրա) զարդարված է երկարավիղ արոսի ախի թռչունի կամ կարապի նկարով և նրանից աջ հավանաբար բազի կամ այլ թռչունի ճուտի նկարով, որի մարմնի մի մասը և ոտքերն են պահպանվել (նկ. 88): Երկուսի իրանն էլ զարդարված է ալիքաձև հորիզոնական ժապավեններով, մեծինը՝ դույզ, փոքրինը՝ մեկ ժապավենով:

Նրանցից ցած պահպանվել է հորիզոնական ալիքաձև գոտու մասը, որից հետո տարածվել է հավանաբար զարդամոտիվների երկրորդ դաշտը: Այս-

պիտով նման երկարավիզ թռչունի պատկերը նույնպես առաջին օրինակն է դունալարդ խեցեղենի շարքում:

Հնգհանրապես վերս նկարագրված հիգրիային վերադրվող կենդանա-կերպ և թռչնազարդ նկարները ինքնատիպ են, դեռևս իրենց զուգահեռները ունեն նշ միայն Հայկական լեռնաշխարհի, այլև ընդհանրապես Անդրկովկասի վերոհիշյալ դարաշրջանի մոնոխրոմ դունազարդ խեցեղենի շարքում: Չնայած էլարում ևս հայտնարերվել է զունազարդ կավաման՝ կենդանակերպ դարդանախշերով, սակայն իրենց բնույթով դրանք այլ են, չեն առնչվում Գառնիի վերս նկարագրվածների հետ, մասամբ կենդանակերպ են, մասամբ թռչնաձև, երբեմն ծովացույր հիշեցնող մարմնով:

Կավամանների դարդանախշումը տարատեսակ թռչուններով, առասպելական և դիշատիչ կենդանիներով ընտրող է նաև մթա II հազարամյակի երկրորդ կեսի պոլիխրոմ խեցեղենի համար: Նման դարդանախշերով կավամաններ մեզ հայտնի են Նախիջևանի I և II Քյուլ-թափաններից², Շահ-թախտից՝ և այլն:

Բացի վերս նկարագրածներից, երկզաշտ կոմպոզիցիայով հիգրիսներ հայտնի են նաև էլարից (№ 2246/115), Կիրովականի դամրանաբլուրից (№ 1861/22), էջմիածնի 1962 թ. պեղված հիմնահողային դամրաններից՝ Վրասաանում Թրիալեթի I և VII դամրանաբլուրներից⁵ և մի շարք դամրանափոս ունեցող դամրանաբլուրներից⁶:

Գառնիի ընկատեղիում հայտնարերվել են նաև խեցիներ, որոնց դարդանախշերը մեկ զաշտ ունեն և սկսվելով վզի հիմքում, ավարտվում են դոտկատեղում: Նրանք կազմված են կամ վզի հիմքից տարածվող ալիքածածկ կոտակյունիներից և երիզածապավեններից (ազ. XXX¹, № 2099/14, 58), կամ զիղզաղ ալիքազարդ բազմաշար երիզածապավեններից (ազ. XXX³, № 2099/97, № 2235/36), որոնցով առաջացած վերին և ներքին անկյունները զարդարվել են կարծև ջրում լողացող թռչուններով (նկ. 88², № 2288/49):

Նման դարդանախշերով հիգրիսներ հայտնարերվել են նաև Կարմիր պլուզում (Նոր Բայագետի շրջան, որի վերին և ներքին անկյուններում նկարված են զույգ թռչուններ), Կիրովականում՝ քաղաքի հրապարակը կառուցելիս (ԿԳԹ № 216, զույգ թռչուններ են նկարված երիզածապավենների միայն ներքևի անկյուններում), Ղրղիում (№ 2311/3), որի վերին անկյուններում նկարված են զույգ, իսկ ներքին անկյուններում՝ երեքական ջրային թռչուններ: Հիգրիս երիզածապավեններով կազմված անկյուններում երեքական

¹ Э. В. Ханзадян, Расписной сосуд с зооморфными изображениями из Элард, СА, № 4, М., 1966, стр. 173, рис. 1.

² О. А. Абибуллаев, Археологические раскопки в Кюль-тепе, табл. 414. В. Г. Алиев, Крашеная керамика Кюльтепы II, Доклады АН Азерб. ССР, т. XIX, Баку, 1963, стр. 70, табл. I, стр. 73, табл. II⁵, նույնի, Новые Материалы о культуре расписной керамики в Азербайджане, СА, № 1, 1967, стр. 117—118, рис. 2.

³ А. Алекперов, Крашеная керамика Нахичеванского края и Ванского царства, СА, 1937, стр. 252—257.

⁴ А. А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 68, աղ. II^{1,2}:

⁵ Б. А. Куфтин, Археологические раскопки в Триплетти, стр. 80.

⁶ նույն տեղում, էջ 401, աղ. LXXVIII, էջ 399, աղ. LXXXII:

⁷ Պեղումները Ս. Խաչանի:

թռչուններով, հայտնաբերվել են Թրիալեթիի VII հիմնահողային դամբանա-
րլուրում¹, երկդաշտ կոմպոզիցիայով հիդրիայի հետ²:

Արտակարգ լայն ասրածում ունեն Գառնիում հայտնաբերված խեցօգե-
նի աիպի ալիքածածկ եռանկյունիներով և նրանցից ներքև՝ ալիքազարդ
երիզածապավեններով, ծայրերին օզակներով զարդարված կտվամանները
Նման մեծ կավաման (№ 1861/27) և մի քանի միջին մեծության կճուճներ
(№ 1861/24, 26—27) հայտնաբերվել են Կիրովականի դամբանարլուրում,



Նկ. 89. Գունազարդ կճուճ էջմիածնից:

(էջմիածնի № 1 դամբանարլուրում³, Ոսկեվազից՝ Աշաարակի շրջան № 555/
17, Ազնարյուրից⁴, Շոռ-թեփեից⁵) կամ միայն զիղզադ ալիքազարդ երի-
զածապավեններով, օրինակ՝ Նորատուսի դամբարանից⁶, Ոսկեվազից (№ 555/
16), Շոռ-թեփեից⁷: Երբեմն այս ծապավեններով առաջացած անկյունները
զարդարված են շրջաններով-օզերով, օրինակ, էջմիածնից բերված կճուճնե-
րից մեկը (Նկ. 89, № 556/3), Շոռ-թեփեի կճուճները⁸, կամ կզնիկի և մար-
դու նկարով Նախաշիրից հայտնաբերված կճուճը⁹ և այլն:

Ինչպես վերը ասեսանք, երկդաշտ և միադաշտ կոմպոզիցիայով հիդրիա-

Աղավնատան դամբանարլուրներում
(աախա. VII, աչից, ՊՊԹ., համար
չունեն), էլարում (№ 2246/99), Նախ-
իջևանում՝ Շոռ-թեփեից (Նորաշենի
շրջան)³, Զանգեզուրի լեռնալանջում՝
Ազնարյուրտ դյուղի մոտ գտնվող դամ-
բանարլուրից⁴: Մի փոքր ձևափո-
խումներով նրանք համարված են է-
լարում հայտնաբերված ձկնազարդ
(№ 1813/16) և թռչնազարդ (№ 1805/
32) ցածրադիր կճուճների վրա (աախտ.
VIII):

Հանդիպում են կճուճներ, որոնց
վրա վերը նկարագրված զարդամոտիվ-
ները առանձին-առանձին են հանդես
դալիս, օրինակ, կան կճուճներ, որոնց
վրա միայն ալիքածածկ եռանկյու-
նիներ են նկարված՝ ծայրերին օզակներ

¹ Б. А. Куфтин, *Եջմ. աշխ.*, էջ 83, 307, ադ. LXXXI:

² Նույն տեղում, էջ 399, ադ. LXXXII:

³ О. А. Абибуллаев, *Եջմ. աշխ.*, ադ. 32:

⁴ В. Г. Алиев, *Եջմ. աշխ.*, էջ 119, նկ. 31—3, նույնի, К изучению культуры расписной керамики в Азербайджане, Материальная культура Азербайджана. т. VI, Б., 1965. стр. 64—65, табл. 12.

⁵ А. А. Мартиросян, *Եջմ. աշխ.*, էջ 68, ադ. II⁵:

⁶ В. Г. Алиев, Новые материалы о культуре расписной керамики в Азербайджане, *ոս.* 34.

⁷ О. А. Абибуллаев, *Եջմ. աշխ.*, ադ. XXXV_{2,4}:

⁸ А. А. Мартиросян, *Եջմ. աշխ.*, ադ. IV₄:


⁹ О. А. Абибуллаев, *Եջմ. աշխ.*, ադ. XXXV⁶:

¹⁰ Նույն տեղում, ադ. XXXV⁷:

¹¹ Նույն տեղում, ադ. XXXV⁸:

Դերը համառեզ են հանդես դալիս, ժամանակակից են միմյանց, նրանց զարգամոտիվները միջին բրոնզի ամենասիրվածներն են և բաղմաթիվ օրինակներով հայտնի են Հայկական լեռնաշխարհում:

Դառնիի վերը նկարագրված խեցեղենի երկրորդ խումբն իր զուգահեռներով հանդերձ, հիդրիայի ձեով և զարդանախշերի բաղմաթիվ մանրամասներով կապվում է վաղ բրոնզի խեցեղենի հետ, հանդիսանալով նրա անմիջական ժառանգորդը:



Նկ. 90. Հիդրիա՝ Արևիկի վաղ բրոնզեդարյան բնակատեղիից:

Միջին բրոնզի հիդրիաների և նրանցից ծավալով փոքր նման կճուճների Խախատիպը կարելի է համարել Արևիկյան հայտնաբերված հիդրիան (Ձ 2289: 12), որն իր կիսադնդաձև կանթերով դեռևս կապվում է վաղ բրոնզի հետ, սակայն ձևով, վարդագույն խեցիով, շուրթի ձևավորումով, բարձրագիր վզով յունիջականորեն կապվում է միջին բրոնզի հիդրիաների հետ (նկ. 90): Թեև այն զունադարձ չէ, սակայն խաղելու եղանակով վզի վրա կատարված ուղ-

ղահայաց իջնող գծախմբերը հիշեցնում են միջին բրոնզի գունաղարդ խեցեղենի վաղ ուղղահայաց իջնող նման ժապավենների խմբերը:

Այսպիսով, Արևիկի հիդրիան կապող օղակ է, վաղ բրոնզի և միջին բրոնզի խեցեղենի միջև: Կորցնելով Եխաղձ-դաձև կանթերը, զառնույնով ավելի վերասլաց և դունաղարդվելով, հիդրիան լայն տարածում է դրսևում միջին բրոնզի խեցեղենում:

Ինչպես նշվեց, միջին բրոնզի մի շարք զարդանախշեր նույնպես ժառանգարար ընդօրինակվել են վաղ բրոնզի զարդանախշերից և նոր հրանդով, կատարման նոր եղանակով կազմել հիդրիանների կոմպոզիցիաների մասերը: Օրինակ՝ միջին բրոնզի հիդրիանների վրի հիմքից սկիզբ առնող, կամ երկրորդ դաշտում տարածվող եռանկյունիների շարանը՝ զարդարված ուղղահայաց իջնող կամ թեք դասավորությամբ ալիքաձև ժապավեններով, իրենց նախատիպն ունեն Շենդավթի մի շարք կավամանների վրա (№ 1618/3, № 1330/47, 67 և այլն), որտեղ վրի հիմքի հորիզոնական ժապավենից ներքև տարածվում են եռանկյունիների շարաններ, այն տարբերությամբ, որ նրանց հատող դծերը ալիքաձև չեն, այլ ուղղադիծ (նկ. 872, 10): Զպետք է մոռանալ, որ վաղ բրոնզի շրջանի վերոհիշյալ կավամանների ձևը, որակը, գույնը, զարդանախշման եղանակը կատարելապես ալ է, տարբեր միջին բրոնզի խեցեղենից:


Միջին բրոնզի հիդրիանների զարդանախշերին բնորոշ զիզպազ ժապավենները՝ ներսում ալիքաղարդ և նրանով առաջացած անկյուններում թռչունների տեղադրումը նույնպես ընդօրինակվել են վաղ բրոնզի սև փայլեցրած խեցեղենի զարդանախշերից: Դրա լավագույն և ցայտուն օրինակը կարելի է տեսնել Շենդավթից հայտնաբերված կարասի վրա¹, որտեղ անկյուն կազմող ժապավենների միջով նույնպես անցնում է ալիքաձև դոտի և այդ ժապավեններով առաջացած անկյուններում պատկերված է թռչուն (նկ. 73): Դիշտ նման կոմպոզիցիայով (սակայն առանց ալիքաձև դոտու) կավամանի մաս հայանաբերվել է Կաննուտում (№ 1478/12ր, թերի է): Իհարկե թռչուններն իրենց ձևով աբերբրվում են միջին բրոնզի թռչուններից:

Որոշ փոփոխություններ է կրում կոմպոզիցիոն կմախքը, օրինակ, վաղբրոնզի անկյուն կազմող ժապավենների վերջավորությունների բաղմադալար, մոնումենտալ պարույրները միջին բրոնզում վերանում են, իսկ անկյուն կազմող ժապավենը վեր է ածվում շարունակական ղիզղադի: Բացի այդ, վաղ բրոնզեդարյան սև փայլեցրած խեցեղենին բնորոշ ժապավեններով կազմված անկյունների զարդանախշումը՝ փոսիկների և ճառագայթաձև ահոսների, թռչունների և բաղմադալար պարույրների, անկյունների համադրությամբ, միջին բրոնզում դարձյալ պարզեցվում է: Այդ անկյունները, ինչպես տեսանք, զարդարվում են կամ թռչունով կամ օղբրով կամ նրանց խմբերով:

Վերջապես, ի տարբերություն վաղ բրոնզի, կավամանների վերին մասը զարդանախշվում է ոչ թե մեկ երեսից, այլ բոլոր կողմերից:

Սակայն միջին բրոնզի դունաղարդ խեցեղենի զարդանկարում դտրձյալ երկրագործ-անասնապահների հողբանության, աշխարհայացքի բարդ և բաղմազան զաղափարական պատկերացումներն ենք դտնում: Զարդանախ-

¹ II. Սարգսյան, Եյվ. աշխ., նկ. 40:



Տախտակ V. Բոշնագարի կնուն էշմիածնից:



շերի կոմպոզիցիոն հիմքը դարձյալ բնութիան երեք տարրերն են, երեք հզոր ուժերը՝ երկինքը, երկիրը և ստորերկրյա ծովը, որոնք տարրեր պատկերներով են արտահայտված: Երկինքը՝ արևի սիմվոլն արտահայտող շերտաններով, դուրս թռչուններով, երկնային ջրերը, անձրևը պատկերող ալիքների խմբերով, երկիրը՝ դաշտերի սիմվոլն արտահայտող քառանկյունիներով կամ շեղանկյունիներով, ստորերկրյա ծովը՝ թռչուններով, ձկներով:

Նրկաշտ թե միադաշտ կոմպոզիցիաների լեյամոտիվը ջրի սիմվոլիկան արտահայտող ալիքաձև դոտիներն են: Նրանցով են դարձարված կոմպոզիցիայի մասերը կազմող բնութիան երեք հզոր ուժերն արտահայտող բոլոր տիպի ֆիգուրները՝ վրի ուղղահայաց ժայռավեները, հորիզոնական դոտիները, նրանցից կախված մետաղները, շերտները, քառանկյունիները, շեղանկյունիները, անգամ թռչունները և ձկները:

Ելնելով դունադարձ հիդրիաների և նմանատիպ, ծավալով ավելի փոքր կոնվեկցիոն մեծ մասի դարձամոտիվների կոմպոզիցիայից, կարելի է եղրակացնել, որ այդ դարձապատկերները նվիրված են եղել հավանարար երկնային, երկրային և ստորերկրյա ջրերը հմայելու, դյուրելու և ուտղաբերութունն ապահովելու ծիսակատարությանը:

Այսպիսով, Գառնիի նկարադրված հիդրիաների խումբը և նրա դուրահեռների մեծ մասը թեև պաասական են, ուղեկցող նյութեր չունեն, սակայն, ինչպես ասանք, անմիջականորեն բխում են վաղ բրոնզի խեցեղենից, շարունակում են նրա ավանդույթները մի նոր որակով, հետևաբար, անշուշտ, պեք է սկիզբ առած լինեն բրոնզի վաղ փուլերում, իրենց գոյությունը պահպանելով դարեր շարունակ, իրեն միևնույն էթնիկ միջավայրում ստեղծված մշակութի հաջորդական դրսնորումներ:

3. Գառնիի դունադարձ խեցեղենի երրորդ խումբը կազմում են կիսագնդաձև իբանով թասերը և թասերի բեկորները: Բոլոր թասերն ունեն մի փոքր շեշաված պսակ, որի հիմքով արաաքինից անցնում է խորաքանդակ հորիզոնական գոտի: Բոլորի շուրթերը դարձարված են ուղղահայաց իջնոպ դուրահեռ ժայռավեների խմբերով:

Գառնիի բնակատեղիում հայտնաբերվել են տարբեր դարձանախշերով թասերի բեկորներ:

Թասի բեկորներից մեկի վրա (№ 2099/58), շուրթից ցած պահպանվել է լայնադիր եռանկյունաձև շերտնի մասը՝ թեք ալիքադարձումով, իսկ նրանից ձախ՝ դուրահեռ իջնոպ ալիքադարձ երկդաժայռավեների մասը (աղ. XXVIII): Այս թասի վրա փաստորեն կրկնվում է վերը նկարադրած հիդրիաների դարձանկարը, որն այնքան բնորոշ է միջին բրոնզի գունադարձ խեցեղենի համար:


Ծիշտ նման դարձանախշով մի ամբողջական թաս հայտնաբերվել է Լլարում (№ 2261/9), մյուսը բերվել է էջմիածնից (№ 556/45, վերջինիս եռանկյունիների միջի ալիքները հորիզոնական դասավորութուն ունեն և այդ եռանկյունիների ծայրերից կախված են ուրիշ օղակներ):

Դսոսիում հայտնաբերված մեկ այլ թասի բեկոր դարձարված է շորս թեք, սակայն իրար պուղահեռ ժայռավեների խմբերով, որոնք սկսվում են շուրթից և ավարտվում ուսերի հորիզոնական դոտու վրա, ապա անկյուն կաղմկով շարունակվում (աղ. XXVIII, № 2099/58): Նման դարձանախշով միակ

բեկորն է սա դունադարդ խեցեղենում և զարդանախշման այդ մոտիվով ավելի շուտ կապվում է ուշ բրոնզի դարաշրջանի վաղ փուլերի թասերի զարդամոտիվների հետ, այն տաբերությամբ, որ վերջիններիս վրա վերոհիշյալ զարդանախշերը կաատրված են ոչ թե դույնով, այլ փայլեցման եղանակով: Սրինակ, Գեղարտի թասերի զարդանախշերը (№ 2078/1, 5, 28) կամ Լճաշենի կրոմլեխների թասերի (№ 2009/12), Արթիկի դամբարանների թասերի զարդանախշերը¹ և այլն:

Վերոհիշյալ խմբի երրորդ թասի բեկորը զարդարված է իրար մեջ հադնող, եռանկյուն կաղմող շղթայով (աղ. XXVIII₆, № 2099/57):

Ճիշտ նման թաս, սակայն քառաշար եռանկյունիների խմբերով, հայտնարեքվել է Շոռ-թեփեում²:



Նկ. 91. Կավամանի բեկոր՝ փորագիր զարդանախշերով և փոսիկով զարդարված, Գառնիի ամբոցից:

Բացի վերոհիշյալ հիմնական խմբերից, Գառնիի ընկառնեղիում հայտնարեքվել են դունադարդ կավամանների բեկորներ, որոնց ձևը որոշելը դրժվար է, սակայն նրանք հեաաքքիքի են իրենց զարդանախշերով: Կան բեկորներ՝ զարդարված հորիզոնական բաղաձաար ալիքներով (№ 2099/57), իրար մեջ հադնող անկյուններով (№ 2099/14), կամ ուղղահայաց իջնող իրար դուղահեռ ալիքների խմբերով (աղ. XXVIII₁₀, № 1964/45): Այս վերջինս իր զարդանախշումով հիշեցնում է Ախլաթյանում հայտնարեքված թասի զարդանկարը, որանղ շուրթից ուղղահայաց իջնող շորս ալիքներից բաղկացած իրմբերը զարդարված են սանրատամ շեղանկյունիների շղթայով՝ ուղղահայաց դասավորությամբ (№ 1114):

Ղետաքրքրական է նաե ուռուցիկ իրանով, նրրախեցի, լավ թրժումսվ և կարժր խեցիով կճուճի մասր (1966 թ. № 36), որի վղի վրա պահպանվել է ինչ-որ զարդանկարի հեաք: Վղի հիմքի թույլ շեղված հորիզոնական ոելիեֆ դոաիններից ցած նկարված է իրար մեջ հադած զույղ մեծ և փոքր կիսաշրրջանների շղթա: Մեծ կիսաշրջանների անկյունները դրսից միացված են փոք-

¹ Т. С. Хачатрян, Материальная культура древнего Артика, 1963, Ереван, стр. 115, табл. 21, стр. 117, табл. 23.

² О. А. Абибуллаев, *Նշվ. ախ., աղ. 309*:

րիկ կիսաշրջաններով և այս բոլորը ներքևում շրջափակվում են ալիքաձև հորիզոնական դոտիով (ազ. XXXVIIII):

Այս զարդանախշը իր զուգահեռը դեռևս չունի:

II. Փորագիրը և դրոշմազարդ խեցեղենի մի շարք օրինակներ են հայտնաբերվել Գառնիում, որոնք ունեն շաղանակազույն, մոխրազույն, մարմնապուշ և սև փայլեցրած մակերես:

1. Փորագիր զարդանախշերով խեցեղենի մի խումբ հայտնաբերվել է ամրոցի II անդամսում, իրար բավականին մոտ՝ 20 ք, 20 ժ և 17 ժաքառակուսիներում, 1,3—1,5 մ խորութունից: Նրանցից ոչ հեռու, 16 ք, քառակուսում, նույն խորութունից հայտնաբերվել է նաև դունազարդ խեցու բնկոթ, որն իր զարդանախշերով հիշեցնում է Քազաքենդի տիպի խեցեղենը (№ 1964/40): Վերահիշյալ բոլոր քառակուսիներում 1,5—1,7 մ խորութունից ցած սկսվում են վաղ բրոնզեդարյան մշակութային շերտերը:

Գնդաձև իրանով, շատ կարճ, ներձկված վզով և շեշաված պսակով դրոշազույն մի կավամանի մաս (№ 1964/44) հայտնաբերվել է 20 ք. քառակուսում (նկ. 91): Վզի հիմքում երկու խորաքանդակ դոտիներով առաջացած ժապավենը եզևնաձև փորված զարդանախշեր ունի, որոնք ընդմիջվում են ներձկված փոսիկով: Իրանի ուռուցիկ մասը զարդարված է դժածածկ զիզզադ լայն ժապավենով, որն ընդելուզված է սպիտակ ներկով:

Այս կավամանը իր մի շարք հատկանիշներով հիշեցնում է վաղ բրոնզեդարյան խեցեղենը, սակայն հիմնականում կապվում է միջին բրոնզի խեցեղենի հետ: Օրինակ՝ կավի որակով, գույնով և իր ձևով այն օտար է վաղ բրոնզեդարյան խեցեղենին, սակայն զարդանախշման մոտիվներով դեռևս արձագանքում է նրան. ունի ներձկված փոսիկ, եզևնաձև զարդանախշեր, որոնք արդեն նոր եզանակով են կատարված, ոչ թե սեզմելու կամ դժելու, ինչպես ընդունված էր վաղ բրոնզի շրջանում, այլ կտրելու, փորելու եզանակով:


Ծիշտ նման զարդանախշերով է զարդարված 17 ժաքառակուսում հայտնաբերված դրոշազույն թասի բեկորը (№ 1964/31)՝ դուրս ճկված կլորացող շուրթով և սահուն կլորացող իրանով: Թասի ուսերը նախորդի համեմատ զարդարված են ավելի լայն ժապավենում ընդգրկված սրածայր դործիքի օդնությամբ կատարված եզևնաձև զարդանախշերով, որոնք ավելի խորն են փորված: Ժապավենից ներքև նույնպես զարդանախշեր են՝ կտրելու եզանակով կատարված:

Գժածածկ զիզզադների զարդանախշը մթա: III հազարամյակի սև փայլեցրած, դեզակազմ խեցեղենի ամենասիրված զարդամոտիվներից է: Այն մեծ մասամբ զարդարում է կավամանի վզի վերին մասը և կարծես մի տեսակ ֆրիդի դեր է կատարում (նկ. 87, 1, 13, 14, 32), կամ թե հաշորդ ժապավենում հանդես է դալիս աարաանսակ պաճուճանքներով՝ դժածածկ ժապավենիկներով (նկ. 87)՝ անկյուններով և եռանկյունիներով պարուրված (նկ. 87). Նման զարդանախշերով խեցեղեն հայտնաբերվել է Գառնիում (№ 2234/136, № 2235/69), Դվինում (1959 թ. պեղումներ) և րադմաթիվ օրինակներով հայտնի է Շենդավթում:

Դարավերջում դժածածկ ժապավենները վզից իջնում են կավամանի ուսերին, դառնում պարզեցված, մեկուսի, առանց այլ և այլ զուգորդումների, սակայն դարձյալ նուրբ դժային, սեզմելու եզանակով կատարված: Նման

արդանտխշերով կավամաններ հայտնաբերվել են Ջառչառիսում (նկ. 92., № 1893/3), Լենինականի մսի կոմբինատի մոտ գտնվող դամբանադաշտում (նկ. 93), էջմիածնում (№ 776/71) և Արթիկում (նկ. 92., № 2065):

Քրիալեթիում, Բեշտաշենի ամրոցի հյուսիս-արևելյան մասում, մթա III հազարամյակի շերտի վերին հորիզոնում պծածածկ զիզզազ ժապավենների շարքերով սև փայլեցրած խեցեղենի հետ, շերտադրական նույն պայմաններում հայտնաբերվել են գունազարդ խեցեղենի բեկորներ: Բեշտաշենի խեցեղենի վերոհիշյալ խումբը նույնպես մթա III հազարամյակի վերջով է թվագրվում:



Նկ. 92. Կավամանների փորագրեր զարդանախշերով՝ Ջառչառիսից (1) և Արթիկից (2):

Վաղ հատկանիշներ ունի նաև Բանիսխեվիում հայտնաբերված սև փայլեցրած կավամանը՝ զարդարված գարձյալ զծածածկ, զիզզազ ժապավենով և նրանով առաջացած անկյուններում՝ գծածածկ երկհարկ եռանկյունիներով: Այս կավամանի վրա ևս գծածածկ զիզզազ ժապավենը մոնումենտալ է, իսկ նրա անկյուններում ամփոփված եռանկյուն մեջ դասավորված երկհարկ գծածածկ սեպեր-եռանկյունիների սկիզբը կարելի է փնտրել մթա III հազարամյակի խեցեղենում, որի նախաափայր հանդիպում է Կառնուտի խեցեղենի վզի հիմքի զարդանախշերում՝ կաաարված սեղմելու, սկոսային եզանակով (№ 1478/38): Այդ զարդանախշի նուրբ գծային եզանակով կատարված բազմաթիվ օրինակները կարելի է աեսնել Շենդավթի խեցեղենի

վրա, նրանով են զարդարված մեանդրներով առաջացած անկյունները (№ 1442/86, № 1618/90, 241, 243):


Վրաստանում Բանիսխեվիի կավամանին ժամանակակից կարելի է համարել իրավիճակում պեղված առաջին դամբանաբլուրի № 2 դամբարանի երկկոնաձև սև փայլեցրած նրբախեցի կավամանը՝ ուսերի վերին մասում երկշարք, դադաթներով իրար ուղղված եռանկյունիներ և նրանցից ցած, իրանի միջին մասում վերը նկարագրված սուրանկյուն գծածածկ եռանկյունիների զարդանախշը, որը զուգորդվում է ներձկված փոսիկի հետ:

Այսպիսով, գծածածկ զիզզազ ժապավեններով զարդանախշը, ինչպես Գառնիի վերոհիշյալ կավամանների օրինակով, այնպես էլ նրա զուգահեռ-


¹ Б. А. Куфтин, նշվ. աշխ., էջ 112, 116—117, ադ СХХІ СХХІІ:

² К. Х. Кушнарева, Новые данные о поселении Узерлик-тепе, стр. 90, рис. 20, стр. 96, рис. 28.

³ Պեղումները Տ. Չուբինիչվիուս



Տախտակ VI. Թռչնագործի Հիդրիա Գաներից:




ներում հանդերձ, միջին բրոնզի դարաշրջանում դառնում է մոնումենտալ, դերիշխում է ամբողջ կավամանի վրա և, ի տարբերություն նախորդող փուլերի, նոր եղանակով է կատարվում՝ փորագրվում է:

Հնաշենի դամբանաբլուրներից մեկի (№ 14) շեկ-դեղնավուն խեցեղենի նույնպես դարդարված է միայն խոբաօանդակ, դժածածկ ղիղղադ ժապավենով (№ 2049/233, 239, 24 և այլն):

Նման զիզղադ մեկուսի ժապավեններ հանդես են գալիս նաև դունաղտրդ խեցեղենի վրա: Օրինակ, էջմիածնի թանգարանից բերված կճուճներից մեկի փայլուն, կարմիր ֆոնի վրա զիզղադ ժապավեն է նկարված սև փայլուն ներկով (№ 556/26):

Գտնիի վերոհիշյալ կավամանների վրա եղևնաձև ակոսաշարը իր ղուղաճևներն ունի Թրիալեթի VI դամբանաբլուրի խեցեղենում, միայն այն տարբերությամբ, որ վերջինիս վրա այն կատարված է ռելիեֆ գոտու թևը կողերի վրա (վՊԹ № 9—63—103):



Նկ. 93. Գալութ Լևնիսկանից:

Այս խմբի մեջ մտնող մեկ այլ մոխրագույն խեցու ընկոր ունի դժածածկ, անկյունավոր ժապավեններ (աղ. XXXI, № 1964/31): Այն կատարված է նույնպես խորր ակոսներով, փորագրելու եղանակով և կարելի է թվագրել նույն ժամանակով, ինչ որ նախորդները: Նրա ղուղաճևներին հանդիպում ենք Ուղբրիկ-Թեփեկի ստորին շերտի խեցեղենում¹, Վրաստանում՝ Սարիթ-Ուղշայի դամբանաբլուրներում², Թրիալեթի VI (վՊԹ № 9—63—401), XIV (վՊԹ № 9—63—671), XVI, XXXVI (Թուփ-քար № 1) դամբանաբլուրներում և այլն:

Վերոհիշյալ խմբի մեջ մտնող սև փայլեցրած հաստախեցի կավամանի ընկորը (1965 թ. № 10) նույն շերտին է վերաբերվում և հայտնաբերվել է նախորդներին բավականաչափ մոտ, 20 ժ քառակուսում: Այն դարդարված է խորր կտրած, թեք, տարբեր ուղղություններով տարածվող ղուղաճև դժերի խմբերով, որոնք սահմանադասվում են հորիզոնական գոտիներով (աղ. XXXI): Այդ ղուտիներով առաջացած ներքևի, երրորդ ժապավենում, թեք դժերը ամբողջ մակերեսը շին ղրաղեցնում, նրանով առաջացած անկյունում սև փայլեցրած մակերեսի վրա ուղղահայաց դիրքով երկք կետեր են շարված:


Այս խեցին իր կետային և ուղղադիծ դարդերի համադրությամբ կարելի է համարել մթա III հաղարամյակի խեցեղենի ժառանգորդը: Ուղղադիծ երկրաչափական ֆիգուրների կետադարձումը խիստ բնորոշ է Կիրովականի՝ մթա III հաղարամյակի խեցեղենի համար: Այն բաղամասիվ օրինակներով հայտնի է Քոսի-ճոթեր բնակաանգլից (№ 2127/1, 2, 6, 7, 36, 37, 1961 թ. № 13, 17, 20,), Թաղավորանիստից (№ 1475/25, № 2188/8), Մաշտոցի բլուրից (կդթ.

¹ К. Х. Кушарева՝ նշվ. աշխ., էջ 87, նկ. 17., 18, 23:

² О. Джапаридзе, Археологические раскопки в Триплетти в 1957—1958 годах, стр. 43, табл. VI, VII.

№ 47, 49, 50), Գառնիի բնակատեղիից (№2234/1331): Վրասսանում այն բնորոշ է Կանաչ-թեփե դամբանաբլուրի խեցեղենին¹, ինչպես նաև Թրիալեթիի XI² և Թեթրիժարոյի դամբանաբլուրներին: Զարդանախշման այս եզանակը շարունակվում է նաև Թոփ-քար № 2 դամբանաբլուրում³:

Այսպիսով, Գառնիի փորադիր զարդանախշերով խեցեղենի վերոհիշյալ խումբը անշուշտ նախորդել է Կիրովականի դամբանաբլուրի խմբին, ժամանակակից է Թրիալեթիի միջին բրոնզի V, VI, XVI, XVII, XXXIV, XXVI (Թոփ-քար № 1) և XLV (Թոփ-քար № 2) դամբանաբլուրներին, հետևա-



Նկ. 94. Շաղանակազույն կճուճ կետադիժ զարդանախշերով՝ Գառնիից:

բար նախորդել է նաև Կիրովականի խմբին հասակակից Թրիալեթիի I, III, VII և XV դամբանաբլուրներին⁴:

2. Կևաադիժ զարդանախշերով խեցեղեն:

Նման զարդանախշերով մեկ ամբողջական կճուճ է հայտնաբերվել կոլխոզի դոմբրի մոտ՝ վերը նկարադրված թռչնազարդ հիդրիայի հետ:

¹ Б. А. Куфтин, Археологические раскопки 1947 г. в Цалкинском районе, табл. XXIV.

² Նույն տեղում: Նույնի, Археологические раскопки в Трналети, стр. 407. ադ XXXVI.

³ Ս. Джапаридзе, նշվ. աշխ., էջ 40, 43, ադ. II;

⁴ Թրիալեթիի նյութերի հետ մանրամասն ծանոթանալու համար շնորհակալություն օժ հայանում Վրասսանի պետական թանգարանի աշխատակից է. Գոգաձեին:

(աղ. XXXII, № 1963/86): նրանց ուսերը զարգարված են բարձրագույն բուսական-կյունիների շղթայով, կատարված ատամնաշար դրոշմիչով:

Բացի այդ, ընկատեղիի II տեղամասը 15 ա քառակուսում, վերը նկարագրված մոնոխորում հիդրոանների բեկորների հետ, որոնք զարգարված էին վայրի կենդանիներով, թռչուններով և կարապներով, հայտնաբերվել են նաև խողովակաձև բարձր վղով, ուռուցիկ ուսերով սև փայլեցրած և բաց դարչնագույն կճուճների մասեր (1966 թ. № 35), որոնք զարգարված են ատամնաշար դրոշմիչով (աղ. XXXI, 5):

Սե փայլեցրած կճուճների բեկորներն ունեն վարդագույն ասառու: Մեկի վղի հիմքում խորաքանդակ դոտիներով առաջացած ուլիեֆ ղուլզ ժայռավանդները պարզարված են խիտ դասավորված ատամնաշար թեք դժերով:

Մեկ այլ կավամանի ուռուցիկ մասում, ոչ շատ խոր դոտիներով առաջացած ժայռավանդ ծածկված է դարձյալ ատամնաշար թեք դժերով: Նույն զարդանախշը կրկնվում է նաև բաց դարչնագույն խողովակաձև վղով կճուճի վրա: Այն վղի հիմքում ունի ուլիեֆ ժայռավանդ ատամնաշար թեք դժերով, իսկ ուսերին ունեն անկյուն կաղմող կամ եղևնաշար դասավորությամբ զարդանախշեր, որոնք վերեից և ներքեից եղբրված են խորաքանդակ հորիզոնական դոտիներով (աղ. XXXI):

Նկարագրված կճուճների բեկորներն իրենց ձևով, սև փայլեցրած մակերեսով և վարդագույն առտառով, ինչպես նաև զարդանախշերով ու կատարման եղանակով իրենց անմիջական ղուղահեռներն ունեն Կիրովականի դամբանաբլուրի խեցեղենում:


Կիրովականի սև փայլեցրած բոլոր կճուճները վղի հիմքում ունեն մեկ կամ երկու ուլիեֆ դոտիներ, որոնց մեծ մասը ծածկված է Գառնիի տիպի ատամնաշար, թեք դժերներով (աղ. XXVI): Նման կճուճների մեծ մասի ուսերը զարգարված են ղիդդադ, խոշոր ժայռավանդներով, որպիսին մենք տեսանք II խմբի I ենթախմբի թաղարի վրա, սակայն ծածկված սչ թե ուլիդ, այլ ատամնաշար դժերով:

Հաճախ այդ ղիդդադ ժայռավանդներով առաջացած անկյունները դարձյալնում են ատամնաշար դժածածկով եռանկյունիները (№ 1861/10 և 11ա, դ, ղ), կամ փորագիր օղակներով եռանկյունիները (№ 1861/11 և): Այս զարդանախշերը մեծ մասամբ լցված են սպիտակ ներկով:


Այսպիսով, ինչպես Գառնիի սև և բուրգ դարչնագույն խեցեղենի վերոհիշյալ խմբում, այնպես էլ Կիրովականի դամբանաբլուրի խեցեղենում երևան է դալիս զարդանախշման մի նոր եղանակ, որն օտար է միջին բրոնզի վաղ փուլին: Փաստորեն այսպեղ մենք տեսնում ենք ղունաղարդ ալիքների խմբապիսի կատարված նոր եղանակով:

Շեղանկյունաձև դաշտերի և հորիզոնական ժայռավանդի մեջ ամփոփված նման խորաքանդակ ալիքներով է զարգարված նաև նորատեսում հայտնաբերված սև փայլեցրած, հիդրիայի տիպի կճուճը (գտնվում է նոր Բայազետի դավառագիտական թանգարանում):

Ատամնաշար «քայլող» դրոշմիչով կատարված զարդանախշերն հաակասիս ընթրոշ են Թրիալիթիի միջին բրոնզի դամբանաբլուրների խեցեղենին, որտեղ այն հանդես է դալիս նորագեղ տարատեսակ երկրաչափական ֆիդուրների մեջ ամփոփված: Որոշ դամբանաբլուրներում (I, VII) նրանք կատարված են ճիշտ նույն եղանակով կավամանների վղի հիմքի ուլիեֆ դո-



Տախտակ VII. Ինքուճեհր Կախաճեհր (ճախեհր) և Արախաճեհր (ախեհր) :



տիներն Վրա, ինչպես Գառնիում և Կիրովականում (ՎՊԹ № 9—63—46, 532, 533, 535, 537): Բացի այդ, Թրիալեթի I և VII դամրանարությունները Գառնիի և Կիրովականի հետ առնչվում են նաև հիդրիայի տիպի դունազարդ Կավամաններով¹:

Այսպիսով Գառնիի խեցեղենի վերոհիշյալ խումբն իր ազերսներն ունի Կիրովականի դամրանարություն, իսկ վերջինիս ժամանակակից է Թրիալեթի XV դամրանարություն, որը մի շարք գիտնականների և Կ. Շեֆֆերի կողմից թվագրվում է մթա 1550—1400 թթ.²: Չնայած դրան, Կիրովականի դամրանարության նյութերն իրենց զարգամոտիվներով դեռևս սերտորեն առնչվում են մթա III հազարամյակի մշակույթի հետ:

Ինչպես անսանք, Կիրովականի կավամանների ուսերի զիզզող ժապավենները երբեմն դարդարված են եռանկյունիներով, երբեմն էլ սուրանկյուն կարճ ժապավենների համադրությամբ (№ 1861/11ր): Ջարդանախշման այս եղանակը, ինչպես վերը անսանք, շատ ընդունելի է Շենդավթի նրադիծ զարդանախշերով խեցեղենին: Մթա III հազարամյակում բավականաչափ սիրված դժածածկ մեանդրները (նկ, 87) Կիրովականի կճուճների վրա վերածվում են շարունակական շրջանակների, զարդարված փոքրիկ օղակներով (ադ. XXVI₃, № 1861/8): Սև փայլեցրած որոշ կճուճներ զարդարված են ուլիեֆ կարճ ժապավեններով, որոնք երբեմն ավարավում են կիսադնդերով (ադ. XXVI₃, № 1861/9), երբեմն էլ նշաձև ուլիեֆ զարդերով (№ 1861/19): Խեցեղենի այս խումբը ևս վերապրուկային ձևով կրկնում է մթա III հազարամյակի զարդանախշերը: Ռեզիեֆ կիսադնդերն ավելի ընդունելի են խեցեղենի էլարի խմբին, իսկ նշաձև վերջավորվող դոսիները՝ Քաղախի (№ 1900/38), Կառնուաի խեցեղենին (№ 1478/7):

Ջարգամոտիվների կապը կարելի է անսնել նաև Կիրովականի դունազարդ կճուճների վրա: Օրինակ՝ դունազարդ մեծ հիդրիայի զարդանախշերում շեզանկյունաձև հրապարակները՝ կենտրոնում համակենարոն շրջան (ադ. XXXIII₂, № 1861/27), կրկնում են խեցեղենի Շրեշ-բլուրի խմբի զարդանկարը: Մեկուսի շեզանկյուններ՝ կենտրոնում փոսիկ, ընդունելի է Մաշտոցի բլուրի խեցեղենին, երկծալ շեզանկյուններ՝ Շենդավթին (№ 1618/28, № 1330/131) և այլն:

Կիրովականի նկարագրված հիդրիայի զարդանկարին ավելի մոտ է Քոսիճոթերում հայտնաբերված սև փայլեցրած խեցու ընկորի զարդանկարը, որտեղ գծածածկ ժապավեններով և վերևից անկյունային ժապավենով առաջացած շեզանկյունաձև հրապարակի կենտրոնում դժված է գծածածկ շեզանկյուն (1965 թ. № 9):

Կիրովականի դունազարդ խեցեղենը իր որոշ զարգամոտիվներով, օրինակ, շրջանակների մեջ առնված բազմաշար ալիքների զարդանկարով, որոնցով զարդարված է հիդրիաներից մեկի ուսերի զարդադոսին (№ 1861/22) առնչվում է նաև խեցեղենի Քաղաքենդի խմբի հետ:

¹ Б. А. Куфтин, Археологические раскопки в Трпалетп, стр. 80, рис. 89, стр. 399 табл. LXXXII.

² G. F. A. Schaeffer. Stratigraphie Comparee et de l'Asie Occidentale, London, 1948 p. 509.

Սակայն կապը մթա III հազարամյակի հետ ավելի ցայտուն է արտահայտվում առյուծազարդ ոսկե թասի միջոցով: Նրա շուրթից ցած անցնող միահյուսվող զույգ դծիկածածկ զիդզադ ժապավենների շղթան, մթա III հազարամյակի նրբադիծ երկրաչափական զարդանախշերի ամենասիրված զարդամոտիվն է: Ինչպես վերը հիշատակվեց, նման զիդզադ ժապավենները, որոնք կավամանների շուրթից ցած մի տեսակ ֆրիզի դեր են կատարել, հայանի են Գառնիից, Դվինից, բազմաթիվ օրինակներով՝ Շենյավթից, իսկ միահյուսվող դծածածկ զիդզադի անմիջական զուգահեռը դարձյալ Շենյավթում է (նկ. 87ա, № 1618/35):

Նույնը կարելի է ասել նաև առյուծներից ցած երիզաժապավենի մասին. որը զարդարված է կետածածկ, հակառակ դասավորությամբ եռանկյունիների շարանով: Այս զարդանախշի անմիջական զուգահեռները դարձյալ Շենյավթում են (նկ. 87ա, № 1442/130, № 1330/131): Վերջապես առյուծների արբեր մասերի կետազարդումը, ինչպես վերը ասանք, շատ սիրված եղանակ է Կիրովականի Քոսի-ճոթերի նույն խեցեղենի երկրաչափական զարդանախշերի համար:

Առյուծազարդ թասն իր երկրաչափական զարդանախշերով և նրանց կատարման եղանակով այնքան հարազատ է մթա III հազարամյակի խեցեղենին, որ եթե այն հայտնաբերված չլիներ դամրանարևուրի կոմպլեքսում, ապա կարելի էր առանց տատանվելու վերադրել վազ բրոնզի մշակույթին:

Կիրովական-Քրիալեթի վերոհիշյալ խումրն իր բազմահարուստ նյութերով կարելի է համարել միջին բրոնզի ժազկման ժամանակաշրջան և դասական դունադարդ խեցեղենի դադաթնակետ:

Կիրովականին անմիջականորեն հաջորդող օղակը կարելի է համարել Նորաառուի խեցեղենը, որը դեռևս պահպանում է Կիրովականի ատամնաշար, փորելու եղանակով կատարված զարդանախշերը, սակայն դունազարդ հիդրիաներն ավելի ձգված են, զարդանկարը պարզեցված է: Մյուս կողմից երեկվան է դալիս նոր ափալի զարդանախշ (եռանկյունիների մեջ ամփոփված բազմաշար դիդզազներ), որն, ինչպես ճիշտ նկատել է Հ. Մարտիրոսյանը, իր ծաղկումն ու տարածումն է դառնում ուշ բրոնզի և նրան հաջորդող դաբաշըրջաններում¹:

4. Գառնիի ընկատեղիում հայտնաբերվել են նաև ըջիջաջար, կետաշար դրոշմազարդ խեցեղենի բեկորներ (ազ. XXXII, № 1964/4, № 2144/13, № 2099/34 և այլն), որոնք իրենց կատարման եղանակով և զարդամոտիվներով կապվում են Աևանդէսի դամրարանային խեցեղենի (№ 1985/1—8), Ուզբրիկի նմանատիպ խեցեղենի հետ և հավանաբար նույնպես վերաբերվում են միջին բրոնզի վերջին փուլերին:

Իհարկե, շերտադրություն ավող ընկատեղիների ուսումնասիրված չլինելու պայմաններում միջին բրոնզեդարյան նյութերին ամբողջական և ճիշտ դնահատական աալը, ինչպես և թվադրությունը ճշտելը դեռևս դժվար է:

Այնուամենայնիվ, Գառնիում հայտնաբերված վերոհիշյալ նյութերը մի անընդմեջ շղթա են կազմում և ապացուցում, որ միջին բրոնզի մշակույթն առաջացել է տեղական վազ բրոնզեդարյան մշակույթի ամուր հիմքի վրա և նրա ավանդույթների անմիջական շարունակողն է: Այդ նկատի ունենալով է,

¹ А. А. Мартиросян, «24. աշխ., էջ 73—74 ադ. IV»:

որ մենք այս գլխում գուցե և չափից ավելի տեղ ենք տվել խեցեղենի մանրամասն նկարագրությանը և ղուգահեռներին:

Այսպիսով, կարելի է անել այն հետևությունը, որ այս մշակույթն ստեղծող ցեղերը վաղ բրոնզեդարյանի անմիջական ժառանգորդներն են:

Սակայն գիտության մեջ տեղ են դրել տեսակետներ, որոնցով ցանկանում են հերքել այդ մշակույթների միջև եղած կապը:

Գիտնականների մի մասի կարծիքով Միջին Արևելքում մթա III հաղարամյակի վերջում և II հաղարամյակի սկզբին ծայր են առնում մասսայական գաղթեր և «Քուտ-արաքսյան» մշակույթը կրող ցեղերն էլ ինչ-որ պատճառով լքում են իրենց բնակատեղիները և այդ մշակույթի հեռագա դարձնումն այստեղ ընդհատվում է¹. որ «Քուտ-արաքսյան» բաղմաթիվ բնակատեղիներում այդ մշակույթից հետո կյանքի հետքերը բացակայում են, որպես օրենք մինչև ուշ բրոնզի դարաշրջանը²:

Որոշ գիտնականներ հենվելով մի շարք ոչ ճիշտ տվյալների վրա, գալիս են այն եզրակացության, որ սկսած մթա III հաղարամյակից «Քուտ-արաքսյան» էլեմենտները դուրս են մղվում և մասամբ կլանվում Առաջավոր-ասիական ցեղերի կողմից³: Սակայն ուսումնասիրությունները գալիս են հերքելու վերոհիշյալ տեսակետները: Հայկական լեռնաշխարհում ներկայումս մի շարք բնակատեղիներ են հայանի, որոնցում կյանքը մթա III հաղարամյակից հետո չի ընդհատվել, այլ անընդմեջ հարաանել է մինչև ուշ միջնադար: Ինչպես վերը ասանք, նման բնակատեղիներից է Գառնին: Մուսաննաթ-թափայում նույնպես միջին բրոնզի դունադարդ խեցեղենին նախորդում է III հաղարամյակի էլարի ափի խեցեղենը⁴, և հտջորդում ուշ բրոնզե դարը: Զրահովաում վաղ բրոնզեդարյան բաղմաշերտ բնակատեղիին հաջորդում է միջին բրոնզի դունադարդը: էլարի ուրարտական ամրոցի ստորին ջերաում մթա III հաղարամյակի բնակատեղիի է եղել, չնայած պեղումներ չեն կատարվել, սակայն նրա մակերեսից հավաքված նյութերը ինչպես և դամարանների պեղումներն ապացուցում են, որ միջին և ուշ բրոնզի շրջանում այն նույնպես բնակեցված է եղել: Նախիջևանի Քյուլ-թափա I և II-ում դարձյալ մթա III հաղարամյակի մշակույթին հաջորդում են միջին բրոնզի, ինչպես և ուշ բրոնզի դունադարդ խեցեղենով շերտերը⁵: Ղարարաղի Գեոյ-թեփե դյուղի բնակատեղիի մակերեսից հավաքած նյութերը վերարերում են և՛ վաղ բրոնզի մշակույթին և՛ միջին բրոնզին⁶:

Վերջապես Մեծամորում շերտագրական ավյալներն ապացուցեցին, որ սկսած մթա III հաղարամյակի սկզբից կյանքն անընդմեջ շարունակվել է նաև միջին և ուշ բրոնզի ժամանակաշրջաններում:

¹ Л. Вулли, Материалы трех глав 2-й части I тома «Истории научного и культурного развития человечества», стр. 101.

² J. Mellaart, The End of the Early Bronze Age in Anatolia and the Aegean, American Journal of Archaeology, 62, 1958, N 1, p. 910.

³ Г. Меликишвили, Возникновение Хеттского царства и проблема древнейшего населения Закавказья и Малой Азии, ВДИ, 1(91), М., 1965, стр. 25.

⁴ Б. Пиотровский, Археология Закавказья, Л., 1949, стр. 44.

⁵ О. Абибуллаев, Археологические раскопки в Кюльтепе.

⁶ А. А. Иессен, Из исторического прошлого Мпльско-Карабахской степи, стр. 16.

Հիմքից զուրկ է նաև այն տեսակետը, որ «Քուռ-արաքսյան» մշակութային ավանդույթների անմիջական շարունակությունը միջին և ուշ բրոնզի նյութերում դժվոր է գանել: Ինչպես վերը ասանք, Գտոնիի և ընդհանրապես Հայկական լեռնաշխարհի մթա III հազարամյակի և միջին բրոնզի նյութերի համեմատական քննությունն ապացուցում է լրիվ հակառակը: Անցումներ նկատվում են ոչ միայն խեցեղենի ձևերի (օրինակ, ընկույզի տապակի տիպի ներձկումներով թասերը, որոնք սևիզը են առնում մթա III հազարամյակում և շարունակվում ուշ բրոնզի դարաշրջանում ևս), այլև դարդանկարի թեմատիկ սյուժեների, առանձին մանրամասների կրկնությունների, պաշտամունքային պատկերումների մեջ: Միջին բրոնզի որոշ դամբանաբլուրներում նոր ձևեր և զարդանախշեր կրող կավամանների կողքին, վերապրուկային ձևով կրկնվում է մթա III հազարամյակին բնորոշ խեցեղենը: Այդ լավ նկատելի է նաև Քրիալեթիի մի շարք դամբանաբլուրների նյութերում, օրինակ, V դամբանաբլուրում մենք հանդիպում ենք սև փայլեցրած լայնակոս ներձկված զարդանախշերով (ՎՊԹ 9—63—295, 296) և էլարի խեցեղենի տիպի՝ թեք ակոսներով առաջացած, անկյունում ուղիղ ելուստով խեցեղենի բեկորներ (ՎՊԹ 9—63—293) կամ սև փայլեցրած խեցի՝ նարնջագույն աստառով, վրան ուղիղ ելուստ և իրար մեջ հադած փորագրի անկյունների շարան (ՎՊԹ 3—63—298): Հանդիպում են միջամասում ներձկված լայնագրի կանթեր, որոնք բնորոշ են Շենդավթին (ՎՊԹ № 9—63—310), ինչպես նաև մթա II հազարամյակի վերջով թվագրվող Քրիալեթիի դամբանաբլուրին: Նույն պատկերը մենք տեսնում ենք նաև VI դամբանաբլուրի նյութերում. դարձյալ նույն Շենդավթի տիպի կանթեր, սև փայլեցրած խեցեղենի բեկորներ՝ զիզադ բազմաշար կարած զարդանախշերի և ներձկված փոսիկների համադրությամբ (ՎՊԹ № 9—63:386), կամ ներձկված ակոսների և ուղիղ ելուստի համադրությամբ (ՎՊԹ № 9—63:287, 288): VIII դամբանաբլուրի սև փայլեցրած կավամաններից մեկի վրա, լայնակոս ալիքաձև զույգ դոտիներով առաջացած անկյունները զարդարված են ներձկված փոսիկներով (ՎՊԹ № 9—63—607): Ինչպես վերը նշվեց, միջին բրոնզի խեցեղենի ձևերն ու զարդամոտիվները իրենց հերթին փոխանցվել են ուշ բրոնզի մշակույթին:

Մետաղե իրերի նմանությունը երբեք չի կարող հիմք ծառայել Առաջավոր-ասիական ցեղերի ներթափանցումը և «Քուռ-արաքսյան» էլեմենտների դուրս մղվելն ապացուցելու համար:


Ինչպես վերը ասանք, Հայկական լեռնաշխարհը մետաղի վազ փուլերից սկսած Առաջավոր-ասիական երկրներին մատակարարել է շինարարական քար, փայա և ձուլվածքներ, հետևաբար սերտ համադրականության մեջ է եղել նրանց հետ, ազդել և փոխազդվել է նրանցից և այդ նմանությունները լրիվ րացատրելի ու հասկանալի են:

Չնայած մենք դեռևս չենք կարող ներկայացնել միջին բրոնզի դարաշրջանի բնակարանային կոմպլեքսներն ու նրանց ճարտարապետական ձևվերը, սակայն Կարմիր բլուրի նախաուրարտական բնակատեղիի պեղումները հնարավորություններ են ստեղծել վերականգնելու այն նաև վերոհիշյալ ժա-

¹ Г. Меликишвили, *նշվ. աշխ.*, էջ 20.



Տախտակ VIII. Թռչնագարդ և ձկնագարդ կնուններ էլարից:



մսնակաշրջանի համար, ապացուցելով, որ մթա III հազարամյակի մշակու-
թային ավանդույթները պահպանվել են ուշ բրոնզի դարաշրջանում ևս:

Կարմիր բլուրի նախսուրարտական շերտում, ինչպես մթա III հազար-
ամյակի ընկալիչներում, կլորացող պլանով կացարանի շուրջը համա-
խմբված են օժանդակ շինություններ¹: Նրանց քարերով կառուցված հիմքի
վրա բարձրանում են աղյուսաշեն պատերը: Այդ ընկալարանային կոմպլեքս-
ներին նույնպես ընդհանրապես հասցահատիկի հորեր, աղորիքներ, սանդեր, սանդ-
կոթեր, կրակարան-օջախ և կուռքեր: Շատ դեպքերում միանման են հա-
տակը, ծածկը, դռան կտրվածքը, կառուցողական և ճարտարապետական
յուրահատկությունները²: Այսպիսով, ինչպես Հ. Մարաիրոսյանն է նկատել,
«Հին ավանդույթները պահպանվել և զարգացել են ոչ միայն բնակարանա-
շինության, այլև նյութական արագորության և տնտեսության հիմնական
հյուղերի, հետևարար նաև դադափարախոսության ասպարեզում»³:

Գիտական հիմքից զուրկ է նաև Չ. Բարնեյի կողմից Թրիալեթիի մշա-
կույթի հակադրելը «Քուտ-արտքայան» կամ, ինչպես ինքն է անվանում,
«Արևելա-անատոլիական մշակույթի հետ»⁴: Առաջնորդվելով նախօրոք ձևա-
կերպով կոնցեպցիայով, ըստ որի հնդեռոպացի խեթերը պեթ է գալին
Կովկասի վրայով Կենտրոնական Անատոլիա, նա աշխատում է Թրիալեթիի
դամբանարևոլորների նյութերն ու նրանց թվագրությունը կապել Հյուսիսային
Կովկասի և Տրիպոլիսի հետ: Թրիալեթիի դամբանարևոլորների վաղ թվագրու-
թյունը բխեցնում է խեցեղենի՝ կարևոր եղանակով սաացված զարդանախ-
շերից, որը նա համարում է Հյուսիսի տափաստանային դոտու եկվորների
կողմից բերված⁵: Թրիալեթիի մետաղե իրերի զարդանկարները նույնպես
կապում է այդ եկվորների մշակույթի հետ⁶: Այդ եկվորներին նա համարում
է հնդեկրոպացիներ, որոնց մեջ կային և խեթեր⁷: Նրանց երեքը Թրիալե-
թիում հնարավոր է համարում մթա 2100—2000 թթ. միջև ընկած ժամանա-
կաշրջանում: Թրիալեթիի XXIX դամբանարևոլորը համարում է այդ մշակույթի
վերջը և այն թվագրում մթա XVIII դարով, ելնելով միայն նրանից, որ
դամբանարևոլորում սայլ է հայտնաբերվել, որը նա համարում է հյուսիսային
տափաստաններից եկվորների ապացույց, հետևարար նաև Թրիալեթիի ընկա-
լության կազմի մեջ փոփոխության արդյունք⁸: Քանի որ նման սայլ հայտ-
նաբերվել է նաև Շրեշ բլուրում, դրում է Չ. Բարնեյը, ուստի այդ եկվոր-
ները հասել են մինչև Արաքսի միջին հոսանքը⁹:

Այսպիսով ստացվում է, որ հյուսիսային տափաստանային դոտու ընա-
կիչների գաղթը ծայր է առել դեռևս մթա III հազարամյակի սկզբներից (Շրեշ-
բլուրը այդ ժամանակաշրջանով է թվագրվում) և ընդգրկել է Արարատյան
դաշտավայրը, որն առնվազն անհեթեթություն է:

Մյուս կողմից, եթե նմանություններ կարելի է տեսնել Թրիալեթիի և

¹ А. Мартirosян, Город Тейшебаниш, Ереван, 1961, стр. 25.

² Նույն տեղում, էջ 29:

³ Նույն տեղում:

⁴ С. Burney, Eastern Anatolia..., p. 175.

⁵ Նույն տեղում, էջ 176, 178:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում:

Տրիպոլիի որոշ զարդամոտիվներում (որը քիչ հավանական է), ապա այն կարելի է դիտել միայն որպես մշակութային փոխազդեցությունների հետևանք:

Ինչպես վերը ասանք, Քրիալեթիի դամբանաբլուրների նյութերը բազմաթիվ թելերով կապված են III հաղարամյակի մշակույթի հետ: Հաղ բրոնզի III փուլով թվագրվող դամբանաբլուրների (XI, XLVI, Քեթրիծղարոյի 1957 թ. պեղումները) բարձրարվեստ, կարելու եղանակով կատարված երկրաչափական զարդանախշերով խեցեղենը ոչ թե Հյուսիսի հետ է կապվում: այլ իր ամուր արմատներն ունի Կիրովականի, մթա III հաղարամյակի հուշորձաններում, Շենդավթում, իսկ Բեդենիի խեցեղենը համատեղում է նրբրադիծ-կեսածածկ զարդանախշերով խեցեղենը՝ էլարի տիպի ներձկված փոսիկներով խեցեղենի հետ:

Քրիալեթիի դունաղարդ խեցեղենը, որը Հայկական լեռնաշխարհի գունազարդի կրկնությունն է և կարծես միևնույն բրուտանոցում լինի պատրաստված, Չ. Բարնեյր համարում է պարսկական², ապա ինքը ևս կասկածում է նրա պարսկական ծագման վրա, դարմանում, թե այդ արդյոք որանդից է ասրածվել Քրիալեթի³:

Քրիալեթիում հայտնաբերված մետաղե իրերը ավելի շուտ կապվում են Հարավի և Հայկական լեռնաշխարհի, Կենտրոնական Անատոլիայի հետ, քան Հյուսիսային Կովկասի:

Այսպիսով, ինչպես վաղ բրոնզի, այնպես էլ միջին բրոնզի դարաշրջանում, Հայկական լեռնաշխարհը՝ Քրիալեթին ներառյալ, մշակութային մի ընդհանրություն են ներկայացրել, ունենալով իրենց տեղական բնորոշ յուրահատկությունները: Միջին բրոնզի դարաշրջանում ես Քրիալեթին լինելով այդ լայնածավալ մշակութային միասնության ժայռամասը, անշուշտ պետք է կրկնել Հյուսիսի որոշ ազդեցությունը:

Քրիալեթիի ասեղնաշար զրոշմիչով կատարված և պարզանախշերով ընդելուղված խեցեղենը ունի դեղարվեստական բարձր արժանիքներ և կատարելություն է հասցված: Նրա կողքին մեծ զարդացում է ապրում փայլեցման նշանակով զարդանախշված խեցեղենը, որն արտակարգ նրբությամբ է բնորոշվում և մեծ առատությամբ հանդիպում Քրիալեթիի միջին բրոնզի դարաշրջանի համարյա բոլոր դամբանաբլուրներում: Հայկական լեռնաշխարհում այն հազվադեպ է, մինչև այժմ հայտնաբերվել է միայն Լճաշենի VI դամբանաբլուրում և իր բնույթով ավելի շուտ կապվում է ուշ բրոնզի մշակույթի հետ: Քրիալեթիում չափազանց սակավ է դունաղարդ խեցեղենը, սակայն Հայկական լեռնաշխարհում այն բացարձակ գերակշռություն է կազմում և հայանի է իր տարատեսակներով:

Այսպիսով, տեղական, վաղ բրոնզեդարյան մշակույթի ամուր հիմքերի վրա բարձրացված միջին բրոնզեդարյան մշակույթի կրողներն անշուշտ մթա III հաղարամյակի տեղաբնիկների ժառանգորդներն են և միևնույն կիսնիկ հաղմն են ունեցել: Որոշ փաստեր հնարավորություն են առաջին ենթադրելու, որ Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկները խորրիտներն են եղել:

Մթա II հաղարամյակի սկզբներին Մերձավոր Արևելքի քաղաքական կյանքում նշանավոր դեր է կատարել խուրրո-Միտանական պետությունը, որի

¹ C. Burney, Երկ. աշխ., էջ 176:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 178:

րաղաքական կենտրոնը անդադրում են Վերին Միջագետքում՝ և Վանա լճի շրջանում¹։ Սակայն աղբյուրները հնարավորություն են ընձեռում խուրրիտների երկիրը գիտել որպես *սի* առանձին թագավորություն, հարևան Միտանների²։ Ուսումնասիրողների մի մասը (Հ. Վինկլեր, Ֆր. Բիլաբել, Ա. Գյոտցե) խուրրիտների հիմնական օջախը, նրանց քաղաքական կենտրոնը տեղադրում էն միտաններից հյուսիս-արևելք՝ Վանա լճի շրջանում³։ Հայանի է, որ Խուրրու-Ուրիտանական թագավորությունը իր ծայրահեղ գագաթնակետին է հասնում մթա II հաղարամյակի սկզբին և, ինչպես տեսանք, նրա գլխավոր օջախներից մեկը գտնվել է Հայկական լեռնաշխարհում՝ Վանա լճի շրջանում։ Սակայն սի շարք գրավոր փաստեր հաստատում են խուրրիտների գոյությունը գեոևս մթա III հաղարամյակում։ Խուրրիտների գոյությունը ակադեմիական շրջանում ապացուցվում է Խարուր գետի հովտում խուրրիտական լեզվով գրանրված աղյուսակներով⁴։ Խուրրիտները սուրարի անվան տակ Միջագետքում երեում են մթա III հաղարամյակից սկսած⁵։ Սիրիա-Պաղեստինում, ապա նուղիում (Կերկուկ) խուրրիտական ասորր մեծ քանակությամբ երեան է գալիս մթա II հաղարամյակի սկզբներին, երբ նրանց կողքին կային սեմիտական ծագում ունեցող ցեղեր, որոնք այդ վայրերի ավելի հին բնակիչներն էին⁶։

Փաստորեն վերոհիշյալ վայրերում խուրրիտները եկվորներ էին։ Նուղիում խուրրիտների կողքին ապրում էին նաև Զագրո-էլամական ցեղախումբեր և, ինչպես պեղումներն են ապացուցում, նուղին, մինչև խուրրիտների երևան գալը, մթա II հաղարամյակի սկիզբը, սկիզբական մշակույթի ասարածման շրջան էր⁷։

Այսպիսով, վերոհիշյալ շրջաններում խուրրիտները, ինչպես տեսանք, մասսայարար երեան են գալիս մթա II հաղարամյակի սկզբներին։ Մյուս կողմից այն փաստը, որ Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան մշակույթը կրող ցեղերը իրոք մթա III հաղարամյակի կեսերից սկսած տարածվում են Սիրիա-Պաղեստին, հնարավորություն է աալիս մասծկու, որ խուրրիտները հավանարտը Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկներն են և աուտեղից են ասարածվել վերոհիշյալ շրջանները։

Վանա լճի շրջանը նույնպես րավականաչափ խիտ էր բնակեցված մթա III հաղարամյակում և կաղմում էր այդ մշակույթի անրածանելի մասերից մեկը, մշակույթ, որի սահմանները ընդգրկելով Վանա լճի շրջանները, հասնում էր մինչև Իրանական Ագրեջան (Գեոյ-թեփե, Յանիկ-թեփե), հյուսիսում՝ Թոնիք (Թրիալեթի), հյուսիս-արեմուտքում ընդգրկելով էրդրումի շրջանը, տարածվում էր մինչև Սվաղ (Զարա և Հաֆիկ) և Մալաթիա (Արդավան, Հեքիմիան), մշակույթ, որի տարածման սահմանները հաստատվում են միայն Հայկական լեռնաշխարհին բնորոշ վաղ բրոնզեդարյան միսուարր սև փայլեցրած խեցեղենով։

¹ Г. А. Меликишвили, Наирн-Урарту, Тбилиси, 1954, З. 93.

² А. Goetze, Hethiter, Churriter und Assurer, Oslo, 1936, էջ 102.

³ Г. Меликишвили, նշվ. աշխ., էջ 95.

⁴ С. Burney, Eastern Anatolia., p. 166.

⁵ Г. Меликишвили, նշվ. աշխ., էջ 102.

⁶ Նույն տեղում, էջ 99.

⁷ Նույն տեղում, էջ 99—100.

Սակայն Հայկական լեոնաշխարհի տեղարնիկների խուրրիտ լինելու լավագույն ապացույցներից մեկը «վիշապի» պաշտամունքն է, որի հուշարձանները ներկայումս հայտնի են Ճորոխի ավազանից մինչև Արագածի լանջերը ներառյալ:

«Վիշապը» որպես երկրորդական աստվածություն հիշատակված է Բողաղ-Քյոյում և Ռաս-Շամրայում հայտնարերված խուրրիտական անքստերում՝ վիշախապ (վիշաշապ) ձևով, որը սղվելով դառնում է վիշապ:

«Վիշապը» որպես խուրրիտական աստվածություն դարձյալ Wisaišarlu ձևով հանդիպում է նաև խեթական աղբյուրներում³:

Ռաս-Շամրայի տեքստերից հետևում է, որ շնայած վիշապը երկրորդական անդ է դրավում, սակայն հանդիսանում է համախուրրիտական դիցարանի աստվածություն⁴:

Գառնիի միջին բոնոսի պարաբոլանի կավամանների չափերը սանտիմետրով

№№	Իրի անունը, նկարագրերը	Ինվենտարի համարը	Բարձրությունը	Տրամագծերը			Վեղի մասնակցությունը
				Գլխի	Դասնի	Հաստի	
1.	Կճուճ սև փայլեցրած, հորիզոնական ղոթաղձով	2144/49	24,5	—	21	9	7,5
2.	— — — — —	2144/50	21	12	21	9,5	7,5
3.	Կճուճ շագանակագույն փորագիր զարդերով	2144/51	17	12	18	7	2,5
4.	Թասեր խորը, լայնարերան, դորագույն	2144/52—54	13	20	22	9,5	—
5.	Թաս գուճագարդ, խորը	2144/59	12,5	16,5	20	10	—
6.	Պնակ ձվաձև, գորշագույն	2144/56	7,5	8	14	8	—
7.	Գավաթ երկկոնաձև իրանով	2144/55	11,5	17	18	7	—
8.	Թաս խորը, գորշագույն	2100/5	11	18	20	8,5	—
9.	— — — — —	2100/6	11	14	19	7	—
10.	— — — — —	2100/7	12	—	20	8	—
11.	— — — — —	2100/8	12,5	17	20	10,5	—
12.	— — — — —	2100/9	12,5	—	18	9	—
13.	Կճուճ գորշագույն, հասարակ	2100/4	18	11	20	7,5	—
14.	Կճուճ կրկնանարկ, մոխրագույն	2100/11	17,5	9	19	8	—
15.	Կճուճ գնդաձև, գուճագարդ	2100/1	23	14,5	25	12,5	4,5
16.	— — — — —	2100/2	25	17,5	24	12	3
17.	— — — — —	2100/3	18,5	12	19	10	3,5
18.	Թաս խորը, գուճագարդ	2098/4	14	22	26	13,5	—
19.	Հիգրիա, գուճագարդ, թունազարդ	1965/224	38	18	32	16	—
20.	Կճուճ, շագանակագույն, կետոդիձ զարդերով	1965/225	22,5	11	19,2	8,5	4,5
21.	Թաս խորը, գուճագուճ, շագանակագույն	1963/83	13	17	21	8	6

¹ Г. Меликишвили, *Եզդ. աշխ.*, էջ 114:

² Նույն աղբյուր. էջ 115:

³ E. Laroche, *Recherches sur les noms des Bleux hittites*, Paris, 1947, *տե՛ս աստվածանունների ցանկը*, Kettischritftexte aus Boghazkol, V *տետր*, արձանագրություն 2, սուրունակ III, տող 4:

⁴ J. Fridrich, *Kleine Beiträge zur churrittischen grammatik*, „Mitteilungen der Vorderasiatisch-ägyptischen Gesellschaft“, XLII, 2, Leipzig, 1939, Z. 47.

Հայկական լեոնաշխարհում «Վիշապի» պաշտամունքը, ինչպես V դիսու-
կանները, սաղմնավորվելով դեռևս վաղ երկրագործական տնտեսության
պայմաններում, մթտ II հաղարամյակում հիշատակվել է որպես երկրորդա-
կան աստվածություն և դարերի ընթացքում «Վիշապ» անունը պահպանվե-
լով հասել է մեզ:

Այսպիսով, Հայկական լեոնաշխարհի տեղադրիկ ցեղերի ստեղծած մշա-
կույթը տնտեսության և տեխնիկայի առաջընթացի պայմաններում բարձա-
վածելով և նոր ձևեր ընդունելով հարատևել է դարեր:

ՈՒՇ ԲՐՈՆՉԻ ԵՎ ՎԱՂ ԵՐԿԱԹԻ ԴԱՐԱՇՐՁԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՀԵՏՔԵՐԸ ԳԱՌՆԻՈՒՄ. ՎԻՇԱՊԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

Գառնիում ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի նյութեր հայտնի են սակավաթիվ օրինակներով:

Վերոհիշյալ դարաշրջանի մշակույթի վերաբերյալ մենք պատկերացում ենք կաղմում Գառնիի ամրոցի պեղումների, զյուզի աարբեր մասերում հողային աշխաասանքների ժամանակ պատահականորեն բացված դամբարան-



Նկ. 96. Ուշ բրոնզեդարյան ընկած հրվանդանի Գառնիի ամրոցի դիմաց:

ների և Գառնիի ամրոցից արևելք ընկած հրվանդանի բնակատեղիի պեղումների միջոցով հայտնարեբրված նյութերով:

Քանի որ Գառնիի ամրոցում ուսումնասիրվող դարաշրջանի բնակավայրը ոչնչացվել է ավելի ուշ ժամանակների բնակիչների կողմից, իսկ ուշ բրոնզեդարյան մեկ այլ բնակատեղի պահպանվել է ամրոցից արևելք ընկած

հրվանգանի վրա, ուստի նյութի շարադրանքը մենք հարմար ենք գտնում սկսել վերոհիշյալ հրվանդանի ընակատեղիի նկարագրությամբ:

Իստոնիի ձորում, Աղատ և Գառնի գետերի գետախառնուրդում վեր է խոյանում մի դատիթափ հրվանդան, որի բարձրագիր հրապարակի վրա ծավալվում է ուշ բրոնզեդարյան ընակատեղին (նկ. 96):

1952 թ. աշնանը այս ընակատեղին (պուղացիները անվանում են «Թաղա»), պեղել է հնագետ Հ. Մարտիրոսյանը¹:

Հրվանգանն ունի ձգված մակերես, որի երկարությունը 270 մ է, իսկ լայնությունը՝ 80 մ, ամենանեղ մասում՝ 70 մ: Ծանապարհը գեպի ամրոց դնում է ձորով, Աղատ գետի վրայով:

Հրվանգանի մակերեսը հարավից-հյուսիս կտրված է կիկլոպյան երկու պարիսպներով (աղ. XXIV): Արևելյան պարիսպը գտնվում է դեպի հրվանգանը սանող ճանապարհի վրա և պաշտպանում է բերդ-սւրոցի մուտքը: Մյուս պարիսպը կառուցված է հրվանգանի ամենանեղ պարանոցի վրա: Այսպիսով, երեք կողմից (արևմտյան, արևելյան և հարավային) անմատչելի ամրոցը պաշտպանված է երկու հղոր պարիսպներով:

Կիկլոպյան պարիսպը լավ է պահպանվել մուտքի հատվածում: Պատերը կառուցված են մեծածավալ ժայռաքեղքներով, որոնք երկու կողմից երեք-ոսկայաման գեր են կատարել, իսկ միջին մասը լցված է նույն քարի ավելի փոքր քեղքներով: Այդ շարվածքի երկարությունը 59 մ է, լայնությունը 7 մ:

Պատը, մոտ 9,5 մ երկարությամբ, հսաակորեն գծագրվում է հարավային կողմից և պահպանվել է մոտ 3 մ բարձրությամբ: Դեպի հյուսիս պատը ձգվում է մոտ 11 մ երկարությամբ: Այս հատվածում այն պահպանվել է 2,5 մ բարձրությամբ:

Արևելյան պարիսպը, որն ավելի շատ է վնասված, նախորդից հեռու է մոտ. 73 մ: Նրա լայնությունը հարավային ծայրում 4,5 մ է, իսկ հյուսիսային ծայրում՝ 7,5 մ: Պատի միջին բարձրությունը 2,5 մ է:

Պեղումների ընթացքում այս երկու կիկլոպյան պարիսպների միջև ընկած ասարածուկում մշակութային հետքեր չեն հայտնաբերվել:

Բնակաանեղին տարածվում է երկրորդ պարսպից ներս, դեպի արևմուտք: Պեղումների ընթացքում հայտնաբերվել են մի շարք բնակարանների հետքեր, որոնք և կոմպլեքսներով են ներկայացված, և առանձին կացարաններով:

Պեղված բնակարանների մի մասը կիսագետնափոր է և գեանի երեսին ոչ մի հեաք չունի (№ 2, 3, 7), իսկ մի քանիսը գետնի երեսին իրենց շուրջը ունեն մանր քարերի կույաներ (№ 1, 4, 5, 6):

Պեղող հնագետը վերջիններս դիտում է որպես ուշ երևույթ: Այս ուշ բնակարանները մեծ մասամբ կոմպլեքսներով են հանդես գալիս:

Հայտնաբերված բնակարանները պլանում ներկայացնում են քառանկյունի կառուցվածքներ, որոնց պատերը շարված են անմշակ քարերով:

Բնակարանային կոմպլեքսներից մեկը բաղկացած է երկու կացարաններից (№ 1, 4): Առաջինը (5,6×3,9 մ²) ուղղված է հյուսիսից հարավ, իսկ նրան կից, ծավալով մի փոքր զիջող, երկրորդ կացարանը՝ (4,2×3,2 մ²) արևելքից արևմուտք:

¹ Խորին շնորհակալություն եմ հայտնում Հ. Մարտիրոսյանին՝ պեղումների օրագիրը տրամագրելու և արդյունքների հրատարակությունը ինձ վերապահելու համար:

Կացարանի պատերը շարված են անմշակ, միջին մեծությամբ քարերով: Առաջին կացարանում խորացվել է 1,63 մ, իսկ երկրորդում՝ 1,7 մ. որից ցած մշակութային շերտը ավարտվում է:

Առաջին կացարանում հայտնաբերվել են աղսրիքի բեկոր, եղան կողոսկրեր և մեծ քանակությամբ սև և կարմիր վալլեցրած խեցեղենի բեկորներ, որոնք վերագրվում են միջին և ուշ բրոնզի մշակույթին:

Հայտնաբերվել են նաև մոխրագույն, հասարակ թաղարների ընկոթներ՝ հատիկաշար և հորիզոնական խորաքանդակ դոսիներով դարդարված:

Կից սենյակում (№ 4) նյութական մնացորդներն աննշան են: Հայտնաբերվել է դեղնավուն մեկ-կանթանի կավամանի մաս, սև փալլեցրած թասի մաս և այլն:

Բնակարանների երկրորդ կոմպլեքսը (№ 5) ընդկացած է երեք կտցարանից. իրար զուգահեռ և կից երկու կացարաններից՝ ուղղված արևելքից արևմուտք և նրանց հեռ միայն մեկ ծայրով միացող՝ հյուսիսից հարավ ուղղված երրորդ կացարանից:

Կացարաններն իրարից տարբերվում են չափերով (առաջինը՝ հյուսիսային ծայրում 2,8×1,6 մ² է, մեջտեղինը՝ 4×2,17 մ² և հարավային կողմինը՝ 3,8×2,4 մ²):

Հյուսիսային ծայրամասի կացարանում մշակութային շերտն ավարտվում է պատի հիմքից 1,04 մ խորության վրա, մեջտեղի կացարանում՝ 0,7 մ և հարավային ծայրի կացարանում՝ 0,76 մ խորության վրա:

Բնակարանների պատերը կառուցված են տարբեր մեծությամբ ընդհանուր քարերից: Բոլոր կացարաններում հայտնաբերվել են ոչ մեծ քանակությամբ խեցեղենի բեկորներ, որոնք նման են նախորդ կոմպլեքսում հայտնաբերվածներին:

Պեղվել են նաև մի շարք մեկուսի կացարաններ (№ 2, 3, 7, 8, 9), որոնք չափերով և ձևով միմյանցից քիչ են ասարկերվում: Բոլորն էլ համարյա կիսադեռնափոր են: Նրանց մեջ ավելի հետաքրքրական է № 7 կացարանը, որի բոլոր պատերն հայտնաբերվել են: Այն ներկայացնում է մի քառակուսի կացարան (4,8×4,2 մ²), մեջտեղից կիսված միջնապատով: Պատերը կառուցված են երկշար քարերով, որոնց միջև եղած ասրածությունը լցված է մանր քարերով: Միջնապատը բավականին հաստ է՝ 0,9—1,0 մ: Արտաքին պատերի հասաությունը 1,2 մ է: Այս կացարանում շերտն ավարտվում է 1,0 մ խորության վրա:

Կացարանում հայտնաբերվել են հաստախեցի սև փալլեցրած կավամանի ընկոթներ, փոքրիկ, սև փալլեցրած խեցեղենի ընկոթներ, ինչպես նաև հասարակ, անփայլ թաղարների բեկորներ՝ հատիկաշար, ժապավենաձև և ղիզղազ, խորաքանդակ դոսիներով դարդարված: Կացարանի արևելյան պատի հիմքի տակ հայտնաբերվել են միջին բրոնզի մշակույթին ընդունակ մոնոխորում խեցեղենի ընկոթներ՝ կարմիր ֆոնի վրա սև դարձանախշերով (աղ. XXXV₂), դարչնագույն կայծքարից ներդիր, հստակ աստմնաշարով (աղ. XXXV), ինչպես նաև մարմնագույն կայծքարից շեղը:

Նախորդներից իր ձևով և չափերով տարբերվում է № 9 կացարանը: Այն քառակուսի է (2,1×1,8 մ²), պատերը կառուցված են մեկ շարք մեծ քարերով:

Այսպիսով, հրվանդանի «Թաղա» կոչվող բնակատեղիում շնչաթմ տևական պեղումներ չեն ծավալվել, սակայն հայտնաբերվածով հնարավորություն է

ստեղծվում որոշ պատկերացում կազմելու վերոհիշյալ ժամանակաշրջանի
րնակարանների մասին:

Բնակաաւղիում, բացի խեցեղենից, հայտնաբերվել են նաև աղորիքներ,
րրոնդե հերոնատիպ դործիք (աղ. XXXV₄), մանդաղի կայծքարե ներդիր.
շևր, կավե ուլունք, կենդանիների ոսկորներ և այլն:

Խեցեղենը հիմնականում ժամանակադրոն բաժանվում է երկու խմբի՝
միջին բրոնզի (հայտնաբերվել են րնակարանների հիմքերից ցած) և ուշ
րրոնդի, որը կազմում է հիմնական շերտը:

Միջին բրոնզի երկու ախի խեցեղեն է հայտնաբերվել.

ա) ղունաղարդ, վարդադույն ֆոնի վրա՝ սև դարդանախշերով.

բ) գորշադույն և սև փայլեցրած անղարդ խեցեղենի բեկորներ:

Ուշ բրոնզի խեցեղենին ընդորոշ են թասերի, թաղարների և սակավ կճուճ-
նների բեկորներ:

Ըստ կատարման եղանակի, ուշ բրոնզի խեցեղենը նույնպես րաժան-
վում է երկու խմբի

ա) փայլեցրած մակերեսով և բ) անփայլ, հասարակ:

Խեցեղենի երկու խմբին էլ ընդորոշ են միանման դարդանախշեր: Մեծ
մասը վղից ցած ունեն րաղմաշար հորիզոնական խորաքանդակ, հատիկա-
շար, սլիքաձև կամ դիզադ հորիզոնական գոտիներ և այլն (աղ. XXXV₅—8):

Այս դարդանախշերը մեծ մասամբ համատեղ են հանդես դալիս՝ մեկ-
րնդմեջ ղուպորդելով իրար: Երբեմն հանդիպում են նաև բաղմաշար ալիքնե-
րի դարդաժապավեններ:

Փայլեցրած մակերեսով խեցեղենի վրա դարդանախշը մեծ մասամբ
կատարված է փայլաներկը քերելու, հեռացնելու եղանակով: Հանդիպում են
նաև փայլեցման եղանակով կատարված դարդանախշերով խեցեղենի բե-
կորներ:

Նկարադրված խեցեղենը րաղմաթիվ ղուդահեռներ ունի Հայկական լեռ-
նաշխարհի ուշ բրոնզեդարյան րնակատեղիների և դամբարանների խեցեղե-
նի հետ: Ուստի այս հուշարձանը կարելի է թվադրել ուշ բրոնզի դարաշրջանով:

Հայտնաբերված մոնոխրոմ գունազարդ խեցեղենի սակավաթիվ օրի-
նակները վկայում են վերոհիշյալ հրվանդանի բնակեցվածության փաստը
դեռևս մթա II հաղարամյակի սկզբներից:

Գառնիում ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանների նյութեր, ինչպես
վերը նշվեց, հայտնաբերվել են ամրոցի դիմաց, ամրոցից հյուսիս-արևմուտք
և աղբյուրի ափունքի մոտ:

Աղբյուրի ափունքի մոտ, 1961 թ. հողային աշխատանքների ժամանակ
բացված քարաըկային մի դամբարանից (№ 99, որի երկար կողմի միայն
երկու քարերն էին տեղում պահպանվել) հայտնաբերվել են կավամաններ,
րրոնդե դարդեր:


Կավամանները միմյանցից աարբերվում են ձևով, գույնով, որակով և
նրանց կարելի է րաժանել հեաւյալ խմբերի.

1. Երկարավիղ, երկկոնաձև իրանով կճուճներ, որոնց շուրթերը մի
փոքր դեպի ղուրս են ճկված: Նման շուրս կճուճներ են հայտնաբերվել: Կճուճ-
ներից երկուսը գորշադույն են (№ 2234/184, 185), տափակ հատակով, շուր-
թերը՝ թերի: Իրանի երկկոնիկ մասից մի փոքր վեբ ունեն խորաքանդակ հո-
րիզոնական գոտի (աղ. XXXVI₂, № 2234/184):

Ճիշտ նույն կառուցվածքի մեկ այլ կճուճ, էրկկոնաձև, ուժեղ շեշտված իրանով (№ 2234/186) թերի է, մարմնագույն մալերեսով: Վղի հիմքում ունի բաղմաշար խիտ գասավորությամբ հորիզոնական գոտիներ (աղ. XXXVII):

Այս խմբի մեջ մտնող շորրորդ կճուճի (№ 2234/190) վիղը մյուսների նման շատ բարձր է, իրանն ուռուցիկ է, դարգարված հորիզոնական եռաշար, խորաբանգակ ալիքաձև գոտիներով, որոնցից ցած ասարածվում են բաղմաշար հորիզոնական խորաբանգակ գոտիներ (աղ. XXXVI): Արտաքինը սև փայլեցրած է, սակայն տրասկարգ քայքայված:

2. Քրեղան-թասիկ (№ 2234/188), ուղիղ կտրված և մի փոքր կլորացող շուրթերով, որն արտաքինից շեշտված է խորաբանգակ գոտիով



Նկ. 97. Թաս Գառնիի № 99 դամբարանից:

(նկ. 97): Ուղղահայաց իջնող ուսերը դարգարված են ալիքաձև վեցաշար խորաբանգակ գոտիներով, որից ցած իրանը երկկոնաձև թեքվում է՝ ավարտվելով օղակաձև մի փոքր շեշտված նստուկով: Արաաքինը սև փայլեցրած է, ասաառը սև:

3. Թաղար, երկկոնիկ (№ 2234/187), կոպիտ, անփայլ մակերեսով, մասամբ սև, մասամբ բաց շագանակագույն, շուրթը նեղանում է գեպի ներս և կարվում ուղիղ (աղ. XXXVIIa): Իրանի վերին մասում ունի անփույթ փորված հորիզոնական գոտիներ, որոնք անդ-անդ ընդհատվում են: Հասակը մի փոքր շեշտված է և օղակաձև նստուկ ունի:


4. Պնակ փոքրիկ (№ 2234/189), մոխրագույն, մի փոքր գուրս թեքված շուրթերով, կարճ վղիկով, որի հիմքում խորաբանգակ, հորիզոնական գոտի է արված: Իրանը կլորանալով ավարտվում է ասփակ հատակով:

Բացի կավամաններից, ինչպես վերը նշվեց, դամբարանում հայանարերվել են նաև բրոնզե դարգեր. ա) մեկ հերաղարդ (№ 2234/191), որը շմիացող ծայրերով կարվածքում կլոր մի օղ է (նկ. 98, 8 սմ արամագծով). կենարոնական մասում ունի օձապտույտ ժապավեն. բ) ապարանջան ժապավենաձև (№ 2234/192), ներսից ասփակ, գրսից կլորացող, ծայրերը նե-

ղանում, սրվում են և մի փոքր իրար վրա գալիս (նկ. 99). գ) օղեր-մաա-
նիններ (№ 2234/193), երկու ամրողչական և երեք կտորներ: Բոլորը տափակ
են, ժապավենաձև, 2,2 սմ տրամագծով, ծայրերը իրար վրա եկած (նկ. 99):

Գառնիի վերոհիշյալ դամբարանում հայտնարեբրված խեցեղենը բաղա-
թիվ ղուգահեռներ ունի Հայկական լեռնաշխարհի սթա II հաղարամյակի
վերջի և հասկասպա I հաղարամյակի սկզբի բնակատեղիների և դամբարան-
ների խեցեղենում:

Հատկապես մեծ են նմանութունները էլարի ավաղահանքի դամբարան-
ներից 1947 թ. սյաասահականորեն հայտնարեբրված խեցեղենի հետ:



Նկ. 98. Հիրազարդ՝ Գառնիի № 99 դամբարանից:

Նկ. 99. Մատանի և ապարանջան՝ Գառնիի № 99 դամբարանից:

էլարի խեցեղենին ևս ընորոշ են Գառնիի դամբարանի առաջին խմբի
երկարավիղ, երկկոնաձև իրանով կճուճներ, գուրս ճկված, կլորացող շուր-
թերով և մի փոքր շեշաված օղակաձև հատակով: Նրանց ուսերը ևս զար-
դարված են բազմաշար խորաքանգակ հորիզոնական գոտիներով, վերևում
եղբրված գիզգազ, ալիքաձև ղոտիով, իսկ ներքևում՝ հորիզոնական ժապա-
վենով (№ 1805/28, № 1813/18, 19, 20):

Նման խեցեղեն հայտնարեբրվել է նաև էլարից՝ Թաղազյուղ ասնող
խճուղու մոտ, 1940 թ. բացված դամբարաններից մեկում (№ 1964):

էլարում քիչ չեն նաև Գառնիի ափսի քրեղանատիպ կավամաններ, ուլիղ
կտրված շուրթերով, երկկոնաձև իրանով, որոնց ուղղահայաց ուսերը նույն-
պես զարգարված են կամ գիզղազ ալիքաձև գոտիով (№ 1805/51), կամ բաղ-
մաշար հորիզոնական խիտ գասավորված գոտիներով (№ 1813/41): Այս
քրեղաններին նույնպես ընորոշ են մի փոքր շեշաված օղակաձև նստուկով
հասակներ (№ 92, № 1805/59) և այլն: էլարում ևս հայտնարեբրվել է Գառ-
նիի տիպի կտրած շուրթերով թաղար, երկկոնաձև մասում խորաքանգակ հո-
րիզոնական ժապավեն (№ 1813/43):

Գառնիի վերոհիշյալ խեցեղենն իր ղուգահեռներն ունի նաև Երևանի

հարավ-արևմտյան ծայրամասում, Հրազդանի ձախ ափին բացված, մթա II հաղարամյակի վերջի դամբարանային նյութերում¹:

Գտնիի քրեզան-թասիկն օղակաձև շեշտված նստուկով իր բազմաթիվ զուգահեռներն ունի Կիրովականի մթա XI դարի վերջի և X դարի դամբարաններում (№ 1236/57, 11, 78, 20, 2, 27, № 1741/5), Խնձորուտում (№ 1176/15), Մեծամորի՝ նույնպես դամբարանային նյութերում (№ 2233/16, 22), Գտնիի խեցեղենի հետ կապվում են նաև Աշտարակի շրջանի Աղամզալու գյուղի դամբարանային նյութերը (կտրած շուրթերով և ուղղահայաց ուսերով քրեզանր՝ զարդարված զույգ ալիքաձև խորաքանդակ դոտիներով՝ № 1731, արկարավիղ երկկոնիկ իրանով կճուճը, բաղամաշար խորաքանդակ դոտիներով զարդարված՝ № 1728 և այլն):

Կտրած շուրթերով և ուղղահայաց իջնող ուսերով երկկոնաձև տարրեր տեսակների բազմաթիվ քրեզաններ են հայտնաբերվել նաև Արթիկի դամբարանադաշտում²: Նման քրեզանների մասեր հայտնաբերվել են նաև Մուխաննաթ-թափայում (№ 1216/81): Գտնիի երկկոնիկ, կտրած շուրթերով թաղարն իր զուգահեռներն ունի նաև Կարմիր րլուրի քաղաքի նախաուրարտական շերտերում³:

Հայանարբերված հերազարդը օձապտույտ ճարմանդով նույնպես բազմաթիվ զուգահեռներ ունի Հայկական լեռնաշխարհի ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանների հուշարձաններում: Նման հերազարդեր մեծ քանակությամբ հայտնաբերվել են Արթիկի դամբարաններում⁴, Դիլիջանում (№ 1919/2), Ալավերդիում (№ 759/41), Սանահինում (№ 138), Դվինում (№ 1917/337), Նոր Բայազետում (№ 20/9, 234, 226), յուրօրինակ տեսակի, նաև Շամշադինում (№ 1195, 1196) և այլուր:

Վերոհիշյալ բազմաթիվ զուգահեռների շնորհիվ, այսպիսով, Գտնիի դամբարանի նյութերը կարելի է թվագրել մթա II հաղարամյակի վերջով և I հաղարամյակի սկզբով:

Ուսումնասիրվող դարաշրջանի նյութեր հայտնաբերվել են Գտնիի ամրոցից նաև հյուսիս-արևմուտք, երկու տարրեր դամբարաններից:

Մեկ ավերված դամբարանից մեզ է հասել թաս՝ խորը, մեջը դրված մարդու դանդ (աղ. XXXVIII, № 1965/219): Թասը մոխրադույն է, դեղաձև, շուրթը արտաքինից շեշտված է թույլ արտահայտված խորաքանդակ դոտիով, Նուրթին ունի օղակաձև ելուստ անցքով, հավանաբար կախելու համար: Հասակը տափակ է և զարդարված շրջանակի մեջ առնված լայնակոս զուգահեռ ժապավեններով:

Կավամանների հատալիների զարդանախշման սկզբունքը Հայկական լեռնաշխարհում հայտնի է սկսած մթա III հաղարամյակից: Օրինակ, կարելի է բերել Կիրովականի «Դիմաց» կոչվող վայրում հայանարբերված մթա III

¹ Ո. Եսայան, Լ. Կարապետյան, Նորահայտ դամբարանադաշտը Երևանի մոտ, Պատմա-թանախական հանդես, 1965, № 4, էջ 283, աղ. II, նկ. 1, 4:

² Т. С. Хачатрян, Материальная культура древнего Артика, стр. 110, табл. 18, стр. 111, табл. 19.

³ А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, стр. 177, рис. 73з.

⁴ Т. С. Хачатрян, *աղ. աղ.*, էջ 68, աղ. 4, նկ. 12:

հաղարամյակի սև փայլեցրած դարդարուն թասը (№ 1862/7), որի հատակը եղերված է խորաքանդակ հատիկաշար պսակով:

Ջարդանախշման ալս սկզբունքը լայն դարգացում և մեծ տարածում է ստանում հատկապես ուշ բրոնզի շրջանում: Տարբեր տեղերից հայանարբեր-ված կավամանների հաաակները խորաքանդակ հատիկաշար պսակներով են եղերված, երբեմն նաև խաչվող դարգապսակով (որպիսին հայանի է լճաշենի I կրոմեխից, № 2009/1):

Սակայն ուշ բրոնզի դարաշրջանի վաղ փուլերից սկսած դարդանախշվում են հատակի ոչ միայն եղբերը, այլ հենց հաաակը: Բնորոշ է դառնում հատակի դարդանախշումը փայլեցման եղանակով:

Նման բաղամաթիվ օրինակներ մեղ հայանի են լճաշենի ուշ բրոնզե-դարյան դամբարնաբլուրներից (օրինակ, № 3, 5, 8 դամբարնաբլուրներից): Այն լայն տարածում ունի նաև Արթիկի դամբարանային խեցեղենում:

Սակայն, սկսած մթա II հաղարամյակի վերջերից, հատակները սկսում են դարդարել ներձկման, սեղմելու եղանակով (երբեմն կատարված են եղ ակոսով, երբեմն էլ լայն ակոսով): Այդ սկզբունքը լայն տարածում է դառնում հատկապես մթա I հաղարամյակի սկզբներին:

Նման հատակներով խեցեղեն մասամբ բնորոշ է Կարմիր բլուրի նոխա-ուրարական շերտերին: Այդ նյութերի մեջ հաակապես աչքի է ընկնում մթա XI դարով թվագրվող կճուճի հատակը, որը դարդարված է սեղմելու եղանակով կատարված խաչվող եղևնաշարով (№ 2286/40)²:

Հատակների դարդանախշման վերոհիշյալ եղանակը շատ բնորոշ է Մեծամորի և՛ բնակատեղիի, և՛ դամբարանների խեցեղենին (1965 թ. պեղումներ № 193, 197, 225, №2236/63):

Նույն ժամանակաշրջանի թասերի համար սովորական են նաև շուրթի նեղ անցքավոր ելուստները:

Այսպիսով, Գառնիի վերոհիշյալ թասը իր հաականիշներով՝ շուրթի ելուստով, հաակի դարդանախշման սկզբունքով կապվում է մթա II հաղարամյակի վերջի և I հաղարամյակի սկզբի խեցեղենի հետ:

Ամբողջից հյուսիս-արևմուտք, մեկ այլ քանդված դամբարանից մեզ են հասել վեց կավամաններ, մեծ մասամբ շարդված, մեկը սև փայլեցրած, մյուսները հասարակ: Բոլորի մակերեսը կրապաա է:

Ամբողջական կավամաններից մեկը փոքրիկ կճուճ է (աղ. XXXVIII, № 1966/18) դնդաձև իրանով, մի փոքր շեշաված նուրբ շուրթերով, մոխրագույն, հասարակ:

Հայտնաբերվել է ամբողջական աման, նույնպես հասարակ, մոխրագույն (№ 1966/22): Հասարակ կավամաններից մեկը (աղ. XXXVIII, № 1966/21) անդարդ է, դորշագույն, կոպիտ, մի փոքր ծաված շուրթերով:

Հայտնաբերվել են նաև երկու դնդաձև իրտնով թաղարներ, թերի, հասարակ, գեպի դուրս ձկված նուրբ, կլորացող շուրթերով, մրոաված, անհամաչափ թրծումով: Թաղարներից մեկը մոխրագույն է, շուրթից ցած ունի բաղմաշար հորիզոնական դոախներ, որոնք ներքեում եղերված են թեք խորաքանդակ հատիկաշարով (№ 1966/20), մյուսը սև է, ուսերին երեք շարք

¹ Т. С. Хачатрян. *Նշվ. աշխ.*, էջ 111, աղ. 19, էջ 126, աղ. 27.

² А. А. Мартыросян, *Նշվ. աշխ.*, էջ 175, նկ. 71.

խորաքանդակ ժապավեններ, որոնց միջև ունիվերսալ մասում, եղենաձև դասավորությամբ խորաքանդակ հատիկաշար է անցնում (№ 1966/23):

Այս թաղարները թվագրող հատկանիշներ չունեն: Նրանք երևան են դալիս ուշ բրոնզի սկզբից և պահպանվում են մինչև մթա I հազարամյակի I կեսը, բազմաթիվ օրինակներով հայտնի են Հայկական լեռնաշխարհի և բնակատեղիների, և՛ դամբարանների նյութերում:

Գամբարանում սև փայլեցրած ընդամենը մեկ կավաման է հայտնաբերվել (№ 1966/19): Այն նրբախեցի է, ունի զնդաձև իրան, վզի մասը չի պահպանվել, սակայն նրա հիմքում մնացել են խորաքանդակ հատիկաձև զարդանախշեր (ազ. XXXVIIIa): Իրանի միջին մասում խորաքանդակ հորիզոնական դոտիներով առաջացած դաշտը զարդարված է կտրելու եզանալով կատարված անկյուններ կազմող եռաշար զծերով, որոնք ընդմիջվում են թեք դրված սկավառակաձև կանթով: Չնայած նման կանթերն սկիզբ են առնում ուշ բրոնզի դեռևս վաղ փուլերում և բնորոշ են նաև Լճաշենի դամբարանադաշտին (№ 2007/55, № 2009/111, № 2009/490), սակայն նրանք լայն տարածում են գտնում մթա II հազարամյակի վերջում և հատկապես I հազարամյակի սկզբներում:

Սկավառակաձև կանթերով ընդամենը կավամաններ բնորոշ են Կիրովականի մթա XI—X դդ. դամբարանային նյութերին (№ 1236/68), Սանահինի մթա IX—VIII դդ. խեցեղենին, հայտնաբերվել են Կարմիր բլուրի նշված ժամանակաշրջանի դամբարաններում (№ 1644), Ռեդկին լազերում¹, Մակարաշենում (Կիրովականի մոտ)², մի շարք օրինակներով հայտնի են Մեծամորի բնակատեղիի դամբարանների նյութերում:

Գառնիի վերոհիշյալ կճուճը թե՛ զարդանախշման եզանակով և թե՛ սկավառակաձև կանթի ձևով ավելի շուտ կապվում է մթա X—IX դդ. մշակույթի հետ, ուստի իր ամրոզը կոմպլեքսով հանդերձ կարելի է թվադրել նույն ժամանակաշրջանով:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի մեկ այլ կճուճ էլ հայտնաբերվել է ամրոցի դիմաց ճանապարհաշինության ժամանակ: Այն մոխրագույն է (ազ. XXXVIIIa, № 2176/94), ամբողջական, կարճ վզով շուրթը դեպի դուրս շրջված և կլորացող: Իրանը ուռուցիկ է և դեպի ցած նեղանալով, ավարտվում է փոքր հատակով: Ուսերից մի փոքր ցած ունի անփուլթ և ոչ խորը կատարված երեք հորիզոնական ժապավենաձև դոտիներ: Կճուճի հետ ոչ մի այլ իր չի հայտնաբերվել, որը դժվարացնում է նրա թվագրությունը, սակայն ելնելով նրա ձևից, կատարման եզանակից, այն ևս կարելի է թվադրել մթա I հազարամյակի սկզբով:

Այսպիսով, Գառնիի դամբարանային վերոհիշյալ նյութերը, չնայած մեծ կոլեկցիա չեն կազմում, բացի այդ պատահականորեն են հայտնաբերվել, դերազանցապես խեցեղենով են արտահայտվում և թվադրող այլ նյութեր չունեն, սակայն բազմաթիվ զուգահեռների միջոցով դանում են իրենց տեղը ուշ բրոնզի և վաղ երկաթի մշակույթում:

Ինչպես վերը նշվեց, ուշ բրոնզի և վաղ երկաթի մշակույթի հետքեր հայտնաբերվել են նաև Գառնիի ամրոցի պեղումների ժամանակ:

¹ А. А. Мартиросян, *նշվ. աշխ.*, ազ. XXXVI, IV-ի նկ. 7:

² Նույն տեղում, նկ. 13:

Այդ նյութերը ձեռք են բերվել ամրոցի բոլոր անդամասերում, ոչ հստակորեն զատվող շերտերում, որոշ դեպքերում հարևանորեն մոնոխրոմ դունազարդ խեցեղենին: Ամրոցում հայտնաբերվել են փայլեցրած մակերեսով և հասարակ խեցեղենի բեկորներ:

Փայլեցրած մակերեսով խեցեղենի խմբին բնորոշ են.


ա) նրբախեցի, կանելուրազարդ սև թասերի բեկորներ (№ 2234/59), որոնցից բաղմաթիվ օրինակներ հայտնի են Մեծամորում (1965 թ. պեղումներ), Կարմիր բլուրի նախաուրարական շերտերի և բեկորոգ կոմպլեքսում (մթա X դար, № 1270/10, № 2052/24, 28, № 2285/7, 33)¹, նաև Մուխաննաթ-Յափաում—№ 1439/227).

բ) կավամանների բեկորներ (1966 թ. № 20), վղի հիմքում փորված եղևնաձև դարդանախշերի գոտիով, որից ցած, շրջանակի մեջ առնված, խաղիլու եղանակով կոստարված խաչաձևող, նուրբ, բաղմաշար ղիգղադները ևն արված (XXXIX):

Նոսնկյունիների մեջ ամփոփված նման ղիգղադներով, ուլիեֆ դոսիներով և կենդանակերպ բռնակներով խեցեղեն հայտնաբերվել է դարձյալ Կարմիր բլուրի նախաուրարական շերտերում (№ 2082/17) և իր ղուգահեռներով հանդերձ թվագրվում է մթա X դարով²: նման դարդանախշերով խեցեղեն բնորոշ է Մեծամորի մթա I հաղարամյակի սկզբի մշակութային շերտին, Դվենի համապատասխան շերտին, Մուխաննաթ-Յափային (№ 1216/103, 1439/413, 534) և այլն:

Նույն ժամանակաշրջանով կարելի է թվագրել ամրոցում հայտնաբերված մոխրագույն մասսիվ, ժապավենաձև և դեպի դուրս ծավված, կախված շուրթերով մեծ կավամանի բեկորը (նկ. 100, № 2235/37), որը նույնպես վերը նշված դուգահեռներն ունի:

Գառնիի ամրոցում հայտնաբերվել է նաև խնոցու բեկոր՝ ուլիեֆ շեշտոված շրջանաձև անցքով (աղ. XXXIXs), որից աչ ասրածվում է ուլիեֆ գոտի: Այն հավանաբար աղեղնաձև բռնակի շտրունակությունն է (№ 2098/42): նման ափսի խնոցիներ արաակարգ բնորոշ են մթա I հաղարամյակի սկզբների մշակութային: Մեծ քանակությամբ հայտնաբերվել են Կարմիր-բլուրի նախաուրարական շերտերում³, Մեծամորում (1965 թ. պեղումներ), Արթիկի դամբարաններում, Հայկական լեռնաշխարհի մի շարք այլ հուշարձաններում, ինչպես նաև վրաստանում և Ադրբեջանում:



Նկ. 100. Կավամանի, բեկոր շեշտված պասկով՝ Գառնիի ամրոցից:


¹ А. А. Мартиросян, Город Теишебаини, стр. 44. рис. 175—177, рис. 17. նույնի, Армения в эпоху бронзы и раннего железа, стр. 175—177, рис. 73₁₋₂.

² А. А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 175—177:

³ նույն տեղում:

Ամրոցի վերոհիշյալ մշակույթին բնորոշ են նաև հասարակ. անփայլ և փայլեցրած մոխրագույն, դնդաձև իրանով. լայնաբերան, ետ ծաված կլորացող շուրթերով թաղարների բեկորներ, որոնց ուսերը զարգարված են բաղմաշար, ուղղադիժ հորիզոնական դոտիններով, երբեմն վերևից եղբրված ալիքաձև, դիզղադ խորաբանդակ ժապավենով կամ թեք հատիկաշարով (աղ. XXXIX—3, 1966 թ. № 29): Նման տիպի թաղարները նույնպես լայն տարածում ունեն Ղալկական լեռնաշխարհի վերը նշված ժամանակաշրջանի հուշարձաններում:

Հայտնաբերված վերոհիշյալ թաղարների բեկորներից մեկի խորաբան-



Նկ. 101. Մափորի բեկոր ազեղնաձև կանթով՝ Գառնիի ամրոցից:

դակ դոտինների միջով անցնող հատիկները հատուկ ատամնավոր դորժիքի օգնությամբ են կատարվել և հատիկի ներսը մի անսակ սաորակետաշար է ստացվել: Զարդանախշման այս եղանակը բնորոշ է Մեծամորին, հանդիպում է Կարմիր բլուրի նախաուրարտական շերտերում (№ 2052/48):


Չնայած նման ակոսաշար հատիկներով զարդասախշը ավելի վաղ ծագում ունի և երևան է դալիս Լճաշենի մի շարք դամբանարևուրների և կրոմլեխների խեցեղենում (№ 2007/135), սակայն Գառնիի խեցեղենի վերոհիշյալ խմբի հետ կարող է թվագրվել մթա I հաղարամյակի I քառորդով:

Ամրոցում հայտնաբերված մեկկանթանի ուռուցիկ իրանով մեծ սահորի մասը երկար վղով և գեղեցիկ գեսպի դուրս ճկված շուրթերով, վզի հիմքում ունի խորաքանգակ զույգ հորիզոնական գոտիներ (նկ. 101): Շուրթից սկսվող և վզի հիմքում ավարտվող կանթը կլորաբուն է և աղեղնաձև գուրս ճկված: Արտաքինից այն ունի ուղղահայաց, երկարավուն փորվածք (№ 2235/46):

Նման ստիորների մասեր հայտնաբերվել են Կարմիր բլուրի նախաուրարտական շերտում (№ 2236/37, 38, 39), սակայն ավելի բնորոշ են և իրենց տարատեսակներով հանգերձ լայն տարածում են ստանում Հայկական լեռնաշխարհի մթա VIII—VI դարերի հուշարձաններում¹:

Գառնիի ամրոցի ուշագրավ հայտնագործություններից մեկը գլանաձև կնիքն է (նկ. 102, № 1964/57), որը գտնվել է սյարսպի հյուսիսային պաարի V աշտարակի մոտ՝ ներսի կողմից²:

Այն պարասաված է սև քարից և ունի խողովակաձև անցք՝ թելից կախելու համար: Նրա ղլանաձև մակերևսի վրա փորագրված է ալծ՝ կանդնած կենաց ծառի առջև: Ձևով այս կնիքն առնչվում է Կարմիր բլուրի միջնաբերդում հայտնաբերված մի խումբ գլանաձև կնիքների հետ³, որոնք ըստ Բ. Պիտրովսկու, շնայած ասուրական և բաբելական ծագում ունեն, սակայն նրանց մի մասի ուրարտական լինելը բացառված չէ⁴:



Նկ. 102. Գլանաձև կնիք՝ Գառնիի ամրոցից:

Ի տարբերություն ասուրական և ուրարտական ոճավորված ծառով շատ կնիքների, Գառնիի կնիքի կենաց ծառը ներկայացված է ավելի բնական, սլարդ: Նույնը կարելի է ասել և այժի նկատմամբ, որը ներկայացված է նույնպես բնական, անշարժ վիճակում, առանց թևերի և այլ կենդանակերպ կամ թռչնաձև գուգորգումների:

Կենաց ծառի և նրա մոտ կանգնած այժի թեմատիկան շատ հին է և լայն տարածում ունի Հին Արևելքի մշակույթում:

Լեռնային այժը Շումերում ճանաչվել է որպես հզոր ուժի մարմնավորող և պատահականություն չէ, որ նրանց գիցաբանությունում Շումերի կառավարիչները հաճախ համեմատվում են հզոր այժի հետ⁵: Շումերի գլխավոր ասավածներից մեկը կոչվում է «Ջրերի այժ»⁶: Էլամի և Միջագետքի կնիքների վրա այժերը հաճախ հանգես են գալիս որպես սրբազան կենաց ծառի պահպանողներ:

¹ Մանրամասն դուրսհաները տե՛ս А. А. Мартиросян, «ՀԳ» 1964, № 2, 20:

² Б. Н. Аракелян, Гарни, I, стр. 27, рис. 15.

³ Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, стр. 77, рис. 50.

⁴ Նույնի, Кармир-блур, III, стр. 58, рис. 44.

⁵ В. М. Массон, Средняя Азия и Древний Восток, М.—Л., 1964, стр. 393.

⁶ Մանրամասն 139:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում, էջ 370, 393:

Սկսած մթա III հազարամյակի II կեսից այն սիրված մոտիվ է ակկադական գլանաձև կնիքների դարգանկարներում¹:

Միջագետքի գլանաձև կնիքների և նրանց աղագեցության տակ գտնվող Միրիայի և Կիպրոսի կնիքների վրա պատկերված այժր իր վրա կրել է ռուսականության և անձրևի աստվածության ատրիբուտները²:

Այժի այգ նույն կերպարը պահպանվել է նաև ուրարտական և ասսասանյան կնիքներում: Անշուշտ, Գառնիում հայտնաբերված գլանաձև կնիքի վրա փորագրված այժր կենաց ծառի հետ միասին նույնպես բնության ղարթոնքի հետ կապված ընկալաչական մի գործողություն է պատկերում:

Բացառիկ դուրսուր-պատմական արժեք է ներկայացնում Գառնիում հայտնաբերված «վիշապը», որի վրա փորագրված է ուրարտական սեպագիր արձանագրություն (նկ. 103): Այն հայտնաբերվել է 1963 թ. պեղումների³: Ժամանակ, Գառնիի հեթանոսական տաճարից արևմուտք, պալատական սրահում⁴: «Վիշապը» իրենից ներկայացնում է բաղալտի երկարավուն մի քար, որի վերին մասը շարգված է: Այն քառակող է, երեսի մասը ըավականին լայնագիր է՝ նեղ կողմերի համեմատ (պահպանված մասի երկարությունը 1,87 մ է, լայնությունը վերին մասում՝ 0,77 մ է, իսկ ոտորին մասում՝ 0,7 մ: Հաստությունը ընդամենը 0,4—0,42 մ է)⁵:

Այսպիսով, շնայած նրա վերին մասը կոտրված է, սակայն պահպանված մասի շափերից ղգացվում է, որ կոթողը համաչափ լայնություն չի ունեցել. վերին մասում ավելի չայնագիր է եղել և գեպի ցած գնալով մի փոքր նեղացել է, այսինքն ճիշտ նույն ձևն է ունեցել, ինչ որ Հայկական լեռնաշխարհի մյուս քառակող «վիշապները»:

Քարի վերին մասում, լայնագիր երեսին երկու կողմից պահպանվել են կենդանու վերջավորությունների՝ ոտքերի ուղիքի պատկերը, մի տեսակ կախված վիճակում:

Ուրարտական սեպագիր արձանագրությունը փորագրված է կոթողի կենտրոնական մասում և անցնում է «վիշապի» առջևի ուղիքի վերջավորությունների վրայով, որպիսի հանգամանքը, ինչպես ճիշտ նկատել է Բ. Առաքելյանը, ապացուցում է, որ ուրարտական արձանագրությունը վիշապի վրա փորագրվել է հեռագայում⁶:

Արձանագրությունը բաղկացած է յոթ կարճ տողից, ստորև ընկնում է նրա բնագիրը ուրարտագետ Ն. Հարությունյանի⁶ ընթերցմամբ.

- (1) Խալգի ասածու մեծությունս
- (2) Արգիշաին ասում է.
- (3) Նվաճեցի (ես) Գիարնիանի (") երկիրը—
- (4) (կառավարչի) երկիրը: Միլունի (")
- (5) Թշնամյաց լեռներից,

¹ D. J. Wiseman, *Götter und Menschen Im Rollisegel Westastens*. Artia Prague, 1958, p. 32.

² Б. А. Куфтин, Урартский «колумбарий»... стр. 64.

³ Б. Н. Аракелян, Находка урартской надписи в Гарни, *Պատմա-մանասիրական հանդես*, 1966, № 2, էջ 290—291.

⁴ Նույն տեղում, էջ 291, շոշվածում մանրամասն տրված են «վիշապի» նկարագիրը և դուրսուրները:

⁵ Նույն տեղում, էջ 291.

⁶ Н. В. Арутюнян, Чтение и интерпретация урартской надписи из Гарни, *Պատմա-մանասիրական հանդես*, 1966, № 2, էջ 293—297.

(6) Երբ ես վերադարձա,

(7) աղամարդկանց (ե) կանանց (ես) տարա՝


Արձանագրություն ընթերցումից պարզվում է, որ մթա VIII դարի առաջին կեսուս Գառնին նվաճվել է Արգիշտի I-ի կողմից և որ ուրարաացիների նվաճման ժամանակ ան կրել է Գիարնիանի անունը¹:

Այսպիսով, հայանարեբված սեպագիր արձանագրությամբ ապացուցվում է, որ Գառնիի անվան ծագումը շատ հին է. ան դեռևս ուրարտական նվաճումներից առաջ էլ կրել է նույն անունը:

Ըստ ն. Հարությունյանի, երկրի Գիարնիանի անունը հասարակ ամրոզություն համընկնում է ուշ շրջանում արտասանվող Գառնիի (աեդի ընակչության արտաստություն՝ Գիարնի, Գյուռնի) հետ, եթե նկատի ունենանք, որ (i)anի վերջավորությունը հավանաբար ուրարտական ժամանակաշրջանի պատմական Հոյաստանի աշխարհագրական անուններին բնորոշ տեղագրական վերջածանց է²:

«Վիշապներ» խմբերով կամ ընտանիքներով հայտնարեբվել են Գառնիից մոտ 25—30 կմ դեպի արեելք, Գեղամա լեռներում՝ Աժղահա-յուրտ, Գյուլ-յուրտ, Թոխմախան-գյուլ (կամ Վանքի գյուլ), Իմիրդեկ կոչվող վայրերում³:

Գեղամա լեռներում հայտնարեբված «վիշապների» մի մասը ձկնակերպ են, մի մասը Գառնիի տիպի քուռուկող կոթողներ՝ բարձրաքանդակներով դարդարված:



0 15

Նկ. 103. Վիշապ, սեպագիր արձանագրությամբ Գառնիի ամրոցից:

¹ Նույն տեղում, էջ 297:

² Նույն տեղում, էջ 294—295:

³ Նույն տեղում, էջ 295:

⁴ Н. Я. Марр и Я. И. Смирнов, Випшапы, Труды ГАИМК, т. I, 1931. Б. Б. Пиотровский, Випшапы, Л., 1939: Լ. Ա. Բարսեղյան, Ժ. Գ. Խաչատրյան, Ա. Ա. Քալանդարյան, Նորահայտ պատմա-ուսման լեռներ կոթողներ Գեղամա լեռներից, ՀՍՍՖ ԳԱ Տեղեկագիր, № 8, 1964, էջ 83—88: Լ. Ա. Բարսեղյան, Գեղամա լեռների «վիշապները», Պատմա-բանասիրական հանդես, 1967, № 4, էջ 161—168:

Չկնանկեղայ կոթողները որոշ մանրամասներով տարբերվում են մրմ-
լանցից: Նրանց մի խումբը միայն ձուկ է պատկերում, որոնց գլխի վրա
շեշտված են աչքերը, խռիկները, բերանը, իրանի վրա երբեմն նաև լողակ-
ները և թեփուկները: Նման վեց կոթողներ են հայտնաբերվել Գեղամա լեռ-
ները վերոհիշյալ շորս վայրերում: Որոշ ձկնակերպ կոթողներ փորի վրա
ունեն բարձրաքանդակներ: Օրինակ, Աժղահա-յուրտի ձկան փորին քանդակ-
ված է ղոճված եղան կաշին վերջավորութուններով, իսկ նրա վերևում
եղան գլուխ, որի երկու կողմից պատկերված են մեկական թռչուն-
Աժղահա-յուրտի մյուս ձկան փորին գարձյալ պատկերված է ղոճված եղ-
ձգված նեղ մաշկով, վերջավորութուններով, երկձյուղ պարուլածև ոլորված
պոչով: Հանգիպում են ձկնակերպ կոթողներ ևս, որոնց վրայի բարձրաքան-
դակը պատկերում է ձկան գլխին գցած ղոճված եղան գլուխը՝ առջևի վեր-
ջավորութուններով հանգերձ (Իմիրգեկ)⁴:

Քառակող կոթողների վրա ևս հիմնականում պատկերված է ղոճված եղ
գլխով, մաշկով, վերջավորութուններով (Աժղահա-յուրտ, Թոխմախան-գյուղ,
Գյուլ-յուրտ)⁵, սակայն երբեմն ղոճված եղանը ուղեկցում են գույգ թռչուններ
(Թոխմախան-գյուղ, Իմիրգեկ)⁶: Կան կոթողներ, որոնց երկարությամբ պատ-
կերված են ալիքաձև գծեր օձագլուխ վերջավորությամբ (Գյուլ-յուրտ)⁷, կամ
շորս կենդանիների երկարավուն գանգեր, որոնց բերանից ջուր է հոսում
(Իմիրգեկ)⁸:

Անշուշտ Գառնիի «վիշապի» վրա նույնպես ղոճված եղ է պատկերվել՝
վերևում գլուխը և երկու կողմից կախված վերջավորութունները, սակայն
գլխամասը կտարված է և «վիշապի» վրա միայն նրա վերջավորութունները
են պահպանվել:

Բացի վերոհիշյալներից, վիշապ-կոթողներ հայտնաբերվել են Հայկա-
կան լեռնաշխարհի մի շարք այլ վայրերում՝ Սևանի հյուսիս-արևմտյան ա-
փին, Արտանիշի ծոցի մոտ⁹, Արագածի արևելյան¹⁰ և հարավային լանջերին՝
Արխաշան դևտի ձախ կողմում՝ գեպի Ամբերգ տանող ճանապարհի վրա¹¹,
Թիքմասաշի (Կոաուրից Սև լիճ տանող ճանապարհին) ցամաքած լճի սփին¹²:

Արագածի գագաթին Ղաղնեֆեր լճի ափին 1885 թ. նույնպես «վիշապ-
ներ» են հայտնաբերվել¹³:

Փոքր Հայքում, Ծորոխի ավազանում «վիշապների» խմբեր են հայտնա-
բերվել մի շարք վայրերում՝ Զիարեթ լճակի սփերին (25—30 ձկնակերպ

¹ Նույն տեղում, էջ 184—187, նկ. 2, 3, 14, 19, 20:

² Նույն տեղում, նկ. № 1:

³ Նույն տեղում, նկ. № 4:

⁴ Նույն տեղում, նկ. № 16:

⁵ Նույն տեղում, նկ. № 5, 6, 8:

⁶ Նույն տեղում, նկ. № 9, 17:

⁷ Նույն տեղում, նկ. № 15:

⁸ Նույն տեղում, նկ. № 18:

⁹ Б. Б. Пиотровский, *Изд. акад.*, էջ 13:

¹⁰ Գր. Ղափանցյան, *Հնություն մի քանի հիշատակարաններ*, «Արարատ», № 1, 1914:

¹¹ Ա. յս. Քալանթար, *Քարե դարը Հայաստանում*, Ենոթթ, գ. V—VI, նր., 1925, էջ 219:
Առաջին, Ծորոխի ավազանը, Հանդես ամսօրյա, Վիեննա, 1926, էջ 408: Б. Пиотровским,
Изд. акад., էջ 13, 14:

¹² Ա. յս. Քալանթար, *Изд. акад.*, էջ 220 (ան'ս քարտեզը):

¹³ Առաջին, *Изд. акад.*, էջ 407:

վիշապներ), Սրբահան առժանի ակունքում, որի աակից բխում է առատա-
ջուր ազրյուր (Զիրարթ լճի մոտ 5—6 կմ հեռու), Հովտակ (Այդր) և Պաղակա-
ցիս լճակների սփերին (Ապերի և Բիդեի միջև)¹։

Ըստ Ատրպեհաի վիշապ-կոթող գտնվել է Շիրակի Սողոթլու գյուղի «վի-
շասպական» ավազանների գիմացի գերեզմանոցում²։

«Վիշապներ» հայտնաբերվել են նաև Զավախքում՝ Մուրջախեթի գյուղի
մոտ (Ախալբուլաքի շրջան), Գանձա գյուղի Թոփարավան գետի մոտ, վերին
Մալխալում, Խրամ գետի մոտ՝ Շիուհկ և Սանոմեր գյուղերի միջև եղած գաշ-
տում և այլն³։

Վիշապների ծաղման, նշանակութան, նրանց պաշտամունքային գերի
վերաբերյալ տարբեր գիտնականներ աարբեր կարծիքներ են հայտնել։

Նիկաի ունենալով այն հանգամանքը, որ «վիշապները» հայտնաբերվել
են մեծ մասամբ լեռնալանջերում, լճերի և գետերի ակունքների, աղբյուրների
մոտ, գիտնականների մեծ մասը այդ կոթողները կապում են ջրի պաշտո-
ւունքի հետ⁴, համարում երկրագործության և ոռոգման հովանավորող
աստվածների քանդակներ⁵, Աստղիկ-Դերկետոյի պտղաբերության և ջրի
աստվածություն⁶, բնության կանաչապատման, առատության, պտղաբերու-
թյան և երկրագործության, գուցե և ոռոգման հետ կապված պաշտամունք⁷։

Ջրի պաշտամունքն արաակարգ հին և խոր արմատներ ունի և վիշապ
կոթողներն էլ անշուշտ արդյունք են Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկների
պաակերացումներում աեղ գտած ջրի տարերթի հետ էսուպված երևույթների
կոմպլեքսների, որոնք կապակցվել են երկնքի հետ և ստացել աստղային,
կոսմիկական բնույթ⁸։

Վիշապ-կոթողները ղոհված եղան, երբեմն ղույզ թռչունների և օձերի
պատկերներով հանգերձ անշուշտ կապվում են «աստղային կրոնի» հետ։
Հնագույն ժամանակներից ի վեր Հին Արևելքի շատ ժողովուրդների մոտ
տաաջնակարգ տեղ է գրավել Լուսնի պաշտամունքը և նրա սիմվոլն են ար-
տահայակ այնպիսի կենդանիներ, ինչպես ձուկը, եղջր և օձը, որոնց համա-
գրությունն են կաղմում մեր վիշապ-կոթողները։

Ինչպես Անանիա Շիրակացին է վկայում, մեր նախահայրերը Լուսնին
համարել են անձրևների գայակ և բույսերի սնուցող⁹։ Շիրակացին գրում է,
որ երկիրքն ունի յոթ շրջանակ կամ յոթ գոտի և VII, խոնարհ գոտում է
պտնվում կիսալուսինը, որն անձրևների գայակն է և բուրսատանների սնու-
ցողը⁹։

¹ Նույն տեղում։ Նույնի, Վիշապազանց պաշտամունքը, «Բաղմավեպ», 1931, № 7—8, էջ 310։

² Նույն տեղում։

³ Լ. Մ. Մելիսեթ-Քեկ, Մեղալիթյան կուլտուրան Վրաստանում, Թր., 1938. (վրացերեն)։
Խույնի, Вышапи и вышапонды Грузии, КСИИМК № 7. XVI 1947, стр. 27—37.

⁴ Այս. Քալաբրաբ. նշվ. աշխ., էջ 219։ Н. Я. Марр и Я. И. Смирнов, նշվ. աշխ.։
Խ. Աստվադյան, Հին Հայաստանի կուլտուրան, Երևան, 1931, հատ. 1, էջ 282։

⁵ Б. Б. Пиотровски#, նշվ. աշխ., էջ 13։

⁶ Լ. Արևիլան, «Վիշապներ» կոշված կոթողներն իրրև Աստղիկ-Դերկետո գիցուհու արձան-
ների, Երևան, 1941, էջ 85։

⁷ Գր. Վալանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1945, էջ 129։ Նույնի,
О каменных стелах на 10рах Арменни, Ер., 1952, стр. 19—20.

⁸ «Շիրակացու մասնագրությունը», տպագրության պատրաստեց Ա. Աբրահամյանը,
Երևան, 1944, էջ 326։

⁹ Նույն տեղում, էջ 560—526։

«Շիրակացին Լուսնի պարբերաշրջանների փոփոխության հետ է կապում ծովերի և օվեիանոսների տեղատվությունն ու մակընթացությունը. լիալուսնի ժամանակ ծովերի ջրերն սկսում են բարձրանալ, իսկ Լուսինը փոքրանալիս՝ իջնել»¹:

Տարբեր ժամանակներում Լուսնի հատկանիշներին անգրադարձել են և այլ ժողովուրդների մեծ մտածողներ: Լուսինը, ասում է Պլինիոսը, ցող է արտագրում, որին Արևը կլանում է. ըստ Պլուտարքոսի ամենաուժեղ ցաղը լինում է լիալուսնի ժամանակ, իսկ ըստ Ցիցերոնի, Լուսինը գուրս է ժայթքում խոնավություն, որն օժանդակում է կենդանի էակների աճին և նպաստում այն բոլորի հասունացմանը, որը աճում է հողից²: Հնգկաստանում Լուսնի մասին ասում են, որ նա սրբանուն է սերմեր, բերում բուսականություն»։ Բաբելոնում Լուսինը համարվել է բուսականության կյանքի աղբյուր³: Երբ Լուսինը գալիս է. ասում են, բույսերը միշտ լցվում են հյութով⁴: Բուսական հյութը, հատկապես բուրումնալից խեժը (որն օգտագործվում է խնկարկելիս) և օժանելի յուղերը իրենց արժեքավոր հատկությունները ստանում են Լուսնից⁵:

Լուսնի պաշտամունքն անխզելիորեն կապված է եղել կենարար ջրի պաշտամունքի հետ: Մարդիկ պատկերացրել են, որ երկնքում Լուսնի մշտական փոխարկումներում է սկսվում կյանքը, որը վերածնվում է մահից և որ Լուսինը մեկ գառնում է մանգաղ, մեկ եղջյուր, երբեմն նսվակ, թաս կամ գավաթ, և Լուսնի թասից է հոսում կենաց ջուրը⁶:

Հնագույն ժամանակներում ամեն ինչի սկիզբը կապվել է մտր աստվածության հետ, ինչպես կտեսնենք, ջրի պաշտամունքը և Լուսնի պաշտամունքը ես աղերսվել են մայր աստվածության հետ: Հեաագայում, երկրագործության և անասնապահության զարգացման պայմաններում, ջրի և Լուսնի պաշտամունքը կապվում է հայր աստվածության հետ:

Հին Արևելքի տարբեր ժողովուրդների մոտ ջրի, պտղաբերության և սիրո հնագույն աստվածուհին ալեբսվել է ձկան հետ: Օրինակ՝ ձկան հետ է աղերսվել շումերական Նանշե աստվածուհին, որը գրվել է «ձուկ» գաղափարագրով և համարվել ջրային տարերքի աստվածուհի: Շումերական պոեմներից մեկում Նանշե աստվածուհին անվանվում է «ձկնորսների թագուհի»⁷:

Ավելի ուշ ժամանակաշրջանի է Ասորիքի պտղաբերության և ջրի աստվածուհի Գերկեստոն (Ատարգատիս), որը ձկնակերպ է եղել: Նրա արձանը ձկան մաղմին է պաակերել և Հերոպոլիտոսը ձկնառատ, սրբաղսն լճի ափին է կառուցված եղել նրա տաճարը, որտեղ տարին երկու անգամ աստվածուհու տոնի օրը ուխտավորները մեծ թափորով ջուր են բերել և սրսկել աաճարուս,

¹ «Անանիա Շիրակացու Լուսնի պարբերաշրջանները», տպագրության պատրաստեց Ա. Արամյանը, Նրևան, 1962, էջ 38:

² Дж. Томсон, Исследования по истории древнегреческого общества, М., 1958, стр. 211—212.

³ Նույն աեղում:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն աեղում, էջ 209:

⁶ Э. Церен, Библиейские холмы, М., 1966, стр. 143.

⁷ E. Dhorme, Les religions de Babylonte et o'Assyrie. „Mana" II, Paris, 1949, page 114.

⁸ С. Крамер, История начинается в Шумере, М., 1965, стр. 160.

դիցուհու արձանը ծովը կամ դետը տարել: Շամիրամի ծնունդի հետ կապված ավանդությունը նույնպես հավաստում է Դերկետոյի կապը ձկան հետ²:

Ձկնակերպ է պատկերվել Ֆիդոլիտոյում (Ասորիք) նաև Եվրինոմա աստվածուհին, որը Կալսանիոսի վկայությամբ օվկիանոսի գուտարն էր³: Հնագույն ժամանակներում նրա տաճարը կառուցվել է տաք աղբյուրներից ու Կոնո՝ Լիմոկ և Նաղու դետերի միախառնման տեղում և այդ տաճարում է դրված ևղև աստվածուհու արձանը, որը ներկայացրել է կին՝ ձկան պոչով: Տեղի ընտկիչները տարին մեկ անգամ բացել են տաճարի գոնեը և աստվածուհու տոնը կատարել: Հստ Եվգ. Կադարովի՝ այդ կենդանակերպ քանդակի ուսկ թաքնված է ձուկ-աստվածուհի Եվրիմոնայի հնագույն կուլտը, որը և տադայում ձուկվել է Արտեմիսի հետ⁴:

Չնայած ն. Ադոնցը և Գր. Ղափանցյանը շեշտում են նաև տղամարդ աստվածների ձկնակերպ լինելը, օրինակ՝ տուրակտն Դագոնը, կամ շումերացիների մոտ Օննեսը, ջրային տորերքի աստված էան, ինչպես և տղամարդ-ձուկ աստվածները խուրրիտն՝ մոտ՝ սակայն հնագույն ժամանակաշրջանում ամեն ինչի սկիզբը կապվել է կին-աստվածուհու հետ: Շումերացիների պատկերացմամբ Մամու աստվածուհին՝ նախաստեղծ օվկիանոսը, մայր է. որից ստեղծվել են Երկիրը և Երկինքը⁵: Միաժամանակ աշխարհի նախածնող, պտղաբերող աստվածուհին համարվել է նաև երկնքի, անձրևային ամպերի տիրուհին, հետագայի բոլոր աստվածների նախամայրը և, ինչպես իրավացիորեն նկատել է Բ. Ա. Ռիբակովը, հետագայում տղամարդ աստվածները Սեծ Մորը իջեցրին երկրի վրա, նրան ղրկելով իր նախնական, համապարփակ ընույթից⁶:

Այսպիսով, ջրի տարերքը, պաշտամունքը նախապես կապված է եղել կին աստվածուհիան հետ, որը պատկերվել է ձկան կերպտրանքով: Դործյալ շումերացիների մոտ ձուկ նշանը բևեռագրերի գարգտցման նտինական փուլում պտղարևրություն և բոգմտնալու գաղափարն է արտահայտել¹⁰:

Անանիա Շիրակացին իր «Յաղտգս կենգտնատեսակաց» աշխատության մեջ խոսելով կենգանակերպ համատեղությունների խմբերի մասին, նշում է, որ ձուկը իգական է, ջուր և հորգ տնձրև է նշանակում¹¹:

Անշուշտ մեր «վիշապ» կոթողները զտրգտցման ուղի են անցել և իրենց

¹ Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 71—72:

² Գր. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 6:

³ Евг. Кагаров, Культ фетишей растений и животных в Древней Греции, С.-Петербург, 1913, стр. 301—302.

⁴ Նույն աեղում:

⁵ Նույն աեղում:

⁶ Նույն տեղում, էջ 302:

⁷ Գր. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 15—19:

⁸ Д. Т. Редер, Мифы и легенды древнего Двуречья, М. 1965, стр. 23. С. Н. Крамер, նշվ. աշխ., էջ 106:

⁹ Б. А. Рыбаков, Космогония и мифология земледельцев энеолита, стр 35.

¹⁰ Գր. Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, էջ 126, 133, 136: Նույնի, О каменных стелах на горах Армении, стр. 9, 10.

¹¹ «Շիրակացու մատենագրությունը», էջ 329, 332:

նախնական փուլում, հտվանարար մթա V—IV հաղարամյակներում նրանք ներկայացվել են միայն ձկան ձևով և մարմնավորել մայր աստվածության պաշաամունքը, որը գերագույն աստվածություն էր. ջրային տարերքի, պրտ-դարերության և ամրող կենդանի ընթացության տիրուհին:

Ջարգացման հաջորդ փուլում է, որ ձկնակերպ կոթողների վրա պատկերվում է եղան գլուխը կաշվով, վերջավորություններով, բերանից հոսող ջրով, գուցե և արյան շիթերով, ալսրնքն ղոհված եզր: Ձկնակերպ կոթողները հավանարար հետագայում փոխարրնում են քառակող կոթողները, որոնց վրա ղահված եղից բացի, երևան են գալիս գույզ թռչունների, օձերի և այլ եննգտ-նիների պատկերներ:

Սուրբ գրքի մեջ վիշապ բառը գործածվում է «կետ» բառի նշանակու-թյամբ, մեծ ձուկ, կետ գաղան¹: Ինչպես մեր «վիշապ» կոթողներն են ապա-ցուցում, ջրի պաշտամունքը նախապես աղերսվել է ձկան հետ, որը խոր-րդագանել է մայր աստվածություն, պողարերություն և կապվել լուսնի պաշտա-մունքի հետ: Եղել են ժամանակներ, որ Եգիպտոսում ձուկը, որպես մեռնող, նվաղող լուսնի սիմվոլ ղոհ են մատուցել, որպեսղի կենարար ջրերը հոսնն²:

Ջնայած Հայկական լեռնաշխարհում ջրային աստվածություններ են համարվել Նարր³, Ասաղիկր⁴, սակայն իրականում Անահիտն է պահպանել մեծ աստվածամոր նախնական հատկանիշները:

Անահիտը ջրի աստվածուհի էր, նրա պաշաամունքը կատարվում էր գե-աերի ու լճերի վրա և միայն ջրառատ վայրերում⁵: Ջրի ծիսակատարություն ները, կապված Դերկետոյի հետ, մեզ հիշեցնում են անհատական տոները, որոնց ժամանակ Անահիտի արձանի վրա նույնպես ջուր էին սրսկում⁶: Ան-հիտին համարել են գեաերի, տշխարի կենսատուն, կյանքն ու կեցուցիչը. մարդկության փրկիչը⁷: Անահիտի պաշաամունքի գլխավոր կենտրոններից մեկը Մեծրաց լեռներն են եղել (Սողանլու), որը կազմել է երեք մեծ գեաե-րի՝ Մոր Մեծի, Քուտի և Ճորոխի. վաակների ջրամրարը⁸: Նրա կենտրոնական մասում, Տաարակ լեռների կտուարին, ըստ ավանգության կանգնած է եղել. Մեծամոր ոսկե տաճարը՝ իր շարվան աղբյուրներով⁹

Ոսկու, պղնձի, արծաթի և երկաթի հանքերով հարուստ Մեծրաց լեռները հայանի են եղել նաև իրենց ճոխ և անսպառ սոնիի (շամի) անառոններով: Նրանց օգն ու ջուրը, ինչպես և սոճու խեթը ըուժիչ մեծ նշանակություն է ունեցել և համարվել է Անահիտի ամենամեծ շնորհը ջերմուկների աշխար-հում¹⁰:

¹ Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 45:

² Յ. Церен, նշվ. աշխ., էջ 332:

³ Գր. Капанцян, Хеттские боги у армян, Ер., 1940, стр. 71—73; նույնի, О ка-менных стелах на горах Армении, стр. 10:

⁴ Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 73:

⁵ նույն տեղում:

⁶ Կ. Վ. Մելիք-Փաշայան, Անահիտ ղիցուհու պաշտամունքը, Երևան, 1963, էջ 134:

⁷ Աաուքետ, Վրայապազանց պաշտամունքը, էջ 308, 311:

⁸ նույն տեղում, էջ 313:

⁹ նույն տեղում, էջ 315:

¹⁰ նույն տեղում, էջ 314:

Անահիտին նվիրված բուժիչ հատկանիշներով աղբյուրներից մեկն էլ, որը կոչվել է «Անահտական աղբյուր», գտնվելիս է եղել Այրարատի Մասյա-ցոտն դավառում (Ակոռի գյուղի մոտ)՝

Անահիտի պաշտամունքը գարեբ շարունակ իշխել է Տայքում, Ճորոխի ավազանում, որտեղ, ինչպես վերը նշվեց, Զիարեթ լճի ափին, Սրբահան անվանի ակունքին, Հովտակ և Պաղակացիս լճակների միջև հայտնաբերվել են «Վիրշապ» կոթողներ: Ոսկիամոր գիրկ է կոչվում ոսկե լիճը, որի մեջ է թափվում Սրբահանի վիրշապ-կոթողի տակից ըխող առատաջուր աղբյուրը²:

Անահիտի պաշտամունքի հետքերը ավելի ցայտուն րացահայտված են Բյուրյակնի (Թինգյուլ)՝ Արաքսի ակունքի և նրա վտակների շուրջը³:

Ըստ Ատրպետի, Առաջավոր Ասիայում գետերի ակունքների երկիրը հողակվել է որպես Անահիտ աստծու մշտնջենական գրախտ և նրա մասին ստեղծված բազմաթիվ առասպելներ են տարածվել Միջագետքում⁴:

Անահիտը ճանաչվել է ոչ միայն որպես ջրի աստվածուհի, այլ նաև օդաղբերության, արգասավորության և ծննդաբերության աստվածուհի: Անահիտի քանդակը ձիթենու ճյուղը ձեռքին և Անահիտի համար գործածվող «թառասան ծառոց» բառերը Կ. Վ. Մելիք-Փաշայանին համոզել են, որ հեռավոր անցյալում Անահիտին սրբազան անտառ են նվիրած եղել և նրա պաշտամունքը սղեբսվել է նաև ծառերի և բույսերի պաշտամունքի հետ⁵: Եվ իրոք, ինչպես վերը նշվեց, Անահիտի պաշտամունքի զլխավոր կենտրոններից մեկը՝ Մեծրաց լեռները՝ հայտնի են եղել սոճու անտառներով, որի խեժը բուժիչ մեծ նշանակություն է ունեցել և համարվել Անահիտի ամենամեծ շնորհը, անշուշտ այն եղել է Անահիտին նվիրված սրբազան անտառ: Բացի այդ, աստվածամոր «Վիրշապ» կոթողներով հարուստ Ճորոխի ավազանը հայտնի է եղել իր բազմահարուստ ձիթենու պարտեղներով և իր ձիթով ու ձիթանով բավարարել է Հայաստանի մյուս տասնհինգ նահանգներին, որից նրանք լրիվ դուրև էին⁶: Այս հանգամանքը ևս համոզում է, որ Ճորոխի ավազանը հեռավոր անցյալում իրոք աստվածամոր նշանավոր սրբատեղիներից մեկն է եղել և որ նրա ձիթենու պարտեղները, ինչպես Անահիտի ձիթենու ճյուղով բանդակն է վկայում, նվիրված են եղել աստվածամորը:

Որ մայր աստվածուհու պաշտամունքը աղերսվում է ծտերի և բույսերի պաշտամունքի հետ, վկայում են նաև Կարմիր բլուրի նախաուրարտական շերտերում (մթա XIII—VII դդ.) հայտնաբերված կանացի ֆիգուրները՝ վեր պարզած ձեռքերով, որոնք իրենց վրա կրում են ծառի ճյուղի, տերևների պատկերներ: Ըստ Վ. Ս. Սորոկինի, նրանք իրենցից ներկայացնում են ծառ-կին մոտիվի հնագույն նմուշներից մեկը⁷:

Անահիտի պաշտամունքն աղերսվել է նաև Լուսնի հետ: Ինչպես վերը

¹ Կ. Վ. Մելիք-Փաշայան, *նշմ. աշխ.*, էջ 59:

² Ատրպետ, *նշմ. աշխ.*, էջ 310:

³ *Նույն տեղում*, էջ 308, 310: Անահիտի պաշտամունքի վայրերի հիշատակությունը տե՛ս Կ. Վ. Մելիք-Փաշայան, *նշմ. աշխ.*, էջ 103—125 և քարտեզ:

⁴ Ատրպետ, *նշմ. աշխ.*, էջ 309, 314:

⁵ Կ. Վ. Մելիք-Փաշայան, *նշմ. աշխ.*, էջ 59:

⁶ Ատրպետ, *նշմ. աշխ.*, էջ 186:

⁷ А. А. Мартиросян, Город Тейшебаини, стр. 73, рис. 34.

⁸ В. С. Сорокин, Древние идолы Тейшебаини, «Տեղեկագիր», №5, 1951, էջ 71—82:

նշվեց, մեր նախնիները Լուսինի համարել են ըույսերի սնուցող¹: Ըստ հի-
հիշատակությունների, հայերը Լուսին կոչել են Անահիտ և պաշտել նրան²:
Ավանդություններից մեկում, գրի առնված Ատրպետի կողմից, ասվում է, որ
«Մեծ մայրը (Անահիտը) ինքը մահն է (Լուսինը), իրենից են ցայտում Լուսն-
թագի շողքերը, գիշերը մինչև լույս ընթն է լուսավորում ամբողջ աշխարհը»³:

Ըստ Շիրակացու, Արևն ունի երկու ընծայարեր, որոնցից Լուսնթագը սրա
բարձր ընծայարերն է՝ և Լուսնթագի տունը ձուկ համաստեղությունն է. որը
իզական է, ջուր և հորդ անձրև է նշանակում⁴: Ձուկը, ինչպես վերը տեսնեք,
Լուսնի խորհրդանիշն էր և աղերսվում էր մայր աստվածուծույան հետ. հետևա-
բար, ըստ վերոհիշյալ ավանդության, երբ գիշերը Արևի բարի ուղեկից
Լուսնթագը դնում է իր տունը՝ ձկան համաստեղությունը (որտեղ Լուսնի կե-
նարար ջրերն են) հանգստանալու, Լուսինն անդրազարձնում է Լուսնթագի
շողքերը և գիշերը լուսավորում ամբողջ աշխարհը: Մեղանում և այլ ժողո-
վուրդների մոտ պահպանվել է մեկ այլ ավանդություն ևս, ըստ որի Արևն իր
օրական պաուզը կաարելուց հետո, հոգնած իջնում է կենարար ջրերում
գիշերը լողանալու, թարմանալու:

Ինչպես է. Թեյլորն է նկատել, «Ամբողջ աշխարհի նախնադարյան փի-
լիսոփայությունում Լուսինը և Արևը կյանքով են օժտված ու իրենց ընտելյամբ
կարծես մարդկային էակներին են պատկանում և սովորաբար հակադրվում
են իրար, որպես տղամարդ և կին»⁵:

Լուսնի և Արևի հետ կապված հայկական ժողովրդական որոշ հանելուկ-
ներում (որոնք շատ հին են և դարերի ճանապարհ անցնելով պահպանել են
նախնադարյան մասժողովության արտահայտության ձևերը) Լուսինը հանդես
է դալիս որպես իդական սեռի ներկայացուցիչ, իրրև քույր կամ կին, իսկ
Արևը՝ իրրև եղբայր կամ ամուսին: Օրինակ՝

Ախպերը դնում էր քվորը դոնադ, քիրը կորչում էր⁶:

(«Արև և Լուսին»):

կամ՝

Մարդը ամեն օր է տեսնում,

Իսկ կինը մեռնելու օրն է տեսնում: (Արև և Լուսին)⁷:

Անշուշտ այս ավանդություններն ու հանելուկները աղերսվել են Լուսնի
հետ կապված մայր աստվածուծույան պաշտամունքի վաղ փուլերի հետ և այդ
պաշտամունքն է, որ կաղմում է մայր աստվածուծույան պաշտամունքի տար-
բերից մեկը:

Անահիտի պաշտամունքի հիմնական գծերը՝ պաղարերություն, արգա-
սավորություն, ծննդարերություն, ինչպես և բուժիչ ունակությունները վերա-
դրվել են նաև Լուսնին⁸:

Պիոնի արմատը, որ օդտագործվում էր ծննդարերության ժամանակ,

¹ «Շիրակացու մատենագրությունը», էջ 326:

² Կ. Վ. Մելիք-Փաշայան, նշվ. աշխ., էջ 66:

³ Նույն աեղում:

⁴ «Շիրակացու մատենագրությունը», էջ 325:

⁵ Նույն տեղում, էջ 329:

⁶ Յ. Թեյլոր, Первобытная культура, СПб, 1896, том I, стр. 256.

⁷ Ս. Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1960, էջ 96:

⁸ Նույն աեղում:

⁹ Կ. Վ. Մելիք-Փաշայան, նշվ. աշխ., էջ 69—72:

հույնները կոչում էին *selenogópon*, ենթադրելով, որ իր բուժիչ հատկանիշները նա քաղում է կուսնից¹:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Անահիտին նվիրված մեհյաններից մեկում՝ Անձևացյաց Հոգոց վանքը համարվել է լուսնոտության բուժիչ վանք²:

Հնագույն ժամանակներում կուսնի պաշտամունքը ամենուր առնչվել է Մայր աստվածուհու պաշտամունքին, օրինակ. «Կուսինը Իսրս անունով պաշտվել է եգիպտացիների կողմից. Իսիսը պատկերվել է դեղեցիկ կնոջ կերպարանքով՝ գլխին մահիկ և նրան նվիրելիս են եղել արջառ», նույն ձևով պատկերվել է նաև մեր Անահիտը³: Աստարտեն նույնպես ճանաչվել է որպես կուսնի աստվածուհի և պատկերվել է մահիկով⁴: Ըստ Վ. Ռոշերի, բոլոր հունական աստվածուհիները նախապես եղել են կուսնի աստվածուհիներ⁵:

Որ աստվածամոր պաշտամունքը իրոք սղերսվել է «վիշապ» կոթողների հետ, այսօրոցվում է նաև Անահիտի հետ առնչվող ցուպերի, երինջների պոհարներով: Անահիտը համարվել է «ցլապահ» դիցուհի⁶: Մասենա-դիրների վկայությամբ, նրա մեհյանի շուրջը, այդ աստվածուհուն նվիրված րադմտթիվ սրբազան ցուպեր էին պահվում զոհարերության համար և նրանց շուկատին խարանվում էր դիցուհու նշանը՝ եռանկյունին, և արդելվում էր նրանց ձևը տալ⁷: Մայր աստվածուհու պաշտամունքը, առնչված եղան հետ, ասարածված է եղել փոքրասիական բոլոր ժողովուրդների մեջ⁸:

Հնագույն ժամանակներից ի վեր եղր մեծ դեր է կատարել երկրագործության մեջ և պաշտամունքի առարկա դարձել շատ ժողովուրդների կողմից: Հնում եղր զոհարերել են, որպեսդի նրա արյունն օգտագործեն մոդական հատուկ միջոցներով հողի արգասավորման, բերքատվությունն ապահովելու համար⁹:

Սղր ճանաչվել է որպես ուժի մարմնավորող. այն աստվածացվել է երկինք է բարձրացվել որպես երկրագործությանը նպաստող, օժանդակող, հովանավորող ուժ:

Սղիստոսը նվաճող և քաղաքները հիմնադրող օտարերկրացիների պատկերացմամբ՝ մեռնող, նվաղող կուսինը (որը մինչ այդ եգիպտացիների կողմից բարոնվում էր որպես մեռնող կուսնի խորհրդավոր նավ)¹⁰, ոսկեդեղին եղջյուրներով եղն էր, որը մահանում էր այն ժամանակ, երր բարձրանում էին նեղոսի կենարար ջրերը¹¹: Որոշ ժամանակ մտածել են, թե «այդ ոսկե եղջյուրները կուսինը, ինքնակամ էր դնում մահվանն ընդառաջ, որպեսդի ջրերով հաղնար Սղիստոսը, և երր նեղոսի ջրերը ժամանակին շին դալիս, երկրի վրա սպանում էին եղին, այսինքն՝ երկնային ոսկեղջյուր եղան մահը կատարում, որպեսդի նեղոսի կենարար ջրերը բարձրանան»¹²:

¹ Дж. Томсон, *նշվ. աշխ.*, էջ 214:

² Կ. Վ. Լեյբլի-Փալալան, *նշվ. աշխ.*, էջ 71:

³ *Նույն տեղում*:

⁴ «Религиозные верования с древнейших времен до наших дней». Перевод с английского В. А. Тимпразева, СПб., 1900, стр. 12—13.

⁵ Дж. Томсон, *նշվ. աշխ.*, էջ 234:

⁶ Խ. Սասունյան, *նշվ. աշխ.*, էջ 178:

⁷ *Նույն տեղում*, Հ. Քյուրալյան, *Վիշապը հայկական փոքրու մեջ, «Բաղմավեպ», 1931, էջ 260*, Կ. Լեյբլի-Փալալան, *նշվ. աշխ.*, էջ 92:

⁸ *Նույն տեղում*, էջ 91:

⁹ Խ. Սասունյան, *նշվ. աշխ.*, էջ 180:

¹⁰ Յ. Շերեն, *նշվ. աշխ.*, էջ 330:

¹¹ *Նույն տեղում*, էջ 332:

¹² *Նույն տեղում*:

Անշուշտ, երկրագործության հետ կապված ևղի կատարած խոշորագույն դերով սեփաք է բացատրել նրա աղերսը երկնային ջրերի. պտղաբերության, վերածննդի հետ:

Այսպիսով, Անահիտի ջրի աստվածություն լինելը և նրա աղերսը լուսնի հետ ապացուցվում է նաև ցուլի կամ եօան ղոհաբերությանը, որն, ինչպես տեսանք, հնագույն ժամանակներից ի վեր աղերսվել է երկնային և երկրային կենսաբար ջրերի հոսքին, բոլոր պետք է ապահովվեր պտղաբերությանը և վերածնունդը:

Անանիա Շիրակացու վկայությամբ ցույր ուժի նշանակություն ունի՝ իգական է, լուսաբերի տոնն է, իսկ լուսաբերը լուսնի ընծայարներն է. այսինքն՝ ուղեկիցը²: Այսպիսով վերոհիշյալ փաստերը վեհայում են, որ ցույր նախապես աղերսվել է մայր աստվածությանը, լուսնին. հետևաբար վրշապ-կոթողներն էլ որպես երկնային և երկրային ջրերի ու պտղաբերության աստվածություն, նախապես կապվել են մայր աստվածության և լուսնի պաշտամունքի հետ:

Երկրագործության մի նոր վերելքի պայմաններում է, որ ձկնակերպ կոթողներին փոխարինում են քսոսակուլ կոթողները, որոնց պրա զոհված եղանակներով պատկերվում են նաև օձեր, Ռոշուններ և այլն:

Օձի պաշտամունքը տարածման լայն շառավիղ է ունեցել և տարբեր ժողովուրդների բանահյուսության մեջ պահպանվել են բավաբար առասպելներ շար օձերի և բարի, անվնաս լորտուների մասին:

Օձի պաշտամունքը գալիս է գեոես տոհմական շրջանից, երբ նրանք նույնպես տոտեմ էին համարվում, և մենք կանգ կառնենք բարի վրշապ-օձի պաշտամունքի վրա³:

Ժողովրդական հավաստիքներում օձն իր երկտրակեցություն, հավերժության, վերածնվելու ունակությունը ձեռք է բերել իր կաշին փոխելու, կենսունակությունը վերականգնելու շնորհով:

Օձի անմահության մասին հետաքրքիր տեղեկություններ ևս պահպանվել Գիլգամեշի էպոսում: Օձը փոխցնում է Դիլգամեշի կողմից զփվարությանը ձեռք բերված անմահության ծայրիկը և ևս վերագտնալիս փոխում իր կաշին: Այստեղ օձը կերպարանավորում է անմահության գաղափարը, վերածննդի, երիտասարդանալու գաղափարը: Հնդիկներն ասում են, որ վրշապ Ռագուն սողոսկել է աստվածների հասարակության մեջ և սուսցել անմահության ըմպելիքի՝ ամրիտի բաժինը: Համարյա բոլոր ժողովուրդների մոտ աաըածված է եղել այն հավատը, որ մեռածների հոգին մարմնավորվում է օձի մեջ⁴: Հունտատանում օձը հին դամբարանների խորաքանդակներում պատկերվել է հանգուցյալի հետ և համարվել հանգուցյալի կրկնորդը⁵:

¹ «Շիրակացու մատենագրությունը», էջ 326, 328:

² Նույն տեղում, էջ 328:

³ «Վրշապ պայմանական անունով ենք կոչում նախնադարյան հավատալիքներում մեծ դեր խաղացող հսկա օձերին, որոնց պետք է շփոթել մեր բանահյուսության և մասնագրության մեջ լայն արածում գտած ար-վրշապ դեմոնի առասպելական հասկացողության հետ:

⁴ «Эпос о Гильгамеше», перевод с аккадского И. М. Дьяконова, М.—Л., 1961, стр. 81.

⁵ Э. Тэйлор, նշվ. աշխ., էջ 204:

⁶ Евг. Кагаров, նշվ. աշխ., էջ 288—289, 293:

⁷ Дж. Тохсон, նշվ. աշխ., էջ 114:

Ծագիւտոսում փարավոնի հրամանով սարկոֆագի մեջ էին ղնում «մեռլալ- ների դիրքը»¹: Այդ դրքում հանդուցլալը աղոթում է, որ ինքը օձ դառնա. «ես Անթի օձն եմ... Ես մեռնում եմ և ծնվում նորից»²: Հավանաբար այդ նույն վերածննդի իմաստն է արտահայտել լորտու օձի ոսկե քանդակը, որը որպես թագավորական խորհրդանիշ, ղարդարել է հանդուցլալ յուրաքանչյուր փարա- յոնի ճակատը³:

Օձադուխ ապարանջաններով են ղարդարված Հին Արեւելքի աստվածների, թագավորների, քրմերի քանդակների թեքերը: Անշուշա անմահութիւնն է վերածնունդ են արտահայտել նաև օձադուխ ապարանջանները, որոնցով արուստ են նաև Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան դամբարանները:

Օձը եղել է իմաստութեան, իոհակասութեան մարմնավորող⁴: Այն ճա- նաչվել է որպես ուժի մարմնավորում և երբ ցանկացել են ղորավոր ու հուժ- կու մարդուն նմանեցնել հսկա օձի, վիշտպի հեա են համեմատել⁵:

Մեծերական դիցաբանութեան մեջ ես նշանավոր մարդիկ, որպես ուժի մարմնավորող, համեմատվում են հղոր վիշտպի հեա: Օրինակ, Ուրուկի կու- ոսավարիչ էնմերկարը անվանվում է Շուսերի մեծ վիշտպի⁶: Հունական դիցա- բանութիւնում հերոսները սովորաբար հանդես են գալիս օձի աեսքով⁷:

Վիշտպը ճանաչվել է նաև հարստութեան պահապան: Սարգոնի կողմից, Մուսասիրի աստուծոյ ավարի ցանկում հիշատակվում է վիշտպի ոսկեծուլլ արծանի մասին, որը մարդու ձեռքի վրա նսած փակել է տաճարի դռները⁸: Ըստ Լեման Հաուպի, Մուսասիր աստուծոյ անվանումը կարելի է սաու- գարանել որպես «օձի բուն, ելք» և որ Մուսասիրի կառավարիչ Ուրգանալի պատկերավոր կնիքի կերպարը նույնպես այդ է ապացուցում⁹:

Վանի թագավորութիւնում վիշտպը հանդես է եկել նաև որպես կենաց ծառի պահապան: Սարգուրի թագավորի և Արդիշտի I-ի բրոնզե սաղավարո- ների վրա աջ և ձախ կողմից շարսական վիշտպներ պահպանում են կենաց ծառը շար ուժերից¹⁰: Օձի դիցարանական կապը ծառի հետ ներկայացրել է նաև տղամարդու պտղարբերող ուժը, իսկ ծառը՝ կինը¹¹:

Գոյութիւնն է ունեցել նաև տնային օձերի պաշտամունք, որոնց հետ կապ- ված են ասն բախտը, երջանկութիւնն ու հարստութիւնը¹²: Այդ աեստեկտից հեաաքքիր է Գ. Սրվանձայանի կողմից գրի առնված Մշո դաշախ սե օձի մասին պատմութիւնը, որի անից հեռանալը դիտվել է որպես բնտանիքի բախախ, հարստութեան և հաշողութեան կորուստ¹³:

¹ З. Косидовский, Когда солнце было богом, М., 1968, стр. 120.

² Дж. Томсон, *Երկր. աշխ.*, էջ 116:

³ З. Косидовский, *Երկր. աշխ.*, էջ 124, 129, 149, 154:

⁴ Յ. Քլուդիան, *Երկր. աշխ.*, էջ 262—263:

⁵ Գ. Սրուանձայան, *Գրոց ու բրոց և Սասունի Գաւիթ կամ Մհերի դուռ*, Կ. Պոլիս, 1874, էջ 69:

⁶ С. Крамер, *Երկր. աշխ.*, էջ 39:

⁷ Дж. Томсон, *Երկր. աշխ.*, էջ 114:

⁸ Յ. Քլուդիան, *Երկր. աշխ.*, էջ 301:

⁹ Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, стр. 108.

¹⁰ *Նուշի*, Кармир-блур, I, Ер., 1950, рис. 40 и 40а; *Նուշի*, Кармир-блур, II, Ер., 1952, табл. 11, 12.

¹¹ Евр. Кагаров, *Երկր. աշխ.*, էջ 96:

¹² D. M. Abeghian, Der Armentischen Volksglaube, Leipzig, 1899, էջ 74, և Ասմու- կլյան, *Երկր. աշխ.*, էջ 196:

¹³ Գ. Սրուանձայան, *Երկր. աշխ.*, էջ 45—46:

Հունաստանում ևս օձը ճանաչվել է որպես տան պահապան, տան տեր. օջախի հովտնավոր, պետության փոկիչ¹: Մեծ օձը պահպանել է Աթենքի միջնարհերգը և ամեն ամիս կերակրվել մեղրարիթներով²: էպիրում՝ Ապոլլոնի սրբաշան պուրակում ապրող օձերին քրմուհիները սնուցում էին զարձյալ մեղրարիթներով և եթե օձերն այն հաճույքով էին ուտում. դա նախագուշաւում էր երջանիկ աարի³:

Հին պրուսացիների մոտ ևս գոյություն է ունեցել տնային օձերին կերտեբելու սովորութիւնը⁴:

Լորտուն մեծ գեր է կատարել երկրագործութեան մեջ որպես վնասատուներին՝ մկներին և առնետներին ոչնչացնող, ճանաչվել պարտեղների և դաշտերի հովանավորող⁵: հեթական օրենքների համաձայն օձ սպանելը խստիվ արգելվում էր: Եթե աղաա մարգր օձ սպաներ, ապա նա տուգանք պետք է վճարեր, իսկ եթե ստրուկը օձ սպաներ, ապա նրան մահապատիժ էր սպանում⁶:

Վիշապ-օձը հնագույն ժամանակներից ճանաչվել է պտղի և պտղաբերութիւն պաշտպան: Այդ տեսակեայից հետաքրքրական են արիպոլյան էնեոլիթյան կանացի արձանիկները, որոնց փորին պակերված գույգ օձերը (արաահայաված գույգ պարույրներով) հանգես են գալիս որպես արգանգի պտուղի պահապաններ: Վիշապ-օձերի նման գերը մեղ մոա հավաստվում են աղագորական որոշ տվյալներով: Օրինակ, վիշապ-գորգերը ճտնաչվել են որպես աղաբերքի, մայրութեան օգնական⁷:

Մական օձը հիմնականում աղերսվել է ջրի պաշտամունքին: Զուրը պաշտամունքի առարկա է եղել մարգկութեան պատմութեան խոր անցյալից սկսած: Այն հտտկապես մեծ նշանակութեւն է ստանում և յուրահատուկ ձևով պաշավում, ևր մարգն անցնում է նստակյաց կյտնքի, սկսում ղբաղվել երկրագործութեամբ և անասնապահութեամբ, իր բնակատեղիները հիմնականում կառուցելով գետահովիտներում: Դեռ շաա հնուց սկսած բաղմաթիվ աղբյուրների աղանքներ, անգամ գետեր պաշտվել են, գարձել սրբաանդիներ: Լորտու-օձի պաշտամունքն էլ անխգելիորեն առնչվել է ջրի հետ: Գետերի օձապտույտ հոսանքները ևս կարող էին թելագրել օձի ե ջրի միջև եղած այս ղուգորգութեւնները⁸:

Շումերական գիցարանում ծովի աստված էան համարվել է նտև խորհրդապաշտական ջրապաույաի, հորձանքի (Արգուի) աստված, որը երկրին օղակել, շրջապատել է որպես օձ⁹: Այսանղ ևս մենք տեսնում ենք օձի ե ջրի նույնացման օրինակներից մեկը:

Հայանի է, որ լորտուները բուն են գնում խոնավ անղերում, աղբյուրների, գետերի մոա և գտշտ են գուրս գտլիս հաակապես երկնային ջրերի թափվելու ժամանակ, այսինքն՝ անձրևների ժամանակ¹⁰: Ինչպես Բ. Ա. Ռիբտ-

¹ Дж. Томсон, *узг. աշխ.*, էջ 112—113.

² Э. Тэйлор, *узг. աշխ.*, հատ. 11, 1897, էջ 284.

³ Дж. Томсон, *узг. աշխ.*, էջ 112.

⁴ Э. Тэйлор, *узг. աշխ.*, էջ 285.

⁵ Վ. Խաչատրյան, *հեթական բնեռաղիտ տեքստերը գագտնիքները*. «Գարուն» ամսագրը, № 8—9, 1967, էջ 67:

⁶ Նույն տեղում:

⁷ Б. Рыбаков, *узг. աշխ.*, էջ 36, նկ. 13.

⁸ Յ. Քուրտյան, *узг. աշխ.*, էջ 301:

⁹ Մ. Միսայան, *Օձը աղբյուր ամենայն բարեաց*, Լոյս, 1927, № 1, Կալիֆորնիա, էջ 31:

¹⁰ «Религиозные верования...», стр. 16.

¹¹ Б. А. Рыбаков, *узг. աշխ.*, էջ 36, 37, 46:

կովն է նկատում, օձը նախնադարյան երկրագործի մտապատկերում այսպիսով պատկերվում է անձրևի երևալու հետ և պատկերացվում հավանաբար որպես միջնորդ երկրի, որի վրայով նա սողում էր ու թաքնվում նրա խորքերում և Լրկնքի միջև, որտեղից նա կարող էր անձրև բերել...¹։

Առեկայան Աֆրիկայի բարբարոս ցեղերից մեկի մոտ տարածված է պատմություն «Մովային մեծ օձի մասին»։ որտեղ ասվում է, որ մեծ օձը երբեմն դուրս է դալիս ծովից, հասնում մինչև երկինք և երևում է հատկապես հորդ ամռանների ժամանակ²։ Անախյան կղզիներից Հաիտիում՝ օձերի աստվածը՝ Դամրալա-ունդոն, անձրևների տերն է, ապրում է ջրամբարներում, լճերում, աղբյուրներում, որոնց պահպանն է ինքը³։ Դամրալա-ունդոն պատկերվում է դուրս⁴։

Օձի վերոհիշյալ հաականիշների հետ հետաքրքիր աղբյուրներ ունի շումերական աստված էնկին, որն, ըստ ավանդույթյան, «աստվածների ամենախմաստունն է, ապրում է մեծ անդունդում՝ Աբդուլում, որի խորքերը րացի իրենից, ոչ մեկը չի տեսել։ Այդ անդունդի ջրերով է նա ոռոգում երկիրը։ Նրա նա բարձրանում է վեր և մոտենում երկնքին, խոնավությունը կուտակվում է երկնային ավազանում և որպես առաա անձրև թափվում երկրի վրա։ Նրա մոտենում է երկրային սկավառակին, ապա դեպի ահունքները հորդանում են թարմ, սառը ջրով և լցվում շորացած հունները, կանաչները, եղեղները և ծառերը աղահորեն ներծծում են ջուրը և ամրողջ աշխարհը կենդանանում, դարձնում է և սկսում աղատ շնչել»⁵։

Օձը նշխարաբանում, Բաբելոնում և այլուր ճանաչվել է որպես Լուսնի հնագույն սիմվոլ⁶։ Ըստ է. Յերենի, օձը եզան եղջյուրների և ձկան նման Լուսնի մահիկի մեկ այլ սիմվոլն է⁷։

Նվ իրոք, օձն իր վերոհիշյալ հաականիշներով, երկարակեցությամբ, անմահությունը որպես պտուղի, կենաց ծառի պահպան, որպես ջրի աստվածություն, անխզելիորեն առնչվում է Լուսնի պաշտամունքի հետ։

Լուսնի և օձի միջև եղած կապը բխում էր նաև ժողովրդական այն պատկերացումից, ըստ որի «օձն ունի այնքան օղ, որքան օր կա ամսվա մեջ»⁸։

Ինչպես վերը նշվեց, դարգացման մի որոշակի փուլում Լուսնի պաշտամունքը աղբյուրվում է հայր աստվածության հետ։ Բոլոր ժողովուրդների մեջ լայն տարածում է գտել այն պատկերացումը, որ ծննդարեության ֆունկցիաները կանոնավորում է Լուսինը, ամենուր Լուսինը համարվել է կանանց հղիության պատճառը⁹։ Որոշ հետամնաց ժողովուրդների պատկերացմամբ, օրինակ, ըստ մաորիների, բոլոր կանանց իսկական ամուսինը Լուսինն է¹⁰։ Մուրբեյան կղզիներում Լուսինն պատկերվում են երիտասարդ տղամարդու կերպարանքով, որը արգասավորում է կանանց¹¹։

¹ Նույն տեղում, էջ 37։

² Յ. Գեյլոր, նշվ. աշխ., հ. I, էջ 261։

³ Կ. Լավրեցկի, Боги в Тропиках, М., 1967, էջ 108։

⁴ Նույն տեղում, էջ 106։

⁵ Դ. Գ. Բեդեր, նշվ. աշխ., էջ 30։

⁶ Յ. Երեն, նշվ. աշխ., էջ 107։

⁷ Նույն տեղում, էջ 119, 124։

⁸ Դ. Գ. Բեդեր, նշվ. աշխ., էջ 212։

⁹ Նույն տեղում, էջ 206։

¹⁰ Նույն տեղում, էջ 208։

¹¹ Նույն տեղում։

Իր հերթին օձն ամենուր համարվում է կանանց հրապուրողը. դալթակը-դողը¹: Ըստ Ջ. Քոմսոնի՝ օձի ֆալլաօև լինելն է հավանաբար նպաստել նման համանմանությունը²:

Հունաստանում ևս օձը ճանաչվել է որպես կանանց դալթակղիչ. այն ապացուցվում է էպիդավրում՝ Ասկլեպիսյի (հերոս օձը) տաճարում հայտնաբերված արձանագրություններով, ըստ որի շքեր կինը այդ տաճարում հղիանում է երազում տեսած աստծու՝ օձի հետ ունեցած հարաբերությունը և ինը ամիս հետո ծնում ղուլդ տղաներ³:

Օձի ու ջրի միասնության, նույն ֆունկցիան կատարելու լավազույն ապացույցներից մեկը կարելի է համարել մեղանում և տարբեր ժողովուրդների մեջ սարածված սյն հավատալիքը, ըստ որի կանայք հղիանում են ջրից: Օրինակ, Սասնա-ծոբերում Մովսիսարր հղիանում է ջրից և ծնում երկվորյակներ՝ Սասնասարին և Բաղդասարին⁴:

Անշուշտ նման ֆունկցիա է կրել Այրիվանքի (Գեղարդ) ներսում հեթանոսական շրջանի սրբազան ավաղանի մեջ սատրերկրյա աղբյուրներից ցայտող ջուրը, որը, ինչպես Ն. Տոկարսկին է նշում, աչրեր կանանց սնտիսպատական հարգանքն է վայելում⁵:

Շատ ժողովուրդների մոտ ընդունված է եղել հարսնացուին հարսանիքից առաջ լողացնել մոտակա գետում, կամ դետից բերած ջրով և այդ ծեսը մեծ մասամբ նշանակել է նրանց զարձնել երեխա ունենալու, ծննդարեղելու ընդունակ⁶: Օրինակ՝ Հունաստանում հարսնացուները Սկամանդրում լողանալիս դետի աստծուն աղոթում էին ասելով՝ «Սկամանդր, վերցրու իմ կուսությունը»⁷: Ինչպես Ջ. Քոմսոնն է արաահայտվում, աղջիկները, որոնք ջրում լողանալով դառնում էին հարս, հանդիսանում էին ջրահարսի կենդանի նախատիպեր՝ «հարսնացուներ», որոնք իրենց գիրկն էին բացում գետերի աստվածներին և ծնում հերոս, ղուլդ տղաներ⁸:

Հին Արևելքի շատ ժողովուրդների մոտ Մայր աստվածուհին հաճախ պատկերվել է ղուլդ օձերի ուղեկցությամբ: Կարելի է ենթադրել, որ դրանք Մայր աստվածուհու, պտղաբերության աստվածուհու ղուլդ հերոս որդիներն են, որոնք օձից, ջրից ծնված լինելով, օձ են պատկերվում և արտահայտում պտղաբերության խորհրդանիշը:

«Մայր աստվածուհու բազմատեսակ պաշտամունքներում օձի նշանակությունը սատիկ և անիոնիոն է, նրանում կերասպարանավորվում է պտղաբերության համընդհանուր դադսիփարը»⁹: Բացառված չէ, որ մեր «վիշապ» կոթողների վրա ղուլդ օձերի զսրդապատկերը նույնպես պտղաբերության խորհրդ-

¹ Дж. Томсон, *Уд. аз.»,* էջ 209, 212:

² Նույն տեղում, էջ 209:

³ Նույն տեղում, էջ 212—213, Евг. Кагаров, *Уд. аз.»,* էջ 292:

⁴ «Սասնա-ծոբեր», խմբագրեց Մանուկ Աբեղյանը, Երևան, 1936, էջ 309—310:

⁵ Н. М. Токарский, *Архитектура Армении IV—XIV вв.*, Ереван, 1961, стр. 298:

⁶ Дж. Томсон, *Уд. аз.»,* էջ 221:

⁷ Նույն տեղում, էջ 222:

⁸ Նույն տեղում:

⁹ П. М. Кожин, В. И. Сарнианди, *Змея в культовой символике азиатских племен*, История археологии и этнографии Средней Азии, М., 1968, стр. 39:

ոանիշ ծառայքը, քանի որ մեր զարգարվեստում զույգ օձերը մեծ մասամբ հանգես են դալիս կենաց ծառի ու պտղաբերության ֆոնի վրա:

Լուսնի հեռ կատարվող բնական երևույթները՝ ծնվելը և մահանալը, մեծանալը, փոքրանալը և նորից վերածնվելը, մարգկանց մտապատկերում նրան դարձրել են կյանքի վերածննդի համընդհանուր խորհրդանիշ և ներկայիս հետամնաց ժողովուրդների մոտ մահից հետո վերածնվելը ասոցացվել է Լուսնի ծագման հետ: Օրինակ, Աֆրիկայի բարբարոս ցեղերի մոտ նորալուսնի մամանակ մեծ տոնախմբություններ են կատարվում: Լուսինը նորելիս Կոնգոյում մարգիկ ծնկաշոք արտասանում են՝ «Քող իմ կյանքն էլ ալգալես նորվի, ինչպես նորվում ես գուա»:

Օձը սրպես Լուսնի խորհրդանիշ, նույնպես աղերսվել է վերածննդի դադարի հետ և, ինչպես վերը տեսանք, Նգիպտոսի «մեռյալների գրքում» աղթում էին, որ օձ դառնան, որպեսզի նորից վերածնվեն: Հավանաբար մեռնող և վերածնվող բնությունն արտահայտած լինելու համար է նաև, որ օձերը «վիշապ» կոթողների վրա պատկերվել են զույգ:

Զույգ են պատկերվել զոհված եղան պոչի պարուրած և փաթաթված զույգ վիշապ-օձը՝ Աֆրահա-յուրտի ձկնակերպ կոթողի վրա¹: Սիսիանի ժայռապատկերներում ևս զույգ վիշապ-օձերի յուրաքանչյուրի գլուխը զույգ պարուրով է արահայտված²: Քոխմախան-գյուլի քառակող կոթողի զոհված եղան երկու կողմում պատկերված եռանկյունիները, հավանաբար, դարձյալ զույգ վիշապներ են խորհրդանշում³: Մուրջախեթի կոթողի վրա պատկերված է օձ, որն ունի մեկ մարմին, երկու գլուխ⁴:

Սիրակոսցին զրում է, որ Լուսինն ունի երկու ընծայարևը (սլախինքն ուղեկից, նրա բնավորությունը որոշող) աստղեր՝ Հրատը և Լուսաբերը, որ հեթանոսների վկայություններ Հրատը՝ շարի, խավարի մարմնացումն է, իսկ Լուսաբերը՝ լույսի և բարոյի: Այս փաստը ևս հավաստում է վիշապ-օձի, որպես Լուսնի սիմվոլի, զույգ լինելու հանգամանքը, նրա շար և բարի լինելու, մեռնելու և վերածննդի հանգամանքը:

Ինչպես վերը նշվեց, «վիշապ» կոթողների վրա պատկերված են նաև զույգ թռչուններ:

Զույգ թռչունների զարդանկարը հայկական զարգարվեստի, դորգադործության, քանդակագործության և փայտի մշակման բնագավառի ամենասիրված մոտիվներից մեկն է և մեծ մասամբ հանդես է գալիս կենաց ծառի ու պտղաբերության ֆոնի վրա, որից ելնելով Ա. Մնացականյանը նրանց համարում է ծնող-զույգեր⁵, իսկ վիշապ կոթողների վրա պատկերված զույգ թռչունները՝ ձևով զույգի միասնության խորհրդանիշ⁶: Քանի որ, իրոք, մեր վիշապ-

¹ Дж. Томсон, 1927. — 27. — էջ 209:

² Э. Тэклор, նշվ. աշխ., հատ. II, էջ 338:

³ Լ. Բարսեղյան, սղո. աշխ., էջ 184, նկ. № 4:

⁴ Կ. Կարախանյան, Պ. Սաֆյան, Ժայռապատկերներ Սյունիքում, «Սովետական արվեստ», 1967, Երևան, № 1, էջ 31:

⁵ Լ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 185, նկ. 9:

⁶ Л. Меликсет-Беков, նշվ. աշխ., էջ 34, նկ. 6:

⁷ «Ներբախարու մասնագործությունը», էջ 325:

⁸ Լ. Մնացականյան, Հայկական զարգարվեստ, Երևան, 1955, էջ 214—215:

⁹ Նույն տեղում, էջ 240:

կոթողները պտղարբուսիցան հետ են ազերսվում. հնարավոր է, որ զույգ թռչունները հանդիսանային նաև ծնող-զույգերի խորհրդանիշ:

Թռչունը հնադուր ժամանակներից սկսած Արևի սիմվոլն է արտահայտել: Հնդիկների սրբազան Ռիդվեդայում մեկ դեպքում Արևը հանդես է դալիս իրրև գեզեցիկ թռչուն, իսկ մեկ այլ դեպքում՝ երկնակամարում ամպերի սիշող վեր սլացող ասկեղեզին արծիվ²: Որ արեդակը անձնավորվել է երկնակամարում թեածող թռչունի կերսլարանքով, վկայում են նաև մեր հանելուկները³:

Ընդհանուր առասպելարանության մեջ դեզեցիկ սղջիկը արեդակի անձնավորումն է և ըստ Մ. Արեզյանի, մեր էսոստում էլ Քառսուն ճող ծամը Արևի անձնավորումն է: Հետևարար թռչուն-արևը կապված է կանացի սկզբի. մայր աստվածուսիցան հետ: Համարյա ըոլոր ժամանակներում և ըոլոր ժողովուրդների մոտ մայր աստվածուսիցան սրբազան կենդանին թռչունն է եզել: Օրինակ՝ Փյունիկիայում և Ասորիքում Դերկետոյի սրբազան կենդանիներն էին ազավներն և ձուկը⁴: Փրուդիայում՝ Գորդիոնի ոելիեֆններից մեկում աստվածամայր կիրելան պատկերված է թռչունի քանդակը ձեռքին⁵ և արլն:

Մթա III հազարամյակի մշակույթում թռչունի զարդանկարը մեծ մասամբ զուգորդված է օձ-վիշապի հետ, որը ներկայացվում է պարուրած և փաթավածքով: Օձ-թռչունի ամենացալտուն արտահայտություններից մեկը մենք անսում ենք Ենդավթի խեցեզենի զարդանախշերում:

Ենդավթի սև փայլեցրած կարասներից մեկի ուուուցիկ իրանը զարդարում է մի կոմպոզիցիա⁶, որի կենտրոնը զրազեցնում է եուանկլունածև իրանով, երկաը և ըաց կուուցով թռչունը՝ շրջապատված ըազմազալար սլարույրներով—օձերով (նկ. 78): Կոմպոզիցիայի հիմքից սկիզբ սուսող և անկլուն կազմող ժապավենների միջով անցնում է ալիքածև զիզզազ գոտի, որը ներմուծություն է մթա III հազարամյակի խեցեզենի զարդանախշերում և անշուշտ ջրի սիմվոլն է արահայտում (միջին ըրոնզի դարաշրջանում, ինչսևս IV դլխում տևանք, այն դաոնում է դունազարդ խեցեզենի հիմնական զարդամոտիվներից մեկը): Կոմպոզիցիայի ծայրաթևերը դարձյալ թռչուն են պատկերում, որոնք վերջավորվում են մոնումենտալ, ըազմազալար սլարույրներով:

Ամրոզուսիցամր վերցրած այս կոմպոզիցիան կարծես ընուսիցան զարթոնքն է արտացոլում, ջրերի հոսքը, դարնան ավետարեր թռչուն-արևը՝ շրջապատված ըազմազալար յարույրներով, որոնք վիշապի խորհրդանիշն են, կունի խորհրդանիշը: Մայրաթևերի թռչունները ըազմազալար պաըույրներով վիշազ-թռչունի, այսինքն կունի և Արևի համազրուսիուն ևս ներկայացնում: Նրանցով կարծես ժամանակի հասկացողուսիունն է արտահայտվում, յույսի և խավարի, դիշերվա և ցերեկվա, արևամուտի և արևածազի հասկացողուսիունը, հավերժ շարժման, անվերջուսիցան դազափարը:

¹ «Религиозные верования...», стр. 13.

² Ա. Բ. Հարույրյունց, Հայ ժողովրդական հանելուկներ, Նրևան, 1960, էջ 98:

³ Նույն տեղում, էջ 97:

⁴ Մ. Արեզյան, Հայ ժողովրդական վ'ալլ, Ազգազրական հանդես, XVII գիրք, 1906, № 1, էջ 13:

⁵ Նույնի, Վիշապներ կուզված կոթողներ... էջ 72:

⁶ Н. М. Дьяконов, Предыстория Армянского народа, Ереван, 1968, էջ 133, նկ. 33:

⁷ Ս. Սաղաբյան, նշվ. աշխ., նկ. 40:

Այս դարդանկարի վերծանման համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում ժողովրդական ավանդություններում պահպանված ժամանակի հասկացողությունը:

Հստ մի ավանդության, «ծերունին նստած է մի բարձր լեռան վրա և իր ձեռքին ունի երկու կծիկ թել. մեկը՝ սև, մյուսը՝ սպիտակ: Դրանք դիշերվա և ցերեկվա խորհրդանիշներն են: Երբ ծերունին, որ կոչվում է «ժուկ ու ժամանակ», սև կծիկը վրորում է լեռնի վայր և սպիտակը սկսում է կծկել՝ մրթնում է, և ընդհակառակը, երբ սպիտակն է վայր թողնում և սևը կծկում՝ լուսանում է»¹: Կարելի է զուգահեռ անցկացնել կծիկ թելերի և վերոհիշյալ բառերի ստուգաբանության միջև, իսկ նրանց վայր թողնող և կծկող ծերունուն դարդանկարում փոխարինում են թռչունները:

Ժամանակի բնույթի տեսակետից հետաքրքրական է նաև հայկական հանելուկներից մեկը.

Սև կծիկը վեր նետեցի,

Ճերմակը վար ցրպի:

(Մութ և լույս)²:

Այսպիսով, վերոհիշյալ դարդանկարը պտղաբերության հետ կապված պատկերացումների մի բարդ կոմպլեքս է ներկայացնում, արտացոլում է պաղարեություն անհրաժեշտ երկրի և երկնօրի, լուսնի և արևի միասնության գաղափարը, ժամանակի հասկացողությունը, որը կարևոր դործոն է դառնում երկրագործի համար՝ կապված եղանակների փոփոխության, անձրևի, բերքի հասունացման հետ և այլն: Նման թռչուն-վիշապի կարելի է հանդիպել Գեղամա լեռների ժայռապատկերների շարքում:

Թռչուն-վիշապը մի արասկարդ դեղեցկությանը է պատկերված Կիրովականի դեղնա-գարշնադույն փայլեցրած մակերեսով կարասի վզի բևեռի վրա (№ 1455 դ): Այստեղ վիշապ-թռչունը կրկնակի է հանդես գալիս (նկ. 77): Կոմպոզիցիայի կենտրոնում այն կառավարված է ռեյիեֆ-ներհաման եղանակով: Ունի արասկարդ մեծ, երկար կտուցով դուրս, որը դերիջիում է փոքր եռանկյունաձև իրանի վրա: Ցայառն է արասհայտված նաև վիշապը՝ սլաքաձև ոլորված պոչը: Կտուցի ծայրը, վզի հիմքը, եռանկյունաձև իրանը, ոտքերը ծածկված են խորաբանդակ ըջիջաձև ներձցումներով, որոնք կամ ջրի կաթիլների, կամ պտուղի հատիկի արտահայտությունն են և ապացուցում են թռչուն-վիշապի՝ Արեի և ջրի, Արևի և Լուսնի, այսինքն պաղարեության սիմվոլ լինելը: Թռչուն-վիշապը վերևից եղբրված է դարձյալ թռչուն-վիշապով, որի մարմինը ներկայացված է ռեյիեֆ գոտիով և ավարտվում է թռչունի դիտով, որի վզի կեանաշարը հավանաբար շեշտում է նրա ջրային բնույթը, դուցե և խորհրդանշում անձրևի կաթիլները:

Մթա III հաղարամյակի վաղ և միջին փուլերին վերաբերվող խեցեղենի դարդանախշերի դերադանց մեծամասնությունը ոճավորված թռչունի և վիշապի միասնություն է ներկայացնում, ընդ որում, մարմինը թռչունի սիմվոլն է, իսկ դուրսը՝ վիշապի, որը պարույրով է արտահայտված³:

¹ Ս. Ռ. Հատուրյան, Հայ ժողովրդական հանելուկներ, էջ 102:

² Նույն աղբյուր:

³ Է. Խաչատրյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մթա III հաղարամյակում, աղ. XX, վերին II-ը, աղ. XIX, մեջտեղի շարք, աչից, էջ 62, նկ. 12: Նույնի, Հեռախոսական պեղումներ Կիրովականի մերձակայքում, աղ. V, նկ. 1—7, ներքևում ձախից:

Միջադեպերում օձը և աղավնին խորհրդանշել են Լուսին և Վենեբրա. ըստ աստվածաշնչի՝ Ադամ և Եվա, ըստ ասուրացիների՝ Սին և Իշտար¹:

Հին Արևելքում գլխավոր աստվածությունները միշտ պատկերացվել են ուղիղ, ընդորոտ մեկը՝ տղամարդ, մուսը՝ կին²:

Հայկական լեոնաշխարհում, ինչպես խեցեղենի դարդապատկերներն և՛ հուշում, մթա III հաղարամյակից օձը և թռչունը համատեղ են պատկերվել. մեկ մարմնով արտաստվել և անշուշտ նույնպես խորհրդանշել Լուսին և Արև, այսինքն ջուր և ջերմություն, որոնց զուգորդությունն այնքան անհրաժեշտ էր պտղարբույժյան ու բուսության զարթոնքի համար: Զարգացման վերոհիշյալ փուլում Լուսին-վիշապը արդեն ներկայացվում է որպես տղամարդ-աստվածություն, իսկ Արև-թռչունը՝ կրն-աստվածություն:

Այսպիսով, վիշապի և Լուսնի պաշտամունքը մթա III հաղարամյակից սկսած աղերսվում է տղամարդ-աստվածության հետ: Անշուշտ վիշապի պաշտամունքի նշված փուլի հետ է աղերսվում Վահագնի պաշտամունքը՝ զարգացման իր վաղ շրջանում:

Հին հայկական մատենադրության մեջ Վահագնը անվանված է վիշապաբաղ, որը հարարարգված է վիշապ և քաղ (արու այծ) ըստերից և նշանակում է վիշապայծ³: Հնում լեոնային այծը՝ օձի և վիշապի նման նույնպես ճանաչվել է որպես հղոր ուժի մարմնավորող, աղերսվել ջրի պաշտամունքին. կենաց ծառին: Ինչպես վերը տեսանք՝ Շումերի կառավարիչները հաճախ համեմատվում են հղոր այծի հետ, գլխավոր աստվածներից մեկը անվանվում է «Ջրերի այծ», կամ Միջադեպի կնիքների վրա այծը հանդես է գալիս որպես սրբազան կենաց ծառի պտահական:

Վիշապի և այծի համադրություն կարելի է համարել Շենգավթի ամաններից մեկի վրա պատկերված այծերի շարանը⁴, որոնց պարուրածն ավարտվող պոչը վիշապի խորհրդանշել է: Այսպիսով «վիշապը» և այծը կրել են նույն ֆունկցիաները և ներկայացրել ջրի ու պտղարբույժյան աստվածության «վիշապի» պաշտամունքն, սկսած մթա III հաղարամյակից:

Անդրադատնալով Արևի և Լուսնի պաշտամունքին, ավելորդ չէ հիշատակել, որ մեր ժողովրդական ավանդական զրույցներում և հանելուկներում Արևը և Լուսինը մեծ մասամբ համատեղ են հանդես գալիս:

Ինչպես վերը տեսանք, նրանց մի մասը վերապրուկային ձևով պահպանել է Արևի և Լուսնի այն համակցությունը, երբ Լուսինը կապվում էր մայր-աստվածության հետ: Սակայն կան այլ ավանդական զրույցներ և հանելուկներ, որոնք աղերսվում են հայրիշխանության ժամանակաշրջանի հետ, սրտեղ Արևն անձնավորվում է քրոջ, իսկ Լուսինը՝ եղբոր կերպարանքով:

Քույր ու եղբայր են, մինն առավոտ է ծնվում, Լրեկայան մեռնում, մյուսը Լրեկոյան ծնվում, առավոտը մեռնում: (Արև և Լուսին)⁵: Երբեմն էլ Արևը և Լուսինը զրսեորվում են կնոջ և ամուսնու փոխհարաբերությամբ⁶:

Նույն համադրությանը մենք հանդիպում ենք նաև ներկայիս մի շարք հեռամնաց ցեղերի մոտ. օրինակ՝ Հարավային Ամերիկայում, Մրոկորի ցե-

¹ Э. Цереп, *նշվ.*, աշխ., էջ 119:

² «Религиозные верования...», стр. 35--36.

³ Ռ. Առախլյան, *Գիտությունների վիշապաբաղ հահագնի մասին, Տեղեկագիր, № 2, 1921 էջ 75*:

⁴ Ս. Սարգսյան, *նշվ. աշխ.*, էջ 186, աղ. № 1:

⁵ Ս. Հարությունյան, *նշվ. աշխ.*, էջ 95:

⁶ Նույն տեղում:

դեյրի մտա կուսինը ամուսնու դեր է կատարում, իսկ Արևը՝ կնոջ, կամ քե
 'ուանագալում, Իոսկուրի մասին օտտավական պատմվածքում՝ Արևը և կուսինը
 բույր և եղբայր են²:

Քոչուն-վիշապ են մարմնավարում մթա III հազարամյակի բազմաթիվ
 այլ դարդապատկերներ. օրինակ, Լոանկյունաձև իրանով բոլոր այն Քոչուն-
 ները, որոնց պոչն ավարտվում է պարուրաձև ոլորվածքով: Նրանք Շենգավ-
 թի կարասի զարդանկարի ծալրաթևերի Քոչուն-վիշապից տարբերվում են
 նրանով, որ օձը խորհրդանշող պարույրը վերջինիս մտա Քոչունի ոտքերին է
 փոխարինում, իսկ մյուսների վրա այն ղետեղված է պոչին: Այսպիսի Քոչուն-
 վիշապի համադրություն է ներկայացնում Ղարա-Քափայի օջախի հենակի
 Քոչունը՝ պարուրաձև պոչով (№ 1461):



Նկ. 104. Իունուգարյ թա՞ Շենգավթից:

Արևիկում հայանս.բերված կավամանի վրա, Լոանկյունաձև իրանով
 Քոչունի կողքին պատկերված է օձ՝ զիզգաղաձև մարմնով (նկ. 75): Այստեղ,
 և Քոչունը, և վիշապը երկրաչափորին են արտահայտված:

Շենգավթում Քոչուն-վիշապը գտել է նաև իր գունային արտահայտու-
 թյունը: Հայտնաբերված սև փայլեցրած, արտաքինից երկրաչափական ուր-
 պագոսիով թասի ներսում բաց-գեղնավուն հիմնագույնի վրա կարմիր ներկով
 պատկերված է հմայական մի անսարան (նկ. 104)³:

² Յ. Թեյլոր, *Первобытная культура*, т. I, стр. 256.

³ Նույն տեղում, էջ 257:

⁴ Ս. Սարգսյան, *նյմ. աշխ.*, էջ 187, աղ. LXI:

Կոմպոզիցիայի կենտրոնում կարծես ներկայացված է անմար կրակի պաշտամունքային կլոր օջախը՝ հողաբլե ելուստներով, իսկ նրա շուրջը պտույտ են դործում թռչունները՝ զուգակցված օձանման մարմինների, սվաստիկայի և հավանաբար լուսինը խորհրդանշող թասի-շրջանակի հետ: Օձը մեկ դեպքում թռչունի ոտքին է միացած, մեկ այլ դեպքում թռչունի վզին կամ ևտուցին: Կարծես ե՛ թռչունը, և՛ վիշապ-օձը զույգ են պատկերված: Թռչունի զույգ լինելը զույգ կտուցով է արտահայտված (մեկը երկար, մյուսը կարճ), իսկ օձը զույգ զիզազով: Կետախաչ (սվաստիկա) արտահայտող զարդանկարը նույնպես զույգ թռչուն է պատկերում: Ծնող-զույգերը՝ երկիրը, երկինքը և նրանց զավակը՝ պտուղը, պտղաբերությունը: Թռչունների եռանկյունաձև իրանը պտղաբերության սիմվոլն է արտահայտել, մայրությունը սիմվոլը, որը դարերի ընթացքում պահպանել է իր իմաստը, դարձել նաև Անահիտ աստվածուհու խորհրդանիշը և խարանվել նրան զոհաբերվող ցուլերի ճակատին:

Այսպիսով, Շենգավթի թասը հավանաբար պաշտամունքային ծեսին նվիրված մի թաս է. հմայական նշանակություն ունեցող դյուլթող մի թաս, լուսնի հետ կապված, երկնային կենարար ջրերը դյուլթող մի թաս, որի զարդանկարում իրենց արտահայտություն են գտել պտղաբերությանն անհրաժեշտ բնության աստվածի հետ կապված պատկերներ:

Հին ժամանակներում նման հմայող թասերի դեպի երկինք պարզելը կապված է եղել պտղաբերության հմայության, վերածննդի գաղափարի հետ: Նման հմայաթասեր մեզ հայտնի են շումերացիների մոտ, սկսած դեռևս մթա V հազարամյակի վերջերից: Առանձնահատուկ ուշադրության է արժանի Սամարայում հայտնաբերված գունազարդ թասերից մեկը¹, որի կենտրոնի սվաստիկայի շուրջը պտույտ են դործում ձկներ և զիզազաձև, օձի մարմնով թռչուններ՝ կտուցներին ձուլ, որն անշուշտ պտղաբերության, բազմանալու սիմվոլն է արտահայտում: Այսպիսով, այստեղ հմայական դործողության մասնակիցները դարձյալ օձ-թռչուններն են:

Գունազարդ հմայաթասեր հայտնի են տրիպոլյան՝ մթա III հազարամյակի մշակույթին²: Այն լայն տարածում ունի նաև այլ ժողովուրդների ձեռներում, և միշտ կապված է պտղաբերության հմայության հետ:

Սակայն, ինչպես վերը տեսանք, լուսինը երբեմն պատկերվել է նաև որպես թաս, կամ դավաթ, որից հոսել են կենաց ջրերը և նրա հետ է տղերս-վել վերածննդի գաղափարը: Ինչպես է. Յևրենն 1, նկատել, լազաչի ամենախոր շերտերում և նախապատմական մի շարք այլ դամբարաններում մեծածնորը ձեռքերին ունեն դեպի դեմքը պտրղած կավե թաս կամ դավաթ, որով կարծես ցանկանում են ծտրտվր հազեցնել³: Այդ նույն սովորույթը նկատվում է նաև Հայկական լեռնաշխարհում՝ սկսած մթա III հազարամյակից:

Ինչպես վերը տեսանք, այդ ջուրը և կյանքը պարզևող թասը տղերով է 1, 7աղափարը, այդ իսկ պատճառով մեռյալների ձեռքերի մեջ են դրել վերածննդի գաղափարը, այդ իսկ պատճառով մեռյալների ձեռքերի մեջ են դրել վերածննդի հետ աղերսվող այդ լուսնի թասը կամ դավաթը:

¹ J. Mellaart, Earliest Civilizations of the Near East, London, 1965, p. 66, fig. 40 1.

² Б. А. Рыбаков, *Նշվ. աշխ.*, էջ 58, նկ. 1. 3:

³ Նույն տեղում:

⁴ Э. Мереж, *Նշվ. աշխ.*, էջ 113--113:

